

ՀՀ ՓԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА
INSTITUTE OF ARTS NAS RA

ԿԱՆԹԵՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ

КАНТЕХ
НАУЧНЫЕ ТРУДЫ

KANTEGH
ARTICLES

2 (71)



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱՎԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2017

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Կ 203

Կ 203 Կանթեղ: Գիտական հոդվածներ /Գլխ. խմբ.՝ Ա.Ասատրյան. - Եր.: Ասողիկ,
280 էջ:

Գլխավոր խմբագիր՝ Աննա Գ. ԱՍԱՏՐՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

**ԱՂԱՍՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ,
ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա, ԶԱՔԱՐՅԱՆ Անուշավան, ԽԱՌԱՏՅԱՆ Ալբերտ,
ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ, ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն,
ՄԵԼՔՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (գլխավոր խմբագրի տեղակալ),
ՅՈՒՐԵՎԱ Տառյանա, ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ, ՊՈԿՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա,
ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

Главный редактор Анна Г. АСАТРЯН

Редакционная коллегия

**ԱԳԱՏՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ,
ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա, ԶԱԿԱՐՅԱՆ Անուշավան, ԿԱՅԱՐՅԱՆ Վիգեն, ՄԵԼԿՈՆՅԱՆ Աշոտ,
ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (заместитель главного редактора), ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ,
ՕԳԱՆՆԵՏՅԱՆ Գենրիկ, ՕԳԱՆՅԱՆ Կադժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն,
ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

Editor-in-Chief Anna G. ASATRYAN

International Editorial Council

**ԱԳԱՏՅԱՆ Արարատ, ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա,
ԿԱՅԱՐՅԱՆ Վիգեն, ԿԱՅԱՐՅԱՆ Մուրադ, ԿԱՅԱՐՅԱՆ Վիգեն, ԿԱՅԱՐՅԱՆ Աշոտ,
ՄԵԼԿՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (Deputy Editor-in-Chief), ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ,
ՕԳԱՆՅԱՆ Կադժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն,
ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԲՆԱԳՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ, ԻՄԱՍՏԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ՍԵՂԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Թարգմանաբանության միջնուղային էությունը տանում է դեպի դրա գիտական հետազոտության բազմաճյուղային մոտեցում, որը և պահանջում է հաշվի առնել ամենատարբեր գործոններ: Թարգմանության գիտական հետազոտությունների դժվարություններից մեկն էլ պայմանավորված է դրա լայն ընդգրկումով: Սակայն, մյուս կողմից, թարգմանաբանության միջնուղային բնույթը նպաստել է նաև թարգմանության՝ որպես երևույթի նկատմամբ մոտեցումների բազմազանությանը: Հոդվածի նպատակն է ներկայացնել թարգմանաբանության միջգիտակարգային բնույթը և ամրագրել թարգմանության դերը բնագրի ընկալման, իմաստի հաղորդման և միջմշակության հաղորդակցման ու մշակույթների փոխազդեցության գործում:

Բանալի բառեր – թարգմանաբանություն, թարգմանություն, ընկալում, իմաստի հաղորդում, միջմշակության հաղորդակցում:

Թարգմանությունը որպես գիտակարգ առանձնացել է միայն XX դարում: Սակայն թարգմանության պատմությունը սկսվում է շատ ավելի վաղ այնտեղ, որտեղ սկսվում է քաղաքակրթության պատմությունը: Իսկ թարգմանության մասին առաջին դրույթները և թարգմանության տեխնիկայի ուսումնասիրությունները վերագրվում են մ.թ.ա. II-ի դարերին (Քվինտիլյան, Կիկերոն, Հորացիոս, Կատուլոս), որոնք, սակայն, համակարգված բնույթ չէին կրում: Սկսած հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջը՝ թարգմանության մասին տեսական դրույթները համապատասխանում էին մտածողության և մշակույթի ավանդաբար սահմանված ոլորտներին՝ գրականության տեսություն, ճարտասանություն, քերականություն: XX դարի թարգմանաբանական տեսություններն ընդգրկեցին ավելի շատ ոլորտներ՝ ոչ միայն լեզվաբանությունը, գրական քննադատությունը, փիլիսոփայությունը, մշակույթի տեսությունը, այլև փորձարարական և մարդաբանական ուսումնասիրությունները, ինչպես նաև թարգմանիչների պատրաստումն ու գործնական թարգմանությունը: XX դարի թարգմանաբանության նվաճումներից մեկը եղավ այն, որ թարգմանութեան

յան գիտական հետազոտություններում սկսեցին հաշվի առնել թարգմանության երկակի էությունը՝ թարգմանությունը՝ որպես արդյունք, տեքստ (բանավոր կամ գրավոր) և թարգմանությունը՝ որպես գործընթաց:

Թարգմանության գիտական հետազոտությունների դժվարություններից մեկն էլ պայմանավորված է դրա լայն ընդգրկումով: Սակայն, մյուս կողմից, թարգմանաբանության միջճյուղային բնույթը նպաստել է նաև թարգմանաբանական տեսությունների և մոտեցումների բազմազանությանը: Այժմ դրանք ներկայանում են որպես բազմաճյուղ ենթամասնագիտացումների մի համակցություն: Դրանց դրույթները երբեմն ծայրահեղ բևեռացվում են: Արդյունքում թարգմանությունը նոր բնորոշումներ և ձևակերպումներ է ստանում: Օրինակ՝ որոշ տեսաբաններ վկայակոչում են այն հանգամանքը, որ թարգմանության գիտական հետազոտությունը չափազանց տարբեր բնագավառների է հարում, և հարցականի տակ են դնում թարգմանագիտության գոյության հնարավորությունը: Մի խումբ այլ տեսաբաններ, այդ թվում՝ Յու.Նայդան և Դը Վասարդը գտնում են, որ թարգմանությունը գիտություն է բառիս ամենալայն իմաստով, քանի որ այն մի գործունեություն է, որը կարելի է համակարգել, և որը կապված է տարբեր գիտակարգերի հետ: Բառիս նեղ իմաստով, ինչպես գտնում են Յու.Նայդան և Դը Վասարդը, թարգմանությունը տեխնոլոգիա է, քանի որ այն կառուցված է մի շարք գիտակարգերի վրա, այդ թվում՝ հոգեբանության, լեզվաբանության, հաղորդակցման տեսության, մարդաբանության և իմաստաբանության ու կիրառելի է նրանց նկատմամբ¹: Նայդան իր տեսական աշխատություններն անվանեց թարգմանագիտություն՝ գիտական կարգավիճակ հաղորդելով խնդրո առարկային: Քեթֆորդը գտնում էր, որ թարգմանաբանությունը չի կարելի լեզվաբանությանը հարող, սահմանային գիտակարգ համարել, քանի որ այն ոչ թե լեզվին տեսական հիմքեր հաղորդելու, այլ լեզվաբանական տեսությունները կիրառելու ասպարեզ է²:

Թարգմանության բառարանային սահմանումները, այնուամենայնիվ, ամենևին էլ լիարժեք և ամփոփիչ չեն:

Ռ. Յակոբսոնը տարբերում է թարգմանության երեք տեսակ՝ ներլեզվական, որը ենթադրում է վերաբառավորում մեկ լեզվի ներսում [rewording or paraphrase], միջլեզվական՝ մեկ լեզվի նշանային համակարգից անցում մեկ այլ

¹ Stéu de **Waaard, Jan** and **Nida, Eugene**, 1986, "From One Language to Another: Functional Equivalence in Bible Translating", Nelson, Nashville.

² **Catford, J.C.** (1965) A Linguistic Theory of Translation: an essay in applied linguistics, Oxford Univ. Press.

լեզվի նշանային համակարգի [translation proper]³, միջնշանային՝ նշանային մեկ համակարգից անցում մեկ այլ նշանային համակարգի [transmutation]: Եթե խոսքը միջլեզվական թարգմանության մասին է, ապա առաջին հերթին այն անցում է լեզվական մի համակարգի նշաններից մեկ այլ լեզվական համակարգի նշանների: Այլ կերպ ասած, ինչպես նշում է Յու. Նայթան, թարգմանությունը սկզբնաղբյուր լեզվի վերակողավորումն է թիրախ լեզվի⁴: Ըստ Ռ. Յակոբսոնի՝ այն վերակողավորման պրոցես է, որն ընդգրկում է երկու համարժեք հաղորդում երկու տարբեր նշանային համակարգերում⁵: Մյուս կողմից՝ թարգմանությունը սոցիալական գործունեություն է, քանի որ այն իրականացնում է հաղորդակցումը տարբեր մարդկանց, տարբեր լեզվակիր ժողովուրդների միջև:

«Թարգմանության թշվառությունն ու պերճանքը» հոդվածում, որը փիլիսոփայական երկխոսության ձևով է ներկայացված, Խոսե Օրտեգա ի Գասեթը գտնում է, որ թարգմանության «թշվառությունը» իր իսկ անհնարինության մեջ է. վերջինիս պատճառն այն լեզվական և մշակութային անվերածելի տարբերություններն են, որոնք սկիզբ են առնում տարբեր պատկերացումներից և իրար չհամապատասխանող մտածողական [ինտելեկտուալ] համակարգերից: Թարգմանության «պերճանքը» այս տարբերությունների վրա հմուտ գործողություններ կատարելն է, որն ընթերցողին հեռացնում է իր լեզվական սովորույթներից և ստիպում է շարժվել օտար հեղինակին համընթաց: Ուստի, եզրակացնում է Օրտեգան, թարգմանությունն առանձին ժանր է, բայց ոչ ինքնուրույն գրվածք, այն մի կամրջակ է, մի արահետ դեպի բնօրինակ գրվածքը: Թարգմանությունը միջոց է, որն ընթերցողին մոտեցնում է բնօրինակ գրվածքին՝ ամենևին միտում չունենալով կրկնել կամ փոխարինել այն⁶:

Հետևաբար, թարգմանությունն ինքնին ավելի հեշտ է տրվում թարգմանչին և ավելի ընդունելի է լինում այն ժամանակ, երբ այն թարգմանչի կողմից ընկալվում է որպես «կամրջակ», անցուղի, որով իրականացվում է հաղորդակցումը: Սա իր հերթին ձևավորում է թարգմանության մեկ այլ գործառույթ՝

³ **Jakobson R.** (1959) On linguistic aspects of translation (in *The Translation Studies Reader*, ed. S. Gabrielyan, Yerevan, 2007, pp. 146-147).

⁴ **Nida, Eu.A. and Taber, Ch.R.** (1969) *The Theory and Practice of Translation*, Leiden.

⁵ **Jakobson, R.** (1959) On Linguistic Aspects of Translation (in *The Translation Studies Reader*, ed. S. Gabrielyan, Yerevan, 2007, pp. 146-150).

⁶ **Ortega Y Gasset, J.** (1937) *The Misery and The Splendor of Translation* (in *The Translation Studies Reader*, ed. S. Gabrielyan, Yerevan, 2007, pp. 131 - 133, 138 - 140).

ժողովուրդների, մշակույթների մերձեցում ու փոխհարստացում: Սկզբնաղբյուր տեքստը թարգմանվելով նոր կյանք և, որ շատ կարևոր է, նոր ընկալումներ է ստանում:

Թարգմանությունը հարստացնում է նաև ներմուծող մշակույթն ու լեզուն:

Այսպես, XVII դարի մաթեմատիկոս և փիլիսոփա Գոթֆրիդ Վ. Լայբնիցն իր “Impartial Thoughts Concerning the Use and Improvement of the German language” (1697) աշխատության մեջ գերմաներենի հղկման և հարստացման ուղիներից մեկը հենց թարգմանությունն է համարում: Իսկ XIX դարի տեսաբաններ Ֆր. Շլայերմախերն “On the Different Methods of Translating” և Վ. ֆոն Հումբոլդտը “Introduction to Aeschylus’ “Agamemnon” աշխատություններում թարգմանությանը ստեղծարար ուժ էին վերագրում⁷: Վերջինս, խոսելով անթարգմանելիության, հատկապես պոեզիայի անթարգմանելիության, օգտին, այնուամենայնիվ, գտնում էր, որ նույնիսկ այս հանգամանքը չպետք է խանգարի թարգմանություններ անելուն, քանի որ թարգմանությունը, ըստ նրա, գրականության ամենաառաջնահերթ և անհետաձգելի խնդիրն է: Ե՛վ Շլայերմախերը, և՛ Հումբոլդտը գտնում էին, որ թարգմանական որոշ ստրատեգիաներ կոչված են իրականացնելու մշակութային և սոցիալական բազմազան ֆունկցիաներ՝ ձևավորելով լեզուներ, գրականություններ, ազգեր: XX դարի սկզբում այս գաղափարները վերանայվեցին մոդեռնիստական շարժման տեսանկյունից, որը բարձր էր գնահատում թարգմանությունը՝ որպես մշակույթին կենսունակություն հաղորդելու միջոց: Վոլթեր Բենջամինը գտնում էր, որ թարգմանությունը մասնակցում է օտար տեքստի «հետմահու կյանքին»՝ ներկայացնելով դրա մի մեկնաբանություն, որն ավելին է, քան զուտ տեղեկությունների, ինֆորմացիայի փոխանցումը⁸: Թարգմանությունը վերակերտում է այն արժեքները, որոնք օտար տեքստը ձեռք է բերում ժամանակի ընթացքում, նոր կյանք է ստանում այլ լեզվամշակութային միջավայրում: Բենջամինն իր հոդվածում հիշատակում է Ռ. Փանվիցի մեկնաբանությունները թարգմանական ավանդույթների շուրջ. վերջինս հավանություն չի տալիս այն թարգմանություններին, որոնք «գերմանականացնում են հունարենը, անգլերենը, հնդկերենը, փոխանակ հնդկականացնելու, հունականացնելու, անգլիականացնելու գերմաներենը»: Ըստ Ռ. Փանվիցի՝ թարգմանությունը փորձարարա-

⁷ **Robinson, D.** (2002) *Western Translation Theory: from Herodotus to Nietzsche*, Manchester, St Jerome Publishing.

⁸ **Benjamin, W.** (1923) *The Task of the Translator* (in *The Translation Studies Reader*, ed. S. Gabrielyan, Yerevan, 2007, pp. 119-125).

կան արակտիկա է, որի արդյունքում թարգմանիչը պետք է խորացնի և ընդլայնի իր սեփական լեզուն օտար լեզվի միջոցով: Փիլիսոփա Կ. Ֆոսլերը գտնում էր, որ ազգային լեզուների զարգացման և պահպանման մեջ թարգմանությունը գործիքի դեր է կատարում, և թարգմանության շնորհիվ լեզվական իմաստը տալիս է իր վերջնական և հազվագյուտ ծաղիկները: «Ազգային գրականության մեջ գեղարվեստական կատարյալ թարգմանությունները, - գրում է Ֆոսլերը, - այն միջոցներն են, որոնցով ազգի լեզվական հանճարը պաշտպանում է իրեն այն ամենից, ինչ օտար է՝ խորամանկորեն նրանից վերցնելով հնարավոր ամեն ինչ»⁹: Մինչդեռ XIX դարի անգլիացի պոետ, ռոմանտիզմի ներկայացուցիչ, նվիրյալ թարգմանիչ Շելլին, ով թարգմանել է անտիկ հունական գրականությունից, գերմաներենից՝ Գյոթե, իսպաներենից՝ Կալդերոն, իտալերենից՝ Դանթե, «ունայնություն» էր համարում թարգմանությունը՝ գտնելով, որ յուրաքանչյուր բույս պետք է իր սերմից բուսնի, այլապես ծաղիկ չի տա»: Նրան են պատկանում թարգմանության մասին հետևյալ հայտնի խոսքերը. «... it were as wise to cast a violet into a crucible to discover its odour as to seek to transfuse from one eye into another the creations of a poet...»¹⁰:

Թարգմանությունը, բացի միջմշակությամբ հաղորդակցման միջոց լինելուց, նաև տեքստի **ընկալման** միջոց է, քանի որ շատ նրբություններ ու երանգներ, որոնք հնարավոր է՝ վրիպեն պարզապես ընթերցելիս, կարող են ի հայտ գալ թարգմանության ընթացքում: XX դարի նվաճումներից մեկը հենց այն էր, որ սկսեցին հաշվի առնել թարգմանության երկակի բնույթը՝ թարգմանությունը որպես գործընթաց, և թարգմանությունը՝ որպես արդյունք՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ թարգմանությունը մարդկանց տարբեր խմբերի համար տարբեր բան է:

Ընթերցողի, ունկնդրի համար թարգմանությունն առաջին հերթին տեքստ է, տեքստը՝ որպես արդյունք: Ոչ վաղ անցյալում թարգմանության տեսության և արակտիկայի մոտեցումներում գերակայում էր հենց այդ կողմնորոշումը, այլ կերպ ասած՝ թարգմանության տեսության ուշադրության կենտրոնում միայն թարգմանված տեքստն էր և այն պահանջները, որոնք ընթերցողը ներկայացնում է տեքստին, այն է՝ վստահելիություն:

Թարգմանչի համար թարգմանությունը, բացի տեքստ լինելուց, նաև

⁹ **Vossler, K.** (1932) *The Spirit of Language in Civilization*, London, Routledge.

¹⁰ **Shelley, P.B.** (1821) *The Violet and the Crucible from A Defence of Poetry* (in *The Translation Studies Reader*, ed. S. Gabrielyan, Yerevan, 2007, p. 107).

առաջին հերթին գործունեություն է, որը չի սահմանափակվում միայն տեքստով: Այսինքն՝ թարգմանությունը պահանջում է ոչ թե պարզապես սկզբնաղբյուր տեքստի ընթերցում, այլ խորը, բազմակողմանի, վերլուծական ընթերցում: Իսկ թարգմանիչն առաջին հերթին ընթերցող է: Ուրեմն թարգմանիչը պետք է ունենա խորը, բազմակողմանի, հիմնարար խորքային գիտելիքներ ոչ միայն թարգմանության բուն գործընթացի, այլև այն բնագավառի մասին, որից կատարում է թարգմանությունը և, իհարկե, սկզբնաղբյուր և թիրախ լեզուների, մշակույթների, պատմության մասին: Ըստ XIV դարի իտալացի հումանիստ, պետական գործիչ Լեոնարդո Բրունիի՝ թարգմանիչը պետք է ոչ միայն կատարելապես տիրապետի աշխատանքային լեզուներին, այլև խորապես ուսումնասիրի այդ լեզուներով ստեղծված մշակույթն ու դրա անցած ուղին: Իսկ ըստ XX դարի ամերիկացի փիլիսոփա Չարլզ Ս. Փիրսի՝ թարգմանությունը թարգմանչի համար գիտելիքների ձեռքբերման, կատարելագործման, հետազոտությունների անընդհատ, շարունակական, պարուրածև գործընթաց է, որն ընթանում է բնագրի, փորձառության և սովորության փուլերով:

Հետևաբար, թարգմանությունը մտավոր գործունեություն է, որն ընդգրկում է գիտակցված և չգիտակցված բազմաշերտ վերլուծություն (իմաստային դաշտերի, շարահյուսական կառուցվածքների, ընթերցողի կամ ունկնդրի սոցիոլոգիայի և հոգեբանության, մշակութային տարբերությունների և այլն), պրպտումների բարդ պրոցեսներ և պահանջում է ստեղծագործական մոտեցում տեքստային, սոցիալական, մշակութային խնդիրներ լուծելիս: Այն ենթադրում է բնագրի գաղափարների, հեղինակի ոգու փոխանցում, բնագրի ոճի և ձևի վերարտադրություն, որի նպատակն է ստեղծել սկզբնաղբյուր տեքստին համարժեք տեքստ և ապահովել ընթերցողի համարժեք ընկալումը:

ПЕРЕВОД КАК СРЕДСТВО ВОСПРИЯТИЯ, ПЕРЕДАЧИ СМЫСЛА ОРИГИНАЛА И МЕЖКУЛЬТУРНОЙ КОММУНИКАЦИИ

СЕДА ГАБРИЕЛЯН

Современное переводоведение можно охарактеризовать как результат междисциплинарных исследований, использующих методы целого ряда наук. С одной стороны, широкий спектр сфер вызывает трудности в научных исследованиях по переводу. С другой стороны, это способствовало разнообразию подходов к переводу, тем самым обогащая дисциплину. Благодаря этим подходам стало возможным обсуждать перевод с разных точек зрения. В статье

рассматривается роль перевода в восприятии, передачи смысла оригинала и становлении межкультурной коммуникации и взаимодействия культур.

Ключевые слова - переводоведение, перевод, восприятие, передача смысла, межкультурная коммуникация.

TRANSLATION: MEANS OF TEXT PERCEPTION MEANING TRANSFER AND INTERCULTURAL COMMUNICATION

SEDA GABRIELIAN

Translation Studies being interdisciplinary by their essence lead to scientific research methods of many branches necessitating the consideration of different factors. One of the difficulties of translation studies is their encompassment of a wide scope of study fields, on the other hand they have promoted a variety of approaches to translation, thus enriching the discipline and making possible the dealing with translation from different perspectives.

Hence, the objective of this article is to introduce the nature of interdisciplinary translation studies in the process of comprehending the source text, transferring its meaning, and establishing intercultural communication.

Key words – Translation Studies, translation, perception, transfer of meaning, intercultural communication.

ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐՆ ԸՆԴՈՒՄԻ ՆՐԱՆՑ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ

Տարածության և ժամանակի միասնականությունը (քրոնոտոպ) մանկապատանեկան գրականության մեջ հանդես է գալիս յուրահատուկ դրսևորումներով: Գրականության այդ ոլորտին ավելի բնորոշ է ժամանակի «ներփակ» հասկացությունը, երբ գրողները ներկայացնում են բնական ընթացքով իրար հաջորդող գործողությունների շղթա:

Քանակի բառեր - քրոնոտոպ, տարածություն ու ժամանակ, գեղանկարչություն, փոխկապվածություն, գրական կապեր, մանկապատանեկան, բնական ընթացք, փոխակերպում:

Ժամանակի ու տարածության կատեգորիաների, նրանց միասնականության (քրոնոտոպ) վերաբերյալ Արիստոտելի ժամանակներից մինչև մեր օրերը փիլիսոփաների, բնագետների, արվեստի ու գրականության տեսաբանների կողմից արտահայտվել են տարբեր կարծիքներ:

Արիստոտելը ժամանակի գոյության խնդիրը դիտարկում էր որպես ինքնուրույն էություն՝ նրա գոյությունը կապելով շարժման հետ, ու եզրակացնում, որ ժամանակը շարժման չափն է: Այսինքն՝ ժամանակը որոշակի հավասարաչափ ընթացք է, որի համապատկերում տեղի են ունենում բոլոր փոփոխություններն ու շարժումները: Ասել է թե՛ ժամանակը գոյություն չունի առանց շարժման: Հետագայում ժամանակի կատեգորիային անդրադարձել են Զ. Ֆրոյդը, Ֆ. Նիցշեն, Ա. Շոպենհաուերը, Կ. Յունգը, Թ. Մանը և ուրիշներ:

Ժամանակը բնութագրվել է որպես «իրար հաջորդող երևույթների հերթականություն, որտեղ ամեն մի մատերիական պրոցես զարգանում է մի ուղղությամբ»¹: Այն չի կարող հանդես գալ տարածությունից անկախ, որովհետև դրանք «գոյություն ունեն ոչ ինքնին կերպով, այլ գտնվում են այնպիսի ունիվերսալ փոխկապակցվածության մեջ, որտեղ նրանք կորցնում են իրենց ինքնատիպությունը և հանդես են գալիս որպես միասնական ու անբաժանելի տարածաժամանակի հարաբերական կողմեր»² :

¹ Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975, էջ 153:

² Նույն տեղում:

Գեղարվեստական գրականության մեջ ժամանակի ու տարածության միասնականությանն առաջինն անդրադարձել է Գ. Լեսսինգը. «Առարկաները գոյություն ունեն ոչ միայն տարածության, այլև ժամանակի մեջ: Նրանց գոյությունը ձգվում է, և իրենց լինելիության յուրաքանչյուր ակնթարթին նրանք կարող են հանդես գալ այս կամ այն տեսքով կամ դրսևորումներով»³: Այս առումով ուշագրավ են գեղանկարչության ու բանաստեղծության լեսսինգյան բնորոշումները. «...գեղանկարչությունն առարկայի միասնականությունն է տարածության մեջ, բանաստեղծությունը՝ հողաբաշխ ծայնի՝ ընկալված ժամանակի մեջ»⁴:

Ժամանակի զգացողությունը Ս. Սարինյանը կարևորում է այն առումով, որ այն «գեղարվեստական վերացություն է, այլ կեցության անհրաժեշտություն: Ի՞նչ ենք ժառանգել անցյալից և ի՞նչ ենք ստեղծում՝ գոյության իմաստն է սա և ստուգվում է անհատի քաղաքական հետագիծը հասարակություն, պետություն, հայրենիք հասկացություններում»⁵: Էդ. Ջրբաշյանի բնորոշմամբ «...իրականության արտացոլումը գրականության մեջ անհրաժեշտաբար կապվում է ժամանակի ու տարածության պատկերացումների հետ, ասել է թե՛ կենսական իրողությունները դրսևորվում են տարածաժամանակային որոշակի սահմաններում, ինչը, սակայն, չի նշանակում, թե ժամանակի գեղարվեստական արտացոլումը իրական ժամանակային ընթացքի պարզ վերարտադրությունն է»⁶:

Մանկապատանեկան գրականության մեջ ժամանակի ու տարածության միասնականությունը, իր դրսևորումների յուրահատկություններով հանդերձ, նույնպես «որոշում է գրական ստեղծագործության գեղարվեստական կապերը իրականության հետ»⁷ և ունի ինչպես բովանդակային, այնպես էլ ձևակառուցվածքային գործառույթներ:

Գեղարվեստական գրականության մեջ տարբերակվում են ժամանակի «բաց» և «ներփակ» եզրույթները:

Մանկապատանեկան գրականությանն ավելի յուրահատուկ է «ներփակ» բնորոշումը, երբ գրողը ներկայացնում է «բնական ընթացքով իրար հաջորդող

³ **Лессинг Г.** Лаоокон или о границах живописи и поэзии. Москва, 1933, стр. 111.

⁴ Նույն տեղում:

⁵ **Սարինյան Ս.**, Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, 1979, էջ 292:

⁶ **Ջրբաշյան Էդ.**, Գրականության տեսություն, Երևան, 1976, էջ 117:

⁷ **Бахтин М.** Вопросы литературы и эстетики. Москва, 1975, стр. 391.

իրողությունների շղթա»⁸: Այս պարագայում գեղարվեստական ժամանակը համընկնում է իրական ժամանակի հետ:

Ոչ հաճախ կարելի է հանդիպել նաև ժամանակի «բաց» դրսևորումների՝ ժամանակային տարբեր հոսքերի, նրանց համադրման կամ հակադրման տարբեր ձևերի:

Այս առումով հետաքրքիր է էդ. Միլիտոնյանի փորձը: «Վահագն վիշապաքաղի արկածները» վեպում ժամանակների տարբեր հոսքերի համադրման միջոցով նա «լայնացնում է գործողությունների ծավալման շրջանակները, Վահագնի կերպարը հարստացնում նոր գծերով»⁹: Վիպական գործողությունները հայ գրողը տեղափոխում է «Հայաստան աշխարհից դուրս՝ Եգիպտոս, Հռոմ, Պարսկաստան, Չինաստան, Հնդկաստանի Էլեֆանթ գավառ: Անսպասելի անցումներով հեղինակը Վահագնին ներկայացնում է տարածաժամանակային ամենատարբեր միջավայրերում, ուր նա շփվում է քաղաքակրթության տարբեր աստիճանների հետ»¹⁰:

Այնուհետև առասպելական ժամանակներում կատարված գործողությունները էդ. Միլիտոնյանը տեղափոխում է մեր օրեր՝ ժամանակի շարժմանը զուգընթաց ուղղություն տալով գործողությունների ընթացքին: Հին մշակույթ ունեցող երկրներում գիտեն օրենքի «հարգն ու վարկը», անձնական ու հասարակական հարաբերությունները խիստ կարգավորված են. «Եգիպտոսում Վահագնը հասկացավ, որ օրենքները խիստ են, ու կարգավորվում են բոլոր արարածների հարաբերությունները: Հայաստանում այդպես չէ, գործող օրենքները ստորադաս են չգործող օրենքներին: Այս հարցը պետք է քննարկել Հայաստանում և գրավոր օրենքի հարգն ու հարկը բարձրացնել»¹¹:

Էդ. Միլիտոնյանը հաճախ խախտում է ժամանակների անցյալ-ներկա-ապագա պայմանական սահմանները՝ իր գեղարվեստական մտահանգումների համապատկերում ուղղություն տալով ժամանակի շարժմանը: Այդ շարժմանը զուգընթաց՝ տարածական տարբեր հարթություններում Վահագնի հետ առընչվում են նոր կերպարներ՝ աշխարհընկալման իրենց յուրահատկություններով, բնավորությամբ, վարքագծով ու կենսակերպով:

Աշխարհի մի շարք երկրներում շրջագայելուց հետո վիշապաքաղը

⁸ **Ջրբաշյան Էդ.**, Գրականության տեսություն, էջ 118:

⁹ **Քոչարյան Ա.**, Առասպելից դեպի իրականություն, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Երևան, 2006, № 2, (34), էջ 69, 70:

¹⁰ Նույն տեղում, էջ 71:

¹¹ **Միլիտոնյան Էդ.**, Վահագն վիշապաքաղի արկածները, Երևան, 2003, էջ 58:

հայտնվում է Մոսկվայում ու շախմատի տախտակի առջև հանդիպում Գարի Կասպարովին: Նրանց խաղը, բնականաբար, ավարտվում է ոչ-ոքի, և երկուսն էլ անչափ զոհ են մնում, որովհետև ժամանակները փոխվել են, և «նոր ժամանակներում անհեթեթ է, որ անցունակ զինվորը, հասնելով վերջին կամ առաջին հորիզոնական, փոխարկվում է թագուհու (ամոթ է), վերածվում է նաև (եթե ուզում է) ձիու, փղի, նավակի: Զինվորը պիտի զինվոր մնա»¹²:

Ժամանակի տարբեր հոսքերի համադրման, տարածական տարբեր զուգահեռներում գործողությունների ծավալման միջոցով էլ. Միլիտոնյանն իր «պատանի ընթերցողի հետ ոչ թե պարզապես ճանապարհորդում է աշխարհի տարբեր հորիզոնականներում, այլ նրանց հետ խոսքի ու զրույցի է բռնվում, վիճում ու հաշտվում»¹³, հաշվի առնում նրանց կարծիքը, երեխային հնարավորություն տալիս կողմնորոշվելու ժամանակի ու տարածության զուգահեռներում: Տարածության ու ժամանակի տարբեր հարթություններում են տեղի ունենում նաև էլ. Միլիտոնյանի հեքիաթների գործողությունները, որոնց մեջ հեղինակը սյուժեն կառուցում է իրական ու երևակայական ժամանակների համադրությամբ:

Երեխաներին դասական մանկագրությունից ծանոթ կերպարները տեղափոխվում են մեր օրեր (թագավորներն ու իշխանավորները երթևեկում են ոչ թե ձիերով կամ կառքերով, այլ տրանսպորտային գերժամանակակից միջոցներով, անօդաչու սարքերով, արքայազները մեր օրերի նորածն հագուստներով մրցում են միմյանց հետ («Սև արկղի գաղտնիքը», «Հորինովի ձին», «Ագահն ու ամենակարողը» և այլն):

Սյունյաց աշխարհում դարեր առաջ և մեր օրերում տեղի ունեցող իրադարձություններին ու այդ լեռնաշխարհի բնությանն ու մարդկանց է նվիրված միջին դարոցական տարիքի երեխաների ընթերցանության համար նախատեսված «Սատանի կամուրջ» վեպը, որտեղ տարածաժամանակային տարբեր չափումների համապատկերում էլ. Միլիտոնյանն ընթերցողին տեղափոխում է մերթ միջնադար, մերթ մեր օրերը, մերթ ապագա, որտեղ առաջնային են լինելու գործող օրենքներ՝ «իրական առավելապես և ցանկալի, անգամ կենդանիների ու բույսերի համար ախորժալի»¹⁴:

¹² Նույն տեղում, էջ 128:

¹³ **Քոչարյան Ա.**, Առասպելից դեպի իրականություն, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Երևան, 2006, № 2, (34), էջ 72:

¹⁴ **Միլիտոնյան էլ.**, Սատանի կամուրջ, Երևան, 2012, էջ 6:

Անգեղակոթ գյուղի պատանիները՝ Արեգն ու Կարենն են աշխատում սահմանադրության վրա՝ հասարակական առաջընթացի յուրաքանչյուր շրջափուլից վերցնելով լավագույնը, որպեսզի այն «արևի լույսով լուսավոր լինի ու լուսավոր թրթռո հաղորդի իր քաղաքացիներին»:

Յուրաքանչյուր ժամանակաշրջան վեպում ներկայացվում է պատանի ընթերցողին մատչելի գեղարվեստական հնարքներով, և երեխաները յուրացնում են «պատմական անցյալի դասերը, սրամիտ, էպոսային ոճերը»:

«Մարդկային պատմության հին օրերից սկսյալ դարերի ընթացքում այնքան մանրամասն է մշակվել ամեն մի վայրկյանը», ժամանակի շարժումն այնպես հմտորեն է կարգավորվել, որ նրանից յուրաքանչյուր շեղում աղետալի իրադարձությունների, ողբերգությունների պատճառ կարող է դառնալ մեր օրերում: Այսքանով հանդերձ՝ մարդկությունը դեռ պիտի երկար ճանապարհ անցնի, որ հավասարություն լինի օրենքի առջև և ոչ հավասարություն անօրենի առջև:

Ոչ միայն ժամանակի շարժումն է բնավորության ու կենսակերպի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունենում, այլև աշխարհագրական միջավայրը: Քաջ ու անվախ են Արեգն ու Կարենը, որովհետև ծնվել ու մեծացել են Անգեղակոթում՝ Սիսական գավառի այդ անմատչելի արծվաբնում, որ դարերի ընթացքում «չի նահանջել ասորական Շամիրամի, պարսկական Դարեհի, հունական Կոնստանդինի, Հռոմի Պոմպեոսի ու Լուկուլոսի, արաբական Յուսուֆի, թաթարական Լենկ Թեմուրի, թուրքական Բեկերի ու շատ շատերի նվաճողական ախորժակի դեմ, էլ ո՞ր մնաց...»¹⁵, գազազած գայլերի, որ խորհրդրանշում են հարևան քոչվոր ցեղախմբերին:

Էդ. Միլիտոնյանի արձակ ստեղծագործությունները հիմնականում հասցեագրված են միջին դպրոցական տարիքի երեխաներին, չափածոն՝ կրտսեր:

Տարիքային յուրաքանչյուր խումբ ունի աշխարհայեցողության իր կերպը, տարածության ու ժամանակի մասին իր պատկերացումները:

Ի տարբերություն միջին դպրոցական տարիքի երեխաների՝ կրտսեր ու նախադպրոցական տարիքում երեխան այլ կերպ է ընկալում տարածությունն ու ժամանակը: Վերջիններիս պատկերացումներում «բնական ընթացքով իրար հաջորդող իրողությունների շղթան» ներկայացվում է «ներփակ» շրջանակներում՝ հիմնականում տարվա եղանակների (գարուն-ամառ-աշուն-ձմեռ)

¹⁵ Նույն տեղում, էջ 40:

կամ օրվա տարբեր հատվածների (լուսաբաց-առավոտ-կեսօր-երեկո-գիշեր) հերթականությամբ:

Ճիշտ է, տարիների ընթացքում ընդլայնվում է երեխայի մտահորիզոնը, ավելի են որոշակիանում ժամանակի ու տարածության վերաբերյալ նրա պատկերացումները, սակայն նախադպրոցական ու կրտսեր դպրոցական տարիքում տարվա եղանակներն ու օրվա հատվածները երեխաների մեջ ամրագրվում են որպես «հավերժական ներկայի» պատկերներ: Այդ տարիքում յուրաքանչյուր երեխա ժամանակի ու տարածության վերաբերյալ ունի իր պատկերացումները:

Ժամանակը երեխային հնարավորություն է ընձեռում հասունանալու, և երեխայի կողմից «ժամանակի յուրահատուկ զգացողությունը» մեծապես պայմանավորված է նրանով, թե ինչով է այն լցվում:

Յու. Սահակյանի, Ե. Պետրոսյանի բանաստեղծություններում ժամանակի հարցը քննվում է նրա դրսևորման տարբեր ձևերի մեջ. ծույլ ու անբան երեխաների համար այն անցնում է դանդաղ, ձանձրալիորեն միապաղաղ, միօրինակ: Խելացի, հետաքրքրասեր երեխաների համար ժամանակի բոլոր չափորոշիչները՝ րոպեն, ժամը, օրը, ամիսը, բովանդակալից են ու իմաստավորված, նրա ընթացքը՝ զարմանալիորեն արագ:

Մանուկներին հասցեագրված բանաստեղծություններում, ի տարբերություն այսպես կոչված «մեծական» պոեզիայի, ժամանակային շերտերը՝ անցյալի, ներկայի ու ապագայի ներթափանցումները, համարյա թե բացառվում են, դրանք ավելի շատ յուրահատուկ են պատանիների համար գրված արձակ ստեղծագործություններին:

Այդ բանաստեղծություններում որոշակի է նաև տարածությունը, և նրա միասնականությունը ժամանակի հետ ունի հուզական երանգավորում:

Հայրենի գյուղի լուսաբացները բացվում են թռչունների ուրախ ճովող յունով, առվակների ախորժալուր ձայներով, երեկոները մեղմ են ու խաղաղ, երկինքը՝ աստղերով լեցուն:

Երեխան տարածության մասին պատկերացում է կազմում իր ծննդավայրի, հայրենական տան, իր մանկապարտեզի, դպրոցի, դասարանի գեղարվեստական պատկերների, իսկ ժամանակի մասին՝ այդ սահմանափակ տարածություններում տեղի ունեցող դեպքերի ու իրադարձությունների միջոցով: Շրջապատող աշխարհը նրա համար դեռևս գույն է, ժամանակի շարժումը՝ գույների համապատկերում հրճվանք ու ծիծաղ, հնչյունային ելևէջներ:

Եվ ամեն ինչ զարմանալի ու հեքիաթային է նրա մտահանգումներում:

ЕДИНСТВО КАТЕГОРИИ ВРЕМЕНИ И ПРОСТРАНСТВА В ДЕТСКО-ЮНОШЕСКОЙ ЛИТЕРАТУРЕ

МЕЛИНЕ ГИЛАВЯН

Единство пространства и времени (хронотоп) в детской и юношеской литературе имеет свои особенности. Данной литературе более присуще понятие временной "замкнутости", когда авторы развивают действия сюжета в привычной, естественной последовательности.

Ключевые слова - хронотоп, пространство и время, взаимосвязь, литературные связи, естественный ход действия, изменяемость, непостоянство.

TIME & SPACE AND THEIR UNITY IN CHILDREN'S AND YOUNG ADULT LITERATURE

MELINE GILAVYAN

The unity of space and time (chronotope) in literature for children and young adults has its own special peculiarities. A more characteristic feature of the given type of literature is the concept of "insularity" in time, when the authors represent a chain of successive events occurring naturally.

Key words - chronotope, space and time, painting, interconnection, literary bonds, for children and young adults, natural course of events, transformation.

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ ԿԵՆՍԱՊԱՏՈՒՄԸ

ՆԱՐԻՆԵ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Հոդվածում ներկայացված է Աննա Պետրոսյանի «Սերն աշխարհեն խոռվել՝ կերթա» վեպը՝ կենսագրական ժանրի համատեքստում: Պարզաբանվում է գրողի մոտեցումը Քուչակի կերպարի մեկնաբանման հարցում, քննվում են դիպաշարի զարգացման և գեղարվեստական, ոճական որոշ առանձնահատկություններ:

Քանայի բաներ – կենսագրական վեպ, Նահապետ Քուչակ, իրական և գեղարվեստական կերպար, դիպաշարի զարգացում, գրական առնչություններ, բազմաձայնություն, դրամատիկական և հեքիաթային տարրեր:

Աննա Պետրոսյանի «Սերն աշխարհեն խոռվել՝ կերթա» (2004) վեպը նվիրված է Նահապետ Քուչակին: Գրողը Քուչակի կերպարը մեկնաբանում է յուրովի՝ հեռանալով բանաստեղծի իրական կերպարից: Այն գրողին հետաքրքրում է հայ հանճարի ունեցած դերի առումով և պատմական օրհասական ժամանակաշրջանում հայ ոգու հարատևության հաստատումով: Վեպի հարցադրումները խորն են, բայց հեղինակը չի կարողացել նպատակն իրականացնել՝ նշանավոր անհատի կենսագրությունից շատ հեռանալու պատճառով: Փաստ է, որ Քուչակի թողը նույնպես նշանավոր դեմք է եղել, իսկ այդ պարագայում նրան «քմահաճորեն» անժառանգ թողնելն անընդունելի է: Կենսագրական վեպերը հիմնվում են փաստի վրա, իսկ գեղարվեստականությունը պայմանավորված է հեղինակի անհատական շնորհով:

Վեպում առկա են բազմաձայնության որոշակի տարրեր: Հեղինակի ձայնը, ներկայությունը միշտ լսելի են Քուչակի հոգեաշխարհում: Հեղինակը խոսում է նաև ընթերցողի հետ՝ ներգրավելու իր պատումի մեջ: Երկխոսությունները շարունակվում են հերոսի մեջ: Հեղինակային խոսքի բացահայտ առկայությունը, հեքիաթային, առասպելական տարրերը և երազները կանխորոշում են գործողությունների ընթացքը: Հեղինակի դերասանական մասնագիտությունը նպաստել է վեպում բեմական-դրամատիկական տարրերի մուտքին, ինչը կենդանություն է տալիս վեպին:

Սյուժեի զարգացումը ձևավորում է կերպարը: Այգեպան Սարգսի որդին սիրում է այծարած Նանե աղջկան, և Ակնում՝ հայրեններով ու անտունիներով շնչող քաղաքում, ծնվում է նոր հայրեն. Նահապետը բանաստեղծում է սիրուց: Հետո նա տեսնում է խորհրդավոր մի երազ. Ակն քաղաքի բոլոր թևավորները

պատմում են Նանեի և այգեպան տղայի սիրո մասին, իսկ բնությունը հառաչում է. «Երանի իրենց»:

Երազը նախապատրաստում է գործողությունների ընթացքը: Նրա սիրո առարկային ամուսնացնում են հարուստ վաճառականի հետ, ով նրան տեսել էր Նահապետի հետ ունեցած սիրո վայելքից հետո, երբ «շապիկի կոճակը կրծքի վրա բացվել էր»¹: Նահապետը թողնում է հորը և այգին ու հեռանում է Ակնից: Իրականում, երբ Քուչակը հեռացել է իր բնօրրանից, մայրն էլ է կենդանի եղել: Հոր համար այգին անձնավորված է. «Բաց դռնակից ներս տարավ մինչև Ճղակոտոր դեղձենին...կանգնեց, նայեց երկար-երկար, հետո շոյեց կոտրած ճյուղի տեղը, մրմնջաց. – Կցավի՞... »²:

Դեղձենու կոտրած ճյուղն է ցավում, թե՛ իր որդի Նահապետի սիրտն է կոտրվել: Ճղակոտոր դեղձենին Սարգիս այգեպանի համար որդու՝ այգին կիսատ և տունն անտեր թողնելու խորհուրդն է դառնում: Դեղձենու պատկերը Նահապետի հիշողության մեջ արթնանում է քսան տարի հետո միայն, երբ վճռում է տուն վերադառնալ:

Նահապետի արարքն անընդունելի է, և հերոսը սկզբից հիասթափեցնում է. սիրուց մերժված լինելը տնից հեռանալու և ծերացած հորը միայնակ թողնելու հիմք չէր կարող լինել: Հերոսի ներքին մենախոսությունը և երկու եսի կռիվը փոքր-ինչ մեղմում են կասկածանքը. «Ամոթ է, դարձիր տունդ, ետ դարձիր այգիդ... Ակնա սարերից հայրդ ... ճամփին է նայում պանդուխտ զավակի... Դու ինչ պանդուխտ ես... Պանդուխտը կելնի իր տնից կերթա, որ ճար, հնար անի տանը թողած հարազատներին... Վաճառականը տարել է աղջկան, եկել ընկել ես սարեր ու ձորեր...»³:

Գրողը նրան հեռացնում է հայրենի քաղաքից, որպեսզի ցույց տա Հայաստան աշխարհի տարբեր անկյունները և տարբեր հերոսների ու միջավայրի մեջ դնի: Կերպարը ձևավորվում է աստիճանաբար, իսկ Նանեի տեսիլը նրան պիտի շարունակեր հետապնդել: Վեպում հեքիաթայինը և իրականը միահյուսված են: Հեքիաթային են Ակնը, սերը, մինչև անգամ ողբերգական հերոսներն են հեքիաթային տարրեր կրում և ավելի շատ էություն են, քան գոյություն:

Ահա կույր կինը, որ կուրացրել է իրեն, որովհետև աչքի առաջ մորթել են յոթ զավակներին, տեսել է իր և շրջակա գյուղերի ավերումը: Այդ մասին իմա-

¹ Պետրոսյան Ա., Սերն աշխարհեն խոովել՝ կերթա, Երևան, ՀԳՄ, 2004, էջ 18:

² Նույն տեղում, էջ 22:

³ Նույն տեղում, էջ 45, 46:

նում ենք վեպի վերջում, որովհետև երկար ժամանակ հեռացել էր ընթերցողի տեսադաշտից: Նա վառում է բոլոր մարած թռչունները՝ ապացուցելու համար, որ շեները չեն ավերվել, և հայոց օջախները չեն մարելու: Կինը միայն իր մտքերի հետ է և մի բառ է ասում՝ րուրի, հայրուրի, և օրորոցային երգում: Ողբերգական կերպարը մեծ խորհուրդ է ստանում՝ հայի կենսունակության խորհուրդը՝ «կույր», անմնացորդ սերը հայրենիքի հանդեպ: Կ.Ջարյանը կասեր. «Այս վիճակում գտնուող որեւէ ուրիշ ժողովուրդ պիտի վիատեր, ընկճեր, գլուխը առնէր ու փախչէր...»⁴: Թեկուզ վիրավոր ու խոցուոված է երկիրը, բայց հավերժանալու է նվիրյալների շնորհիվ:

Խորհրդավոր են նաև Սաթուն թափառականը և Սիսակ ջրաղացպանը, ով իր հերթին ձգտում էր միշտ աշխատեցնել իր ջրաղացը: Կերպարի նախանյութը Խրիմյան Հայրիկի «Պապիկ և թռնիկ»-ից է՝ թոռ Քուչակի մասին պատմող ավանդությունից: Չորս հոգով մի ամբողջ գյուղի մարդկանց, ավելի շուտ նրանց ոսկորները թաղելու արարողությունը ցնցող է իր ողբերգականությամբ և ազդեցությամբ: Սա նաև հեղինակի՝ կենդանի պատկերաստեղծման շնորհքից է գալիս. առարկայական նման տեսարանի հանդիպել ենք նաև հեղինակի «Մոզ քաղաքի կործանումը» վեպում, երբ պատկերել էր արաբների կատարած ոճրագործությունները Դվինում:

Նահապետի անձնական վիշտը չնչին է այս ողբերգությունների առաջ, չնչին է, երբ կոտորած է եղել, երբ տղահավաք (մանկաժողով) է եղել: Հեղինակը միտումնավոր գրող է, գաղափարներն ու մտքերը պարզորոշ արտահայտում է և ընթերցողին խորհելու տեղ գրեթե չի թողնում: «Մինչև այս շիրմաթմբի մոտ նստած չորսը լուռումունջ իրենց սրտի հետ կռիվ կտան, եկ, ես քեզ պատմեմ տղաժողովի մասին...»⁵: Ակնառու է, որ հեղինակը ձգտում է բացահայտել հայոց բախտի անմեկնելի քմայքը: Նա փորձում է գտնել ողբերգության պատճառները, իսկ դա առաջին հերթին դաժան ժամանակաշրջանն էր:

Բայց հայն ապրում է նույնիսկ այդ օրերում, ապրում է մաքառելով, անընդհատ մեռնելով և հարություն առնելով: Ահա մեկ այլ խորհրդանշական կերպար՝ եկեղեցու մարդը, ում Նահապետը հանդիպում է իր թափառումների ընթացքում, և ով հեռավոր կերպով միշտ ներկա է լինելու նրա մտապատկերում: Ծերը մանուկներ է կրթում, լեզու և հայրենիք է պահում և ամեն օր կառուցում է, կառուցում է այն եկեղեցին, որի մի կողմը Պարսկաստանի սահմանն է,

⁴ **Ջարեան Կ.**, Նաը լերան վրայ, տպարան «Հայրենիք», Պոսթըն, 1943, էջ 50:

⁵ **Պետրոսյան Ա.**, Սերն աշխարհեն խոռվել՝ կերթա, Երևան, ՀԳՄ, 2004, էջ 35:

մյուսը՝ Թուրքիայի: Բայց նա կառուցում է՝ խորհրդանշելով հայի կառուցողական, ստեղծագործ ոգու կրողի և փոխանցողի գաղափարը: Նահապետի հետ ունեցած զրույցում բացահայտվում է «Եկեղեցու շինարար Մարդու»⁶ հավատամքը.

«– ...Կապրեր մեր ազգն այս անագորույն ժամանակներում, թե չունենար պատմության գիր-թախսմանը... ամեն մի սերունդ իր ապրած ժամանակի մեջ պարտք ունի թողնելու իր գիր-թախսմանը... Ամեն մարդ իր ուժերը ներածի չափով պիտի մի տառով, կամ թեկուզ տառի մի գծով հաստատի ինքն իրեն իր ժամանակի մեջ... Դու այգեպան ես... քո գիր-թախսմանը քո այգու մեջ նոր ծառի մի շիվ տնկելն է...»⁷:

Հետաքրքրական է մայրենիի անաղարտության մասին պատկերացումը: Նահապետը, երբ փող մուրալու համար ստիպված է երգել, երգում է «ինչ լեզվով ասես, բացի իր Ակնա մաքուր բարբառից, բացի իր հայերենից»⁸: Ըստ հեղինակի՝ հայոց լեզուն արքայական լեզու է և իրավունք չունի եղծվելու:

Քուչակի կյանքը, այսպես ասած, գերվելու և գերությունից ազատագրվելու ընթացք է: Գերվում է թրքուհու կողմից, ում մոտ է պահվում քաղցր օշարակներով և համադամ կերակուրներով, և պիտի ծառայեր նրա կրքերի բավարարմանը. թրքուհին՝ որպես մեղքի մարմնավորում, հաճախ է կերպավորվել արևմտահայ գրականության մեջ: Թուրքին և թրքությունը մեկնաբանելու կերպը գրողն ակնհայտորեն որդեգրել է Հ. Օշականից, բայց չունի նրա խորաթափանցությունը. միայն ակնարկում է, իսկ ցուցադրումը թերի է մնում:

Գեղեցիկ է Նահապետի անձնագոհությունը՝ հանուն իր հայրենակցի կամավոր գերվելը: Գրողը փորձում է ապացուցել, որ աշխարհում բարին էլ է հաղթում, և իր հերոսի պատմած աղեկների մասին հեքիաթը (իսկ Օշականի հերոսուհին Աղվորն էր) հեքիաթ էր իր իսկ մասին: Տղան իր օրվա աշխատանքը տալիս էր իրենից խնդրողներին, իսկ ինքը տուն էր գալիս՝ հացի փոխարեն օրինանք ստացած: Այդպես է վարվում նաև ինքը: Գերի է վաճառվում Գրիգոր անունով հայ երիտասարդի փոխարեն՝ հանուն մի հայ ընտանիքի և իր ազգի գոյատևման: Իսկ հայ վաճառականի կողմից գերի գնվելու պարագայում էլ երևում է, որ եսը կորցրած հայը թուրքից էլ վատթար է:

Տարագրության մեջ ամեն ինչ կորցրած (որդեգրին՝ Գոռ մանկանը, ջա-

⁶ Նույն տեղում, էջ 71:

⁷ Նույն տեղում, էջ 68:

⁸ Նույն տեղում, էջ 123:

հելլությունը) հերոսը ճանաչել էր կյանքը: Բնաբանի տողերում հնչում է հարցը, որին հետևում է և պատասխանը. «– Ո՞ւր կերթաս, եղբայր: – Տուն կերթամ... Երթամ հասնեն ինքս ինձ»⁹:

Տունը սեփական ետը վերագտնելու, հարազատ էությանը դառնալու խորհուրդ ունի: Հայրն այլևս չկար, թեև «ապրել է այն գիտակցությամբ, թե հողն ու հայրենիքը անվախճան են»¹⁰: Իսկ տունը «դատարկ, հոգնած... ջանասեր սարդի օրինական տիրույթ»¹¹ էր դարձել. լքված տների վերջը: Երգած տխուր երգի ձայնը դեպի իրեն է կանչում խենթին: Ահա թե ով է առաջինը դիմավորում հերոսին: Կյանքում չհասկացված մարդուն խենթն է հասկանում, հասարակությունից օտարվածը. երբեմն խենթերն ավելի խոհեմ են. «Դու քո տան շեմն համբուրե, որ հարություն առնի...»¹²: Ակնեցիները արձագանքում են. – Տեսնող է եղել. լաց է եղել տան շեմին նստած... –Տան շեմը նրա համար է, որ պանդուխտը հետ դառնալիս նստի ու լաց լինի կորցրածի համար...»¹³:

Թվում է՝ հասուն մարդն արդեն ի վիճակի է հաղթահարելու դժվարությունները: Կարող էր նաև նրա կյանքը բարի հեքիաթներում փորձություններ հաղթահարած հերոսների վերջնական հաղթանակով պսակվել: Ակնում նրան սիրով են ընդունում, իսկ մի կին առանձնանում է բոլոր կանանցից և Նահապետի ոտքերն է վանում: Հեղինակը ոչ մի անգամ նրան Քուչակ չի ասում՝ հավանաբար մտերմություն պահպանելու և դարերի հեռավորությունը չքացնելու համար: Անցյալն ու ներկան միահյուսված են նաև հեղինակի այլ ստեղծագործություններում: «Երկար վերադարձ» դրամայում ուղղակիորեն ասվում է. «...ուզում էիր վերադառնալ այնտեղ, որտեղից սկիզբ էր առել քո երթը»¹⁴: Երթն այստեղ Արշիլ Գորկու անցյալն էր ու հիշողությունը և արդարացնում է հեղինակի միտումը: Բայց հետագա ստեղծագործություններին վնասում է: Հեղինակային այս մոտեցումն անորոշություն է առաջացնում, ինչը հիասթափեցնում է, որովհետև այս լուծումն ընդունելի կարող էր համարվել վեպի «խանձարուբային» վիճակի համար, երբ հերոսները թափառական-բախտախնդիրներ էին, բայց ոչ ժամանակակից վեպի դեպքում:

⁹ Նույն տեղում, էջ 199:

¹⁰ Նույն տեղում, էջ 204:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 205:

¹³ Նույն տեղում, էջ 210:

¹⁴ **Պետրոսյան Ա.**, Եկա որ մնամ ...: Պիեսներ, Երևան, «Սովետական գրող», 1986, էջ 242:

Վիպական զուգահեռների մեջ մի գիշեր նրա մոտ է հայտնվում խորհրդավոր կինը՝ Սաթենիկը, ով նրա ոտքերն էր վազել: Աստվածաշնչյան անառակ կնոջ՝ Մարիամ Մագդաղենացու կերպարի գծագրումն է սա՛ մի փոքր այլ ելակետով: Ասենք, որ Մարիամ Մագդաղենացու կերպարին հեղինակն անդրադարձել է հետագա ստեղծագործություններում («Մարիամ Մագդաղենացի և Փիլիպպոս»): Այս կինը պանդուխտի կին էր, չհարսնացած մի այրի, չի ճաշակել մայրության բերկրանքը և ուզում է երջանիկ լինել: Սաթենիկը հղիանում է. նա մայր դառնալու իրավունք ուներ: Իսկ Նահապետն ուզում էր, որ ծնվի, նույնն է, թե հառնի Գոռ մանուկը՝ իր որդեգիրը, իր զավակը: Բայց... Կար միջավայրի հակադրությունը, «ադաթ» կոչվածը, որ զորավոր էր. «Դաժան էր և չէր սահմռկում անհատներին զոհ տալու գնով պահել գլխավորը: Ակն քաղաքը թույլ չէր տալիս իր հեռու գնացած պանդուխտի սիրտը խոցվի, ու հոգին արյունի...»¹⁵: Այս պսակը դատապարտված էր նաև Աստծո կողմից: Եվ կատարվում են անխուսափելին ու նաև չնախատեսվածը. հենց եկեղեցում՝ սուրբ Մարնտուրիկում սրբուհու կերպարանքով մի կին, ով Սաթենիկին ծերացած Մարնտուրիկ (Մարիամ Աստվածածին) է թվում, ներկայանում է իբրև Երուսաղեմում եղած հաջի և հորդորում է, որ խմի իր ամանի պարունակությունից: Իսկ ամանում «տղա գցելու» համար նախատեսված հեղուկ էր, որ «սրբուհին» «պատահաբար» լցրել էր թույնի ամանի մեջ: Սաթենիկը մեռնում է Մարնտուրիկում՝ մայրերի հովանավոր եկեղեցում:

Պտուղը հասել էր. Նահապետը պիտի վայելեր իր այգու պտուղը և զավակ պիտի ունենար: Նոր հարվածն ավելի դաժան էր և առարկայական. նա այլևս չի կարող մնալ Ակնում և նորից հեռանում է: Նա, որ վերադարձել էր՝ իր տունն ու այգին ծաղկեցնելու, հարություն տալու իր Գոռ մանկանը, հեռանում է, և պարզ է, որ այս անգամ անվերադարձ: Սա լույսի ջահակրի կյանքն է: Այն մարդու, ում երգերն արդեն տարածվել են ամբողջ երկրով մեկ. մի վայրում թվականն է նշվում Նահապետ երգչի գալուց առաջ, և հետո մի այլ տեղում նա արդեն սուրբ է: Այսինքն՝ հեղինակը ոչ այնքան նրա երգի մասին է պատմում, որքան թողած ազդեցության:

Ակզբունքորեն հեղինակը հետևում է 1914 թ. Կ. Ջարյանի, Հ. Օշականի, Գ. Բարսեղյանի և Ա. Տատուրյանի հիմնադրած «Մեհյան» հանդեսին, որի առաջին համարն ազդարարում էր. «Պաշտամունք և արտահայտություն հայ

¹⁵ Պետրոսյան Ա., Սերն աշխարհեն խոովել՝ կերթա, Երևան, ՀԳՄ, 2004, էջ 233:

հոգվույն»¹⁶: Վեպը սյուժետային առնչությունների ունի Կ. Ջարյանի «Տատրագոմի հարսը» պոեմի հետ. Սաթենիկն ասես Սանայի կրկնօրինակը լինի, և ճակատագիրը ևս նույն լուծումն է ստանում:

Սա է նվիրյալի կյանքը, և հերոսն իր այգին ու տունը թողնում է այն երիտասարդին, ում բերանից լսել էր իր հորինած հայրենը: Այսինքն՝ երգը պիտի շարունակվի, հայը պիտի ապրի: Սա է վեպի ենթատեքստը և զաղափարը՝ հայի ոգու հայտնաբերումը: Վեպը վերջանում է խորհրդանշական պատկերով. մարդիկ տեսնում են Նահապետին եկեղեցու գմբեթի խաչին փարված. կտրում են խաչը գմբեթից, բայց նա մնում է իր խաչին փարված: Հանճարների ճանապարհը խաչն է և խաչին փարվելը՝ անձնագոհությունը և նվիրումը:

Հեղինակն իր վեպում արժարժել է բազմապիսի խնդիրներ՝ հայի ոգու, մայրենիի, հայոց պատմության և հայոց ճակատագրի քմայքների, հայ ժողովրդի կենսունակության բացահայտման հարցերը: Նպատակադրույթն, անշուշտ, լայն է, բայց դրան գնալու ճանապարհներն ու եղանակներն են անկատար: Գիրքը հետաքրքրությամբ է ընթերցվում: Տեսարանների միտումնավոր սրումն ուժեղացնում է տպավորությունը, երբ հերոսը կրկին է պատրանաթափվում, ազդեցությունը ցնցող է: Այնուհանդերձ, այն չի բավարարում հասուն ընթերցողին: Այն պայմանականորեն կարելի է համարել կենսագրական վեպ, որովհետև փաստից շատ է հեռացել, իսկ թափառական հերոսների առկայությունը և նրանց վերջից դեպի սկիզբ և վերադարձը նույն կետին բնորոշ էր XVI դարի վեպին:

Վեպի գրության ժամանակ արդեն ասպարեզում կար «Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը» գիրքը (2001), գուցե այն ինչ-որ առումով ազդակ կամ նյութ էր վեպի գրության համար, բայց ակադեմիկոս Թամրազյանը, հավաքելով և գրքում ներկայացնելով Ն. Քուչակի մասին եղած փաստերը, այն համոզմունքն է հայտնում, որ Ն. Քուչակն իրական անձ է եղել և ոչ թե հայրենների ժողովրդական անանուն աշուղ: Գրողն առկախ է թողնում Քուչակի կերպարը, և նրա փոխարեն կարող էր դրվել ցանկացած «թափառական», բայց ոչ XVI դարի հանճարեղ բանաստեղծ Նահապետ Քուչակը: Նրա հերոսը չի արդարացնում իր իսկ առաջարկած միտումը՝ ապացուցել, որ այդ ավերածությունների շրջանում հայը դիմադրեց իր հանճարով և հոգևոր արժեքների ստեղծմամբ: Հզոր անհատի կերպարը դառնում է ոչ թե առաջնոր-

¹⁶ «Մեհյան», թիվ 1, հունվար, 1914, նաև՝ Կ. Ջարյան, Նավատումար, «Սարգիս Խաչենց», Երևան, 1999, էջ 74:

դողի և իր հետևից տանողի կերպար, այլ խեղճ, լավկան, կամազուրկ մի հերոս, որը հուսահատեցնում է: Կերպարն արհեստական ու գունազուրկ է ստացվել. արհեստականորեն «հագել» է Քուզակի հագուստը, ինչը բոլորովին չի նստել վրան, իսկ անորոշությունը, ցավոք, գրողի մոտ արդեն սկզբունք է դարձել:

Վեպի խմբագիր Լ. Անանյանը գրել է. «Գրքի հերոս Նահապետ Քուզակ բանաստեղծը ... փորձում է հասնել սիրո ետևից: Կհասնի՞ արդյոք...»¹⁷: Գրեթե նույնն է ասում Հ. Համբարձումյանը «Մարիամ Մագդաղենացի և Փիլիպպոս» դրամայի համար. «Ինքնաքննման միջոցով է Փիլիպպոսը գտնում ճիշտ ճանապարհը, սակայն, այդուհանդերձ, գլխավոր հարցերն առկախ են մնում. կհաղթահարի՞ արդյոք նա սարսափը, կգնա՞ այդ ճանապարհով, երբ լույսը բացվի»¹⁸: Նույնը ասելու դեպքում կկրկնենք նրանց, բայց և այնպես չենք սխալվի: Եթե վերջինիս դեպքում կերպարի վերլուծության նման սկզբունքը ինչ-որ կերպ ընդունելի է, ապա Նահապետ Քուզակի կենսապատման համար լիովին մերժելի է. փաստական նյութից բոլորովին հեռացումը, կերպարի անորոշությունը հիասթափեցնում են: Իսկ Քուզակ մականվան չհիշատակելը նույնիսկ կասկած է հարուցում. արդյոք գլխավոր հերոսը Նահապետ Քուզակն է, թե՞ ինչ-որ բախտախնդիր:

Շրջուն շարադասությունները, հետադաս որոշիչները, կրկնությունները ոճաբանորեն ստեղծում են բանաստեղծական մթնոլորտ. երբեմն հաստատվածներ կան, որոնք արձակ բանաստեղծության տպավորություն են թողնում: Վեպում ձայներն ու ձայնային արձագանքներն ուղեկից գործոն են: Երկխոսությունները, մենախոսությունները, ներքին խոսքը և հեղինակի խոսքը վեպում դրամատիկական տարրեր են մտցրել: Վեպին բնորոշ են ներժանրային թափանցումները. այն արձակի, դրամայի և որոշ չափով էլ բանաստեղծության խառնուրդ է: Թերություն է, անշուշտ, այն, որ նա քիչ է օգտվել Քուզակի բառապաշարից, պատկերների առատ «ներկայակից», մեջբերումները հայրեններից աննշան են: Վեպում գրեթե չի զգացվում Քուզակի «շունչը»: Վեպը հանձնարարելի է դպրոցականներին:

¹⁷ Պետրոսյան Ա., Սերն աշխարհեն խոռվել՝ կերթա, Երևան, ՀԳՄ, 2004, էջ 2:

¹⁸ Համբարձումյան Հ., Աննա Պետրոսյան. «Մարիամ Մագդաղենացի և Փիլիպպոս»// Զուգահեռ ընթերցումներ (Ուսումնասիրություններ և հոդվածներ), Երևան, «Գրական էտալոն», 2012, էջ 226:

ЖИЗНЕОПИСАНИЕ НААПЕТА КУЧАКА

НАРИНЕ КАРАХАНЫАН

В статье представлен роман Анны Петросян "Любовь обиделась на мир, она уходит" в контексте биографического жанра. Выясняется отношение писателя к вопросу интерпретации образа Кучака, рассматриваются композиционное развитие и некоторые художественные и стилистические особенности романа.

Ключевые слова - биографический роман, Наапет Кучак, реальный и вымышленный персонаж, разработка композиции, литературные связи, полифония (многоголосие), драматические и сказочные элементы.

THE LIFE HISTORY OF NAHAPET KUCHAK

NARINE KARAKHANYAN

This article is a review of Anna Petrosyan's novel "Love Holding Grudge Against The World Goes Away" in the context of a biographical genre. Karakhanyan elucidates Petrosyan's interpretation of Quchak's character. The compositional development as well as certain artistic and stylistic features of the novel are also studied.

Key words - Biographical novel, Nahapet Kuchak, real and fictional characters, compositional development, literary connections, polyphony, dramatic and fantastic elements.

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՌԱԲԲԻ ՀԻԼԼԵԼԸ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՏՈՒՇ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Հոդվածում ցույց է տրվում, թե ստեղծագործական ինչ մոտեցմամբ է Իսահակյանը գրական մշակման ենթարկել «Ռաբբի Հիլլելի» մասին եղած ավանդությունները: Քրիստոնեական սիրո և համամարդկային ներդաշնակության համար նրա մասին պատմվող ավանդություններից որո՞նք է ընտրել և սյուժետային ի՞նչ ընթացքով է դրանք ներկայացրել, որպեսզի առավել ցայտուն արտահայտի աստվածային պատվիրանների կատարման անհրաժեշտությունը:

Բանալի բառեր – անտիկ փիլիսոփայություն, Արիստոտել, Օրենքի ուսուցում, սիրելի մերձավորին, համբերություն, բարեգործություն, երեկոյան դպրոց, աշակերտ, դըռնապան:

Իսահակյանի ստեղծագործություններում Աստվածաշնչի պարականոններից բացի տեղ են գտել նաև արևելյան, այդ թվում և երբայական թեմաներով գրված լեգենդների և ավանդությունների գրական մշակումները, որոնք մի նոր փայլ և վերաիմաստավորում են ստացել նրա աշխարհայացքի շրջանակում:

Դրանցից է Սինեդրիոնի երկար տարիների գլխավոր ուսուցիչ Հիլլելի կյանքի ավանդախառն պատմությանը նվիրված նույնանուն ստեղծագործությունը: Հիլլելն այնքան հոչակված է եղել, որ նրա իրական կենսագրությունը Մովսես մարգարեի կյանքի ժամանակային բաժանմամբ է ներկայացվել: Ըստ այսմ ասվել է, որ նա ապրել է 120 տարի, որն իր հերթին, ինչպես Մովսես մարգարեի դեպքում, բաժանվում է 3 քառասնյակների: 40 տարեկանում Պաղեստին է եկել, 40 տարի Օրենքն է սովորել և 40 տարի վարդապետել¹:

Նրա քարոզությունը նախորդել է Քրիստոսի վարդապետությանը և կրում է այդ շրջանի հոգևոր-բարոյական ըմբռնումների կնիքը:

Այս հանգամանքը լավագույնս արտահայտվել է Իսահակյանի ստեղծագործության մեջ, որտեղ Ռաբբի Հիլլելը կարծես յուրօրինակ կապող օղակ է հրեական Օրենքի և ավետարանական վարդապետության միջև, ով Օրենքը և օրենքի խստությունը ներդաշնակեցնում է սիրո և ներման գաղափարին: Ան-

¹ Еврейская энциклопедия. Т. 6. Санкт-Петербург, 1912, стр. 490.

ցումային նման ընթացքը Իսահակյանը ընդգծել է նաև այս պատմություն-ավանդության ենթավերնագրում՝ այն խորագրելով «Քրիստոսից 50 տարի առաջ»:

Ստեղծագործությունը գրված է ոչ թե ընդհանրապես նրա մասին եղած պատմությունների հիման վրա, այլ Իսահակյանը գրեթե բառացի թարգմանություն է տեղերի հետևառաջությամբ բերում է նրան վերաբերող պատմության տարբեր հատվածները «Եբրայական հանրագիտարանի» մեջ գտնվող «Гил-гел» բառահոդվածից, որը հիշյալ հանրագիտարանի 6-րդ հատորի 490-506 մեծադիր երկայուն էջերն է զբաղեցնում:

Ստեղծագործության վերլուծությունը և գրական մշակման համեմատությունը հիմք ծառայած բնագրի հետ կատարել ենք ըստ այս հատորի: Որպեսզի առավել ցայտուն երևա Իսահակյանի կատարած թե՛ փոխադրությունը և թե՛ գեղարվեստական մշակումը, հիմք ծառայած բնագրային հատվածները ոչ թե թարգմանել ենք, այլ բերել ռուսերենով՝ փոխելով միայն բնագրի հին ուղղագրությունը և այն դարձնելով ռուսերենի այժմյան ուղղագրությամբ:

Ավանդությունը սկսվում է Հիլելի՝ Բաբելոնից Երուսաղեմ գալով և շարունակվում է նրա կյանքի տարբեր դրվագներով՝ ավարտվելով Հիսուսի նշանավոր խոսքերի հետևողությամբ ռաբբիի տված պատգամով:

Այս ստեղծագործության յուրաքանչյուր պարբերությունն իր բնագրային համարժեքն ունի «Եբրայական հանրագիտարանի» ծավալուն բառահոդվածի տարբեր հատվածների հետ, որոնցից Վարպետը հյուսել է մի նոր շքեղ և խորունկ պատմություն:

Ավանդության սկզբի առաջին պարբերության մեջ, որը կազմված է մեկ նախադասությունից, ասվում է, որ ռաբբի Հիլելը Բաբելոնից Երուսաղեմ էր եկել իր գիտությունը լրացնելու տենչով²:

Երկրորդ պարբերության մեջ ասվում է. «Օրավարձով աշխատում էր նա, վարձի կետով կերակրում էր ընտանիքը, մյուս կեսը տալիս էր հոշակավոր դպրոցի դռնապանին՝ իրավունք ունենալու համար ունկն դնելու աստվածային խոսքին, որ վարդապետում էին նշանավոր օրենստույցները՝ ռաբբի Շեմայան և Ավտալիոնը»:

«Եբրայական հանրագիտարանում» ասվում է, որ նրա եղբայրը վաճառական էր և իր օգնությունն է առաջարկում, որ նա սովորի առանց նյութական հոգսի վրա ժամանակ ծախսելու: Ի պատասխան Հիլելն ասում է. «Եթե ոչ

² Еврейская Энциклопедия. Т. 6, стр. 491.

ես ինքս իմ համար, հապա ո՞վ իմ համար պետք է մտահոգվի»³: Իսահակյանը դուրս է թողել այս մանրամասը, որ առավել ընդգծի Հիլլեի իր աշխատանքով ընտանիքը պահելը և կրթություն ստանալը, որի մասին ռուսերեն բնագրում ասվում է. «Гиллель зарабатывал обыкновенно один тропаак в день. Половина его шла на прокормление его семейства, а другую половину он отдавал привратнику академии на вход на ночные лекции Щеман и Абталиона» (էջ 491):

Ռուսերենի «սովորաբար օրեկան աշխատելը» Իսահակյանը դարձրել է «օրավարձ»՝ առանց նշելու դրամի չափը: «Երեկոյան դպրոցը» դարձել է «հոշակավոր դպրոցը»:

Այնուհետև ասվում է. «Մի օր նա վաստակ չէր ունեցել, և դռնապանը ձրի չթողեց նրան դպրոց մտնելու. այն ժամանակ նա բարձրացավ տանիքը և երդիկի պատուհանից գլուխը կախեց ներս՝ լսելու համար ուսուցիչին»՝ «Однажды он не нашел заработка, и привратник не пустил его в академию. Для удовлетворения своей любознательности Гиллель взобрался на крышу здания и прислонился к слуховому окну, откуда он мог все слышать» (էջ 491):

Իսահակյանն այստեղ ավելացրել է «ձրի» բառը՝ ավելի ընդգծելու, որ Հիլլեին ամենօրյա վաստակի կեսը տալիս էր դռնապանին: Իսահակյանը դուրս է թողել «Իր հետաքրքրությունը բավարարելու համար» կապակցությունը՝ գործողությունների ընթացքն ավելի շեշտակի դարձնելու համար, որ նա միանգամից տանիքն է ելնում:

Հաջորդող նախադասությունները ևս ունեն որոշակի նրբերանգային փոփոխություններ. «Շաբաթամուտ երեկո էր, ձմեռ էր, և ձյուն էր գալիս գիշերն ամբողջ»՝ «Была зимняя субботная ночь, и с неба падал густой снег, покрывший Гиллель толстым слоем, под которым он, усталый, голодный, незаметно уснул»:

Ընդգծված մասն Իսահակյանը դուրս է թողել: Այն պարզվում է հետագա շարադրանքից: Հիլլեի քնելը կրկնակի է իմաստավորված: Նախ՝ այն ցույց է տալիս նրա անօրինակ նվիրվածությունը Օրենքը յուրացնելուն և երկրորդ, որ նա քնում է սկսվող շաբաթ օրը, իսկ երրայական օրենքով շաբաթ օրը աշխատել չէր կարելի: Հետևաբար՝ նրան ձյան տակից փրկելն իսկ ինչ-որ տեղ քննարկման հարց է դառնում: Այս հարցադրմամբ է զարգանում գործողություն-

³ **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հտ. 5-րդ, էջ 201:

ների ընթացքը հիշյալ դրվագում. «С наступлением рассвета учителя заметили облик человека в слуховом окне, пошли наверх, сняли окоченевшего Гиллель, развели огонь, отогрели его и привели в чувство»:

«Եվ երբ առավոտ եղավ, Շեմայան ասաց Ավտալիոնին.

– Եղբայրդ իմ Ավտալիոն, միշտ այս պահին լույս է լինում, ինչո՞ւ այսօր մուգ է:

Բոլորը վեր նայեցին և տեսան մարդկային մի դեմք, որ բռնել էր ողջ լուսամուտը, բարձրացան տանիքը և գտան Հիլլելին ծյունի հաստ շերտի տակ ծածկված, վար բերին, մաքրեցին վրան և նստեցրին վառարանի մոտ»:

Երդիկի պատուհանից ներս կախված քնելը գործողությունների զարգացման երկու տարբեր ընթացքներով է մեկնաբանված: Եբրայականում ասվում է, որ երբ լույսը բացվեց, լսարանում գտնվողները տեսան երդիկի պատուհանից ներս կախված նրա գլուխը: Հայերենում ասվում է, թե ինչու ներս չի թափանցում լույսը:

Կենցաղային բնույթի տեղեկություններ կան նաև նրան գիտակցության բերելու մասին տողերում: Եբրայականում ասվում է, որ կրակ են վառում և գիտակցության բերում: Հայերենում հայկական միջավայրին բնորոշ ձևով նրան սենյակ են բերում և տաքացնում վառարանի մոտ:

Հիլլելի մասին «Եբրայական հանրագիտարանում» բերված ավանդագրույցների շարքից Իսահակյանն ընտրել է երեք բնորոշ պատմություն, որոնք լավագույնս են բնորոշում նրա կերպարը: Ներկայացվող առաջին պատմությունը ավարտվում է շաբաթապահության հետ հարաբերվող հետևյալ եզրահանգմամբ:

«Этот человек, сказали они, стоит того, чтобы ради него был нарушен закон о субботном отдыхе»:

«– Արժանի էր, եղբայրներ, և մեղք չէր բնավ սրա համար բեկանել նվիրական շաբաթը, ասացին իրենց ռաբբիները և դպրոցականները բոլոր»:

Ընդգծված կապակցություններում ռուսերենում եթե ասվում է, որ նրա համար արժեք խախտել շաբաթը, ապա Իսահակյանն ավելի հանդիսավոր ու վեհ, խոսքին անգամ որոշակի ծիսականություն հաղորդելով է բնութագրում շաբաթը և վերջինիս խախտումն անվանում է «բեկանել»:

Հաջորդ պատմությունը վերաբերում է Հիլլելի անսահման համբերությանը և դիմացիներին օգտակար լինելու ձգտմանը: Մինչ նրա զարմանալի համբերությանը վերաբերող պատմությանն անցնելը Իսահակյանը երկրորդ դրվագի սկզբում համառոտ վերաշարադրմամբ ներկայացնում է ևս երկու պատմու-

թյուն, որոնցից առաջինը վերաբերում է նրա գիտելիքներին, իսկ երկրորդը՝ գթասիրությանը:

«Եբրայական հանրագիտարանում» ընդգծվում են նրա ոչ միայն Օրենքի քաջիմացությունը և մեկնաբանումը, այլև անտիկ փիլիսոփայությանը և մասնավորապես Արիստոտելի գործերի իմացությունը:

Իսահակյանը, սակայն, միայն փիլիսոփայության իմացությունը բավարար չի համարում: Ժամանակի բնապաշտական ուսմունքների հետևողությամբ և ինչպես որ հայկական ժողովրդական հեքիաթներում ու հավատալիքներում է ասվում իմաստունների համար, ավելացրել է նաև բնության լեզուն և տարերքը ընկալելու իմացությունը. «Ամեն գիտության հաղորդ էր նա և գիտեր բոլոր լեզուներն ու բարբառները: Նա ուսեց լեռների ու հովիտների ձայնը, ծառերի ու սեզերի սոսափյունը, թռչունների լեզուն և նույնպես անասունների լեզուն»:

Ապա գալիս է աղքատասիրության մասին պատմությունն ըստ «Եբրայական հանրագիտարանի»:

«О благотворительности Гиллель предание сообщает, что помогая бедному, он считал своей обязанностью доставлять ему не только все необходимое для существования, но и те удобства жизни, к которым тот привык»:

«Եվ հեզ էր նա, և բարեհամբույր, և անհուն համբերանքով և անհուն բարությանբ լի: Իր օրվա պարենը տալիս էր չքավորներին և դժգոհ էր, որ ավելին չուներ տալու»:

Իսահակյանը Հիլլելի նման անսովոր ձգտումը մեկնաբանել է որպես աղքատներին օգնելու առավելագույն ցանկություն, որ վատ է զգացել աղքատներին շատ ավելի չօգնելուց:

Եբրայական պատմության մեջ նրա կինը ներկայացվում է որպես համախոհ, ով ևս նույն նվիրվածությամբ օգնում է աղքատներին: Ասվում է, որ Հիլլելը մի անգամ ընկերոջը հրավիրում է տուն ճաշի՝ այդ մասին զգուշացնելով կնոջը: Երբ նրանք գալիս են, շատ երկար են սպասում, մինչև կինը ճաշը բերում է: Նա հետո է իմանում, որ մի աղքատ եկել և կնոջն ասել է, թե ինքը այդ օրն է ամուսնացել և տանը ոչինչ չունի կնոջը կերակրելու համար: Հիլլելի կինը պատրաստի կերակուրը կաթսայով տվել էր աղքատին և նորից ճաշ պատրաստել:

Իսահակյանի մոտ որևէ հիշատակություն չկա նրա կնոջ մասին, ինչին թերևս կարելի է հետևյալ բացատրությունը տալ: Նախ, որ սյուժեի ընթացքը ուղղագիծ զարգանար, և կնոջ հետ կապված մանրամասներ չլինեին: Երկ-

րորդ՝ կուսակրոնության ընդհանրացած Հայ եկեղեցական ավանդույթով Իսահակյանը ըստ երևույթին ցանկացել է նրան պատկերել միայնակ, ամբողջովին ուրիշների հոգածությանը նվիրված մի հոգևորական:

Հիլելի համբերությանը նվիրված պատմությունն ավելի ծավալուն է, և այստեղ Իսահակյանն ավելի շատ է հեռացել բնագրից: Բնագրային համեմատությունների շարքով շարադրանքը շատ չձանրաբեռնելու համար բերենք միայն մի քանի բնորոշ օրինակներ՝ կատարելով ընդհանուր տեքստային համեմատություն:

Պատմության սկզբում ասվում է.

«Некто держал с товарищем пари на 400 зуз в том, что ему удастся вывести Гиллея из терпения и рассердить его» (էջ 505):

«Նրա համբերությունը փորձելու համար մարդիկ միշտ գրավի էին մտնում. մի անգամ երկու մարդ գրավ բռնեցին. նրանցից մեկը համառորեն պնդում էր.

– Ես նրան կգայրացնեմ, անպատճառ...»:

Գրագի չափի նշումը Իսահակյանը դուրս է թողել, որովհետև այն հիշվում է նաև վերջում: Մասնավորից ընդհանրացվածության գնալով՝ նշում է, որ շատերն էին փորձում նրա համբերությունը:

Այնուհետև ասվում է.

«Был канун субботы, и Гиллель мыл голову ввиду наступающего праздника. Тот пришел, и постучал в дверь, невежливо покрикивая: «Здесь ли Гиллель, здесь ли Гиллель?»:

«Շաբաթամուտ էր. Հիլելը իր բնակարանում պատրաստվում էր լոգանք առնելու, երբ եկավ գրավ բռնող մարդը և ձայնեց.

-Տա՛նն է ռաբբին, տա՛նն է Հիլել ռաբբին»:

Գլուխը վանալը Իսահակյանը փոխարինել է լոգանքի պատրաստվելով: Նա նաև դուրս է թողել գրագ եկողի ոչ պատշաճ պահվածքը՝ պարզապես գրելով, որ վերջինս թակում է դուռը:

Նրա տված հարցերին պատասխանելուց հետո, երբ Հիլելը վերստին պատրաստվում է լոգանք ընդունելու, հիշյալ անձնավորությունը երրորդ անգամ է դուռը թակում և հաջորդ հարցը տալիս, որին ևս համբերությամբ է պատասխանում Հիլելը: Երրորդ անգամ կրկնվելուց հետո ոչ թե ռաբբիի, այլ հարցը տվողի համբերությունն է սպառվում: Նա գայրացած ասում է, որ Հիլելի պատճառով տանուկ տվեց գրազը և 400 զուգ կորցրեց: Պատմությունն ավարտվում է Հիլելի հետևյալ խրատալից եզրահանգմամբ.

«Будь, мой сын, впродерь осторожней. Впрочем, лучше, что ты потерял 400 зуз, чем если бы я потерял терпение»

«– Գնա՛, սիրելիս, և սրանից հետո խոհեմ եղիր: Հիլլելին ոչ ոք կարող է գայրացնել»:

Իսահակյանի մոտ եզրահանգումը շատ ավելի ուսուցողական և հումանիստական է: Չի ասվում, թե ավելի լավ է, որ իր դրամը կորցնի, քան թե Հիլլելը՝ իր համբերությունը:

Ավանդագրույցը երրորդ դրվագով հասնում է իր խորիմաստ ավարտ-եզրահանգմանը: «Եբրայական հանրագիտարանում» ըստ թեմատիկ տարբեր հարցադրումների բերված պատմություններից այս երեքը ընտրելը համապատասխան հերթականությամբ և նրանց միջոցով գործողությունների հաջորդականությունը փոխանցելը՝ վերջում հասնելով ասելիքի բարձրակետին, արդեն իսկ նշանակում էր նորովի մեկնաբանել և մի նոր իմաստ հաղորդել որպես սկզբնաղբյուր ծառայած բնագրին:

Վերջին դրվագը կառուցված է Օրենքին խստասիրտ հետևելու և մերձավորին սիրելու քրիստոնեական գաղափարը Թորայի վրա տարածելու համեմատության վրա: Այստեղ որպես հակադրապատկերներ են ներկայացվում ռաբբի Շամման ու ռաբբի Հիլլելը: Այս հակադրությունը գալիս է սկզբնաղբյուր բնագրից, որտեղ ևս նրանք ոչ միայն աստվածաբանության բնագավառում տարբեր հայացքներ ունեին, այլև բնավորությամբ իսկ հակապատկերներ էին: Մեկը՝ անհանդուրժող և սխալի համար մեղադրող, իսկ մյուսը՝ մեղմ և բացատրող: Հակադրությունների այս շարքից Իսահակյանն ընտրել է հետևյալ պատմությունը:

Մի հեթանոս գալիս է ռաբբի Շամմայի մոտ և նրան ասում, որ ինքը կընդունի եբրայական հավատը, եթե վերջինիս էությունը ռաբբին բացատրի այնքան ժամանակում, որքան ինքը կկարողանա կանգնած մնալ մեկ ոտքի վրա: Շամմայը նրան դուրս է անում, և մարդը դիմում է Հիլլելին: Այս հատվածում Իսահակյանը կատարել է երկու փոփոխություն: Եբրայական պատմության մեջ հեթանոսն է դիմում և ոչ թե օտարականը: Հեթանոսն ավելի կոպիտ համարելով՝ Իսահակյանն այն փոխարինել է Արևելքում ընդունված օտարականով:

Այժմ ներկայացնենք օտարականի դիմումը Հիլլելին՝ ըստ եբրայական տարբերակի և Իսահակյանի մշակման.

«Что тебе неприятно, того не делай ближнему, вот сущность всей Торы, все остальное только комментарий, иди изучай» (էջ 502):

«– Մի՛ անիր մերձավորիդ այն, ինչ որ դու չես ուզում նույնը քեզ անեն:

Սրա մեջ է ողջ էությունը Թորայի, մնացածը մեկնություն է, - պատասխանեց հեգահամբույր Հիլելը»:

Հիլելի խոսքի մի շատ կարևոր տրոհում է կատարել Իսահակյանը: Նախ նա անջատել է խոսքի այն հատվածը, որը միջանկյալ տեղ է գրավում Ղևտացոց գրքի «Եւ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո» (ԺԹ 18) և Մատթեոսի ու Ղուկասի ավետարանների «Եւ որպէս կամիք թէ արասցեն Ձեզ մարդիկ, այնպէս արասցիք եւ Դուք նոցա» (Մտթ. է 12, Ղուկ. Զ 31) խոսքերի միջև: Իր հերթին Իսահակյանը վերախմբագրել է ռուսերենում առկա տողը: Շարահասության փոփոխությամբ ավելի ընդգծվել է մերձավորին լավը ցանկանալու գաղափարը:

Երկրորդ՝ Թորային վերաբերող բնորոշումը նույնությամբ բերելով՝ դուրս է թողել օտարին ուղղված «զնա՛ սովորիր» պատվերը՝ երկի թե այն ինչ-որ տեղ պարտադրանք համարելով: Եբրայերենը եթե ավարտվում էր Հիլելի խոսքերով, ապա Իսահակյանը նրա խոսքերից հետո ավանդազրույցն ավարտել է Հիլելին տրված բնորոշմամբ՝ նրան անվանելով հեգահամբույր:

Ավանդազրույցի սկզբնական տարբերակում կան ևս երեք հատվածներ, որոնք իրենց նախօրինակն ունեն «Եբրայական հանրագիտարանում»: Վերջնական մշակման մեջ, սակայն, դրանք դուրս են մնացել:

Հիշյալ հատվածներից երրորդում ուղղակիորեն է արտահայտվել անցումը կամ նախապատրաստությունը քրիստոնեությանը: Այդ հատվածում ասվում է, որ նա ունեցավ 80 աշակերտ, ովքեր, անկախ իրենց իմացության աստիճանից, իրենց բարոյական հատկանիշներով և քարոզությամբ «100 տարվա ընթացքում եղան աննկուն ուղի հարթողները Հիսուս Նազովրացու սիրո և խաղաղության ուսմունքի»⁴:

Նման բնորոշումը նաև օգնում է հասկանալու, թե ենթավերնագրում ինչու է ասվում «Քրիստոսից 50 տարի առաջ»: Ըստ «Եբրայական հանրագիտարանի»՝ նա ծնվել է մ. թ. ա. 110թ.: Քրիստոս իր քարոզչությունը սկսեց 30 տարեկանում: Փրկչի քարոզչությունից 100 տարի առաջը լինում է մ. թ. ա. 70 թվականը: Ճիշտ այն ժամանակը, երբ լրացավ Հիլելի առաջին 40-ամյակը, և նա եկավ ուսանելու: Հետևաբար, նրա ուսանելու սկիզբը դառնում է և քրիստոնեական գաղափարների նախապատրաստության շրջանը:

Ասվածին համահունչ է Գ. Հովհաննիսյանի տված բնորոշումը, որ այս ստեղծագործության մեջ «իմաստավորվում է հանդուրժող ոգու, մարդուն ան-

⁴ Իսահակյան Ավ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 5-րդ, էջ 751:

շահախնդիր օգնական ու սատար լինելու հինավուրց բարոյախոսությունը»⁵:

ПРОИЗВЕДЕНИЕ АВ. ИСААКЯНА “РАВВИН ГИЛЛЕЛЬ”

АРТУШ МКРТУМЯН

Статья посвящена анализу литературной обработки и творческого подхода Исаакяна приданий о Раввине Гиллеле. Обсуждается какие именно из приданий, повествующих о христианской любви и всечеловеческой снисходительности Раввина, были выбраны и обработаны поэтом, чтобы более ярко выразить необходимость соблюдения божественных заповедей.

Ключевые слова – античная философия, Аристотель, обучение Закона, любить ближнего, терпение, благотворительность, вечерняя школа, ученик, привратник.

“RABBI HILLEL” BY AVETIK ISAHAKYAN

ARTUSH MKRTUMYAN

This article is devoted to the creative approach of Avetik Isahakyan to the review of Hillel the Elder's works–teachings, adages, and maxims. Certain narratives about Hillel the Elder chosen by Isahakyan are presented here. They are the ones that would best serve the Christian love and universal harmony. These come up with such a plotline that express more strikingly the necessity of implementing the divine commandments.

Key words: Antique philosophy, Aristotle, teaching of the Law, to love your neighbour, patience, charity, evening school, disciple, concierge.

⁵ Հովհաննիսյան Գ., Իսահակյանի ստեղծագործական աշխարհը, Երևան, 1969, էջ 188:

ՄԵՂՔԻ ԳԱՂԱՓԱՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՄՈՂԵՌՆԻՍԱԿԱՆ ՎԵՊՈՒՄ

ԱՆՈՒՇ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Նախածին գործած մեղքի մողելը մողեռնիզմի լույսի ներքո վերածվում է «ընդունած, համակերպված» մտքի մողելի հետ, որտեղ գործողությունն արդեն անկարևոր է:

Դա համահունչ է մողեռնիստական ուղղության կերպարի ընդհանուր բնութագրականին, քանզի կերպարն այստեղ մտքի շարժում է, հետևաբար նրա գործած մեղքը նմանապես զուտ մտքի շարժում է:

Միաժամանակ «Իմացության Ծառի» սիմվոլը, Ֆրեզերի «Ոսկի Ճյուղի», «Կենաց Ծառի» սիմվոլիկայի համաժամանակյա մեկտեղման փորձ է, որը վերացնում է սահմաններն անցյալի և ներկայի, կատարվածի և չկատարվածի միջև՝ ի ցույց դնելով ժամանակակից կերպարի ամենուր և ոչ մի տեղ գտնվելու պարադոքսը, որն ամրագրվում և գոյության իրավունք է ստանում միայն մեղքի տեսլականի շնորհիվ:

Բանայի բաներ – մեղք, մողեռնիզմ, նոր պատում, նիցչեականություն, գիտակցության հոսք:

Պոստմողեռնիզմը ներխուժեց արվեստ և մշակույթ, երբ մարդիկ սկսեցին մտածել, որ այն իրականությունը, որտեղ իրենք գտնվում են, միակը չէ:

Պիտեր Ֆրից Ուոլտերը իր «Creative Genius: «Four-Quadrant Creativity in the Lives and Works of Leonardo» աշխատության մեջ, անդրադառնալով զուգահեռ իրականությունների կիրառման մողելին, մեջբերում է արել Սալվադոր Դալիի թևավոր արտահայտություններից. «Միակ տարբերությունը Դալիի և խելագարի միջև այն է, որ Դալին խելագար չէ»:

Ուոլտերը զուգահեռ իրականության գոյության և ստեղծագործական վերափոխման փաստը դիտում է իբրև մտային խանգարման օրինակ՝ վկայակոչելով այն իրողությունը, որ իրականության զուգահեռական մողելը որոշակի շեղում է իրականության դասական ընկալումից:

Մինչդեռ սյուրռեալիզմի մանիֆեստներում զուգահեռ իրականության ընկալումը ներկայացվում է իբրև յուրահատուկ մեթոդաբանություն, որն ընկած է նոր ստեղծագործական սկզբունքի հիմքում:

«Զուգահեռ իրականության» սկզբունքը տառացիորեն ապակառուցեց մշակութային, հանրային և հետևաբար գրական հայեցակարգի էթիկական առանցքը, քանի որ էթիկական պահանջում է միասնական մոտեցում մարդկային գործունեության հիմնարար ասպեկտներին:

Հենց այդ միասնական էթիկական սկզբունքն է կազմում մոդեռնիզմի ի մի բերող առանցքը, որի վրա խարսխվում է անհատի և հանրության վերաբերմունքը կյանքի և մահվան ընկալման, արժեքների և չափանիշների հանդեպ:

Դրանցից մեկը մեղքի և մեղավորության խնդիրն է, որը մոդեռնիզմի էթիկական համակարգում հանգեցվել է մեղքի ընդունման կամ մերժման գաղափարին: Մոդեռնիզմի ենթատեքստում մեղքը դառնում է գրական և փիլիսոփայական այն դիսկուրսը և հենակետը, որի վրա հենվելով դասակարգվում են մոդեռնիստական արքուրդը և էկզիստենցիալ փիլիսոփայական արձակը: Մեղքի ընդունումը մեղքը դարձնում է էթիկական նորմ, մեղքի ժխտումը բացառում է մեղքի փաստը անկախ դրա իրական գոյությունից: Փաստորեն մոդեռնիզմն առարկայական և երևակայական մեղքը դիտարկում է նույնակաՆորեն, բացառում է հանրային դիսկուրսը՝ մեղքի փաստի հանդեպ վերաբերմունքը թողնելով միայն անհատական տիրույթում: Պատահական չէ, որ թե՛ Կամյուի «Օտարի» համատեքստում, թե՛ կաֆկյան «Դատավարության» մեջ հանրային մասնակցությունն անհատական մեղքին համարվում է ավելորդ, շինծու և խիստ բացասական՝ անկախ նրանից առկա՝ է մեղքի ընկալումը հերոսի մեջ, թե՛ ոչ:

Այսպես, Կամյուի «Օտարի» հերոսը չի ընդունում կատարված հանցագործությունն իբրև մեղք, մինչդեռ Կաֆկայի հերոսը «Դատավարության» մեջ ընդունում է չգործած հանցանքն իբրև մեղք: Մոդեռնիստական այդ երկու մոտեցումները հիմնվում են աստվածաշնչյան երկու արքետիպային մոդելների վրա. չգործած ու ընդունած մեղքի գաղափարը համահունչ է նախածին մեղքի գաղափարին, իսկ գործած, բայց չընդունած մեղքի գաղափարը «ներհի՛ր ինձ, աստվա՛ծ, քանզի չգիտեմ՝ ինչ եմ անում» կոնստրուկտին:

Այդ երկու մոդելները փաստորեն կազմում են քսաներորդ դարի մոդեռնիստական արձակի էթիկական առանցքը: «Ուլիսեսի» գլխավոր հերոսին անվերջ հետապնդում է մեղքի տեսիլքը տարբեր կերպավորումներով, որ նա փորձում է քողարկել արվեստագետի անաչառության և ազատության փիլիսոփայությամբ: Կամյուի «Անկում» երկի հերոսը նույնպես կանգնած է մեղքն ընդունելու կամ չընդունելու երկընտրանքի առաջ, ընդ որում դարձյալ մեղք է դառնում չգործած արարքը, «մտային մեղավորությունը» միայն անհատական ընկալման մակարդակի վրա:

Ընդ որում, դա կարող է լինել բացահայտ կատարված մեղք ինչպես «Օտարը» վեպում, կամ միջնորդավորված անուղղակի մեղսագործություն,

բայց էթիկայի սկզբունքը խարսխվում է հենց մեղքի հանդեպ անհատի վերաբերմունքի վրա. հանրության կարծիքը միշտ երկրորդական է:

Ումբերտո Էկոն իր էսսեներից մեկում մեղքի ընդունման ու չընդունման գաղափարը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Անհավատները, որոնք վստահ են, որ երկնքից ոչ ոք նրանց չի հսկում, նաև վստահ են, որ ոչ մեկը նրանց չի ներելու գործած մեղքի համար»:

Մոդեռնիստական էթիկան վերապահում է մարդուն, որ նա ինքը որոշի մեղքի իր չափաբաժինը, բայց այդ փոփոխված էթիկան պահպանում է մեղքի և պատժի հարաբերակցության համաչափությունը և համամասնությունը: Օսկար Ուայլդի մոտ դա առավել բացահայտ է խորհրդանիշների մակարդակի վրա, քանի որ «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպում փորձ է արվում էթիկան փոխարինել էսթետիկայով, որն ի վերջո ավարտվում է էսթետիկական խորհրդանիշի պահպանմամբ (դիմանկար) և էթիկական սուբյեկտի հանդեպ (հերոս) պատժի կիրառմամբ:

Մեղքն են դառնում նորացված մշակութային ընկալման հիմնախնդիրն ու առանցքը, դրանից փախուստը, կամ դրա անտեսումն աստվածաբանական խնդրից դառնում է փիլիսոփայական խնդիր, իսկ փիլիսոփայականից վերաճում է գրական ու մշակութային խնդրի:

«Մենք պատժվում ենք մեր մերժումների համար: Մեր կողմից խեղդվող ամեն ազդակ ծվարում է մեր մտքերում և թունավորում մեզ: Մարմինը, մի անգամ մեղանչելով, վերացնում է մեղքը, քանզի գործողությունը մաքրման ձև է: Դիմադրելու փորձից միտքը հիվանդանում է՝ ցանկալով այն, ինչ հրեշավոր օրենքները դարձնում են անօրինական: Ասում են, որ ամենամեծ իրադարձությունները կատարվում են մարդու ուղեղում, բայց այնպեղ են կատարվում նաև գերագույն մեղքերը»:

"We are punished for our refusals. Every impulse that we strive to strangle broods in the mind, and poisons us. The body sins once, and has done with its sin, for action is a mode of purification. . . . Resist it, and your soul grows sick with longing for the things it has forbidden to itself, with desire for what its monstrous laws have made monstrous and unlawful. It has been said that the great events of the world take place in the brain. It is in the brain, and the brain only, that the great sins of the world take place also."¹

Այս հաստատված մեջ ներկայացված մտքին արձագանքում է աստվածա-

¹ The Picture of Dorian Gray, Dover Publications; Reprint edition (1993)

շնչյան մյուս մոդելը. «Մտքով մեղանչեցիր, թե մարմնով՝ միևնույնն է», որն արտաքուստ ձևական համընկնումներով հանդերձ, շեշտադրում է մեղքի անկարևորությունը և էթիկայի սկզբունքներին հետևելու անկարողությունը:

Տորմալ մտակառույցը նույնն է, ուղղակի մոդեռնիստական էթիկան, մեղքը դարձնելով մտային, այլ ոչ առարկայական կատեգորիա, հեռացնում է այն պատժի գաղափարից, զրկում բարոյական և հանրային պատասխանատվության համատեքստից:

Հենց այդ «մտային մեղքի» և «անհատական պատասխանատվության» խնդրով է պայմանավորված մոդեռնիստական արձակի կարևոր առանձնահատկություններից մեկը՝ կերպարի բնութագրական հատկանիշների աստիճանական վերացումը:

Սկզբում անհետանում են արտաքին բնորոշումները, այնուհետև երկրորդական են դառնում կերպարի սոցիալական դիմագիծն ու պատմական կոնտեքստի համապատասխանատվությունը, իսկ վերջին փուլում նույնիսկ հոգեբանական կերպավորումը մղվում է երկրորդ պլան:

Կամյուի և Կաֆկայի հերոսները, նաև ջոյսյան կերպարների ներաշխարհը, նույնիսկ ջոյսյան դետալական ներկայացմամբ չեն կարող դասվել որևէ կոնկրետ հոգեբանական տիպի, նրանց «գիտակցության հոսքը» բարդագույն բլումյան վայրիվերումներից մինչև Կամյուի «Օտարի» գլխավոր հերոսի բառային պրիմիտիվիզմի խոսքային ու հոգեբանական հոսքը խանգարում է այդ դասակարգման բյուրեղացմանը, նաև այն պատճառով, որ մոդեռնիստական արձակից հեռանում են հեղինակը և հերոսին տված նրա ներքին գնահատականը:

«Ճիշտ» և «սխալ» արարքների և մտքերի դասակարգման անհնարինությունը, բարոյական կլիշեների ապակառուցումը բերում է «տարբերակված իրականության» և դրա գրական արտացոլման գաղափարին:

Ինչպես ասել է Միլան Կունդերան. «Դո՛ւն Կիխոտը դուրս եկավ տանից և էլի չկարողացավ ճանաչել աշխարհը: Այդ աշխարհը Աստծո բացակայության պատճառով հանկարծակի ներկայացավ իր ահազդու երկակիությամբ. միակ աստվածային ճշմարտությունը տրոհվեց բազմաթիվ հարաբերական ճշմարտությունների, որ մարդիկ բաժանեցին միմյանց մեջ»:

Սակայն անորոշ ֆիզիկական ու հոգեբանական կերպավորմամբ հերոսների միակ կայուն առանցքային գաղափարը մեղքի գաղափարն է, կարելի է ասել, որ հենց այդ գաղափարի վրա է հիմնվում մոդեռնիստական արձակի գաղափարական մոտիվացիան:

Մեղքի գաղափարի ածանցյալ կոնցեպցիան «կյանքի ավարտունության» պարադոքսի ընկալումն է: Մինչև մոդեռնիստական ընկալումը մեղքի թեման այսպես կամ այնպես հիմնվում էր «կյանքի շարունակականության», «հավերժական կյանքի» գաղափարի վրա:

«You made me confess the fears that I have. But I will tell you also what I do not fear. I do not fear to be alone or to be spurned for another or to leave whatever I have to leave. And I am not afraid to make a mistake, even a great mistake, a lifelong mistake and perhaps as long as eternity too.»²

Դուք ստիպեցիք, որ ես խոստովանեմ, թե ինչ վախեր ունեմ: Բայց նաև պատմեմ, թե ինչից չեմ վախենում: Չեմ վախենում մենակ կամ քշված լինելուց, կամ ինչ-որ բանից հրաժարվելուց: Եվ նաև չեմ վախենում սխալ գործելուց. անգամ եթե դա լինի որչ կյանքի սխալ կամ հավերժական սխալ:

Մոդեռնիզմի հերոսը հայտարարում է, որ չի վախենում լինել մենակ կամ հավերժականորեն սխալական, սակայն իր վախերի խոստովանության ժամանակ կենտրոնանում է մեղքի գերակայության վրա:

Մեղքի թեմայի նոր գրական ընկալման համար անկյունաքարային դեր են կատարում XX դարում դեռևս լայն ժողովրդականություն վայելող նիցչեականությունն ու դրա գրական վերաիմաստավորումը մի շարք հեղինակների գործերում: Այսպես Հենրի Միլլերի պնդմամբ. «Մեղքը, մեղավորությունը և նկրողը դա նույն ծառի՝ իմաստության ծառի պտուղներն են»:

Աստվածաշնչյան անդրադարձը միլլերյան տողերում անխուսափելի է, որովհետև աթեիստական, կամ ինչպես կասեր Նիցշեն «նիհիլիստական» դիրքորոշում ունեցող մոդեռնիստ գրողներն իրենց գնոստիկական և ագնոստիկական մոտեցումները բացատրում էին աստվածաշնչի խորհրդանիշների օգնությամբ:

Ի դեպ, «իմացության ծառի» մեղքի և մեղքի՝ մարդու կողմից ընդունելու հարաբերակցության բացատրությունն առավելագույնս գրական ու բանաստեղծական փիլիսոփայությամբ տվել է Կաֆկան. We are sinful not only because we have eaten of the Tree of Knowledge, but also because we have not yet eaten of the Tree of Life. The state in which we are is sinful, irrespective of guilt. «Մենք ենք մեղավոր, ոչ թե որովհետև ճաշակել ենք իմաստության ծառի պտուղը, այլ նրա համար, որ չենք ճաշակել կենաց ծառի պտուղները: Այդ պարագայում դու մեղավոր ես, անկախ նրանից՝ մեղք գործել էս, թե՞ ոչ»:

² James Joyce, A Portrait of the Artist as a Young Man\London, 1977, p. 2.

ТРАКТОВКА ИДЕИ ВИНЫ И ГРЕХА В МОДЕРНИСТСКОМ РОМАНЕ

АНУШ СЕДРАКЯН

Идея греха и вины претерпела существенные изменения в контексте модернизма. Первородный грех библейского толка переродился в новую концепцию индивидуального греха, на уровне личностного притяжения или неприятия.

Новые этические принципы существенно меняют параметры развития литературного персонажа, лишая его личностных характеристик а также моральных ориентиров.

Ключевые слова – грех, модернизм, новый нарратив, ницшеанство, поток сознания.

THE CONCEPTS OF SIN AND GUILT IN MODERNIST NOVELS

ANUSH SEDRAKYAN

In this article Sedrakyan considers the ethical and aesthetical peculiarities in the New Narrative of Modernism. The conceptual perception of the idea of sin is ascribed to both the primordial and accepted sin. Outdated concepts of guilt are rejected focusing on the individual acceptance of guilt in Modern mentality. This in its turn belittles the traditional literary character to the extent of impersonal and subliminal phantom.

Accordingly, the modern idea of guilt shifts from action to perception.

Key words – sin, modernism, New Narrative, Nietzscheism, stream of consciousness.

ԻՐԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (VII – XX ԴԴ.)

ՄԱՀՄՈՒԴ ՖԻՐՈՒԶԻՄՈՂԱԴԱՄ¹ (ԻՐԱՆ)

Հոդվածը նվիրված է Իրանի մանկական գրականության ուսումնասիրությանը: Ուսումնասիրության առարկա է դարձել մասնավորապես մինչսահմանադրական հեղափոխությանը նախորդող շրջանի՝ VII – XX դարերի մանկական գրականությունը:

Բանալի բառեր – Իրան, մանկական գրականություն, VII – XX դարեր:

VII դարի սկզբին՝ Սասանյան թագավորության կործանումից և Իրանում իսլամի տարածումից հետո, անորոշության մատնվեց կրոնական, գրական, պատմական ու փիլիսոփայական բազմաթիվ արժեքավոր ստեղծագործությունների ճակատագիրը: Պարսկալեզուները, որոնց հիմնական մասը կազմում էին իրանցիները, մշակութային պարտություն ու քայքայում կրեցին, և կործանվեցին մշակույթի ու գրականության, հատկապես կրթադաստիարակչական հիմնարար ոլորտները: Իսլամի մուտքը և Ղուրանի պատմվածքների ու կրոնական առակների տարածումն արաբերենով հոգս ցնդեցրին անցյալի բոլոր մշակութային ու սոցիալական համոզմունքները, և ի հայտ եկան բարոյափիլիսոփայական ու միստիկ բովանդակությամբ հեքիաթներ ու պատմվածքներ, որոնք հիմնված էին իսլամի ու Ղուրանի ուսմունքի վրա: Պարսկերեն դասական գրականությունն Իրանի իսլամական շրջանի սկզբում, երբ երկիրն Օմավի արաբների ու նրանց տեղական իշխանների գերիշխանության տակ էր, սկսեց ձևավորվել բանավոր տարբերակով: Այդ ժամանակաշրջանի որոշակի տեքստերում նկատելի են հնադարյան բանաստեղծության նկատմամբ ժողովրդի հակվածության հետքերը, որի օրինակներից է «Բալխի ու Բասրայի երեխաների երգերը»²: Այնուամենայնիվ, արաբական բանաստեղծական աշխարհի ազդեցությամբ Իրանում ձևավորվեց գրականության նոր ժանր, որն ավելի շատ հիմնված էր բանաստեղծության վրա: Այս կաղապարային բանաստեղծությունը երբեմն արաբական տեղական և երբեմն էլ իրա-

¹ Իրան, Թերբաթե Հեյդարիյեհ, Իսլամական Ազադ համալսարանի Թերբաթե Հեյդարիյեհ մասնաճյուղ, Պարսից լեզվի և գրականության բաժին (ամբիոն):

² Գրքի մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս **Զառինքուբ Ա.**, Երկու դար լույսին, «Քեթաբ» հրատ., Ա տպ., Թեհրան, 2012, էջ 104-106:

նական նորարարական ձևաչափերով էր ձոնվում: Նույն այդ ժամանակաշրջանում բանավոր փոխանցմամբ պահպանված բազմաթիվ հին պատմվածքներ ու հեքիաթներ, լեզվական ու կառուցվածքային չնչին տարբերություններով, պատմվում էին երեխաների ու դեռահասների համար, և այսպիսով ընդլայնվում էր մանկապատանեկան գրականության աշխարհը: Այդ ժամանակաշրջանում Իրանում, ի տարբերություն արաբների, ովքեր մինչև Վերածննդի շրջանը պաշտոնապես չէին ճանաչում մանկության շրջանը, մանկությունը հայտնվեց կրոնավորների ուշադրության կենտրոնում, և լրջորեն սկիզբ առավ երեխաների համար իսլամական մանկավարժությունը: Իսլամական շրջանի սկզբնական դարերում, չնայած հնադարյան Իրանի որոշ տարածքներում պարսից լեզվի փոքրիշատե պահպանմանը, այդուհանդերձ արաբերենի գերիշխանությունը հարատևեց մինչև Սամանյան թագավորության հիմնադրումը: Արաբերենի գերիշխանության ավարտից հետո պարսկալեզուները կրկին մայրենի լեզվով խոսելու, գրելու և կարդալու հնարավորություն ստացան, և սկիզբ դրվեց բանահյուսության պատմվածքների ու բանավոր առակների հավաքագրման աշխատանքներին: Սամանյան շրջանում կատարելագործման ուղին որդեգրեցին պարսկերենի թե՛ չափածո և թե՛ արձակ ստեղծագործությունները: Չափածոյի կապակցությամբ ի հայտ եկան Շահիդ Բալխիի, Ռուդաքի Սամարղանդիի, Աբու-Շաքուր Բալխիի, Աբովնայեդ Բալխիի, Մանջիք Թարմազիի, Դադիդի Թուսիի, Քասաի Մարվազիի և Ամմարե Մարվազիի, իսկ արձակի ոլորտում՝ «Հանաֆյան կրոնական ուսմունքի պատվիրանների մատյանը»՝ Աբուլղասեմ իբն Մոհամմադ Սամարղանդիի հեղինակությամբ, «Աբու-Մանսուրիի Շահնամեն», «Գարշասբ» և «Աջայեբուբալադան» գրքերը՝ Աբովնայեդ Բալխիի գրչով, «Թաբարիի պատմության թարգմանությունը»՝ Աբու-Ալի Բալլամիի հեղինակությամբ, «Թաբարիի մեկնաբանության թարգմանությունը»՝ մի խումբ գիտնականների կողմից, «Հողուդալամ» (աշխարհի սահմանները) գիրքը (աշխարհագրության բնագավառում), «Ռեսալեյե Էսթեխրաջ» (վերհանումների մատյան)՝ Մոհամմադ իբն Այուբ Հասեբ Թաբարիի հեղինակությամբ ստեղծագործությունները:

Ալե Բույեի ժամանակաշրջանում չափածոյի ոլորտում հայտնի են Մանթեղի Ռազին ու Ղազայերին, և նույն այդ շրջանում էլ Ավիցենան գրի առավ «Ռազի Ալաիի հանրագիտարանը» և «Անոթաբանությունը» գրքերը, Աբու-Աբիդ Ջոզանին՝ հանրագիտարանի մաթեմատիկայի բաժինը, և պարսկերենի թարգմանվեց ու լուսաբանվեց «Հայերեն-Յաղզանի պատմվածքը»: Ղազնավիների ժամանակ Ֆիրդուսին, Օստրի Բալխին, Ասջադին, Ֆառոխի Սիս-

թանին և Մանուչեհրին կատարելագործեցին Խորասանի ոճի պարսկական բանաստեղծությունը, իսկ արքունի գրությունների դպիր Աբու-Նասր Մեջբանը նոր ոճ ստեղծեց արձակում: Թեև այս գրքերը գրի չեն առնվել հատուկ երեխաների համար, սակայն կիրառվում էին որպես մանկապատանեկան ուսուցողական աղբյուրներ: Պարսկական գրականության դասական ստեղծագործություններում բերված բազմաթիվ հեքիաթներ ու առակներ հետագայում վերաշարադրվեցին և մուտք գործեցին մանկապատանեկան գրականության աշխարհ: Այս տեսանկյունից կարելի է նշված ստեղծագործությունները դասել մանկապատանեկան գրականության աղբյուրների շարքում, և այս պատճառով էլ կարելի է այս ժամանակաշրջանը համարել մանկապատանեկան գրականության սկիզբ՝ իսլամական շրջանի պարսից լեզվում: Դադիդի Թուսին ու Ֆիրդուսին ի մի բերեցին բանահյուսության պատմվածքները և ստեղծեցին «Շահնամեն» նույն այդ բերնբերան փոխանցված պատմվածքներով: Ըստ Ալիաշրաֆ Դարվիշյանի՝ տարբեր ազգերի առասպելներում պարսկալեզուների առասպելները կարևոր տեղ են զբաղեցնում: Մինչ այս հավաքագրվել ու վերաշարադրվել են առանձին պատմվածքներ, այդ թվում՝ «Կրիան ու ընկերները», «Աղվեսն ու արագիլն ու առյուծը»³ և հարյուրավոր այլ նմանատիպ պատմվածքներ:

Տասներորդ դարը պետք է համարել Իրանի քաղաքակրթության ոսկեդարը, Իրանում մեծանուն գիտնականների ու բանաստեղծների ասպարեզ գալու և բազմաթիվ գրքերի գրի առնվելու ժամանակաշրջան, երբ Սամանյան պետությունը, վերականգնելով պարսկալեզուների հին ավանդույթները, վերջ տվեց արաբերենի գերիշխանությանը, որը պարսկալեզուների երկրներում տարածվել էր՝ սկսած իսլամի ծագումից մինչ այդ ժամանակաշրջանը, և, պարսկերենը որպես պետական լեզու ճանաչելով, պարսկերենով արժեքավոր գիտական, գրական ու մշակութային ստեղծագործությունների արարման համար հող պատրաստեցին: Այդ ժամանակաշրջանում յոթերորդ դարի վերջին

³ Այս պատմվածքն Իրանում տպագրվել է «Ճարպիկ արագիլն ու խորամանկ աղվեսը: Սրամիտ առյուծն ու խաղասեր մկնիկը» անվան մեկ միասնական գրքի տեսքով, որտեղ տպագրվել են երկու գունավոր պատկերազարդ պատմվածքներ, և գրքի երկու կողմերի կազմերից յուրաքանչյուրը պատկերում է պատմվածքներից մեկի սկիզբը: «Ա» և «Բ» տարիքային խմբի երեխաները «Սրամիտ առյուծն ու խաղասեր մկնիկը» պատմվածքում ծանոթանում են մի առյուծի պատմության, ով հրաժարվում է մի փոքրիկ մկնիկի ուտելուց: Մի քանի օր անց մուկը կրծում է որսորդների թակարդի ցանցի պարանները, որտեղ առյուծն էր հայտնվել, և ազատում նրան: Բահման Ազարի Նաջաֆաբադը թարգմանել է այս պատմվածքները և 2001թ. տպագրել Մաշհադ քաղաքում:

տարիներից ի վեր սկսած և ութերորդ ու իններորդ դարերում շարունակվող իրենց աշխատանքների արդյունքում իրանցիները կարողացան վերագտնել կորցրած անկախությունը: Այդ ժամանակաշրջանն իրանցի ազգությամբ ու ցեղատեսակով հպարտանալու և ազատ մտքի ու գաղափարների դարաշրջանն է: Այդ ժամանակ են ստեղծվել պարսկալեզուների ազգային պատմվածքներն ու հերոսապատումները: Տասներորդ դարի պարսկական բանաստեղծությունն աչքի է ընկնում իր որոշակի առանձնահատկություններով, որոնք են՝ հստակությունը, պարզությունը, նոր ու թարմ բովանդակությունը, նույնականացման բնական լինելն ուշադրության կենտրոնում պահելը, արտաքին աշխարհին համահունչ բնական նկարագրերը, նոր, թարմ ու բազմազան թեմաների որոնումները, բանաստեղծության մեջ գիտական եզրերի չօգտագործելը, արաբերեն բարդ բառերի բացակայությունը բանաստեղծություններում և նույնիսկ արաբերեն բառերի սակավ կիրառումը, հին (դառի) պարսկերենի բազմաթիվ բառերի պահպանումը: Այս ժամանակաշրջանի բանաստեղծության ամենակարկառուն ներկայացուցիչն է Ֆիրդուսին, ում «Շահնամեն», անկասկած, պարսկերենի հստակության լավագույն օրինակն է: Այս արժեքավոր գիրքը գրի է առնվել ազգային ինքնությունը վերականգնելու և մշակութային տարանջատումը վերացնելու նպատակով: Տասներորդ դարի պարսկերեն բանաստեղծությունում հազվադեպ ու դժվար կարելի է հուսահատության ու հուսախաբության նշույլ գտնել: Այս ժամանակաշրջանի բանաստեղծությունը լի է հոգու թարմությամբ, ազգային հպարտությամբ, զգայուն մտածողությամբ, լավատեսությամբ ու ազատականությամբ: Ուստի պետք է այն համարել իրանցու իրական հոգին ու մտածողությունն ամբողջությամբ արտացոլող հայելին, այսինքն՝ այն մտածողությունն ու հոգին, որն ամբողջությամբ չի պարտվել ոչ իրանական գործոններից և հաստատորեն կանգնել է տեղում: Չափածո ոճով գրված այս արժեքավոր գրքի բովանդակությունն ամբողջությամբ վերցվել է այն ժամանակաշրջանի պարսկալեզու ժողովուրդների մոտ տարածված բանավոր պատմվածքներից: Վերջին տասնամյակներում ականատեսն ենք երեխաների ու դեռահասների համար այս ծավալուն ստեղծագործության արժեքավոր պատմվածքներից բազմաթիվ վերաշարադրանքների, որոնցից է տիկ. Ջահրա Խանլարիի (1915-1991թթ.) գրչին պատկանող «Պարսկերեն հմայիչ պատմվածքները» աշխատանքը: Այն ներառում է 16 պատմվածք, որից 6-ը Շահնամեից են⁴: Արձակի կապակցությամբ ևս տասներորդ դարում (լուսնային

⁴ Այս գրքի պատմվածքներն են՝ «Բեքթաշն ու Ռաբենն» Շեյխ Աթթարի «Էլահինամեից»,

տոմարով՝ 4-րդ դար) առկա են ուշագրավ ստեղծագործություններ: Թալբբով Թաբրիզի գրի առավ «Ահմադի գիրքը», որն ընդհանրություններ ունի Ժան-ժակ Ռուսոյի «Էմիլ» ստեղծագործության հետ, և դրտեղ քննադատվում են մանուկների կրթադաստիարակչական ոլորտի բացթողումները, և խոսվում է երեխաների ու դեռահասների նկատմամբ ուշադրության անհրաժեշտության մասին: Խոսքեր, որոնք տարիներ անց Թեհրանի համալսարանում մանկավարժական գիտությունների ֆակուլտետի հիմնադրմամբ ուշադրության կենտրոնում հայտնվեցին, և դրանով դուռ բացվեց մանկական գրականության առջև:

Պարսկերենը, որը տասներորդ դարում մասամբ զերծ մնաց արաբերենի հետ միաձուլվելու վտանգից, և արդեն իսկ արաբերեն սակավ բառեր էին նկատվում նրա կառուցվածքում, տասնմեկերորդ դարից սկսած, ավելի մեծ համամասնությամբ միախառնվեց արաբերեն բառերի հետ: Հայտնի է, որ այդ միաձուլումը տասնմեկերորդ դարի սկսվելուն պես միանգամից իր գազաթնակետին չհասավ, այլ այն տեղի ունեցավ աստիճանաբար, և այդ ընթացքն այնպես էր, որ լեզվում արաբերեն բառերի քանակն այս դարաշրջանի վերջում շատ ավելին էր, քան դարասկզբում: Իսկ դրա հիմնական պատճառներից մեկն այս երկու դարերում իսլամի և նրան անհրաժեշտ լեզվի՝ արաբերենի ներթափանցման աճն էր: Մյուս պատճառն այն էր, որ այս երկու դարերում արաբերենի ուսուցումն ու սերտումն Իրանում առավել քան երբևէ տարածում գտավ, և քանի որ տասնմեկերորդ դարում դպրոցների զարգացումն ու քանակի ավելացումը մեծ թափ ստացան, և այդ դպրոցներում գլխավոր ու հիմնական առարկաներից էին արաբերեն լեզուն ու գրականությունը, բնականաբար գրագիտության բոլոր հավակնորդներն ու գիտություն ու գրականություն սերտողները տեղեկանում էին արաբերեն լեզվի ու գրականության մասին, ըստ այդմ էլ այդ դարաշրջանում հազիվ թե հանդիպենք որևէ բանաստեղծի կամ գրողի, ում խոսքերում բացակայի արաբական գրականությունը:

«Շեյխ Սանան» Շեյխ Աթթարի «Մանթեղոթյերից», «Սիավաշի պատմությունը» Ֆիրդուսու «Շահնամեից», «Բահրամ Գուրը և ջրհան Լենբեկը» Ֆիրդուսու «Շահնամեից», «Բիժանն ու Մանիժեն» Ֆիրդուսու «Շահնամեից», «Էսկանդարն ու հնդիկ Քիզը» Ֆիրդուսու «Շահնամեից», «Շախմատի հայտնաբերման պատմությունը» Ֆիրդուսու «Շահնամեից», «Բախթարի պատմությունը» «Բախթարնամեից», «Խոսրոն ու Շիրինը» Նիզամու «Խոսրոն ու Շիրինից», «Բահրամը սև գմբեթում» Նիզամու «Յոթ գմբեթներից», «Բարու ու չարի պատմությունը» Նիզամու «Յոթ գմբեթներից», «Հոմայն ու Հոմայունը» Խաջավի Քերմանիից, «Յուսոֆն ու Ջոլեյխան» Ջամիի «Յուսոֆն ու Ջոլեյխայից», «Սիրտն ու հոգին» Ֆեյզի Դաքանիից, «Ինը տեսարանը» ժողովրդական պատմվածք:

Տասնմեկերորդ դարում (լուսնային տոմարով՝ 5-րդ դար) Օնսորումայի Քեյքավուս իբն Ղաբուս իբն Վոշմգիրը գրի առավ «Ղաբուսնամե» գիրքը, որն ուղղված էր իր զավակին՝ Գիլանշահին: Օնսորումային քաջ գիտակցելով, որ ուղղակիորեն ասված խրատը կարող է հանգեցնել ձանձրույթի և հակակրանքի, իր աշխատանքը զարդարեց հմայիչ հեքիաթներով և այսպիսով զարգացրեց ստեղծագործության գրական դրսևորումները, այնպես, որ այսօր կարելի է «Ղաբուսնամե» համարել այդ ժամանակաշրջանի գրական արժեքավոր ստեղծագործություններից մեկը: Գրքում, մյուս հաջորդող գրքերի համեմատ, ավելի թույլ են արաբերենի ազդեցությունն ու նրա հասկացությունների կիրառումը: Գրքի պարզ արձակը և պատմվածքների ու հեքիաթների բովանդակությունը պատճառ են դարձել, որպեսզի առանձին տեսաբաններ այն ներկայացնեն մանկապատանեկան գրականության շրջանակներում:

Տասնմեկերորդ ու տասներկուերորդ (լուսնային տոմարով՝ 5-րդ և 6-րդ) դարերն Իրանում համընկնում են Ղազնավիների, Սելջուկների և Խարազմշահիների թագավորությունների ժամանակաշրջանների հետ: Այս ժամանակահատվածում պարսկերեն արձակում ի հայտ եկավ մի նոր ոճ, որը կոչվում է «տեխնիկական արձակ» («Նասրե ֆաննի»): Այս արձակն այնքան զարգացավ, որ վերաճեց «Խոսքի ֆիզուրաներով և տեխնիկական արձակի» («Նասրե մասնու վա ֆաննի»), այսինքն՝ խոսքի տարբեր տեսակի ֆիզուրաներով զուգված արձակի: Ռիթմիկ կամ հանգավորված արձակը («Նասրե ահանգին» կամ «Նասրե մոսաջա») ևս ի հայտ եկավ նույն ժամանակաշրջանում և արաբերենի ազդեցության ներքո:

Առաջին գիրքը, որտեղ մեծ ուշադրություն է դարձվել խոսքի ֆիզուրաներին, «Քելիլե ու Դեմնեի» թարգմանությունն է, որը մշակվել է մոտավորապես 1120թ. (լուսն. տոմարով՝ 539թ.): Գրքի թարգմանիչը Աբուլմուալի Նասրուլահ իբն Մոհամմադ իբն Աբդոլիամիդ Ղազնավին է, ով ապրեց մինչև տասներկուերորդ դարի վերջերը: Գրքում շատ են արաբերենի հոմանիշներն ու բառերը, արաբական բանաստեղծությունների ու ասացվածքների մեջբերումները, սակայն ամբողջական չեն նրանց հանգավորումները: Գիրքն Անուշիրվան Սասանիի օրոք Բորզույե Թաբրիի ջանքերով սանսկրիտ լեզվով գրված «Փանչե Թանթրե» գրքից թարգմանվել է պահլավերենի, իսկ իսլամական շրջանում Աբդոլլահ իբն Մողաֆան այն թարգմանեց արաբերենի: Գիրքը այլաբանական բնույթի ստեղծագործություն է, որտեղ տարբեր կենդանիներ պատմվածքների գլխավոր կերպարներն են: Գիրքը ցանկացած այլ գրքի համեմատ ավելի շատ է օգտագործվել մանկական գրականության հեղինակների

կողմից, և նրա պատմվածքներից շատերը վերաշարադրվել են երեխաների ու դեռահասաների համար: Վերաշարադրված ամենահին տարբերակներից են Սոբհի Մեիթադիի գրչին պատկանող աշխատանքները «Հին առասպելներ» և «Ամու Նորուզ» (Նորուզի Կաղանդ պապան) գրքերում և Մեհդի Ազարյազդիի «Լավ պատմվածքներ՝ լավ երեխաների համար» գիրքը:

Աբովնոալիից հետո Նեզամի Առուզի Սամարղանդին իր «Չորս հողված» («Չհար մաղալե») գրքում ավելի մեծ թվով հանգավորումներ է կիրառել: «Չորս հողվածը» գրվել է մոտավորապես 1131թ. (լուսն. տոմարով՝ 551 և 552թթ.). գիրքը բաղկացած է չորս բաժիններից, որտեղ հեղինակը յուրաքանչյուր մասը գրել է Սուլթանի պալատականներից մի խմբի համար, դրանք են՝ բանաստեղծները, գրողները, բժիշկները և աստղագետները: Գրքում խոսքի յուրաքանչյուր ֆիգուրայի առաջաբանը գրվել է ամբողջովին ֆիգուրաներով հարուստ (մասնու) շարադրանքով, իսկ մնացածը՝ արձակի երկու մեթոդներով, այսինքն՝ ֆիգուրաներով ու տեխնիկական (մասնու և ֆաննի) տարբերակներով:

Մյուս նշանավոր գիրքը, որը գրվել է տասներկուերորդ դարում՝ հաշվի առնելով բառային ֆիգուրաները, «Մաղամաթե Համիդի» գիրքն է: Գրքի հեղինակը Ղազի Համիդեդին Օմար իբն Մահմուդ Բալխին⁵ է: Նա գիրքը գրել է՝ ընդօրինակելով «Մաղամաթե Բադիի» և «Մաղամաթե Հարիի» և նմանատիպ գրքերը՝ կիրառելով գրական ֆիգուրաների տարբեր տեսակները⁶:

Տասներեքերորդ դարում պարսկալեզուների երկրի վրա մոնղոլների արշավանքների արդյունքում թալանվեցին իրանցիների կողմից մեծ դժվարությամբ նվաճված գիտական, գրական ու մշակութային բոլոր ձեռքբերումները: Մոնղոլների արշավանքներից ընդամենը դպրոցների, գրադարանների ու մզկիթների ավերակներ մնացին: Այդ դարաշրջանում, ի հեճուկս տեղի ունեցած պատերազմների, թալանի ու արյունահեղությունների, գոյատևում էր պարսկական գրականությունը: Ի հայտ եկան բազմաթիվ արժեքավոր ստեղծագործություններ, որոնցից «Մարզբաննամեն» «Քելիլե ու Դեմնեի» պատմվածքների նմանությամբ խրատական բովանդակությամբ իր պատմությունների շնորհիվ կարող էր երեխաների ուշադրությանը ևս արժանանալ: Սաահիի «Գուլեստանը» ևս, հիմնվելով իրանական մշակույթի վրա և իր բարոյադաստիարակչական բովանդակությամբ, գրվել է այդ ժամանակաշրջանում և

⁵ Մահացել է մոտավորապես 1140թ.:

⁶ «Մաղամե»-ն գրական ժանր է, և կարելի է այն մի տեսակ կարճ պատմվածք համարել:

օգտագործվեց երեխաների ու դեռահասների դաստիարակության մանկավարժական նպատակներով: Դարեր անց գիրքը պարսկական գրականության դասական շատ ստեղծագործությունների պես հայտնվեց ուշադրության կենտրոնում՝ որպես երեխաների համար բարոյադաստիարակչական հեքիաթների վերաշարադրման աղբյուր: Մեհդի Ազարյազդիին այս գրքի հիման վրա է գրել «Գոլեստանի ու մոլեստանի պատմվածքները» գիրքը⁷:

Նույն դարաշրջանում պարսկական բանաստեղծության ոլորտում ևս հանդիպում ենք «Մասնավիե Մանավի» պոեմին, որտեղ հեղինակը՝ Մոլանա Ջալալեդին Մոհամմադ Բալխին, իր ժամանակի տարածված պատմվածքներն օգտագործում է որպես այլաբանական տարբերակ և միստիկ բովանդակությունները պարզաբանում դրանց միջոցով: Մասնավիե Մանավիի պատմվածքները ևս հետագայում արձակի վերածվեցին երեխաների ու դեռահասների համար: Ըստ հեղինակի՝ տրամաբանությանը համահունչ է «Մասնավիե Մանավի», «Գոլեստանե Սաադի», «Մարզբաննամե», «Քելիլե ու Դեմնե» և այլ նմանատիպ գրական ստեղծագործությունների օգտագործումն այն աշխատությունների արարման ժամանակաշրջանի երեխաների կողմից: Սակայն քանի որ մեզ չի հասել մանկական գրավոր որևէ անկախ ստեղծագործություն, ապա այս թեման երբեք լուրջ ուշադրության չի արժանացել:

Տասնչորսերորդ դարը համարվում է Իրանի սոցիալական ծանր պայմանների դարաշրջան: Քննադատական գրականությունը՝ որպես տասներեքերորդ դարի գրական հոսանքների և մոնղոլների քաղաքական ու սոցիալական իշխանության շարունակություն, ակնառու զարգացում էր ապրել: Այդ ժամանակաշրջանում ի հայտ եկան Օբեյդ Ջաքանիի նման հեղինակներ: Նա բանաստեղծների ու գրողների այն դասին է պատկանում, ում անունը շաղկապված է հումորի ու կատակերգության հետ: Նրա ստեղծագործություններից շատ հայտնի է «Մուկն ու կատուն» պոեմը, և բոլոր աշխատանքներից ամենանուրբն են «Ռիշնամեն» ու «Հարյուր խրատը»: Նրա անեկդոտներում ևս նրան նախորդող շատ կատակերգուների, այդ թվում՝ Սաադի Շիրազիի, պես հավասարապես տեղ են գտել հումորն ու կատակը: Ըստ որոշ աղբյուրների՝ Օբեյդ Ջաքանիի «Մուկն ու կատուն» պոեմը երկար ժամանակ օգտագործվել է որպես մանկական գիրք⁸: Այս արտահայտությունը ճիշտ համարելու դեպքում

⁷ Մեհդի Ազարյազդիի «Լավ պատմվածքներ՝ լավ երեխաների համար» ժողովածուի 7-րդ հատորը «Գոլեստանի ու մոլեստանի պատմվածքները» գիրքն է:

⁸ **Սաֆա Ջ.**, Իրանում գրականության պատմությունը, «Ֆերդոս» հրատ., Գ հատոր, 2-րդ բաժին, 7-րդ տպագ., 1990, էջ 974:

հարկ է նշել, որ Օբեյդ Ջաքանիի «Մուկն ու կատուն» թեև ժամանակի հանգամանքները քննադատող ստեղծագործություն է, սակայն խոսքի նրբագեղության ու պարզության, ներդաշնակ ու հումորախառը լեզվի և նրա այլաբանական ձևաչափի շնորհիվ արժանացել է մանուկների ու պատանիների ուշադրությանը և հիացրել երեխաներին: Եվ նույնիսկ առանց վերաշարադրելու ևս կարող է օգտագործվել երեխաների ու դեռահասների կողմից: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ կարելի է Օբեյդ Ջաքանիի «Մուկն ու կատուն» դասել պարսկալեզու գրականության տասնչորսերորդ դարի մանկական գրական ստեղծագործությունների շարքում:

XV–XIX դարերում Իրանի քաղաքական ու սոցիալական պայմանները բազմաթիվ զարգացումների ենթարկվեցին: Սեֆևիների ժամանակ կրոնական աղանդավորությունը մեծ չափով հանգեցրեց գրականության նկատմամբ անուշադրության: Բարդ ու ծանր լեզուն և կրոնական բովանդակությունը գրավոր գրականության առավել բարդացման պատճառ դարձան, և ընդհակառակը, բանավոր գրականությունը թեյարաններում և ժողովրդի մոտ պատմասացության տարածման արդյունքում զարգացում ապրեց: Պարսկերենում պատմվածքներ հյուսելու և պատմասացության ամենահին օրինակներից կարելի է հիշատակել «Սամաքե այառը», որը վերագրվում է սելջուկների ժամանակաշրջանի վերջին տարիներին, և որտեղ ներկայացվում են ոմն Սամաքի քաջագործությունները, ով օժտված էր «այարների»⁹ բարոյահոգեբանական առանձնահատկություններով: «Սամաքե այարը» իրանական պատմվածք է՝ տրամաբանական կարգով (պահանջով) /Logical order/ ու բոլոր իրադարձությունների շաղախվածությամբ, պատմվածքի սկզբից մինչև վերջ հետամուտ ենք լինում որոշակի ու հստակ նպատակի: Պատմվածքի կորիզը (փլաթը) հիմնված է ուղիղ ճանապարհի, ազնվության, առաքինության ու վեհանձնության վրա: Գրքի կարևորությունը ոչ միայն նրա գրավչությամբ ու հմայքով է բացատրվում, այլև գեղեցիկ ու գրականագիտական արձակով: «Ամիր Արսալան անվանիի» պատմվածքը ևս ստեղծվել է հենց այդ դարերում: Միրզա Մոհամմադալի Նադիրլումամալեքը, ով Ղաջարյան Նասերեդին Շահի արքունի պատմասացն էր, ստեղծել ու մշակել է այս հեքիաթը: Պատմվածքը նաև դեռահասների ուշադրությանն է արժանացել և կարող է այդ խմբի գրական ստեղծագործությունների շարքում դասվել:

⁹ Թարգմ.՝ Ժամանակի սեփական կանոններով աշխատող խումբ, որոնք փորձում էին պաշտպանել մարդկանց և վերականգնել ոտնահարված իրավունքները:

Ղաջարյան շրջանում և մինչ Սահմանադրական հեղափոխությունը առևտրականների այցելություններն օտար երկրներ պատճառ դարձան, որպեսզի իրանցիները տեղեկանան բռնապետական իշխանությունների լծից ազատվելու համար այլ ազգերի ջանքերի ու նախաձեռնությունների մասին, և մտավորականների մեջ զարգանա ազատատենչության ոգին: Այդ ժամանակաշրջանում էլ Ամիր Քաբիրի ջանքերով հիմնադրվեց «Դարոլֆոնունը»¹⁰, որն էլ նպաստեց Իրանի ժողովրդի քաղաքական ու սոցիալական զարթոնքին: Տեխնոլոգիայի զարգացումը, տպագրության կիրառումը, լրագրերի ի հայտ գալը և այլ երկրների գրողների, գրականագետների ու գրականությանը ծանոթանալը հանգեցրին նրան, որ գրական նոր ստեղծագործություններ արարվեն: Մահմուդ Մեֆթահոլունլոքի գրչին է պատկանում «Մասնավիե աթֆայլը» («Մանուկների պոեմը»), որը «Մասնավիե Մանավիի» պատմվածքներից քաղվածք է և պատկերազարդ: Ֆրանսերենով գրված «Լա Ֆոնթեն» ֆայլերը Սանիուլաթանեի ջանքերով թարգմանվեցին, և այդ գրքի հիման վրա ստեղծվեց երկհատորյա «Ախլալե մոսավար» («Պատկերազարդ բարոյագիտություն») գիրքը¹¹:

ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА ИРАНА ДО КОНСТИТУЦИОННОЙ РЕВОЛЮЦИИ (VII – XX ВВ.)

МАХМУД ФИРУЗИМОГАДАМ¹² (ИРАН)

Статья посвящена изучению детской литературы Ирана. Предметом изучения стала детская литература VII-XX вв., в частности, периода предшествующего конституционной революции.

Ключевые слова – Иран, детская литература, VII-XX вв.

¹⁰ Թեհրանում հիմնադրված՝ նոր գիտությունների ու տեխնիկաների ուսուցման դպրոցի անվանումը:

¹¹ Այդ ֆայլերը կարճ առակներ են, որոնց կերպարների մեծ մասը կենդանիներն են ու բնական գործոնները, որոնք այլաբանորեն խորհրդանշում են մարդուն, և նրանց կյանքի իրադարձություններն այնպիսին են, որ մարդու համար ուղեցույց են համարվում և վերջում ուղղակիորեն ներկայացնում են որևէ խրատ:

¹² Иран, Тербате Гейдарейх, филиал Тербате Гейдарейх Исламского университета Азад, отделение (кафедра) персидского языка и литературы (председатель).

LITERATURE FOR CHILDREN IN IRAN BEFORE THE CONSTITUTIONAL REVOLUTION (FROM 7TH TO 20TH CENTURIES)

MAHMUD FIRUZIMOGHADAM¹³ (IRAN)

The article is dedicated to the study of literature for children. It provides a survey of Iranian literature for children and young adults in the pre-constitutional revolution era (from 7th to 20th centuries).

Key words – Iran, children’s literature, from the 7th to 20th centuries.

¹³ Iran, Terbathe Heydarieh, Torbathe Heydarieh branch of the Islamic Azad University, Department of Persian language and literature (chair).

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1980-2010ԹԹ.)

ՍԱՀՄՈՒԴ ՖԻՐՈՒԶԻՄՈՂԱԴԱՄ¹ (ԻՐԱՆ)

Հոդվածը նվիրված է մանկական գրականության ուսումնասիրությանը՝ Իրանի սահմանադրական շրջանից հետո: Ուսումնասիրության առարկա է դարձել մասնավորապես սահմանադրությանը հաջորդող երրորդ սերնդի մանկական գրականությունը, որն ընդգրկում է 1980-2010 թվականները:

Բանալի բառեր – Իրան, մանկական գրականություն, 1980-2010 թվականներ:

Իրանում մանկական գրականության հեղինակների երրորդ սերունդն այնպիսի ժամանակաշրջան մուտք գործեց, երբ մտավոր ու սոցիալական հիմքերը փոխվեցին: Այս ժամանակահատվածն ընդգրկում է 1980-2010թթ.: Այս շրջանի սկզբում Իրանի քաղաքական համակարգը հիմնովին փոփոխվեց: Թագավորական համակարգին փոխարինեց իսլամական հանրապետությունը և, բացի իշխանական կառույցից, փոփոխվեցին նաև հասարակության մեջ տիրող գաղափարախոսական սկզբունքները: Մանկապատանեկան գրականությունը, որը ձևավորվեց երկու՝ սահմանադրական ու իսլամական հեղափոխությունների միջև ընկած ժամանակահատվածում և աշխարհում զբաղեցրել էր իր ընդունելի տեղը, ահա պետք է նոր ուղիով առաջնորդվեր: Երկրորդ սերնդի բազմաթիվ հեղինակներ պետք է նոր պայմաններում շարունակեին իրենց ճանապարհը, և ոմանք չէին կարող այս փոփոխությունը հեշտությամբ ընդունել: Գրականությունը, և մասնավորապես մանկական գրականությունը, դեռևս խարխափում էր անորոշության մեջ, երբ սկսվեց Իրան-Իրաք պատերազմը: Պատերազմ, որը տևեց 8 տարի, և մինչև այսօր զգալի են դրա հետևանքները: Նոր հանգամանքները վերջակետ էին մանկապատանեկան գրականության ոլորտում տեղի ունեցած բազմաթիվ շարժումների համար: Երեխաների ու դեռահասների համար պատրաստվող գրքերն ավելի շատ ուղղորդված էին կրոնական սկզբունքներին ու գաղափարախոսական խնդիրներին, քան նրանց իրական պահանջները բավարարելուն:

1980-ականներին փակվեցին պատերազմական շրջանների դպրոց-

¹ Իրան, Թերբաթե Հեյդարիյեհ, Իսլամական Ազադ համալսարանի Թերբաթե Հեյդարիյեհ մասնաճյուղ, Պարսից լեզվի և գրականության բաժին (ամբիոն):

ներից շատերը, և անցանկալի գաղթերը հանգեցրին բնակչության կյանքի փոփոխության: Փակվեց նաև Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնի գրադարանը: Սկիզբ առան գրքերի գրաքննությունն ու աուդիտը, և արգելվեց բազմաթիվ գրական ստեղծագործությունների տպագրությունը: Եթե տպագրվում էր որևէ մանկապատանեկան ստեղծագործություն, ապա դրա մեջ նկատելի էին ավելի շատ մեծահասակին բնորոշ հայացքներ, և պաշտոնապես զերծ էր մանկական բառային ու իմաստային տարրերից: Տարբեր պատճառներով, այդ թվում՝ կրոնական հայացքներից ու նույնիսկ տնտեսական սահմանափակումներից ելնելով, մանկական գրքերում պատկերների տարրն ավելի աննշան դարձավ: Շատ սակավաթիվ էին թարգմանված ստեղծագործությունների հրատարակումները: Այդուհանդերձ, առանձին հեղինակներ, ինչպես օրինակ՝ Հուշանգ Մորադի Քերմանին, ում ստեղծագործություններում նկարագրվում էին հանրության կյանքի խնդիրներն ու ելևէջները, կարողացան տպագրել իրենց աշխատանքները: 1982թ. հրատարակվեց «Մաջիդի պատմվածքները» հինգհատորյակը, որի առաջին հատորը տպագրվել էր նախքան հեղափոխությունը: Մանկական գրականության ոլորտի մասնագետներից Մոհամմադ Միրքիանին սահմանադրությանը հաջորդող յոթերորդ տասնամյակը (1980-1990թթ.) համարում է մանկապատանեկան գրականության փոթորկոտ սկիզբը: Նա գտնում է, որ այս տասնամյակում մանկապատանեկան գրականության մեջ բազմաթիվ դեմքեր աչքի ընկան: Եվ այդ դեմքերը հաճախ այն տարրերն էին, որոնք, մտածողության ոլորտում բաց տարածք ստեղծելով, ոչ թե որպես աշխատանք, այլ՝ որպես պարտականություն, մուտք գործեցին մանկապատանեկան գրականության ոլորտ²: Այս հետազոտության հեղինակը ևս այն կարծիքին է, որ այն ժամանակ մանկապատանեկան գրականության ոլորտում տիրող եռանդի ու ոգևորության պատճառով բազմաթիվ հեղինակներ մուտք գործեցին այս ասպարեզ: Իրականում այդ շրջանում, ովքեր որպես մանկապատանեկան ոլորտի գրող, բանաստեղծ ու թարգմանիչ որևէ ստեղծագործությամբ էին հանդես գալիս, լրջորեն աջակցություն էին ստանում երկրի որոշումներ կայացնող կազմի կողմից: Իսլամական Հանրապետությունը նորահիմն համակարգ էր, և այդ ժամանակահատվածում մանկապատանեկան գրականության խիստ պահանջարկ էր զգացվում, և անհրաժեշտ էր, որ մշակութային պահանջների ու համակարգի հիմքերի ամրապնդման տեսանկյու-

² Հատված մանկական գրքի տարեկան նիստի ընթացքում Մ.Միրքիանիի ելույթից, Թեհրան, 2010:

նից օգտագործեինք ամբողջ ներուժը: Այդ շրջանը հոգով նվիրվելու շրջան էր, և մանկապատանեկան գրականության հեղինակները ևս, հետևելով սրբազան պատերազմի (թարգմ.- Իրան-Իրաք պատերազմը հայտնի է «սրբազան պաշտպանություն» անունով) մթնոլորտին, առանց որևէ նույնիսկ նվազագույն ակնկալիքի աշխատում էին մշակութային նվիրաբերական մթնոլորտում: 1980-ականների գրողներն Իրանում ազդեցություն էին կրել ոչ միայն իսլամական հեղափոխության մշակութային զարգացումներից, այլ նաև սոցիալական մեծ զարգացումներից, այդ թվում՝ սրբազան պատերազմը, ինչպես նաև սահմանադրությանը հաջորդող յոթերորդ տասնամյակի կրոնական ուղղության մտավորականների մանկավարժական ու հոգեբանական խոհերը:

Իրանի երեխաներն ու դեռահասները քսաներորդ դարի վերջին տասնամյակում՝ պատերազմից և երկրում հարաբերական անդորրի հաստատումից հետո, կարողացան տեսնել իրենց հատուկ գրականության փայլուն դրսևորումները: Իհարկե, այդ տասնամյակում նրանց օգնության հասան նաև տեխնոլոգիան ու լրատվամիջոցների ընդլայնումը, և դա հանգեցրեց նրան, որ համաշխարհային որոշ նշանավոր գրական ստեղծագործություններ հեռուստատեսությամբ ներկայացվեն ֆիլմերի, ներկայացումների և այլ տեսքով:

1990-2000թթ. միջև ընկած ժամանակահատվածը սահմանադրությանը հաջորդող ութերորդ տասնամյակն է: Այս շրջանի պարսկերենի ժամանակակից գրողների երրորդ սերունդը կարողացավ գտնել իր ինքնությունը: Այս տասնամյակն այն ժամանակաշրջանն է, երբ աշխարհում ամբողջությամբ ճանաչվեց մանկական գրականությունը, և բազմաթիվ գրքեր գրվեցին մանկական գրականության տեսական հիմունքների վերաբերյալ: Եվ այդ կապակցությամբ գիտական ու գրական բազմաթիվ քննարկումներ ու համաժողովներ կազմակերպվեցին աշխարհի տարբեր կետերում: Իրանում ևս ավարտվեց պատերազմը, և արագ թափով ընթանում էին վերականգնման աշխատանքները: Երեխաներն ու նրանց պահանջները ևս, այդ թվում և մանկական գրականությունը, հայտնվեցին ուշադրության կենտրոնում: Գրչի արվեստի շրջանակներում հանդարտվեցին կրոնական, ազգային ու հայրենական սուր կրքերը, և առավել զարգացավ ուղղվածությունը դեպի երևակայական ու ֆանտաստիկ պատմվածքներ: Ահմադռեզա Ահմադին համարվում է երեխաների համար ֆանտաստիկ ժանրի առաջատարներից, ով հենց այս ուղղությամբ վաստակել է մանկական գրքի խորհրդի մրցանակը: Իսկ բանաստեղծության ոլորտում որպես առավել անվանի բանաստեղծներ հայտնի անուններ են Նասեր Քեշավարզը և Մոհամմադբազեմ Մազինանին: Այս շրջանում մանկական

գրքերի պատկերազարդումը ևս դարձավ մանկապատանեկան գրականությանն առնչվող արվեստի կարևորագույն ոլորտներից մեկը, և համապատասխան մրցանակների արժանացան առանձին դեմքեր, այդ թվում՝ Բեհզար Ղարիբբեկովը և Նասրին Խոսրովին:

Այս շրջանի հայտնի գրողներից, որոնց շարքում ոմանք ձևավորվեցին երկրորդ սերնդում, կարելի է հիշատակել հետևյալ անունները՝ Մոսթաֆա Ռահմանդուսթ, Աֆսանե Շաաբանեժադ, Ֆերեյդուն Անուզադեհ Խալիլի, Մոհամմադռեզա Բայրամի, Շահրամ Շաֆիի, Հոսեյն Էբրահիմի Ավանդ, Ահմադռեզա Ահմադի, Ամիրհոսեյն Ֆարդի և ուրիշներ:

Իրանի ժամանակակից գրականության երրորդ սերունդը պատկանում է երկու դարաշրջանների: Այս սերնդի կենդանության օրոք ավարտվում է քսաներորդ դարը: Ընդհանուր առմամբ այս շրջանի վերջին տասնամյակում (2000-2010թթ.) զգալիորեն զարգացում ապրեցին երեխաների համար գրական ստեղծագործությունների թարգմանչական աշխատանքները, և լուսավորության նախարարությանն առընթեր «Մանկապատանեկան թարգմանչական տան» հիմնադրման արդյունքում օրակարգում հայտնվեց երեխաների ու դեռահասների համար աշխարհի լավագույն ստեղծագործությունների թարգմանության հարցը: Իհարկե, այս իրադարձությունը մի կողմից նպաստեց պարսկերենում մանկական գրականության հարստացմանը, սակայն մյուս կողմից նրան նաև վնասներ պատճառեց³: Այս ժամանակաշրջանում զգալիորեն զարգացում ապրեց մանկապատանեկան գրականության քննադատության, պատմության, տեսական հիմունքների և ընդհանրապես ճանաչողական բնույթի աշխատանքների շարքը: Մանկական գրական ստեղծագործությունների արժանի գրողներից է Ղադամալի Սարամին, ով այս ոլորտը ներկայացնելու ուղղությամբ արժեքավոր քայլեր է նախաձեռնել:

Ղադամալի Սարամին ծնվել է Ռամհորմոզում 1944թ. հունվարի 28-ին: Նա իր պարսից լեզվի ու գրականության մասնագիտությամբ գիտական թեկնածուական աստիճանն ստացել է 1985թ., և մինչ օրս նրա հեղինակությամբ մի քանի տասնյակ գրքեր են հրատարակվել մանկապատանեկան հետազոտական տարբեր ուղղություններով, բանաստեղծությունների ժողովածուների, թարգմանությունների և այլ տարբերակներով: Նրա ստեղծագործություններից

³ Հեղինակն առանձին հետազոտություն է կատարել Թորբաթ-Հեյդադիեի Իսլամական Ազադ համալսարանում՝ պարսկալեզու երեխաների համար թարգմանված աշխատությունների ախտորոշման շուրջ, որի շրջանակներում ուսումնասիրվել են մանկական գրականության կրած վնասները:

են՝ «Ծաղկի գույնից մինչև փշի տառապանքը» գիրքը, որը Շահնամեի պատմությունների ձևաբանությունն է և գրականության ոլորտում խրախուսանքի արժանացավ Իսլամական մշակույթի ու լուսավորության նախարարության տարվա լավագույն գրքի խորհրդի որոշումով, և 2012թ. տպագրվեցին նրա 6-րդ տպագրությունը, Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոնի կողմից հրատարակված «Թռչելուց ավելի քաղցր» ստեղծագործությունը, որը մանկան գրքի խորհրդի կողմից ընտրվել է տարվա լավագույն գիրք, ինչպես նաև դրա հիման վրա տիկնիկային ներկայացում է բեմադրվել Մարգիե Մահբուբի ջանքերով Թեհրանի «Թեաթե Շահրի» («Քաղաքային թատրոնի») դահլիճում: Նա գրել է բազմաթիվ ստեղծագործություններ մանկապատանեկան գրականության թեմայի շուրջ:

Այս գլխի վերջում հարկ է նշել, որ սահմանադրությանը հաջորդող շրջանի երրորդ սերնդի գրողներից շատերը դեռևս ստեղծագործում են մանկապատանեկան գրականության բնագավառում, և նրանց ստեղծագործությունների կամ մտածելակերպի մասին կարծիք հայտնելը չի կարող կատարյալ ճշգրիտ համարվել, քանի որ մարդը շարունակ փոփոխվում է: Հետևաբար՝ բավարարվել ենք ընդամենը նրանց աշխատանքների թվարկմամբ: Իսկ ատենախոսությունն ընթերցողներին առավել ընդլայնված տեղեկություններ տրամադրելու նպատակով ստորև բերված աղյուսակում ամփոփվել են Իրանում սահմանադրությանը հաջորդող շրջանի երրորդ սերնդի մանկական գրականության ամենաակնառու հեղինակների որոշ ստեղծագործությունների անունները, ընդ որում այդ հեղինակներից ոմանք ձևավորվել են երկրորդ սերնդի շրջանակներում:

Աղյուսակ 1

Իրանում սահմանադրությանը հաջորդող երրորդ սերնդի մանկական գրականության ամենաակնառու հեղինակների առանձին ստեղծագործություններ

Հեղինակի անունը	Ստեղծագործություններ	Հրատարակման տարեթիվ	Հրատարակչություն
Սամադ Բեհրանգի	1. Ուլդուզն ու խոսող տիկնիկը	1966	Դոնյա
	2. Ուլդուզն ու ագռավները	1966	Դոնյա

	3. Մի դեղձ ու հազար դեղձ	1966	Ռուզբեհան
	4. Բազուկ վաճառող տղան	1968	Դոնյա
	5. Բեիրանգիի պատմվածքները	1969	Շամս
	6. Սև ձկնիկը	1976	Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոն
	և այլն ...		
Նադեր Էբրահիմի	1. Անձրևի առասպելը	1967	Ամիր Քաբիր (Շոքուֆե)
	2. Ես չգիտեմ իմ տան ճանապարհը	1969	Ամիր Քաբիր (Շոքուֆե)
	3. Պատուհանից նայիր	1972	Երեխաներին ու դեռահասներին ուղեկից
	4. Ագռավները	1975	Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոն
	5. Սկյուռները	1977	Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոն
	6. Գորգի ծաղիկների պատմությունը	1978	Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոն
	7. Կորած այծը	1979	Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոն
	8. Արևի անձրևն ու սալիկի պատմությունը	1983	Ամիր Քաբիր (Շոքուֆե)
	9. Տանից հեռու	1990	Երեխաներին ու դեռահասներին ուղեկից
	և այլն ...		
Ֆարիդե	1. «Թաջմաիր» և	1964	Քերթաբհայե Ջիբի

Ֆարզամ	«Հարսը» պիեսները		/Գրպանի գրքեր/
	2. Արևի բյուրեղի ծաղիկը	1983	Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոն
	3. Անկոչ հյուրերը	1991	Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոն
	և այլն ...		
Ֆերեյդուն Դուսթդար	Առաջին օրենքը	1979	Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոն
Ռեզա Ռահզոզար	1. Նապաստակները	1985	Սեփիդե
	2. Մի' ասա «չեմ կարող» ...	1989	Արվեստի բաժին
	3. Անձրև տեղա, անձրև չտեղա:	1991	Մադրեսե
	4. Թագավորի խորոզը	1991	Փայամե Ազադի
	5. Փիտոյի պոչը	---	Մադրեսե
	և այլն ...		
Նոդսի Նազինուր	1. Ջուր ու ցորեն	1970	Սաֆիայի Շահ
	2. Ջուրն աղբյուրից բաժանվելուց հետո ի՞նչ արեց:	1973	Ամիր Քաբիր
	3. Ունևոր ու չքավոր դառնալը	1976	Գուլշանի
	4. Միասին	1976	Շաբգիր
	5. Աշխարհի լավագույն գազանանոցը	1977	Շաբգիր
	6. Երազանք	1978	Ռուզբեհան
	7. Նորոգման կես	1985	Ռուզբեհան
	8. Կյանքը	1990	Ռուզբեհան
	և այլն ...		
Մանուչեիր Քարինզադե	1. Թագազրկում	1979	Էլիամ
	2. Գուլչին հորաքրոջ	1979	Թուքա

	հեքիաթները		
	և այլն ...		
Հուշանգ Մորադի Քերմանի	1. Մաջիդի պատմվածքները (1)	1981	Սահար քեթաբ
	2. Մաջիդի պատմվածքները (2)	1984	Սահար քեթաբ
	3. Մաջիդի պատմվածքները (3)	1985	Սահար քեթաբ
	4. Մաջիդի պատմվածքները (4)	1987	Սահար քեթաբ
	5. Մաջիդի պատմվածքները (5)	1989	Սահար քեթաբ
	և այլն ...		
Նուռեդին Ջառինքեյք	1. Իմ մանկության օրերը	1974	Մանկապատանեկան մտավոր զարգաց- ման կենտրոն
	2. Թրթուրի պատմությունը	1984	Մանկապատանեկան մտավոր զարգաց- ման կենտրոն
	3. Ա-ն այբուբենի սկիզբն է (1)	1986	Մանկապատանեկան մտավոր զարգաց- ման կենտրոն
	4. Ա-ն այբուբենի սկիզբն է (2)	1986	Մանկապատանեկան մտավոր զարգաց- ման կենտրոն
	5. Բազմաֆունկցիոնալ գործարանը	1989	Մանկապատանեկան մտավոր զարգաց- ման կենտրոն
	և այլն ...		
Մահմուդ Գուլաբզառեյի	1. Հեղափոխության ակնթարթները	1979	Սորուշ
	և այլն ...		
Սիրուս Թահրազ	1. Ապրենք միասին	1977	Մանկապատանեկան մտավոր զարգաց- ման կենտրոն
	2. Արևի	1977	Մանկապատանեկան

	բանաստեղծը		մտավոր զարգացման կենտրոն
	3. Ամինի հավի աղոթքը	----	Մանկապատանեկան մտավոր զարգացման կենտրոն
	և այլն ...		
Մահդոխտ Քաշքույի	1. Իմ կատուն	1989	Շաբավիզ
	2. Գետն ու արևը	----	Շաբավիզ
	և այլն ...		

Եզրահանգում

Քսաներորդ դարի Իրանի մանկապատանեկան գրականության ուսումնասիրության արդյունքում նկատելի են երեք հստակ ժամանակաշրջաններ, որոնք են՝

- ծագում,
- կատարելագործում և ծաղկում,
- զարգացում և ներգործում:

Ծագման շրջան: Ինչպես նշվեց այս գլխում, Իրանում մանկապատանեկան գրականությունը ցանկացած այլ երկրի նման բխել է բանավոր մշակույթի ու գրականության կենդանի, հոսող ու դինամիկ հոսանքներից: Սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի գրողներն այն խումբն են, ովքեր, հիմնվելով հանրային մշակույթի վրա և օգտվելով բանավոր ու դասական գրականությունից, ստեղծագործություններ են ներկայացրել երեխաների ու դեռահասների համար: Բոլոր ազգերին անհրաժեշտ է, որ սեփական զավակներին հայրենի ինքնության և իրենց արմատների բնօրրանին ծանոթացնելու համար օգտվեն սեփական բանահյուսությունից: Պետք է բանահյուսությունը (բանավոր գրականությունը) տեղակայել երեխայի կյանքում և մարդկային կյանքի դառը և քաղցր իրողություններին նրան ծանոթացնել նրա հայրենի անապակ գրականության միջոցով:

Կատարելագործման ու ծաղկման շրջան: Իրանի ժամանակակից գրողների երկրորդ սերունդը մեծ ջանքեր է ներդրել երկրում մանկապատանեկան գրականության զարգացման ու կատարելագործման ուղղությամբ: Ինչպես նկատելի էր այս հետազոտության շրջանակներում, 1960-ականներին (արեգակնային տոմարով՝ 1340-1350թթ.) Իրանում մանկական գրականու-

թյունն զգալի առաջընթաց է ապրել: Այս տասնամյակում ասպարեզ եկան և փայլեցին մանկապատանեկան գրականության ոլորտում անվանի դեմքերից շատերը: Տարբեր կազմակերպություններ ու հիմնադրամներ ևս ձևավորվել են այս ժամանակահատվածում: Գրականության այս ոլորտի կատարելագործման ու ծաղկման վառ ապացույցներից են երեխաներին ու դեռահասներին հատուկ գրական ստեղծագործությունների արարումը և առընթեր արհեստների ու արվեստների ձևավորումը, և դրա ականատեսն ենք 1950-1980թթ.:

Ձարգացման և ներգործության շրջան: Իրանում մանկական գրականությունն սկզբում հրեշտակների կերպարներով առաջնորդվող գրականություն էր, և կերպարները որևէ արմատական ու ներգործող խորհրդանիշներ չէին և շատ արագ մոռացվում էին: Այս գրականության շրջանակներում արարվող կերպարներն իրականում գոյություն չունեին ընթերցողի սովորական ու աօրյա կյանքում: Ընթերցողն իր կյանքում հանդիպում է այնպիսի կերպարների ու մարդկանց հետ, ովքեր հրեշտակներ ու սատանաներ չեն: Այնպիսի մարդկանց հետ, ովքեր լի են բարությանբ ու չարիքով: Մարդիկ, ովքեր երբեմն ընկնում են ինքնահավանության գիրկն ու երբեմն լի են ինքնագոհաբերությամբ: Այսօրվա երեխան կյանքի բազմերանգ դեմքի հետ առերեսվելու համար շոշափելի ու արժանահավատ հերոսներին ընդօրինակելու կարիքն է զգում: Ընդօրինակման այնպիսի կերպարների, որոնց դրական կողմերը ոչ այնքան անհասանելի լինեն, որ ընթերցողին մղեն ինքնապաշտպանության, և ոչ այնքան անհավատալի ու չափազանցված, որ նրա կողմից ծաղրանքի առիթ հանդիսանան: Մանկական գրականության մեջ ամենակարևոր հանգամանքը երեխաների մշակութային առանձնահատկությունները հաշվի առնելն է: Նրա համար արարվող ստեղծագործությունը պետք է մոտ լինի նրա իրական կյանքին:

Երևակայության սիրահար երեխաներին կարելի է երևակայության ու առասպելների դարպասի միջով անցկացնելով ուղղորդել դեպի կյանքի քաղցր ու դառն իրողություններ, և առասպելների տիեզերքում շարժուն խորհրդանիշների ու նշանների օգնությամբ նրանց ծանոթացնել կյանքում առկա իրական խոչընդոտներին դիմակայելու գործիքներին ու զենքերին:

**ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА ПОСТКОНСТИТУЦИОННОГО ПЕРИОДА ИРАНА
(1980-2010 гг.)**

МАХМУД ФИРУЗИМОГАДАМ⁴ (ИРАН)

Статья посвящена изучению детской литературы, после конституционного периода Ирана. Предметом исследования, в частности, является детская литература третьего поколения после конституции, которая охватывает период 1980-2010 годов.

Ключевые слова – Иран, детская литература, 1980-2010 годы.

**THE THIRD GENERATION OF CHILDREN'S LITERATURE
IN THE POST-CONSTITUTIONAL PERIOD (1980-2010)**

MAHMUD FIRUZIMOGHADAM⁵ (IRAN)

The article is dedicated to the study of literature for children and young adults after the constitutional revolution. The main objective of this study is a survey of the literature for children and young adults of the third generation of the post-constitutional period from 1980 to 2010.

Key words – Iran, children's literature, 1980-2010 period.

⁴ Иран, Тербате Гейдарейх, филиал Тербате Гейдарейх Исламского университета Азад, отделение (кафедра) персидского языка и литературы (председатель).

⁵ Iran, Terbathe Heydarieh, Torbathe Heydarieh branch of the Islamic Azad University, Department of Persian language and literature (chair).

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՔՍԻ ՆԵՐՎԱՊԱԿՑՈՒՄԸ ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՆՔԻ ՄԻՋՑՈՎ՝ ՀԻՄՆՎԱԾ ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ՀՐԱՆՈՒՇ ԹՈՎԱՄԱՍՅԱՆ

Հոդվածում քննվում է տեքստի ներկայացման խնդիրը խոսող անհատի կանխենթադրության հենքի ֆենոմենոլոգիական և լեզվական ճանաչողական կառույցների միջոցով՝ հիմնված բառային միավորների կրկնության վրա: Ելնելով հաղորդակցման նպատակից՝ խոսող անհատն ընտրում է համապատասխան ֆենոմենոլոգիական ճանաչողական կառույցներ, որպեսզի ստեղծի ամբողջական խոսույթ: Այնուհետև նա ընտրում է համապատասխան լեզվական ճանաչողական կառույցներ՝ բառային միավորների կրկնության տեսքով, որպեսզի կառուցի կապակցված տեքստ: Բառային կրկնությունը խոսույթի որոշակի կանխենթադրությամբ հղելու և այն կիզակետ դարձնելու գործառույթ է կատարում:

Բանալի բառեր – կանխենթադրության հենք, կանխենթադրույթ, տեքստի բառային ներկայացում, խոսող անհատ, բառային կրկնություն, խոսույթ, ֆենոմենոլոգիական և լեզվական ճանաչողական կառույցներ:

Հատկանշական է, որ բառային կրկնությամբ տեքստի կապակցումն իր ընդգրկունությամբ առավելապես հենվում է խոսող անհատի՝ կանխենթադրու-

¹ Ի սկզբանե լեզվաբանական գրականության մեջ շրջանառվում էր **լեզվական անհատ** եզրույթը, որը ներմուծվել է գիտական բառապաշար Յու. Կարաուլովի կողմից, հետագայում այն իր զարգացումն է գտել նաև Բ. Ջոնսթոնի աշխատություններում: Խոսող անհատ և լեզվական անհատ հասկացությունների տարանջատումը հառնում է դեռ Ֆ. դը Սոյյուրի լեզու, լեզվական ունակություն և դրանց ամբողջություն կազմող լեզվական գործունեություն եռանդամությանը: Առանձնացնում են լեզվախոսողության չորս բաղադրիչ՝ լեզու, լեզվական ունակություն, լեզվական գործունեություն և խոսք: Ֆ. դը Սոյյուրի այս քառանդամության բաղադրիչներից առաջինին և երրորդին, ըստ մեզ, համապատասխանում են **լեզվական անհատ** և **խոսող անհատ** հասկացությունները: Ընդ որում՝ դրանք հարաբերակցվում են հարացուցային հարաբերություններով. եթե լեզվական անհատը անփոփոխակն է, ապա խոսող անհատը՝ տարբերակը: Տե՛ս **Караулов Ю. Н.** Русский язык и языковая личность. Москва, 1987; **B. Johnstone**, The Linguistic Individual: Self-Expression in Language and Linguistics, Oxford University Press, 1996; Տե՛ս **Ф. де Соссюр**. Курс общей лингвистики. Москва, 1933; **Թովմասյան Հ.**, Խոսող անհատի գաղափարը և նրա լեզվագիտակցությունը որպես հաղորդակցվելու հիմք // «Հայագիտության

թային հենքի² (այսուհետ՝ ԿՀ) լեզվական, քան ֆենոմենոլոգիական բաղադրիչի վրա: Բանն այն է, որ տեքստի ներկայակցումը և ամբողջականությունն ապահովելու համար խոսող անհատը նախ գործադրում է իր ԿՀ-ի ֆենոմենոլոգիական բաղադրիչի ճանաչողական ներունակությունը կապակցված խոսույթ ստեղծելու, ապա այն տեքստում առկայացնելու համար գործի է դնում իր ԿՀ-ի լեզվական ճանաչողական կառույցները, սակայն հիմնականում շեշտը դրվում է լեզվական կառույցների գործադրման և գործառման վրա:

Բառային կրկնությունը բուն լեզվական երևույթ է, և դրա կիրառման հնարավորությունները մատնանշում են, որ որքան շատ են դրա օգտագործման դեպքերը, հատկապես գրավոր և գեղարվեստական տեքստերում, որը պահանջում է ավելի շատ մտածական գործողություններ, այնքան ավելի լավ է զարգացած խոսող անհատի լեզվական ունակությունը: Այսինքն՝ նրա ԿՀ-ի լեզվական ճանաչողական համակարգը լավ զարգացած է:

Նախ նշենք, որ բառային կրկնության միջոցով տեքստի ներկայակցումը հիմնված է միևնույն հասկացույթի կամ ֆրեյմի վրա. «Կրկնվող անվանակոչումը տեքստում արդեն նշված առարկայի, հատկանիշի, գործողության, ամբողջ իրավիճակի կրկնությունն է, որը կապված է միևնույն իմաստի նշմամբ համավերաբերության միջոցով»³: Սակայն պետք է նշել, որ «տեքստում բառի կրկնապատկումը չի նշանակում հասկացույթի մեխանիկական կրկնապատկում, այլ՝ դրա նոր ավելի բարդ բովանդակություն»⁴:

Տեքստի կառուցման տեսանկյունից բառային կրկնությունը կրկնվող իմաստի՝ խոսույթի որոշակի կանխենթադրույթի, առկայացման հատուկ միջոց է, որն ապահովում է ներակա հղում միևնույն կանխենթադրույթին՝ դարձնելով այն մակրոտեքստի, միկրոտեքստի կամ բազմաստորոգական միավորի կիզակետ: Բառային կրկնությունը կարող է առկայանալ բարդ շարահյուսական միավորի տարբեր մասերում նույն բառույթների կիրառմամբ (ճշգրիտ կրկնությունը)

հարցեր» հանդես 1 (7), ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, «ԵՊՀ հրատարակչություն», 2016, էջ 168-179:

² Մարդու ճանաչողական, մտահայեցողական այն գործընթացը և դրա արդյունքը, որը սկսում է նրա ծնվելու պահից և տևում մինչև մահ, որի հետևանքով նրա գիտակցության մեջ արտացոլվում և ձևավորվում է տարաբնույթ գիտելիքների և պատկերացումների մի սովոր գանգված, անվանել ենք **կանխենթադրույթային հենք**: Վերջինս կազմված է երկու տեսակի ճանաչողական կառույցներից՝ **ֆենոմենոլոգիական և լեզվական**:

³ **Гак В.Г.** Языковые преобразования. Москва, 1998, стр. 536.

⁴ **Лотман Ю.М.** Структура художественного текста. Москва, 1970, стр. 158-159.

կամ նույն/ նմանատիպ ձևայիններ (բառակազմական կրկնություն) ունեցող բառայինների կրկնությամբ: Տեքստի շարահյուսական մասերի կապակցման հարցում կրկնության դերը կարևորում են մի շարք հետազոտողներ⁵, սակայն նրանք դիտարկում են բազմաստորագական միավորի մասերի կապակցումը զուտ բարդ նախադասության մասերի գործառնման տեսանկյունից:

Բառային կրկնությունը միևնույն խոսույթի սահմաններում տեքստի կապակցման հատուկ միջոց է: Կրկնվող իմաստային բաղադրիչը՝ կանխենթադրույթը, ամրացնում է ստորագական մասերը և ապահովում ամբողջ կառույցի իմաստային ամբողջականությունը: Իրականում դրանով խոսող անհատը ներակա կապակցում է խոսույթը կանխենթադրույթների և դրանք անվանող լեզվական միավորների համավերաբերության միջոցով: Հարց է ծագում. ո՞րն է այդտեղ ԿՀ-ի դերը: ԿՀ-ի դերը հենց կրկնության հնարի՝ որպես լեզվական ճանաչողական կառույցի, իմացությունն ու պատշաճ գործածությունն է: Այսինքն՝ մի կողմից խոսույթը ձևավորվում է խոսող անհատի ԿՀ-ի ֆենոմենոլոգիական ճանաչողական կառույցների միջոցով տեքստի խորքային մակարդակում, մյուս կողմից՝ այդ նույն ԿՀ-ը իր լեզվական ճանաչողական կառույցների միջոցով, որը ձևավորում է նրա լեզվական ունակությունը, կապակցում է տեքստը դրա մակերեսային մակարդակում:

Այսպիսով, տեսնենք՝ բառային կրկնության ինչ տեսակներ կան, և ինչ գործառնություններ են դրանք իրականացնում, քանի որ խոսող անհատը, դիմելով բառային կրկնությանը, հետապնդում է որոշակի հաղորդակցական նպատակ:

Կարող են լինել դեպքեր, երբ ուղղակի կրկնվում է միևնույն բառը: Դիտարկենք մի հատված Հ. Թումանյանի «Գիքորը» ստեղծագործությունից.

– **Կսովորի, ամեն բան կսովորի: Էնպես սովորի ո՞ր... Ձեր կողմերից էն Նիկոլն ինչ է, որ իրեն համար դուրան ունի բաց արած, նա էլ ինձ մտր է մարդ**

⁵ Տե՛ս **Покусаенко В.К.** Роль лексических элементов в установлении структурно-семантической связи между компонентами бессоюзного сложного предложения // Семантическая структура предложения. Ростов-на-Дону, 1978, стр. 119-133, **Лисоченко Л.В.** Внешняя омонимия синтаксически связанных конструкций с повторами // Синтаксические связи и отношения /Отв. ред. П.В. Чесноков. Ростов-на-Дону, 1977, стр. 26-32, **Черемисина М.И., Колосова Т.А.** Очерки по теории сложного предложения. Новосибирск, 1987, **Белунова Н.И.** Повтор подлежащего в собственно бессоюзных сложных предложениях с парцелляцией (на материале публицистики) // Сложное предложение в системе других синтаксических категорий: Межвуз. сб. научн. тр. Ленинград, 1989, стр. 109-116, **Семина С.И.** Языковой повтор как конститuent полипредикативных сложносочиненных предложений в современном русском языке. Автореф. канд. филол. наук. Таганрог, 1999.

դատել: Ամա վերջում մի ջուխսր չայի գդալ ու մի քանի բան գողացավ...⁶:

Կսովորի բառի եռակի կրկնությունն ապահովում է տեքստի ամբողջականությունը և ներկայակցումը՝ իրականում արտացոլելով խոսույթում առկա այն կանխենթադրույթը, թե որքան կարևոր էր բազազի համար Գիքորին բան սովորեցնելն ու իր համար լավ ծառա դարձնելը: Բառային կրկնության գործառույթը կանխենթադրվող տեղեկատվության ներակա շեշտադրումն է:

Բառային կրկնությունը կարող է դրսևորվել նաև միևնույն բառային միավորի տարբեր ձևերի կրկնությամբ: Դիտարկենք մեկ այլ հատված նույն ստեղծագործությունից.

– Հինգ տարի դեռ փող չեմ տալ, – ասավ բազազը պայմանը կապելիս:– Թե դրուստը կուզես, դեռ դու պետք է տաս, որ քու որդին բան է սովորելու: Ախար իսկի բան **չգիտի**...

– Որտեղից **գիտենա**, խազեին ջան, – պատասխանեց Համբոն, – որ **գիտենար**, էլ ո՞ր կբերեի, ես էլ բերել եմ, որ բան սովորի...⁷:

Այստեղ բառային կրկնությունը տեքստի ներակա առկայական տրոհման գործառույթ է կատարում՝ դրանով իսկ կապակցելով տեքստը: Ակնհայտ է, որ կրկնվող միավորի առաջին կրկնությունը *Ախար իսկի բան չգիտի* ասույթի մեջ հանդես է գալիս որպես ռեմա, այսինքն՝ դրանով հասցեագրողը հայտնում է նոր տեղեկատվություն: Հաջորդ կրկնությունները՝ – Որտեղից **գիտենա**, – որ **գիտենար**,..., թեմայի գործառույթ են կատարում՝ արդեն որպես խոսույթի կանխենթադրույթ, որը կրկնվող համավերաբերության միջոցով ներկայակցում է տեքստը: Այսինքն՝ ակնհայտ է, որ բառաձևերի կրկնությունը տվյալ դեպքում արտացոլում է խոսույթի բովանդակությունը, այսինքն՝ բառաձևերի մակերեսային կրկնությունը ուղղակի դա առկայացնելու միջոց է: Այստեղ կրկին գործառում են խոսող անհատի ԿՀ-ի լեզվական ճանաչողական կառույցները, որոնցից նա ընտրում է տվյալ թեմանեմատիկ իմաստը հաղորդելու ամենապատշաճ ձևը: Այն նաև ամրակ տեքստի տարբեր մասերը հարաբերակցելու համար է:

Հատկանշական է, որ ցանկացած բառային կրկնություն հաղորդակցական և շարահյուսական նշույթ է կրում: Հասցեագրողը դրանով ցանկանում է ուշադրություն գրավել տեքստի տվյալ հատվածի վրա, որն իր հերթին խո-

⁶ Թովմանյան Հ., Գիքորը, <http://armenianhouse.org/tumanyan/fiction-am/giqor.html>

⁷ Նույն տեղում:

սույթում դրա համապատասխան կանխենթադրության կարևորման արդյունքն է: Դիտարկենք հետևյալ օրինակը.

Մի խաղաղ առավոտ էր. մի տխուր առավոտ: *Տանըցիք ու հարևանները եկան մինչև գյուղի ծերը, Գիքորի թշերը պաշեցին ու ճամփա դրին*⁸:

Հեղինակը դիմում է կրկնության, որն այստեղ շարահյուսական մի ամբողջ կառույցի կրկնություն է, հասցեատիրոջ ուշադրությունը դրա վրա գրավելու համար, և ներակա մատնացույց անում, որ տեքստի խոսույթում այդ կանխենթադրությամբ կարևորվում է, այլապես նա միևնույն բովանդակությունը կարող էր արտահայտել համազոր որոշիչներով պարզ նախադասությամբ՝ **Մի խաղաղ ու տխուր առավոտ էր:** Ակնհայտ է, որ վերջինս բովանդակային այդ ուժգնության նշույթը չի կրում: Այլ կերպ ասած՝ դրա հիմքում ընկած կանխենթադրությամբ խոսույթի կիզակետը չէ:

Ընդհանրապես կրկնվող բառույթների մոտ դասավորությունը կապակցվող մասերի մեջ հնարավորինս բարձրացնում է դրա կապակցական գործառույթը: Այստեղ կարևորվում է ոչ միայն մակերեսային կառույցի ամբողջականությունը, այլև նախադասության կիզակետի՝ դրա կանխենթադրության որոշումը: Երկու հարակից ստորոգական շարահյուսական միավորների մեջ միևնույն բառի կրկնությունը հասցեատիրոջ ուշադրությունը սևեռում է դեպի դրա վերաբերելին՝ խոսույթի այն կանխենթադրությամբ, որը, ըստ հասցեագրողի, առանցքային է:

Կրկնության մեկ այլ հետաքրքրական տեսակ է արմատային կրկնությունը, որը հիմնականում բնորոշ է համադրական լեզուներին: Այս դեպքում տեքստի տեղային ամբողջականությունն ապահովվում է դրա որոշակի հատվածում միևնույն արմատով կազմված տարբեր բառակազմական միավորների կրկնությամբ: Դիտարկենք մի հատված Հրանտ Մաթևոսյանի «Բաց երկնքի տակ հին լեռներ» ստեղծագործությունից.

Մեր մայրերը հունձ էին անում ու լաց էին լինում: Ձիերին տարել էին պատերազմ — եզների հեք բանում էին ու լաց էին լինում: Գուլպա էին գործում ու լաց էին լինում: Հեքո լուռ էին լաց լինում, հեքո երգելով էին լաց լինում: Երգելով լաց էին լինում և լացի մեջ ասում էին «Շաքրո՛ւ»: «Մարտիրո՛ւս», «Շաքրո՛ւ», «Պիո՛ւն», «Գիքո՛ր»: Մենք նրանց լավ չէինք տեսել, մենք նրանց չէինք հիշում, մեր մայրերը լացույր երգի միջից ասում էին «Շաքրո՛ւ», և մեր սիրտը լցվում էր մի տեսակ տխուր ուրախությամբ, մի տեսակ թախ-

⁸ Թումանյան Հ., Գիքորը, <http://armenianhouse.org/tumanyan/fiction-am/giqor.html>

ծոյր ուժեղությամբ, ինչ-որ ծանր հոյսով: Դեղին, խշշան արտերում թուխ, մերկ տղերքը հնձի էին եղել՝ նրանց տարել էին պատերազմ, գերմանական տանկերի դեմ: Փափուկ սարերի մերկ երամակները քշել էին պատերազմ, գերմանական տանկերի դեմ: Մերկ այդ երամակից ոչ մի ծի ետ չեկավ: Տղերքից մի երկուսը եկան, և մեր մայրերը **լաց էին լինում և լացի միջից ասում էին**. «Անդրանիկն եկավ, Շաքրոոո»⁹:

Նախ՝ **լաց էին լինում** արտահայտության բազմակի կրկնությունը տվյալ միկրոտեքստի տարբեր մասերում ապահովում է տեքստի ամբողջականությունը՝ խոսույթի մակրոկանխենթադրույթի պահպանմամբ, այն է՝ պատերազմ գնացած և չվերադարձած իրենց որդիների համար տխրություն, ցավ, վիշտ, կարոտ: Տեքստի ներկապակցումն ապահովվում է նաև **լաց** գոյականի բառակազմական տարբեր միավորներով՝ **լաց լինել**, **լացոտ**: Այսինքն՝ խոսույթի ընդհանուր հասկացույթը, մակրոկանխենթադրույթը՝ **վիշտ** ֆրեյմը, այս միկրոտեքստում առավելապես դրսևորվել է **լաց լինել** բայի կրկնությամբ և **լաց** գոյականից բառակազմությամբ ստացված նոր **լացոտ** միավորով: Այսինքն՝ իմաստային միջուկը՝ ֆրեյմի գագաթը «...թափանցիկ է դարձնում մի բառի իմաստը մյուս բառի իմաստի միջոցով»¹⁰, որը ցույց է տալիս ոչ միայն այն, որ այս բառերը վերաբերում են միևնույն հասկացույթի՝ մակրոկանխենթադրույթի, այլև, մեկի իմաստը մյուսի մեջ ներառելով, տեքստի այն հատվածները, որոնցում առկա է արմատային կրկնություն, դարձնում է սերտորեն փոխկապակցված:

2. Պոպովայի և Ի. Ստերինի կարծիքով որպես հատկանիշ ցույց տվող խոսքի մասեր՝ ածականները, մակբայները և բայերն օժտված են հասկացույթ անվանելու ավելի ցածր ներունակությամբ, քան գոյականները: Լեզվական միջոցներով կաղապարվող հասկացույթի հատկանիշ(ներ)ը կախված է իրավիճակից: Իրավիճակն է վերագրում տվյալ հատկանիշն այդ հասկացույթին: Այսինքն՝ դա մտածական կաղապար չէ, պրեդիկատիվ է (որոշակի իմաստի վերագրում), ինչպես վերը բերված օրինակում: Այս առումով Ն. Արուտյունովան կարծում է, որ «հանդես գալով պրեդիկատի դերում՝ բառը նշանակության արժեք չի ստանում: Այն ունի իմաստ, բայց զուրկ է վերաբերություն

⁹ **Մաթևոսյան Հ.**, Բաց երկնքի տակ հին լեռներ, http://hrantmatevossian.org/hy/works/id/Bac_erkngi_tak_hin_lerner#tabcontent

¹⁰ **Ревзин И. И.** Современная структурная лингвистика. Москва, 1977, стр. 221.

նից, այսինքն՝ չի ծառայում որպես առարկայի՝ նշանային փոխարինող»¹¹: Մեր ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ բառային կրկնության հիմնական գործառույթը խոսույթի որոշակի հատվածի՝ կանխենթադրույթի վրա հասցեատիրոջ ուշադրության կենտրոնացումն է տեքստում դրա բազմակի առկայացման միջոցով, որի դեպքում պահպանվում է միևնույն վերաբերելին՝ խոսույթի որոշակի կանխենթադրույթը: Մինչդեռ հատկանիշ ցույց տվող բառային միավորների կրկնությունը նախ անկախ վերաբերելի՝ խոսույթում որոշակի կանխենթադրույթ, չունի, ապա սերում է հարանշանակային իմաստներ և նվազեցնում հիմնական վերաբերելիի՝ տվյալ կանխենթադրույթի նկատմամբ ուշադրությունը՝ ստեղծելով հարակից իմաստներ:

Այս առումով Վ. Գակը նշում է, որ «...իմաստային ավելցուկ կրող ցանկացած միավոր իմաստագրվում է և ձեռք է բերում երկրորդային իմաստ, գործառույթ՝ կառուցվածքային կամ ոճական»:

Մեր կարծիքով կրկնության ավելցուկն օժտված է գեղարվեստական-արտահայտչական հնարավորություններով միայն այն դեպքում, երբ հեղինակը վարպետորեն տիրապետում է դրա գործառման հմտություններին, այլապես կրկնության ավելցուկը որակվում է որպես նույնաբանություն, հավելուրդություն, խոսքային նորմից շեղում՝ տեքստը դարձնելով ոչ ամբողջական և չկապակցված:

Այս առումով Ե. Պոկրովսկայան նույնիսկ կարծում է, որ «շատ խիտ» կրկնությունները բարդացնում են հասցեատիրոջ կողմից դրա ընկալման գործառույթը. «Միկրոտեքստի համար որոշ առանցքային բառերի բազմակի կրկնությունը, որը բարդացված է արմատային ձևույթների կրկնությամբ, բարդացնում է իմաստը, խճճում ընթերցողին»¹²:

Սա վկայում է, որ խոսող անհատի ԿՀ-ը բավականաչափ զարգացած չէ, հատկապես դրա լեզվական ճանաչողական բաղադրիչը, քանի որ նման «կտրտված» տեքստեր բնորոշ են երեխաներին, որոնք դեռ աշխարհն ամբողջությամբ չեն արտացոլել իրենց գիտակցության մեջ, որի մեջ մտնում է նաև լեզվի յուրացումը, կամ օտար լեզու սովորողներին, որոնց ԿՀ-ի լեզվական բաղադրիչը դեռ մինչև վերջ ձևավորված չէ, որն էլ առաջացնում է տեքստի

¹¹ Арутюнова Н. Д. Коммуникативная функция и значение слова // НДВШ ФН, 1973. №3, стр. 44.

¹² Покровская Е.А. Русский синтаксис в XX веке: лингвокультурологический анализ. Ростов-на-Дону, 2000, стр. 147.

մակերեսային կառույցների ոչ նորմատիվ կապակցում:

Այնուամենայնիվ, կրկնությունների հմուտ կիրառման դեպքում դրա տեքստակապակցող գործառույթի դերն անհերքելի է: Մոտ կամ հեռու տեղակայված կրկնվող միավորները՝ բառայթները, կրկնակի գործառույթ են կատարում՝ լեզվի միջոցով կաղապարել խոսույթի համապատասխան հասկացույթը՝ կանխենթադրույթը, և այդպիսով կապակցել տեքստը թե՛ իմաստային, թե՛ կառուցվածքային տեսանկյուններից: Կրկնություններով համալրված տեքստը, հատկապես գեղարվեստական կամ բանաստեղծական տեքստը, ունի դիթմիկ կառուցվածք: Ի. Միստրիկի համոզմամբ գիտական և խոսակցական տեքստերին բնորոշ է կրկնությունների բարձր ցուցանիշ, մինչդեռ գեղարվեստական տեքստերին՝ ցածր¹³: Վերջինս, ըստ երևույթին, պայմանավորված է գեղարվեստական տեքստերի սերման տարբեր նպատակներով: Գիտական տեքստերում բառային կրկնությունն ապահովում է թեմայի զարգացման հաջորդականություն և հետևողականություն, խոսույթում առկա կանխենթադրույթների հետևողական և տրամաբանահաջորդական առկայացում: Խոսակցական ոճում բառային կրկնությունները պայմանավորված են խոսքի և մտքի գործառման միաժամանակությամբ: Բառային կրկնությունները գեղարվեստական տեքստերում թեև ավելի սակավաթիվ են, բայց ավելի ազդեցիկ են: Դրանք հանդես են գալիս որպես ոճական հնարներ:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է եզրահանգել, որ խոսող անհատի հաղորդակցական ունակությունը հիմնված է նրա ԿՀ-ի երկու ճանաչողական կառույցների՝ ֆենոմենոլոգիական և լեզվական, համատեղ գործառման և առկայացման վրա: Առաջինն ապահովում է խոսույթի, դրա հիմքում ընկած կանխենթադրույթների համացանցի պատշաճ կառուցումը, իսկ երկրորդն ապահովում է դրանց պատշաճ լեզվական կաղապարումը, որը հաճախ առկայացվում է կրկնության միջոցով՝ ստեղծելով ամբողջական և կապակցված տեքստ: Լեզվական ճանաչողական կառույցի մասնավոր դեպք է բառային կրկնությունը: Ի դեպ, երկուսի առկայացումն էլ անմիջականորեն կախված է հաղորդակցության նպատակից և ամենակարևորը՝ խոսող անհատի ԿՀ-ի բովանդակային առանձնահատկություններից:

¹³ Տե՛ս **Мистрик И.** Точные методы в типологии текстов // Исследования по теории текста. Реферативный сборник. Москва, 1977, стр. 187-201.

СВЯЗНОСТЬ ТЕКСТА ПОСРЕДСТВОМ ПРЕСУППОЗИЦИОННОЙ БАЗЫ, НА ОСНОВЕ ПОВТОРА ЛЕКСИЧЕСКИХ ЕДИНИЦ

ГРАНУШ ТОВМАСЯН

В статье рассматривается связность текста посредством феноменологических и языковых когнитивных структур пресуппозиционной базы говорящей личности, реализованная с помощью повтора лексических единиц. Исходя из цели коммуникации, говорящая личность выбирает соответствующие феноменологические когнитивные структуры, чтобы создать когерентный дискурс. Затем она выбирает соответствующие языковые когнитивные структуры в виде повтора лексических единиц, чтобы создать связный текст. Лексический повтор в данном случае выполняет функцию отсылки к конкретной пресуппозиции в дискурсе и фокусирования на нее.

Ключевые слова – пресуппозиционная база, пресуппозиция, лексическая связность текста, говорящая личность, лексический повтор, дискурс, феноменологические и языковые когнитивные структуры.

TEXT COHESION VIA THE PRESUPPOSITION BASE BUILT UPON REPETITION OF LEXICAL UNITS

HRANUSH TOVMASYAN

This article considers text cohesion via the speaker's presupposition based on the phenomenological and linguistic cognitive structures constructed on repetition of word elements. Conditioned on an aim, a speaker chooses appropriate phenomenological cognitive structures to create a complete, undivided discourse. Then the speaker settles on appropriate linguistic cognitive structures as repetitions of lexical units to create a text cohesion and coherence. The repetition of lexical units aims at a definite discourse presupposition and serves to make it a focal point.

Key words - presupposition base, presupposition, lexical cohesion, speaking individual, repetition of lexical units, discourse, phenomenological and linguistic cognitive structures.

ՏԵՔՍՏԻ ԲԱՌԱՅԻՆ ՆԵՐԿԱՊՈՎԱԿՑՈՒՄԸ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՀԵՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ

ՀՐԱՆՈՒՇ ԹՈՎԱՄԱՍՅԱՆ

Հոդվածում քննվում է տեքստի բառային ներկայացման և ամբողջականության խնդիրը կանխենթադրության հենքի բաղադրիչ միավորների միջոցով: Ուսումնասիրության արդյունքները բացահայտում են, որ տեքստը կառուցելիս խոսող անհատը նախ ընտրում է իր գիտակցությունից այն համապատասխան ճանաչողական կառույցները՝ ֆրեյմները, կարծրատիպերը, որոնք հիմք են դառնալու խոսույթի ձևավորման համար: Ապա՝ ֆրեյմի և կարծրատիպի ակնկալվող, կանխենթադրության տեղեկատվության հիման վրա ընտրում է այն բառային միավորները, որոնք առավելապես արտացոլում են ֆրեյմի, կարծրատիպի կառուցվածքային բջիջներում տեղակայված կանխենթադրությունները՝ արտահայտելով դրանք տեքստի մակերեսային կառույցում կանխենթադրության հենքի լեզվական, ճանաչողական կառույցներով:

Բանալի բաներ – կանխենթադրության հենք, խոսող անհատ, տեքստի ներկայացում և ամբողջականություն, ճանաչողական կառույցներ, բառային ներկայացում, խոսույթ:

Նախքան քննությունը սկսելը կցանկանայինք ներկայացնել՝ ինչ է *խոսող անհատը*: Ի սկզբանե լեզվաբանական գրականության մեջ շրջանառվում էր *լեզվական անհատ* եզրույթը, որը ներմուծվել է գիտական բառապաշար Յու. Կարաուլովի¹ կողմից, հետագայում այն իր զարգացումն է գտել նաև Բ. Ջոնսթոնի² աշխատություններում: Հատկանշական է, որ խոսող անհատ և լեզվական անհատ հասկացությունների տարանջատումը հառնում է դեռ Ֆ. դը Սոյյուրի³ լեզու, լեզվական ունակություն և դրանց ամբողջություն կազմող լեզվական գործունեություն եռանդամությանը, որի առաջին և երրորդ բաղադրիչներին, ըստ մեզ, համապատասխանում են *լեզվական անհատ* և *խոսող անհատ* հասկացությունները: Հաջորդ հասկացությունը, որը հստակեցման կարիք ունի, *կանխենթադրության հենք*ն է: Մարդու ճանաչողական, մտահայեցողական այն գործընթացը, որը սկսվում է նրա ծնվելու պահից և տևում

¹ Караулов Ю. Н. Русский язык и языковая личность. Москва, 1987.

² Johnstone B., The Linguistic Individual: Self-Expression in Language and Linguistics, Oxford University Press, 1996.

³ Сосюр Ф. де. Курс общей лингвистики. Москва, 1933.

մինչև մահ, և դրա արդյունքը, որով նրա գիտակցության մեջ արտացոլվում և ձևավորվում է տարաբնույթ գիտելիքների և պատկերացումների մի սովորականացված, անվանել ենք *կանխենթադրության հենք* (այսուհետ՝ ԿՀ):

Ուսումնասիրությունը բացահայտում է, որ խոսող անհատի՝ աշխարհի գիտակցական պատկերն արտացոլված է ԿՀ-ի մեջ, որտեղ գիտելիքներն ու պատկերացումները ներկայացված են երկու տեսակի ճանաչողական կառույցներով՝ ֆենոմենոլոգիական և լեզվական:

Տեքստի ամբողջականությունը դրա թեմայի ներքին կառուցվածքի առանձնահատկությունն է: Այսինքն՝ ինչպես որ խոսող անհատը ներքին խոսքի մակարդակում կադապարում է թեման, այնպես էլ այն արտացոլվելու է տեքստի մեջ: Փաստորեն թեմայի առաջադրմամբ խոսող անհատն իր գիտակցության մեջ ԿՀ-ից ընտրում է փոխկապակցված իրադարձություններ, վերաբերելիներ և հենվում է որոշակի բառերի համալիրի վրա, որոնք, ըստ իրեն, առավելապես պատշաճ կարտացոլեն տեքստի բովանդակությունը: Վերլուծությունը բացահայտում է, որ այդ բառերն ու բառակապակցությունները ստեղծում են *բառային շղթաներ*⁴, որոնք տարածվում են ամբողջ տեքստով մեկ: Ամենահաճախադեպ շղթաները ցույց են տալիս, թե ինչի մասին է տվյալ տեքստը⁵: Այսինքն՝ խոսող անհատի գիտակցության մեջ թեմատիկ միավորները կուտակվում են զուգորդային հարաբերությունների հիման վրա՝ ստեղծելով ֆրեյմ և կարծրատիպ: Միայն տեքստի թեման է որոշում, թե ինչ տեսք պետք է ունենա դրա հասկացության ջանքը, այն է՝ ԿՀ-ի ո՛ր հասկացությանը պետք է ընտրվեն և ինչ հասկացության շղթաներ պետք է կազմեն, որպեսզի թեման հնարավորինս լիարժեք լուսաբանվի այդ տեքստի շրջանակներում:

Հայտնի է, որ ֆրեյմներն ունեն հատուկ ներքին կառուցվածք, որոնց բաղադրիչները, բջիջները ներկայացված են որոշակի թեմայի շուրջ կուտակված գիտելիքների՝ կանխենթադրության բարդ համակցությամբ: Այդ գիտելիքները կարող են շատ տարբեր բնույթի լինել՝ ընդհանրական, հանրագիտային գիտելիքներից մինչև հատուկ ազգամշակութային գիտելիքներ: Այսպիսով, խոսության գործունեությունը ենթադրում է երկու կողմ. իրականության ճանաչողական արտացոլում, գիտելիքների համակարգում ֆրեյմների ու կարծրա-

⁴ **Morris J., Hirst G.**, Lexical cohesion computed by thesaural relations as an indicator of the structure of a text // Computational Linguistics, 17 (1), New York, 1991. P. 21-48.

⁵ **Barzilay R., Elhadad M.**, Using Lexical Chains for Text Summarization II ACL/EACL Workshop Intelligent Scalable Text Summarization. Madrid, 1997.

տիպերի մեջ՝ որպես կանխենթադրույթներ և տվյալ հաղորդակցմանը համապատասխան դրանց միջից այդ կանխենթադրույթներն արտացոլող որոշակի արտահայտման միջոցների ընտրություն:

Այս տեսանկյունից Մ. Օտկուպչիկովան նշում է. «Իմաստի կրկնությունը տեքստի առաջացման և գոյության անհրաժեշտ պայման է»⁶: Մ. Հելիդեյը և Ռ. Հասանը կարծում են, որ հենց կրկնությունն է բառային ներկապակցման հիմքը⁷: Կրկնություն ասելով՝ նրանք նկատի ունեն բառային միավորի կրկնություն, տեքստի մեջ ավելի վաղ օգտագործված բառին հարող, ավելի ընդհանրական իմաստ կրող մեկ այլ բառի կիրառություն, որը հարաբերակցվում է դրա հետ, հոմանիշի կամ ավելի ընդհանուր հոմանիշային բառի կիրառություն: Ասվածը նշանակում է, որ խոսող անհատը ֆրեյմի կամ կարծրատիպի հիման վրա պետք է իր ԿՀ-ի լեզվական, ճանաչողական կառույցներից ընտրի և ստեղծի այնպիսի բառային միավորների շղթաներ, որոնք կրում են միևնույն իմաստը: Կրկնությունն ընկած է համադրվող միավորների իմաստային հարաբերակցման օրենքի հիմքում, որի համաձայն՝ որպեսզի. «...երկու բառ ճիշտ համադրություն կազմեն, դրանք պետք է, բացի հատուկ, դրանք իրարից տարբերող իմաստներից, ունենան նաև մեկ ընդհանուր իմաստ, որը և կրկնվում է, քանի որ հանդիպում է ասույթում առնվազն երկու անգամ, որի շնորհիվ էլ առկայացվում է տվյալ բառերի կապը»⁸: Այս տեսակետից դիտարկենք մի հատված Եղիշե Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմից.

*Իրիկուն էր, **հրակարմիր** մի իրիկուն:
Արևը, **բորբ**՝ մայր էր մտնում արևմուտքում:
Դաշտի վրա փռվել էր մուժ **արյունամած**՝
Թույն էր կարծես՝ **բորբ** արևի սրտից քամած:
Արևը, **թեժ**՝ մայր էր մտնում արևմուտքում—
Ու **արյուն** էր դաշտի վրա, թո՛ւյն էր թքում:
Հորիզոնում վառել էր մի **կարմիր** քուրա—
Ու **արնավառ** փայլ էր փռում դաշտի վրա:
Ու արտերը, ալեծածան, վառվել էին
Արեգակի **կարմիր** փայլով իրիկնային:—*

⁶ **Откупщикова М.И.** Синтаксис связного текста. Ленинград, 1982, стр. 40.

⁷ **Halliday M., Hasan R.**, Cohesion in English. Longman, London, 1976.

⁸ **Гак В.Г.** К проблеме семантической синтагматики // Проблемы структурной лингвистики. Москва, 1972, стр. 376.

*Դաշտը, անծայր ու անսահման, լայնափարած՝
Հրակարմիր փարածվել էր նրանց առաջ⁹:*

Պոեմի տեքստի տվյալ հատվածի ամբողջականությունը և ներկայացումը հեղինակն ապահովում է ներառման սեռատեսակային հարաբերության վրա հիմնված իմաստային դաշտով, որը ներառված է *կարմիր* ֆրեյմի մեջ: *Կարմիր* ֆրեյմի բառային շարքը ներկայացված է հետևյալ միավորներով՝ *հրակարմիր, բորբ, արյունամած, թեժ, արյուն, կարմիր, արնավառ, հրակարմիր*, որտեղ բառային միավորներից առաջինը՝ *հրակարմիրը*, սահմանում է, որ բառային ամբողջ շարքը ներկայացված է լինելու վառ/ ալ կարմիր, կարմիրի հրե տարբերակների շուրջը: Բառային շարքի մյուս անդամները տեսակային են և ցույց են տալիս վառ կարմիրի տարբեր երանգները: Ի դեպ, մի քանիսը կարմիրի իմաստը փոխաբերությամբ են արտահայտում՝ *արյունամած, արյուն, թեժ*:

Իմաստային համադրման օրենքի հիման վրա, շնորհիվ դրանց բովանդակության մեջ առկա ընդհանուր իմաստների, ձևավորվում է բառերի իմաստային արժույթը: Այն ամրագրում է բառի և բառաձևի տիպական համադրելիությունը և բոլոր այն հնարավոր համակցությունները, որոնցում այն կարող է հանդիպել շարակարգային շարքի սահմաններում: Այսինքն՝ ֆրեյմի, կարծրատիպի կառուցվածքի իմացությունը՝ կանխենթադրվող գիտելիքները տվյալ թեմայի շուրջ, միայն իմաստային-բովանդակային գիտելիքների իմացություն չէ, այն թույլ է տալիս տեսնել արժույթային՝ շարակարգային իմաստային կապերը այդ կառույցների ներսում: Կրկնվող իմաստ ասելով՝ այստեղ պետք է հասկանալ թեմայի՝ ֆրեյմի կարծրատիպի ընդհանուր իմաստի հնարավոր կրկնությունները, որոնք կարող են մակերեսային կառույցի տեսանկյունից շատ տարբեր բառեր լինել, բայց ներակա կրեն այդ իմաստը: Ասվածը լուսաբանելու համար դիտարկենք մի պարբերություն Բորիս Ակունինի *Азazelь* վեպից.

Сначала из дверцы высунулся **сафьяновый дорожный сапог, окованный серебряными гвоздиками**, а потом на тротуар ловко спрыгнул **цветущий юный джентльмен с пышными усами**, удивительно не шедшими к его

⁹ **Չարենց Ե.**, Ամբոխները խելագարված: Ներբեռնելի է <<http://blog.1in.am/blog/3586.html>>: [Վերջին ներբեռնումը՝ փետրվար 2017]:

свежей физиономии, в **тирольской шляпе** с перышком и **широком альпийском плаще**¹⁰.

Ակնհայտ է, որ այս պարբերության մեջ կա առնվազն երեք ֆրեյմ: Դրանք են՝ *հագուստ, հագուստի հարկանիշ* և *արտաքին տեսք*: Առաջին ֆրեյմը հիմնված է սեռատեսակային ներառման հարաբերության վրա, որտեղ հագուստը սեռ մատնանշող ընդհանուր իմաստն է՝ ֆրեյմի գագաթը, իսկ *սոսո, шляпа, плащ* բառային միավորները՝ դրա տեսակները: Սեռատեսակային այս ամբողջությունը միևնույն ժամանակ նաև ֆրեյմ է, որի իմաստը, կրկնվելով տարբեր բառերի մեջ, ներկայակցում է տեքստի տվյալ պարբերությունը: Վերջինս իրագործվում է շնորհիվ ֆրեյմի, կարծրատիպի բովանդակությունը կազմող կանխենթադրույթների, որոնք ներմուծվում են համատեքստ, ներկայակցում այն և ստեղծում ամբողջական և կապակցված տեքստ մակերեսային մակարդակում: Հաջորդ ֆրեյմը, որն առկա է այս պարբերության մեջ, *հագուստի հարկանիշն* է՝ որպես իմաստային միջուկ: Ակնհայտ է, որ այս ֆրեյմը նախորդի համեմատ, շատ ավելի ընդգրկուն է, քանի որ այստեղ հասցեագրողը կարող է ցանկացած հատկանիշ վերագրել հագուստին: Նա ստեղծում է հետևյալ բառիմաստային շղթան՝ *сафьяновый дорожный, окованный серебряными гвоздиками, тирольский, широкий альпийский*, որում կրկնվում է հագուստի հատկանիշի իմաստը: Այդ իմաստը, կրկնվելով պարբերության տարբեր հատվածներում, ներկայակցում է այն: Այս պարբերության երրորդ՝ *արտաքին տեսք* ֆրեյմի շուրջը ձևավորված իմաստային շղթան ներկայացված է *цветущий юный, пышными усами, свежий физиономии* բառային միավորներով: Այս ֆրեյմը նույնպես իր ընդգրկունությամբ և կանխատեսելի, զուգորդային կապերով՝ հնարավոր կանխենթադրույթներով և դրանց զուգորդումներով, շատ լայն է, այնուամենայնիվ, այն կրում է ֆրեյմի կրկնվող իմաստը և ներկայակցում տեքստը:

Այսպիսով, պատշաճ հաղորդակցություն ապահովելու և տեքստը հաղորդակցության նպատակին և իրավիճակին համապատասխան կառուցելու համար խոսող անհատը գործի է դնում իր ԿՀ-ը՝ մի կողմից դրա ֆենոմենոլոգիական, ճանաչողական բաղադրիչից ընտրելով համապատասխան կանխենթադրույթները, մյուս կողմից՝ դրանք կապակցելով՝ համաձայն լեզվական, ճանաչողական կառույցների, որի արդյունքում տեքստում արտապատկերվող գիտակցական միավորը՝ ֆրեյմը, կարծրատիպը անցնում է ամբողջ

¹⁰ Акунин Б. Азазель. Москва, 1998, стр. 107.

տեքստով մեկ դրա թե՛ իմաստային, թե՛ կառուցվածքային դաշտերով:

Բառի ընդհանուր շարակարգային հարաբերությունները դրսևորվում են դրա՝ տեքստի գծային շարքում համադրելիության կանոններով: Ակնհայտ է, որ բառային միավորների համադրելիությունը կանխորոշում է նաև բազմաստորոգական կառույցների միավորների համադրելիությունը և փոխհարաբերությունը՝ կատարելով դրանց հարաբերակցման գործառույթ: Իրար ամրացնելով և կապակցելով շարակարգային միավորները՝ բառային շղթան հանդես է գալիս որպես հատուկ տեքստային ամրակ, որը կարող է բնորոշվել որպես կրկնվող բառային միավորների *միակցիչ շարք*¹¹:

Բնական է, որ այն բառը, որը կանխատեսում է ընդհանուր իմաստի առկայացումը, այսինքն՝ որը որոշում է, որ պետք է լինի իմաստային հարաբերակից, գտնվում է բազմաստորոգական կառույցի նախադաս դիրքում և կարող է բնորոշվել որպես կապակցող բառային բաղադրիչ: Դրա հետ են հարաբերակցվում հաջորդող մասերի բառերը, որոնց հետ տվյալ նախադաս անդամը գտնվում է հոմանիշության, հականիշության, սեռատեսակային հարաբերությունների մեջ կամ մտնում է միևնույն բառիմաստային դաշտերի մեջ: Որպես կանոն, այս բոլոր իմաստային համարժեքները հանդես են գալիս միաժամանակ և ձևավորում են իմաստային հարաբերությունների բարդ ցանց, որը թույլ է տալիս կապ հաստատել ոչ միայն այդ երկու համադրվող միավորների միջև, այլև մի շարք այլ հասկացությունների հետ, որոնք ելակետային հասկացության հետ կապվում են տարբեր տեսակի հարաբերություններով: Հենց այստեղ էլ տեքստի ներքո շոշափելի է դառնում ֆրեյմի, կարծրատիպի կառուցվածքը: Տեքստում իրար հետ իմաստային կապերով կարող են հարաբերակցվել առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող հասկացություններ, սակայն դրանց ավելի խոր դիտարկումը ցույց է տալիս, որ դրանք միևնույն ֆրեյմի, կարծրատիպի որոշակի միավորներ կամ դրանց ամբողջություններ են:

Բառի համադրելիությունը «սաղմնավորվում է դրա անվանման ակտում՝ արտացոլելով նշվող առարկաների տրամաբանական-հասկացական կապերն ու հարաբերությունները»¹², որը թույլ է տալիս խոսել բառային ներկայացման միջոցների մասին՝ որպես լեզվական նշանների նշանակության

¹¹ Папина А.Ф. Текст: его единицы и глобальные категории: Учебник для студентов-журналистов и филологов. Москва, 2002.

¹² Телия В.Н. Семантический аспект сочетаемости слов и фразеологическая сочетаемость // Принципы и методы семантических исследований. Москва, 1976, стр. 245.

տեսակետից իրար փոխարինող միջոցների: Ըստ Մ. Հելիդեյի և Ռ. Հասանի՝ ներկապակցումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մի միավորի մեկնությունը կախված է մյուսի մեկնությունից, և որի դեպքում առկա է կանխենթադրույթ¹³: Վերոնշյալ հեղինակները հաստատում են, որ բառային միավորի կրկնակի օգտագործումը «...կարող է վերաբերության հետևյալ հարաբերություններն ունենալ՝ 1) նույնություն, 2) ներառում, 3) բացառում, 4) անհամադրելիություն»¹⁴: Ըստ այս հեղինակների՝ կա բառերի համադրելիության մի դեպք, որը հիմնված չէ վերաբերության վրա, այլ ուղղակի պայմանավորված է դրանց հաճախակի համատեղ գործածությամբ, օրինակ՝ հայր-մայր, քույր-եղբայր, արևելք-արևմուտք, սեղան-աթոռ և այլն:

Ներառման հարաբերությունները. «...տեքստում բավականին հաճախ են հանդիպում, և հնարավոր է, որ տեքստի իմաստային կառուցվածքի մեջ կատարում են ավելի մեծ դեր, քան նույնության հարաբերությունները»¹⁵: Ներառման հարաբերությունները բնորոշ են ընդհանրացման տարբեր աստիճաններ ունեցող բառային միավորներին, այսինքն՝ ծավալով ավելի լայն իմաստ ունեցող միավորը ներառում է ավելի նեղ իմաստ ունեցող միավորը: Լեզվական համակարգում ներառման հարաբերությունները բնորոշ են այն դեպքերին, երբ բառային միավորները հիերարխիա են կազմում և խմբավորվում հիմնիմաստի (արխիսեմա) ընդհանրացման տարբեր աստիճանների հիման վրա: Սեռատեսակային հարացույցը ներառման հարաբերության մի մասնավոր դեպք է: Սակայն Ջ. Լայոնզի կարծիքով դրանք. «...ամենահիմնական հարացուցային իմաստային հարաբերություններն են, որոնց միջոցով կառուցված է լեզվի բառապաշարը»¹⁶:

Նույնության հարաբերությունը ենթադրում է, որ տեքստի մեջ հանդիպում են միևնույն նշանակությունը, վերաբերելին ունեցող երկու և ավելի բառեր: Հայտնի է, որ նշանակյալի վերացարկման գերագույն աստիճանը դրա հասկացույթն է: Եթե միևնույն տեքստում կամ դրա հատվածում/ միկրոտեքստում հանդիպում են այդ նույն հասկացույթը մարմնավորող տարբեր բառեր, երկրորդային անվանական միջոցներ, ապա գործ ունենք նույնության հարա-

¹³ Халлидей М.А.К., Хасан Р. Когезия в английском языке // Исследования по теории текста. Реферативный сборник. Москва, 1979, стр. 108-115.

¹⁴ Նշվ. աշխ.:

¹⁵ Гак В.Г. Повторная номинация на уровне предложения // Синтаксис текста. Москва, 1979, стр. 96.

¹⁶ Лайонз Дж. Введение в теоретическую лингвистику. Москва, 1978, стр. 478.

բերության հետ: «Լեզվական իմաստի և հասկացույթի միակ տարբերությունն այն է, որ լեզվական իմաստը իմաստային դաշտի մի քվանտ է և կցված է լեզվական նշանին, իսկ հասկացույթը՝ որպես հասկացութաբանական տարր, լեզվական նշանի հետ կապ չունի»¹⁷:

Այսպիսով, եթե նույնության հարաբերությունները հաստատվում են իմաստով նման կամ նույն լեզվական միավորների միջև, ապա տեքստի լեզվական ներկայացումն առկայանում է միևնույն հասկացույթի հիման վրա հոմանիշների կամ բառային կրկնության միջոցով: Ըստ Ջ. Լայոնզի՝ հոմանիշությունը. «...համարժեքության հարաբերություն է այդ բառի մաթեմատիկական իմաստով. ցանկացած բառային միավոր կարող է ներկայացվել ինքն իր փոխարեն և որոշակի համատեքստում հոմանիշ է ինքն իրեն»¹⁸: Ստորև բերված օրինակում տվյալ միկրոտեքստը ներկայացված է համատեքստային գաղափարագրական հոմանիշների շարքով, որոնք ստեղծում են ուժգնացող աստիճանավորություն: Այսպիսի հոմանիշային շարքը տեքստը ներկայացնում է խոսույթի կիզակետի պահպանմամբ:

– Ինչ ունեն, որ ինչ դարգեն, դու ձեր տան բանը գիտես ո՞չ: Էս տարի էլ **հացը բարակ էր**, խեղճ հերդ զոռով **ծերը ծերին ա հասցնում**: Նրանից ի՞նչ ես ուզում: Թե ունիս, դու դարգի. հրեն խարջ են ուզում – **ծեռին գոռջ չունի**¹⁹:

Այնհայտ է, որ համատեքստային գաղափարագրական հոմանիշությունն անցնում է ամբողջ պարբերությունով մեկ՝ կապակցելով այն և պահպանելով խոսույթի թեման, որը և ապահովում է դրա ամբողջականությունը: Այսինքն՝ համատեքստային հոմանիշների *հացը բարակ էր, ծերը ծերին ա հասցնում, ծեռին գոռջ չունի* շարքը կրում է միևնույն իմաստը՝ ապրուստի միջոց չունենալ:

Հոմանիշային այս շարքն իրականում միևնույն *աղբարություն* ֆրեյմի թեմատիկ բովանդակային միավորներն են՝ առկայացած գաղափարագրական հոմանիշության միջոցով: Այս միկրոտեքստը խոսող անհատի ԿԿ-ի միջոցով տեքստի կապակցման վառ օրինակ է, երբ հասցեագրողը հաղորդակցական որոշակի նպատակ իրականացնելու համար գործի է դնում իր ԿԿ-ի ֆենոմենոլոգիական բաղադրիչը, դրանով իսկ ստեղծում կապակցված, ամբողջա-

¹⁷ **Попова З.Д., Стернин И.А.** Очерки по когнитивной лингвистике. Изд. 2-е, стереотипное. Воронеж, 2002, стр. 90-91.

¹⁸ **Лайонз Дж.** Введение в теоретическую лингвистику. Москва, 1978, стр. 480.

¹⁹ **Թումանյան Հ.,** Գիքորը: Ներբեռնելի է <<http://armenianhouse.org/tumanyan/fiction-am/gigor.html>>: [Վերջին ներբեռնումը՝ փետրվար 2017]:

կան խոսույթ, ապա այդ խոսույթը վերածում ներկապակցված տեքստի իր ԿՀ-ի լեզվական, ճանաչողական կառույցների միջոցով:

Տեքստի կառուցումը նախ և առաջ կապված է բառերն ընտրելու և դրանք քերականական կառույցների մեջ այնպես միավորելու հետ, որ դրանք արտահայտեն անբաժանելի հասկացութային էություններ՝ պրոպոզիցիաներ: Բառային միավորների ընտրությունը պայմանավորված է հասցեագրողի նպատակներով և մտահղացմամբ և համաձայնեցվում է հաղորդակցական կամ դենտատսով իրավիճակի հետ: Խոսող անհատի տրամադրության տակ են տարբեր բառաքերականական դասերի բառային միավորները՝ խոսքի մասերը, որոնք ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերակիչ հատկանիշներ և օժտված են որոշակի համակարգային՝ հարացուցային և շարակարգային հարաբերություններով:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ կարող ենք եզրակացնել. ամբողջական և ներկապակցված տեքստը խոսող անհատի խոսքամտածական գործունեության բարդ արգասիք է, որն արտացոլում է նրա ԿՀ-ի ամբողջ ներունակությունը՝ առանձին գիտելիքներից և պատկերացումներից, դրանց ֆրեյմային, կարծրատիպային համադրություններից մինչև այն լեզվական միջոցների ընտրությունը, որոնք պետք է գիտակցական այդ կաղապարը վերածեն նյութական տեքստի:

ЛЕКСИЧЕСКАЯ СВЯЗНОСТЬ И КОГЕРЕНТНОСТЬ ТЕКСТА ПОСРЕДСТВОМ ПРЕСУППОЗИЦИОННОЙ БАЗЫ

ГРАНУШ ТОВМАСЯН

В статье рассматривается лексическая связность и когерентность текста посредством составных частей пресуппозиционной базы. По итогам исследования: на начальной стадии формирования текста говорящая личность выбирает когнитивные конструкции из своего сознания – фреймы, стереотипы – которые в дальнейшем войдут в основу дискурса, а именно, внутренней речи. Далее, говорящая личность на основе предсказуемого, пресуппозиционного содержания фрейма и стереотипа выбирает лексические единицы, которые максимально отражают пресуппозиции, находящиеся в слотах фрейма, стереотипа, выражая их на поверхностной структуре текста языковыми, когнитивными структурами пресуппозиционной базы.

Ключевые слова – пресуппозиционная база, говорящая личность, связность и когерентность текста, когнитивные структуры, лексическая связность, дискурс.

LEXICAL COHESION AND COHERENCE OF A TEXT VIA A PRESUPPOSITION BASE

HRANUSH TOVMASYAN

This article considers lexical cohesion and coherence of a text via the constituting parts of a presupposition base. The study results reveal that the individual initially selects the pertinent cognitive structures–frames and stereotypes from his/ her consciousness, which will then make the basis of the discourse. Further, the individual relying on the predictable, presuppositional information of the frame and stereotype, selects those lexical items that maximally reflect the presuppositions in the structural cells of the frame and stereotype, expressing them on the surface structure of the text with linguistic, cognitive structures of the presupposition base.

Key words – presupposition base, speaking individual, text cohesion and coherence, cognitive structures, lexical cohesion, discourse.

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՄԲ

ԹԱՄԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աշխատանքը նվիրված է գրահամակարգերին, որոնք իրենց ազդեցությունն ու նշանակությունն են ունեցել հայոց լեզվի ձևավորման ու զարգացման պատմության մեջ: Նկատի է առնված հայերեն լեզվամտածողության մերօրյա բևեռվածության (արհեստականորեն, ոչ գիտական – լեզվաբանական, այլ գաղափարաբանված, քաղաքականացված թե՛ ուղղագրության և թե՛ այդ ուղղագրության խեղման արդյունքում արևմտահայերենի և արևելահայերենի հակադրումը) առկա վիճակը: Հոդվածն ընդամենը թեմայի մուտքի անդրանիկ քայլն է:

Բանալի բառեր – գրահամակարգեր, հայթյան նշանագրեր, գաղափարանշաններ, ձայնանշաններ, ձայնանիշներ, խալոյան բևեռագրեր, այծագրեր, ձայնական գրչություն /գիր/:

Ստուգաբանության (հունարեն՝ եղեմոլիա) նպատակն է բացահայտել բառերի ծագումը: Նույն այս բառը, ըստ «Բառգիրք հայկազյան լեզվի»¹ բառարանի, սահմանվում է իբրև ստույգ խոսք կամ ճշմարտաբանություն, իսկ երբեմն՝ ճշգրտում կամ ստուգության ապացուցում /գրք. ստուգացուցում/ կամ էլ՝ մեկնաբանություն: Բայց մասնավորապես նշանակում է բառի նշանակության ծանուցում՝ ելնելով արտասանությունից՝ արտաբերելուց, բարբառելուց՝ վերջինս հասկանալով ամենալայն առումով: Բարբառ ասելով, ելնելով ընտրված նյութի բովանդակությունից, անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալու նույն այս բառի ստուգաբանությանը: Բարբառի գիտական շրջանակներում ամենատարածված նախնական իմաստը, ինչպես հայտնի է, առնչվում է գավառներում խոսվող լեզվին, որը <. Աճառյանն անվանում է գավառաբանություն: Սակայն որևէ լեզվի, այդ թվում՝ հայերենի, գավառաբանության ուսումնասիրության խնդիրը լեզվաքերականական ուսումնասիրության միանգամայն առանձին ճյուղ է, որին ստիպված ենք լինելու առնչվել ստուգաբանության փոխակերպումները, փոխառությունները, մի խոսքով՝ փոխազդեցությունները ուսումնասիրելիս:

¹ Տե՛ս Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1749 թ.:

Այժմ անդրադառնանք բարբառի ավելի գիտական սահմանմանը (ստուգաբանությանը) ծագումնաբանական և ապա իմացաբանական առումներով:

Բարբառ ասելով առհասարակ հասկանում ենք մարդկային խոսքը՝ իր ամբողջ բազմազանության մեջ՝ դրանով նկատի ունենալով թե՛ հնչյունը, թե՛ գոյունը, թե՛ վանկը, թե՛ բառը, թե՛ նախադասությունը՝ միտք արտահայտող բառակապակցությունների շարակարգությունը, թե՛ մարդկային ցեղախմբերի խոսվածքը՝ լեզուն: Սակայն որևէ լեզվի սկզբնատարրը նախ և առաջ տառն է, որն էլ իր հերթին բաժանվում է բանավորի և գրավորի: Վերջինիս դեպքում արդեն գործ ունենք լեզվի գրահամակարգի (այբուբեն) հետ: Դրան է առնչվում նաև մեր ուսումնասիրության առարկան: Քանի որ մեր հայոց գրահամակարգը /այսուհետ իմա՝ այբուբեն/ ձայնանշական, ձայնագրային է, անհրաժեշտ է հետազոտել դրա ծագման, ստեղծման և վերջնական ձևավորման խնդիրները, նաև պատմականորեն գրաբարից աշխարհաբարի անցման, արդի հայերենի արևելահայերեն և արևմտահայերեն թե՛ բանավոր, թե՛ գրավոր գրական լեզուների կրած փոփոխությունների վերլուծությունը²: Որևէ գրի ծագման հիմքում ընկած են գաղափարանշանները, ձայնանշանները և ձայնանիշները: Գաղափարանշանները՝ որպես հնագույն համարվող հայկական նշանագրեր, ըստ Ենսենի (գերմանացի գիտնական), հատուկ կամ հասարակ անունների կամ ամբողջական իմաստների արտահայտություններ են: Դարձյալ, ըստ Ենսենի, ձայնանշանները ներկայացնում են մի տառ կամ մի վանկ՝ բաղկացած մի ձայնավորից և մի բաղաձայնից կամ երկու բաղաձայններից՝ միացած միջանկյալ ձայնավորով: Ձայնանիշները ընթերցանությունը (գրք.՝ վերլուծություն, որն այսօր սխալ է կիրառվում) դյուրացնող նշաններ են, որոնք իմաստային առումով որևէ նշանակություն չունեն, այլ ցույց են տալիս, թե որտեղ է սկսվում կամ վերջանում բառը, բառը դրված է ուղղական հորվո՞ւմ, թե՛ հաջորդ նշանը ծառայում է իբրև գաղափարանշան և այլն: Ի միջի այլոց գաղափարանշանների թվաքանակը, ըստ Ենսենի հաստատման, 57-ն են, ձայնանշանները՝ 28, ձայնանիշները՝ 7³: Հայկական մտքի առաջին արգասիքը հանդիսացող նշանագրերը Ենսենի մեկնաբանությամբ հայթյան արձանագրություններից էլ հին են

² Աճառյան Հ., Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 396:

³ Աճառյան Հ., Հայոց գրերը, 1984թ., 394, թվով 57 գաղափարանշանների կարգից, համար 4, հմմտ. նույն գրքի վերջում Ա. Յուցակ հայկական հին նշանագրերի աղյուսակի, համար 174:

(ն. ք. 1000 թ.): Այդ ժամանակ օգտագործված արձանագրությունների նշանագրերն այնպիսի կատարյալ ձև ունեին, որ ակնհայտ երևում է, թե ավելի հին պատկերագրի շարունակությունն են: Սրանից կարելի է եզրակացնել, որ հաթյան նշանագրությունն առաջացել է ն. ք. 1100- 1200 թվականներին, քանի որ ասորեստանյան ազդեցությունը դեռ այնքան մեծ չէր և չէր տարածվել հաթյանների վրա, ուստի չենք կարող ենթադրել, թե հաթյան նշանագրությունը վերցվել կամ ձևավորվել է ասորականից: Քանի որ այդ նույն ժամանակներում ծաղկում էր եգիպտական քաղաքակրթությունը, որ հաթերը՝ որպես իրենց գրության նախատիպար, անշուշտ, կընտրեին եգիպտականը, որի մասին էլ շոշափելի հնէագիտական ապացույցներ կան: Այսպես՝ Սենջիրլիում (2հեռհիրլիում) կա մի փորագրություն, որի վրա քանդակված է մի գրող՝ եգիպտական գրիչը ձեռքին: Հաթյան նշանագրերի մի մեծ խումբ նմանություն ունի եգիպտականի հետ: Մասնավորապես հիշենք սրակտուց խոյրը, որը թագավորի է, և որը նման է եգիպտական թագի: Պահպանված հիթիթական (1935թ. Տվյալներով խեթական, խեթագիտություն) արձանագրությունները, որոնց որոշ մասը մեհենագիր էր, Ենսենն ուսումնասիրեց և հաստատեց, որ դրանք հայերեն են: Սակայն Հրոզնին հետազոտեց և, ի հակադրություն Ենսենի ապացույցեց, որ այդ արձանագրությունները բնավ էլ հայերեն չեն, թեև դրանց լեզուն հնդեվրոպական է:

Հայոց գրերի զարգացման պատմության մեջ իրենց ուրույն տեղն են գրավել խալդյան բևեռագրերը, ինչպես նաև այժագրերը, պատկերագրերն ու գաղափարագրերը: Խալդյան բևեռագրերը ստեղծվել են ասորեստանյան բևեռագրության նմանությամբ: Թեև խալդերն օգտվեցին ասորեստանյան բևեռագրությունից, բայց այն դարձրին ավելի կատարյալ և դյուրին գործածության համար: Ասորեստանյան բևեռագրության այբուբենը պարունակում էր 329 նշան, որոնք երկու տեսակի են՝ գաղափարանշաններ և վանկանշաններ: Խալդերի կողմից կատարելագործման արդյունքում երեք հարյուրից ավելի նշաններից մնաց միայն 120-ը՝ գրեթե բոլոր կարճ ձևերով՝ պարունակելով միայն մեկ ձայնավոր, կա՛մ մեկ ձայնավոր ու մեկ բաղաձայն, կա՛մ բաղաձայնով սկսվող ու բաղաձայնով վերջացող միջանկյալ ձայնավորով մի վանկ: Գաղափարանշանները մի ամբողջ բառ են արտահայտում: Վանկանշաններն այն նշաններն են, որոնք արտահայտում են միայն մեկ վանկ: Վանկանշանները միշտ միևնույն ձայնային արժեքը չունեն: Կան նշաններ, որոնք ըստ

պարագայի կարդացվել են մինչև տասնմեկը հասնող վանկերով: Գաղափարանշանները և վանկանշանները կազմվում են ուղղահայաց, հորիզոնական և շեղ դրված, կարճ կամ երկար, սեպերով կամ սեպի գլուխներով և մի տեսակ անկյուն ներկայացնող նշանով: Վանկերի մեծ քանակը երբեմն պատճառ էր թվով 17 զծերի հասնող նշանների ներկայացման: Գաղափարանշանները նմանապես միշտ միևնույն նշանակությամբ չեն գործածվել: Գաղափարանշաններն ու վանկանշանները երբեմն և ավելի հաճախ հանդես են եկել միաժամանակ երկու պաշտոններով, այսինքն՝ թե՛ իբրև վանկանշան, թե՛ իբրև գաղափարանշան: Այս դեպքում գաղափարանշանները, փոխանակ ամբողջական բառ ներկայացնելու, հանդես են գալիս որպես մի վանկ, հակադարձաբար վանկանշաններն են գործածվում ամբողջական բառի փոխարեն: Իբրև նշանագրեր կազմող տարրերից՝ սեպ, սեպագլուխ, վանկանշանների տարընթերցումները գաղափարանշանների և վանկանշանների՝ իրար հետ շփոթելու և ասորական բևեռագիր այբուբենի 329 նշանների առատությունը խալդերի համար առիթ դարձավ փոփոխել, ստեղծել համեմատաբար դյուրին վանկագրական այբուբեն: Նախ՝ ջնջվեց գաղափարանշանների մի սովոր մասը, երկրորդ՝ ջնջվեցին մե՛րթ իբրև գաղափարանշան, մե՛րթ իբրև վանկանշան ծառայող նշանները՝ վերագրելով դրանց մի պաշտոն, երրորդ՝ կրճատվեց վանկանշաններին զանազան արժեքներ տալը՝ պահելով նրանց նախնական և իսկական համարվող ընթերցումը, չորրորդ՝ բաղաձայնով սկսվող և բաղաձայնով վերջացող վանկերը, որոնք շատ մեծ թիվ են կազմում ասորեստանյան բևեռագրության մեջ, ջնջեցին՝ թողնելով միայն նրանցից մի քանիսը: Այսպիսով, երեք հարյուրից ավելի նշանների մեծ մասը ջնջվեցին, պահվեց հարյուր քսանը՝ գրեթե բոլորը կարճ ձևով՝ միայն մեկ ձայնավոր կամ մեկ ձայնավոր, մեկ բաղաձայն: Խալդյան բևեռագրությունը բաղկացած է գաղափարանշաններից, վանկանշաններից և թվանշաններից: Թե՛ ասորական, թե՛ խալդյան բևեռագրերի ընթերցանությունը կարդացվում է ասորեստանցիների այբուբենով, որի համար իբրև միջոց են ծառայում բազմաթիվ գաղափարանշանները և այն որոշակիացնող նշանները, որոնք ցույց են տալիս հաջորդ բառի արժեքը: Գրեթե բոլոր գաղափարագրեր ունեցած ազգերը գաղափարագրերի հետ նաև բացատրող նշաններ են ունեցել և գործածել: Ինչպես եգիպտացիները տարբեր նշանակություն ունեցող բառերից՝ գոյականներից ու բայերից հետո տարբեր նշաններ էին դնում, այնպես էլ ասորեստանցիները զանազան բառերից առաջ

դնում էին զանազան գաղափարանշաններ (մարդու կամ աստծու, երկրի, քաղաքի, որևէ առարկայի անուն և այլն), իսկ այն բառերը, որոնցից առաջ չկային գաղափարանշաններ, բացատրվում էին մյուս բառերի օգնությամբ: Կարևոր է նշել մի հանգամանք. և՛ խալդյան, և՛ ասորեստանյան բևեռագիր արձանագրությունների նախադասությունները (արդի ռճագիտությանը հետաքրքրող խնդիր է այս փաստը) ունեին բովանդակային միևնույն կառուցվածքը. նախ՝ թագավորը հիշատակում է իր անուն - ազգանունը, ապա՝ նշում պատվանունները, պատմում իր գործերը և հաճախ էլ վերջում հավելում անեծքներ արձանագրությունները ոչնչացնել կամեցող անձանց: Խալդերենում անունները (գոյական, ածական) ավարտվել են ձայնավորով, մեծ մասամբ էլ i, երբեմն էլ՝ a, e, u: Թվականները հայտնի չեն, քանի որ, ըստ Հ. Աճառյանի հավաստման, արձանագրությունները միշտ գրվել են թվանշաններով: Դերանուններից հայտնի են առաջին և երկրորդ դեմքերից մի քանիսը, բայի սեռերից՝ ներգործականը և չեզոքը, առաջինը վերջանում է u-ով, իսկ վերջինը՝ a-ով: Խալդերենում բառաբարդում չկա, ասվում է պարզապես՝ Մենուայի ջրանցքը - Menuai pili: Խալդերենում նախադասության կազմը սովորաբար կրավորաձև է՝» Մենուասից սրանք կառուցվեցին փոխանակ ասելու՝ «Մենուասը կառուցեց սրանք»:

Ի՞նչ աղերսներ կան խալդերենի և հայերենի միջև, ի՞նչ գիտական կարծիքներ կան այս հարցի վերաբերյալ: Այսպես՝ Հ. Սանտալճյանը խալդերեն բառերը համեմատում է հայերեն բառերի հետ: Խալդերենը դարձնում է կամուրջ հնդեվրոպական նախալեզվի և գրաբարի միջև: Սակայն այստեղ հարց է առաջանում՝ արդյո՞ք խալդերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, վերջինիս պատկանելը որքանո՞վ է հիմնավորված գիտության կողմից: Այսպես, 1936 թ. Գ. Մկրտչյանը «Արարատ» ամսագրում հրատարակած իր հոդվածում գտնում է, որ խալդերենը նույն ուտիերենն է՝ իր բառամթերքով ու քերականական կազմությամբ⁴: Հ. Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ հերքում է այս տեսակետը. «*Խալդերենը ցեղակից է կովկասյան լեզուներին, հարկապես վրացերենին կամ ուրիերենին: Խալդերենի ծագման և ցեղակցության վերաբերյալ բոլոր հարցերը մնում են անպատասխան*»: Սակայն վերջինս նույն այդ աշխատության մեջ գրում է, որ հայերենի ձայնային դրությունը ձևավորվել է խալդերենի բաղաձայնների հնգյակ խմբերի (յուրաքանչյուրը բաղկացած երեք բաղաձայնից՝ բ-պ-փ, գ-կ- թ և այլն)

⁴ Մկրտչյան Գ., «Արարատ» ամսագիր, 1936:

շնորհիվ: Մեծ լեզվաբանն իր իսկ «Արմատական բառարանում» ընդգրկել է խալդերեն միայն 15 բառ, և ինչպես հեղինակն է նշում. «*Ընտրեցինք 15 բառ, հիմնվելով հարկապես այն հանգամանքի վրա, որ նրանք կապվում էին հյուսիսային և հարավային կովկասյան լեզուների հետ կամ բնիկ հայ երկրի բուսական անուններն են*»: Այդ բառերն են. *ընկոյզ, ծեփել, ծիրան, ծիրիլ, կաղամախ, կարաս, կարասիք, կրթել, կռել, կրաս, հաճար, ճակ «էգ», նժար, փող, փառ «զգեսփ»*:

Հ. Աճառյանն իր այդ աշխատության մեջ գրում է⁵. «խալդերենը հայերենի հետ կապ չունի», սակայն դրան զուգահեռ շեշտում է. «...ձայնական դրության ձևավորմանը առանձնապես պարտական ենք խալդերենին...»: Թեև բառարանում ամրագրված է 15 բառ, սակայն այն խոսում է հայերենի և խալդերենի որոշակի փոխկապակցվածության մասին:

Գրերի զարգացման պատմության մեջ իրենց հետքն են թողել այժմագրերը: Այժմագրերը գրաբանական գիտության մեջ բնութագրվում են իբրև հաղորդակցման նախնական ձևեր՝ պատկերների միջոցով: Դրանք գրատեսակ չեն, չեն արտահայտում վերացական գաղափար: Դրանք ամենայն հավանականությամբ մարդկային կենցաղի, մասնավորապես որսորդության, անասնապահության, բնություն-մարդ-միջավայր-գործ փոխհարաբերությունների առաջին պարզունակ գրառումներն են գծապատկերների ձևով: Ինչպես Գ.Ա. Խաչերյանն է գրում իր «Հայ դպրութեան պատմութիւնը քննական տեսութեամբ» աշխատության մեջ. «...էծապատկերները բացառվում են որևէ «գրի» կամ լեզվական պատկանելիութեան յուշման հետ որևէ աղերսակցութիւն»:

Ք. Բելելեյանն այս հարցի շուրջ գրում է. «Աքքադերէն քարայծը (վայրի այծ) կոչուել է արմատու [armadu]: Գուցէ ավելի հին ձևը արմատու [armadu] նշանակել է հայկական: Հայկական լեռնաշխարհում միշտ եղել են ու այժմ էլ կան քարայծներ: Գիտության մեջ մինչև հիմա էլ քարայծի մի տեսակը կոչվում է հայկական վայրի խոյ՝ օվիս օֆիոն արմենիանա [ovis ofion armen iana]: Հին Հայաստանում եղել է այծի պաշտամունք: Մեր կարծիքով այդ է պատճառը, որ Գեղամա և Սյունյաց լեռներում ու հին Հայաստանի այլ վայրերում շատ կան այժմապատկերներ⁶:

⁵ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, էջ 186:

⁶ W. Sodenakkadisches Handworeterbuch 1965 - 67, Baand 1 { Kajak Balekjian.} An American Research - study compilation of F aith, Lihguistics and Armenic Studis}.

Գրահամակարգերի զարգացման բարձրագույն աստիճանը *ձայնագիր նշանագրության համակարգն է*: Ի՞նչ աղերսներ ունի նախորդ գրահամակարգերի հետ: Այս է, ըստ իս, *սարուգաբանության՝ իբրև լեզվի պատմափիլիսոփայական վերլուծության, հայեցակարգի, «մեթոդիկայի»* (տեսության) հիմնախնդիրներից մեկը:

Ի՞նչ է գիրը, ի՞նչ նշանակություն ունի եռատառ այս բառը մեր լեզվի մեջ:

1. Գիր ասելով հասկանում ենք նախ՝ սովորական տառը, այսինքն՝ արտաբերված ձայնի գծապատկերը:

2. Սուրբ Գիրք կամ Աստվածաշունչ, օրինակ՝ «որպես աս է գիր» (ինչպես ասում է Աստվածաշունչը):

3. Գրականություն՝ գրված որևէ լեզվի գրով, օրինակ՝ «Պարսկականաւ վարէին գրով» (պարսկերեն էին գործածում):

Ինչպե՞ս է գիրը՝ տառը, մինչև իր արդիական ձևին հասնելը, անցել նկարագրական, պատկերագրական, նվիրագրական, գաղափարագրական կոչված ձևերով: Թե ինչպես նշանը աստիճանաբար անջատվեց գաղափարից (իմա՝ գաղափարագիր) և կապվեց միայն ձևին, և այսպիսով գաղափարագրական կոչված գրածը ամբողջովին փոխվեց ձայնական գրչության: Գրի շնորհիվ էր, որ խոսքը կամ նրանում ամփոփված խորհուրդն ամրագրվելով «ի վիճակի է լինում» ժամանակի մեջ ճամփորդելու՝ պահվելով և ընթերցվելով հավերժանալու, բազմապատկվելու, խոսելու ապագա սերունդների հետ: Այսպիսով, գիրը մարդկության հիշողությունն է, որի շնորհիվ կարող ենք օգտվել անցած սերունդների փորձառությունից, և ինչպես ասել է Պասկասը. « *Նրա միջոցով է, որ մարդը կարծես միևնույն մարդն է, որը մնում է և միշտ հարավում է և անընդհատ սովորում է*»: Այն ազգերը, որոնք զուրկ են հիշողության այս գործիքից՝ գրից, որպես կանոն մնում են ավելի կամ պակաս չափով բիրտ ու անմշակ: Փյունիկյան հնչյունագիր համակարգը (այբուբեն) գրահամակարգերի ստեղծման սկզբնավորողն (նախածնող) է համարվում, որից առաջացել են սեմական՝ արամական, եվրոպական և համարյա ասիական բոլոր լեզուները, հրեական և այլ գրահամակարգերը, ինչպես նաև հունական, լատինական, հնդկական և այլ, այդ թվում՝ նաև մերը: Փյունիկերենն էլ իր հերթին սերվել է եգիպտական նվիրագրերից: Գիր ունենալու իրողությունը վկայում է, որ տվյալ ժողովուրդը հասել է քաղաքակրթության իմացականության հասունության գագաթնակետին: Սեփական ազգային գիր ունենալը վկայում է

տվյալ ժողովրդի ցեղային լիակատար ինքնագիտակցություն ունենալու մասին: Գրային լեզվի համաշխարհային պատմությունն անվերապահորեն և աներկբա հաստատումներով հավաստում է, որ հնչյունական լեզուն առաջնային է, ի վերուստ տրված մարդուն անհիշելի ժամանակներից, մինչդեռ գրային լեզուն հազարամյակների պատմությունից հետո է միայն առաջացել իբրև ստեղծագործություն, հնչյունական լեզվի հիման վրա և նրան ծառայելու նպատակով: Գրի առաջացումը մեծապես պայմանավորված է լեզվի ըմբռնողությամբ և արտասանվածքի տարբադադրումով, նախադասության տարրալուծմամբ, այն է՝ բառ – անդամների ընկալումով, վերջինս էլ վանկերի հանգումով, վանկերից էլ ամենավերջին և այլևս անտրոհելի նյութական միավորի՝ հնչյունի ըմբռնումով: Գրային լեզուն արտացոլում է հնչյունայինը, արտահայտում է նրա համակարգը, դրա իսկ ամրակայումով մշտնջենականություն է տալիս նրան, անկախ այն բանից, թե խոսված լեզուն կպահպանվի իբրև կենդանի լեզու, թե՞ ոչ:

Մաշտոցյան հանճարի շնորհիվ մենք ունեցանք սեփական գիր: Ղ. Ղազարյանն իր «Հայոց լեզուի պատմութիւն» աշխատության մեջ գրում է. « Հին հայերենի նախագրային շրջանի վիճակի մասին մենք ուղղակի տուեալներ չունենք, սակայն հինգերորդ դարի հայերէնը եւ մեր պատմագիրների հաղորդած փաստերը լրիւ չափով հիմք են տալիս ենթադրելու, որ նախագրային հայերէնը, իբրև հայ ժողովրդի ընդհանուր լեզու իր հիմնական առանձնահատկութիւններով կայունացած է եղել հինգերորդ դարից դեռ շատ ու շատ առաջ»: Ղ. Ղազարյանը նախամաշտոցյան հայերենի գոյությունը փաստարկում է հինգերորդ դարի հայ պատմիչների աշխատություններում տեղ գտած վիպական գրույցների ու առասպելների բառաքերականական, ոճական համակարգը վերլուծելով. «Մ. Խորենացին իր պատմութեան մեջ բառացի մեջ է բերում վիպասանական շրջանի գրականութեան մի քանի պատառիկներ, որուն լեզուն նկատի ունենալով մենք կարող ենք որոշ գաղափար կազմել հայոց հին լեզուի աւելի վաղ շրջանի պատկերի մասին»⁷: Հին հայերենի մշակվածության, զարգացման երկար շրջան անցած լինելու մասին են վկայում, ըստ Ղ. Ղազարյանի, «բազմաթիւ ոճերն ու դարձվածքները, որոնց մի մասը իրենց ձևով ու իմաստով գործածում են նաև արդի հայերէնում եւ բարբառներում»: Այսպես՝ «արեւէ արկանել» - սպանել, «արեւ կրել» - ապրել, «ծնունդ ինքնակայ», «բարձրակից արեգական» և այլն: Այս օրինակների իմաստը, ըստ հեղինակի, կապ-

⁷ Ղազարյան Ղ., Հայոց լեզուի պատմութիւն, Անթիլիաս - Լիբանան, 2007թ., էջ 41, 42:

ված է շատ հին ըմբռնումների հետ, այդ նշանակում է, որ նրանք նույնպես գալիս են շատ հնուց:

Բանահյուսական այս կամ այն երգը կարո՞ղ ենք համարել գրականություն: Նախագրային բանահյուսությունը՝ վիպերգերը, զրույցները, գուսանական երգերը, խրախճանքների և սգատոների ժամանակ գործածվող հովվերգությունները և ողբերգությունները (եղերերգերը) մի՞թե չեն վկայում այն մասին, որ ունեցել ենք մեհյաններում մշակված գրականություն, քանի որ հեթանոսական երգերն ու վեպերը մեհենական ծեսերից անբաժանելի կրոնական խորհուրդներ են իրենց մեջ բովանդակել, որոնք էլ, լինելով ազնվական դասի «բարձրագույն ներկայացուցիչները», չէին կարող տաղաչափության, երգեցողության հիմքում ընկած առոգանության, վանկատման և այլն, այսօրվա՝ հնչյունաբանության (հուն.՝ ֆոնետիկա) հղկված չունենալին:

Այսպիսով, յուրաքանչյուր գրահամակարգ իր ստեղծման ու ձևավորման պատմությունն ունի, որն իր բազմաճյուղ թելերով անքակտելիորեն կապված է մեր լեզվի պատմության հետ, իր անջնջելի հետքն է թողել մեր լեզվի մշակութային վրա: Համեմատությունը, որպես բանասիրության ուսումնասիրության լավագույն «գործիք», հնարավորություն է ընձեռում մեզ պեղելու մեր հնագույն լեզուն գրահամակարգերի ստուգաբանության տեսանկյունից:

СОВРЕМЕННЫЙ ПОДХОД К ЭТИМОЛОГИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ТАМАРА АРУТЮНЯН

Настоящая статья посвящена изучению этапов письменности в домаштоцкий период, сыгравших значительную роль в формировании и развитии армянского языка. Она является первым шагом автора в исследовании рассматриваемой темы.

Ключевые слова - система писем /письмена/, хеттское письмо, идеография, артикуляция, дикция, урартская клинопись.

MODERN APPROACH TO ETYMOLOGY

TAMARA HARUTUNYAN

This article considers the writing systems that have had influence, significance in the history of the formation of the Armenian language and its development. The Armenian language awareness is today polarized artificially but not in any way scientifically or linguistically. The contrasting of western and eastern Armenian languages, their spelling systems is the result of the conceptualization, politicization of the Armenian. Consequently, taking into account the current polarization state of the Armenian language awareness this article can be regarded as Harutunyan's first step towards a further investigation of this topic.

Key words – writing systems, Hittite letters, ideography, vocal signs, voiced sound mark, Chaldean cuneiform, goat writing, voice mail /transparent letter, letter sound.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՌԵԲԵԿԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայերենն ունի բավական հարուստ բառապաշար: Այդ բառապաշարի մասն են կազմում նաև ժամանականիշ բառերը, որոնք, ըստ ծագման, բաժանվում են երեք խմբի՝ բնիկ հայերեն, ստացվածքային կամ ժառանգորդական բառեր և փոխառություններ:

Բանալի բառեր – բառապաշար, ժամանականիշ բառեր, հնդեվրոպական մայր լեզու, ստուգաբանություն, տարի, եղանակ, ամիս, օր, արեգ, դար, փոխառություն:

Բառապաշարը լեզվի մեջ մտնող բոլոր բառերի ամբողջությունն է: Հայերենն ունի հարուստ բառապաշար: Այն ներառում է իր զարգացման բոլոր փուլերի ու հատվածների բառերը, այսինքն՝ լեզվի յուրաքանչյուր փուլ ունի իրեն հատուկ բառապաշար: Սերելով հնդեվրոպական նախահիմք լեզվից և անցնելով զարգացման երկարատև ու բարդ ուղի՝ հայերենն անընդհատ հարըստացրել է իր բառապաշարը: Ծագումնաբանական տեսակետից հայերենի բառապաշարը բաժանվում է երեք խմբի՝ բնիկ հայերեն բառեր, ստացվածքային կամ ժառանգորդական բառեր և փոխառություններ: Հայերենի բառապաշարի հիմնաշերտը կազմում են բնիկ հայերեն բառերը: Բնիկ հայերեն են կոչվում հնդեվրոպական մայր լեզվից հնդեվրոպական միասնության շրջանից ժառանգած արմատական բառերը: Հր. Աճառյանն առանձնացնում է բնիկ հայերեն բառերի 22 իմաստային դաշտ, որոնց մեջ մտնում է նաև ժամանականիշ բառերի իմաստային դաշտը: Ինչպես նշում է Գ. Զահուկյանը¹, հայերենը պահպանել է ժամանակի հետ կապված բազմաթիվ բնիկ հնդեվրոպական անվանումներ՝ կապված ինչպես տարիքի, ժամանակային տևողության, գործողության տարբեր փուլերի, այնպես էլ տարվա եղանակների, ամիսների, օրերի ու նրանց մասերի հետ:

Ժամանականիշ բառերի ծագման ու ստուգաբանության վերաբերյալ բավական շատ նյութ են տալիս Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը», Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամա-

¹ Տե՛ս Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 269:

նակաշրջան» աշխատությունը և «Հայերեն ստուգաբանական բառարանը»: Հր. Աճառյանը և Գ. Զահուկյանը ժամանականիշ բառերից բնիկ հնդեվրոպական են համարում հետևյալ արմատական բառերը՝ **ամ** (< հնյ. *sama «ամառ, տարի» ձևից), **ամիս** (< հնյ. *mens) **ատեն** (< հնյ. *esd «նստիլ»), **արդ**² (< հնյ. *art), **Արեգ**³ (< հնյ. *rev-), **գիշեր** (< հնյ. *veqero), **der** (< հնյ. *dher), **երեկ** /< երէկ/, որը նույնանում է ցերեկ/երեկ/երեկո բառի հետ, **հար** (< հնյ. *per-), **հետո** (< հնյ. *pedo), **հերու** (< հնյ. *peruti-), **հին** (< հնյ. *nevo-, *nevyo-), **նոր** (< հնյ. *senō), **տի** (< հնյ. *di, dei), **տիվ** (< հնյ. *dei), **օր** (< հնյ. *amor): Թվարկված հնդեվրոպական արմատներից **ատեն**-ը տեղ > ժամանակ անցումով առաջացած ժամանականիշ բառ է: Այն նախապես ունեցել է «ժողով, ժողովի նիստ, դատավորների ժողով, ժողովասրահ, դատարան, դատաստան» իմաստները, այնուհետև ուշգրաբարյան մատենագրություններում աստիճանաբար ձեռք է բերել ժամանակային իմաստ՝ «նիստ եղած կամ լինելու ժամանակը», ապա ընդհանրանալով ձեռք է բերել առհասարակ «ժամանակ» նշանակությունը²: Առաջանալով ժողով, ժողովի նիստ > ժողովի նիստի ժամանակ > ժամանակ իմաստային անցումով՝ «ատեն» ժամանականիշ բառը լայնորեն կիրառվում է արևմտյան ճյուղի բարբառներում և գրական արևմտահայերենում:

Տեղ > ժամանակ անցումով է առաջացել նաև «վայրկյան» բառը, որը նախապես նշանակել է «որևէ տեղ», հետո անցում է կատարվել ժամանակի գաղափարին³:

Բնիկ հնդեվրոպական են եղանակների անվանումները՝ **ամառ** (< հնյ. *som «ամառ, տարի»), **գարուն** (< հնյ. *user, *vesar > գեհար* գահար* գար), **ձմեռ** (< հնյ. *g'hei-, g'hi- «ձմեռ, սառնամանիք»): Եղանակների անվանումներից **աշուն**-ը Հր. Աճառյանը չի ստուգաբանել, իսկ Զահուկյանն այն ներկայացրել է բնիկ հնդեվրոպական բառերի շարքում՝ նշելով, որ դժվարություն է ներկայացնում նախաձևի վերականգնումը, և հավանական է համարում *os-sk-*on-*, *es-en-, *os-on հիմնաձևից սերելու հանգամանքը⁴:

Հայոց լեզվի բառապաշարի դեռևս չստուգաբանված բառերը կոչվում են ստացվածքային բառեր: Մենք առանձնացրել ենք հետևյալ ստացվածքային բառերը՝ **այգ**, **առավոտ**, **եռանդ**, **կանուխ**, **հիմա**, **հուսկ**, **մերթ**, **շուտ**, որոնք

² Տե՛ս Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 158:

³ Տե՛ս Աճառյան Հր., նույն տեղում, հ. Դ, Երևան, 1979, էջ 300:

⁴ Տե՛ս Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 66:

Հր. Աճառյանը չի ստուգաբանել, իսկ Ջահուկյանը բնիկ հայերեն բառեր է համարել:

այգ- հնդեվրոպական ai-ō կամ *ai-gh' *ai- «այրել, լուսավորել» արմատից՝ տարբեր աճականներով, քիչ հավանական է կապը *aus «լուսավորել» արմատի հետ⁵:

հուսկ – *post-uo- կամ *post-ko-*post - «անմիջապես մոտ, հետևում, հետո» արմատից հմմտ. հայ, ըստ լատ. post «հետո» հ. հնդկ. paśčāt «հետևը, արևմտյան ուշ»⁶:

շուտ - *skheud' skeud «զցել, նետել, հալածել, նետվել, շտապել» արմատից⁷:

առավոտ (առաւօտ) - կազմված է հնդեվրոպական *aus - «լուսավորել» արմատից՝ առ- նախածանցից և -աւտ վերջածանցից. առ-ը գիտակցվել է, և աւաւտը-ը՝ առանձին գործածվել. *aus-ի համար հմմտ. հուն. Էօս, լատ. aurora (<*ausōsa) «արշալույս»⁸:

Էդ. Աղայանը նույնպես առաւօտ-ի աւ-ը արմատ է համարում, որը բխեցնում է հնխ. *sau-el/ sauol, su+el-, sūe «արեգակ» արմատից և նշում, որ «առաւօտ» բառի մեջ ունենք հնդեվրոպական հնագույն մի արմատ *sau, որը պահպանվել է առանց -el, -en ածանցների⁹: Աճառյանը թեև չի ստուգաբանում «առաւօտ» բառը, բայց փաստարկներ է բերում, որ այն կազմված է **առ** նախդիրից և **աւօտ** արմատից, որը, ըստ նրա, նշանակում է «**ժամանակ**», և որից կազմված են «**շաղաւօտ**» (գիշերվա ժամը չորսը՝ ըստ արևելյան ժամանակահաշվի) և «**կամաւօտ**» (գիշերվա ժամը հինգը) բառերը¹⁰:

Ժամանականիշ բառերի իմաստային դաշտում կա երկու բառ, որոնք հայկական կազմություններ են: Դրանք են՝ **երբ** (երբ <*e-bhr), **Քաղոց**, որը կազմված է «քաղ»՝ «անասնոց խառնք» նշանակող բառից և չի տարբերվում «քաղ»՝ «նոխազ, արու, այծ» նշանակող բառից, ըստ այդմ՝ նշանակում է «անասնոց խառնից ամիսը»¹¹:

⁵ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նույն տեղում, էջ 48:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 468:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 592:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 73:

⁹ Տե՛ս **Աղայան Էդ.**, Բառաքննական և ստուգաբանական բացատրություն, Երևան, 1974, էջ 25-27:

¹⁰ Տե՛ս **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 256:

¹¹ Տե՛ս **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ. Դ, էջ 544:

հնչպես գիտենք, լեզվի բառապաշարի հարստացման ուղիներից մեկը այլ լեզուներից կատարվող փոխառություններն են: Փոխառությունները ուրիշ ժողովուրդների հետ տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի բնական արդյունքն են, երբ այդ շփման հետևանքով նորանոր հասկացությունների, իրոյթների հետ լեզվի մեջ մուտք են գործում նաև դրանց նշանակող բառերը¹²: Հայերենը ժամանականիշ բառերի նոր և նորագույն փոխառություններ չի կատարել, իսկ հնագույն և հին փոխառություններ կատարել է իրանական, սեմական, կովկասյան լեզուներից, հունարենից և լատիներենից:

Հայտնի է, որ հայերենն ամենից շատ փոխառություններ կատարել է իրանական լեզուներից, ինչը պայմանավորված է նրանով, որ հայերը և իրանական ցեղերը հեռավոր ժամանակներից ապրել են կողք կողքի և կապված են եղել հասարակական, քաղաքական, պետական, վարչական, մշակութային և այլ բնույթի կապերով, որն էլ իր ազդեցությունն է ունեցել հայերենի բառապաշարի վրա: Հայերենը պարսկերենից փոխառություններ կատարել է նրա զարգացման բոլոր շրջաններում՝ հին պարսկերեն, միջին պարսկերեն կամ պահլավերեն և նոր պարսկերեն, բայց փոխառությունների գերակշիռ մասը կատարել է միջին պահլավերենից: Ժամանականիշ բառերի մեջ մեծ թիվ են կազմում պահլավերենից կատարած փոխառությունները: Հայերենը իրանական լեզուներից փոխառել է հետևյալ ժամանականիշ բառերը՝ **ամանակ** (<պրսկ. amān «ժամանակ, ժամանակամիջոց»), **ժամ** (<պիլ. žamān «ժամանակ»), **ժամանակ** (<պիլ. žamānak), **հանապազ** (<պիլ. *han (a)-pāz), **հավերժ** (<պիլ. yāvēz), **հավետ** (<պիլ. yāvēt), **միշտ** (<զենդ. mušti), **նախ** (<պիլ. *naxust), **պահ** (<պիլ. *pahr):

Տարակարծություններ կան «**ժամանակ**» բառի ստուգաբանության վերաբերյալ: Գ. Զահուկյանը հայերենի իրանական փոխառությունների հիմնական ածանցավոր կազմությունները ներկայացնող բաժնում տրամաբանական է համարում ժամ+անակ ածանցումը¹³: Հր. Աճառյանն ավելի հավանական է համարում ժամանա+ակ ածանցումը՝ միաժամանակ նշելով, որ «ժամ» բառը հայկական կառուցվածք է, «ժաման» բառի մեջ ան-ը մասնիկ է համարվել, որին էլ հարմարեցվել է «ժամ» արմատական ձևը¹⁴: Լ. Հովհաննիսյանը կար-

¹² Տե՛ս **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004, էջ 187:

¹³ Տե՛ս **Զահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, էջ 569:

¹⁴ Տե՛ս **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ. Բ., Երևան, 1973, էջ 222, 223:

ծում է, որ ժամ-ը կարող է հայերեն բառ լինել՝ կազմված զ նախդիրով և «ամ» բնիկ հայերեն արմատով¹⁵:

Իրանական փոխառություններ են հին հայկական տոմարի ամսանունների մեծ մասը՝ **Ահեկան** (<պիլ. *ahrakan), **Մեհեկան** (< հպիլ. *mihrakan), **Մարգաց** (< հպրսկ. *margazana), **Մարերի** (< պիլ. mabyārya), **Նավասարդ** (< *navasārd' nava «նոր» և sārd «տարի»), **Հրոտից** (<պիլ. * favartinām), **Տրե** (<պիլ. tir):

Նշված ամսանուններից Մարգաց-ը և Հրոտից-ը Լ. Հովհաննիսյանը իրանական փոխառություններ չի համարում: Նա դրանք դիտարկում է որպես հայկական կազմություններ՝ նշելով, որ հայերենը յուրացրել է «մարգ» (մարգագետին) բառը, ընդունել որպես սեփական բառ և կերտել նոր ամսանուն, որն այդ ձևով չկա իրանական լեզուներում¹⁶:

Ժամանակակից բառերից Ջահուկյանն իրանական փոխառությունների շարքում է ներկայացնում նաև «ուշ» բառը՝ հավանական համարելով, որ այն առաջացել է սօ «խելք, միտք, հասկացություն» ձևից համապատասխան իմաստափոխությամբ, քանի որ «ուշ» բառի սկզբնական բնիկ հնդեվրոպական համանիշների գոյության հարցը լուծված չէ¹⁷:

Հայերենը հունարենից փոխառություններ է կատարել մ.թ.ա. III–IV դարերից սկսած մինչև մ.թ. X – XI դարերը: Հունարենից փոխառված ժամանականիշ բառերն են՝ րոպե (ρόπή), կիրակի (<κυριακή): Հայերենը հունարենից փոխառել է նաև մեր բոլոր ամսանունները՝ բացի «փետրվար»-ից և «դեկտեմբեր»-ից. հունվար (<ἰανουάριος), մարտ (<μάρτος), ապրիլ (<ἄπριος), մայիս (<μάϊος), հունիս (<ἰούλιος), հուլիս (<ἰούλις), օգոստոս (<αύγουστος), սեպտեմբեր (<σεπτέμβριος), հոկտեմբեր (<ὄχτώβριος), նոյեմբեր (< νοέμβριος): «Փետրվար» ամսանունը Հր. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել, իսկ «դեկտեմբեր» (< december) ամսանունը հայերենը փոխառել է լատիներենից:

Սեմական լեզուներից հայերենը ժամանականիշ բառեր փոխառել է միայն ասորերենից 3 բառ՝ **դար** (<dār), **շաբաթ** (< šabbəθā), **ուրբաթ** (< ԹւօԹθā) և **ակկադերենից** (1 բառ)՝ **տարի** (< darittu(m)):

¹⁵ Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 94:

¹⁶ Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, նույն տեղում, էջ 98:

¹⁷ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 269:

Գ. Ջահուկյանը տարի-ն համարում է ակկադական փոխառություն, իսկ ըստ Հր. Աճառյանի՝ նրա ծագումը ստույգ է: Աճառյանը գրում է, որ հին հնդեվրոպացիները տարբեր բառեր ունեին «մի տարվա» և «մեկից ավելի տարիների» համար, և այդպիսի մի տարբերություն էլ կա մեր «ամ» և «տարի» բառերի միջև. «տարի նշանակել է «մի տարի», «ամ», «տարիներ»», բայց այս տարբերությունը Ե դարից ջնջվել է, ոսկեդարում դրանք կատարյալ հոմանիշներ էին, մինչև որ **ամ**-ը ջնջվեց, մնաց միայն **տարի**-ն:

Հայերենը կովկասյան լեզուներից փոխառություններ քիչ է կատարել, իսկ ժամանականիշ բառեր փոխառել է միայն քարթվելական լեզվից՝ ընդամենը 2 բառ՝ Հոռի (<ռրո), վաղ (< ԵՅՁԼ)¹⁸:

Նշենք նաև, որ քարթվելական փոխառություն է հին հայկական տոմարի երրորդ ամսանունը՝ «Սահմի»:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ մեր ուսումնասիրության ընթացքում առանձնացրել ենք 28 ժամանականիշ բնիկ հայերեն բառեր և 36 հնագույն և հին փոխառություններ, որոնցից 17-ը իրանական փոխառություններ են, 13-ը՝ հունական, 4-ը՝ սեմական, 2-ը՝ կովկասյան, 1-ը՝ լատինական: Ժամանականիշ որոշ բառեր դեռևս ստուգաբանված չեն, դրանք մտնում են լեզվի ստացվածքային բառաշերտի մեջ:

ГЕНЕАЛОГИЯ ВРЕМЯУКАЗАТЕЛЬНЫХ СЛОВ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

РЕБЕКА МАРГАРЯН

Армянский язык имеет богатый словарный запас.

Часть этого словарного запаса составляют также времяуказательные слова, которые по происхождению делятся на три группы: исконно армянские слова, полученные или унаследованные и заимствованные.

Ключевые слова – словарный запас, время, указательные слова, индоевропейский родной язык, этимология, год, погода, месяц, день, солнце, век, заимствование.

¹⁸ Տե՛ս *Աճառյան Հր.*, նշվ. աշխ., հ. Դ, էջ 385:

THE ETYMOLOGY OF THE TENSE-MARKING WORDS IN MODERN ARMENIAN LANGUAGE

REBEKA MARGARYAN

The Armenian language has a rich vocabulary. Tense-marking words form part of its vocabulary. According to the etymology, these markers are of three types: native Armenian words, received or inherited words and borrowings.

Key words – vocabulary, tense-marking words, Proto-Indo-European Language, etymology, year, season, month, day, sun, century, borrowing.

ՖԻԶԻԿԱԼ ՈՐՊԵՍ ԳԻՏԱՖԱՆՏԱՍՏԻԿ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՄԵԳԱՏԵՔՍ

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գիտաֆանտաստիկ դիսկուրսի գիտական առնչությունների շարքում առաջնային տեղ է գրավում ֆիզիկան: Ե՛վ ֆիզիկայի, և՛ գիտաֆանտաստիկայի շարժիչ ուժը ժամանակային և էվոլյուցիոն փոփոխություններն են: Գիտաֆանտաստիկ «անհնարին» տեխնոլոգիական հասկացություններն ու հնարները ֆիզիկայի հիմնադրույթների արտարկումներ են, այսինքն՝ ֆիզիկան գիտաֆանտաստիկայում վերածվում է ստեղծագործ երևակայության արտահայտման միջոցի: Ընդ որում, մարդկային երևակայությունը, ձևափոխելով, վերափոխելով, ընդլայնելով կամ նեղացնելով ֆիզիկայի այս կամ այն տեսությունը, հիմնադրույթը կամ օրենքը, ստեղծում է գիտաֆանտաստիկ աշխարհներում գործնականորեն կիրառվող տեխնոլոգիական սարքավորումներ, լիովին բնական ընդունվող երևույթներ և հասկացություններ և դրանք արտահայտում է գիտագեղարվեստական լեզվական միավորների ուրույն համակցումներով:

Քանայի բառեր – գիտաֆանտաստիկ դիսկուրս, ֆիզիկա, արտարկում, բանական և երևակայական լեզվական միավորներ:

Փաստ է, որ գիտությունը գիտաֆանտաստիկ դիսկուրսի կարևորագույն և հիմնարար աշխարհայացքն է¹, որ գիտաֆանտաստիկան գեղարվեստական գրականության մյուս ժանրերից տարբերվում է նրանով, որ գեղագիտական ու հուզական զգացողություններ արթնացնելուց բացի, միտված է որոշակի «լուրջ» ազդակների միջոցով ներգործելու ընթերցողի վրա: Ժանրի համընդհանուր գիտականությունը դրսևորվում է հենց այդ ազդակների ամբողջությամբ:

Անգլալեզու գիտաֆանտաստիկայի հեղինակ և տեսաբան Բ. Աթրբրդին իր «Ֆանտաստիկայի ռազմավարությունը»² հետազոտության մեջ նշում է, որ գիտաֆանտաստիկ ժանրն առաջնորդվում է այն գաղափարով, որ գիտությունը ժանրի «մեգատեքստն» է, երևակայության աղբյուրը, շարադրանքը պայմանավորող այն գործոնը, որը «պարուրում, սատարում և հիմնավորում է գիտաֆանտաստիկան այնպես, ինչպես Աստվածաշունչն է հիմնավորում քրիս-

¹ Տե՛ս **Suvin, D. R.** *Metamorphoses of Science Fiction: On the Poetics and History of a Literary Genre.* New Haven and London: Yale University Press, 1979:

² Տե՛ս **Attebery, B.** *Strategies of Fantasy.* Bloomington, IN: Indiana University Press, 1992:107.

տոնեական բանաստեղծականությունը»:

Գիտական «մեզատեքստն» իհարկե բազմազան է. մի շարք բնագիտական և հումանիտար գիտություններ՝ ֆիզիկա, կենսաֆիզիկա, աստղաֆիզիկա, կենսաբանություն, կենսաքիմիա, փիլիսոփայություն, մարդաբանություն, հոգեբանություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն, լեզվաբանություն, սոցիոլոգիա, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով առնչվում են գիտաֆանտաստիկային: Այդուհանդերձ, տիրապետող է այն կարծիքը, որ դիսկուրսի գիտական առնչությունների շարքում առաջնային տեղ է գրավում ֆիզիկան: Ե՛վ ֆիզիկայի, և՛ գիտաֆանտաստիկայի շարժիչ ուժը ժամանակային և էվոլյուցիոն փոփոխություններն են: Գիտաֆանտաստիկայի բազմազան սահմանումների մեջ իր ուրույն տեղն է գրավում ժանրի բնորոշումը որպես «անհնարինի ֆիզիկա» (*physics of the impossible*), որը նշանակում է, որ գիտաֆանտաստիկ «անհնարին» տեխնոլոգիական հասկացություններն ու հնարները կարող են տեսականորեն բացատրվել ներկայիս ֆիզիկայի հիմնադրույթների լույսով³:

Հիրավի, ֆիզիկան ներկայացնում է ճշգրիտ, իրական փաստեր, իսկ գիտաֆանտաստիկան «պատմում է» դրանց մասին՝ պատմելու ընթացքում որոշակիորեն շեղվելով իրականությունից⁴: Այսպես՝ քվանտային ֆիզիկան, հարաբերականության և բացասական էներգիայի տեսությունները զարմանալիորեն կերպարանափոխվում են գիտաֆանտաստիկայում, ֆիզիկայի վրա հիմնված մտային վարժանքների շնորհիվ ձևավորվում են նոր, գիտաֆանտաստիկ տեխնոլոգիաներ և դրանք ներկայացնող լեզվական ձևակերպումներ: Արդյունքում ֆիզիկան որոշ չափով կորցնում է փաստականությունը՝ վերածվելով «երևակայության ինտելեկտուալ նվաճման»⁵: Ֆիզիկային բնորոշ գիտական ճշգրտությունն ու տրամաբանականությունը նոր երանգներ են հաղորդում երևակայությանը, և «ֆիզիկայի շնորհիվ անհնարինը դառնում է հնարավոր»⁶:

Գիտաֆանտաստիկայի համար ֆիզիկան զուտ փաստերի ամբողջականություն չէ. փաստերի ընտրությունն ու ֆիզիկական բնութագիրը մեծապես

³ Տե՛ս **Kaku, M.** *Physics of the Impossible: A Scientific Exploration into the World of Phasers, Force Fields, Teleportation, and Time Travel.* NY: Doubleday, 2008.

⁴ Տե՛ս **Mellor, F.** *Between Fact and Fiction: Demarcating Science from Non-science in Popular Physics Books.*//Social Studies of Science, N 33/4. London: SAGE, 2003:528.

⁵ Տե՛ս *ibid* 528.

⁶ Տե՛ս *ibid* 522.

պայմանավորված են երևակայությամբ, առեղծվածայինը բացահայտելու ցանկությամբ ու կարողությամբ: Եթե բացահայտումներն ու դրանց բացատրություններն անտրամաբանական են, ուրեմն հեղինակը չի կարողացել լսել «ֆիզիկայի հեղինակավոր ծայնը», լքել է գիտության «լուրջ» տարածքը և մտել «հրաշքների տիրոյթ»: Գիտությունը վստահելի է, հեղինակավոր և իմաստալի, որովհետև առնչվում է փաստերի հետ, առեղծվածայինն անհավատալի է և անիմաստ, որովհետև չի հիմնվում փաստերի վրա: Լավ գիտաֆանտաստիկան իրական է և փաստական, վատը «թավալվում է առեղծվածայինի անիմաստության մեջ»⁷:

Գրեթե նույն կարծիքն է արտահայտում Ա. Գոսուամին⁸ հայտարարելով, որ ֆիզիկան ու գիտաֆանտաստիկան «գործընկերներ» են, որոնք միմյանց հետ հաղորդակցվում են երևակայության միջոցով, որն էլ թույլ է տալիս նորովի հետազոտել ֆիզիկայի օրենքները, բացահայտել ֆիզիկայի ավանդական ընկալումներից այն կողմ գտնվող իրականությունը: Ըստ այս գիտնականի՝ շատ ֆիզիկոս-գործընկերներ հավաստում են, որ նյութական տիեզերքի հիմքում գոյություն ունի մեկ այլ, երևակայական իրականություն: Հեղինակը գիտաֆանտաստիկան սահմանում է որպես այդ երևակայական իրականությամբ պայմանավորված, գիտության վրա հիմնված և գիտությանն ուղղված «դրական մարտահրավեր», գրականության ոլորտն տարատեսակ, որի յուրահատկությունը պայմանավորված է ընդհանրապես գիտության և մասնավորապես ֆիզիկայի հետ ունեցած սերտ հարաբերակցությամբ⁹:

Ըստ Լ. Քրաուսի¹⁰ քվանտային տիեզերքն այն տարածքն է, որը պետք է հետազոտել գիտաֆանտաստիկ երևակայության միջոցով, եթե ուզում ենք հասկանալ օբյեկտիվ իրականությունն ու ժամանակի սկիզբն ու վերջը: Հեղինակը պնդում է, որ գիտաֆանտաստիկան չի կարող առնչվել անբացատրելի, անբնական ու առեղծվածային տիրոյթների հետ: Երևակայականի ցանկացած դրսևորում պետք է պատճառաբանված և տրամաբանական հնչի, որի համար էլ անհրաժեշտ է, որ ֆիզիկան, գրականությունը, լեզուն ու արվեստը սեր-

⁷Տե՛ս ibid 522-525.

⁸ Տե՛ս Goswami, A. & Goswami, M. The Cosmic Dancers. NY: Harper & Row, 1983:8, 208.

⁹ Տե՛ս ibid 155.

¹⁰ Տե՛ս Krauss, L. M. Beyond Star Trek. New York: Basic Books, 1997:155.

տորեն համագործակցեն¹¹: Ընդ որում, հեղինակը նշված համագործակցության կարևոր տարր է համարում ֆիզիկան, քանի որ գիտաֆանտաստիկ տեխնոլոգիաներն ու հնարներն առավելապես հիմնված են ֆիզիկայի վրա, կամ ավելի ճիշտ՝ ստեղծված են ֆիզիկայի կողմից: Ավելին, «այսօրվա և վաղվա ֆիզիկան փաստորեն պայմանավորում է և պայմանավորելու է մեր ապագան այնպես, ինչպես Նյուտոնի և Գալիլեյի ֆիզիկան է գունագարդում մեր ներկա գոյությունը»¹²: Այսպիսով, շարունակում է գիտնականը, տեխնոլոգիան, լինի այն լավ թե վատ, իրական թե հորինված՝ փոխում է մեր կեցությունը, նոր տեխնոլոգիային արագորեն հարմարվելու մեր ունակությունն ու պատրաստակամությունը ցույց են տալիս, որ մենք «զարգացող մարդկային հասարակության մի մասնիկն ենք»¹³: Եվ իսկապես, գիտությունը, տեխնոլոգիան և լեզուն այն միջոցներն են, որոնց շնորհիվ գիտաֆանտաստիկան ձգվում է անցյալից դեպի ապագա, այսինքն՝ ներկայիս ֆիզիկայի զարգացումն ու առաջընթացը, ձեռքբերումներն ու նվաճումներն անմիջապես լեզվական արտացոլում են գտնում գիտաֆանտաստիկայում և ապահովում գեղարվեստական գրականության այս տարատեսակի մոտ և հեռու ապագան:

Ֆիզիկային առնչվող գիտաֆանտաստիկ թեմատիկան հիմնականում ընդգրկում է հակամարմիններին, տիեզերքին և տիեզերական ճամփորդություններին, հեռադիտակներին, սև անցքերին, երկնաքարերին, ձգողականությանը, միջաստղային նյութին, լույսին և ճառագայթմանը, միջուկային երևույթներին, Արևին, Լուսին, Յուպիտեր, Մարս, Մերկուրի և այլ մոլորակներին, նեյտրոնային աստղերին, աստղաբոլբոլներին ու համաստեղություններին, ֆիզիկական մասնիկներին, տիեզերքում գոյություն ունեցող կյանքի ձևերին, վերերկրային բանականությանը վերաբերող ֆիզիկայի և աստղաֆիզիկայի իրական տեսական ու գործնական դրոյթները և դրանց վրա հիմնված անիրական, երևակայական արտարկումները:

Դիտարկենք գիտաֆանտաստիկային բնորոշ մի արտարկում Դեյվիդ Բրինի «Հասնել դրախտին»¹⁴ վեպից.

¹¹ Տե՛ս *ibid* 175.

¹² Տե՛ս **Krauss, Lawrence M.** *The Physics of Star Trek*. New York: Basic Books, 1995:101.

¹³ Տե՛ս *ibid* 102.

¹⁴ Տե՛ս **Brin**, *David Heaven's Reach*. NY: Bantam Books, 1998.

Caterpillar ribbed, with rows of talonlike protrusions that bite into spacetime, the vessel claws its way against a bitter gale.

(Brin, *Heaven's Reach*: 9)

Դ. Բրինի վերոնշյալ վեպը երկրային *Streaker* տիեզերանավի դեպի հեռավոր տիեզերք՝ հինգ գալակտիկա կատարած ճամփորդության և անձնակազմի՝ այդտեղ բնակվող արտասովոր հասարակությունների հետ ունեցած արկածների մասին է: Վեպի մարդ-հերոսները ծանոթանում են բազմաթիվ նոր հասարակարգային ձևերի, որոնցից հիշարժան են *Jijo, Jophur, Hydrogen Breathers, the Retired, Machines, the Transcendent* հորինված հատուկ անուն-նորաբանություններով ներկայացվող համայնքները: Վերոնշյալ մեկ նախադասությամբ արտահայտված արտարկումն առաջին հայացքից ընդլայնված փոխաբերության տպավորություն է թողնում, որի կառուցումն առկա են վերնշանային մակարդակում իրացվող հետևյալ միավորները. *Caterpillar ribbed* [...] *vessel* (թրթուրավոր կողերով կամ թրթուրի ձև ունեցող տիեզերանավ) անուղղակի համեմատությունը, ոճականորեն լիցքավորված *to claw* (ճանկոտել) բայը, որը *claws its way* բայական շարույթի միջոցով պատկերավոր նկարագրում է, թե ինչպես է տիեզերանավը հաղթահարում հակընդդեմ փոթորիկը, *-like* գործուն վերջածանցով կազմված *talonlike* (սայրավոր, ճանկանման) բառային շարույթը և *bitter gale* (դաժան, դիմահար քամի) մակդիրային շարույթը: Այդուհանդերձ, առաջին հայացքից փոխաբերույթ հիշեցնող *bite into spacetime* (շարժվել լույսի արագությամբ) ուղղակի իմաստով կիրառված գիտական տերմին-շարույթը ցույց է տալիս, որ գործ ունենք ֆիզիկական արտարկման հետ: Ուրիշ խոսքով՝ տիեզերքի անընդհատ և շատ արագորեն ընդլայնվելն անժխտելի գիտական փաստ է: Եթե հնարավոր լիներ ստեղծել այնպիսի հզոր սայրեր (որն էլ, ի դեպ, արել են Դ. Բրինի վեպի երկրային գիտնական հերոսները), որոնք կարողանային ինչ-որ ձևով հաղթահարել կամ «պատռել» տիեզերական ժամանակի «թաղանթը», լույսի արագությամբ թռչող տիեզերանավերը կդառնային իրականություն: Հենց այս, ներկայումս անհնարին համարվող գիտական փաստն էլ հեղինակային արտարկման հիմքն է, արտարկում, որն արտահայտում է մարդկային երկրային տարածքից շատ վեր բարձրանալու հնարավորության իրականացման դարավոր երազանքը:

Այսպիսով, ֆիզիկան գիտաֆանտաստիկայում վերածվում է ստեղծագործ երևակայության արտահայտման միջոցի: Ավելացնենք, որ մարդկային երևակայությունը, ձևափոխելով, վերափոխելով, ընդլայնելով կամ նեղացնելով

Ֆիզիկայի այս կամ այն տեսությունը, հիմնադրույթը կամ օրենքը, ստեղծում է գիտաֆանտաստիկ աշխարհներում գործնականորեն կիրառվող տեխնոլոգիական սարքավորումներ, լիովին բնական ընդունվող երևույթներ և հասկացություններ և դրանք արտահայտում է գիտագեղարվեստական լեզվական միավորների ուրույն համակցումներով:

ФИЗИКА КАК МЕГАТЕКСТ ДИСКУРСА НАУЧНОЙ ФАНТАСТИКИ

ГАЯНЕ МУРАДЯН

Статья показывает, что человеческое воображение, модифицируя, трансформируя, преобразуя, расширяя или сужая теории, постулаты и законы физики, создает новые, кажущиеся естественными явления, концепции и технологические устройства, применяемые в научно-фантастических мирах, и выражает упомянутые понятия посредством уникального сочетания научных и художественных лингвистических единиц.

Ключевые слова – дискурс научной фантастики, физика, экстраполяция, рациональные и образные лингвистические единицы.

PHYSICS AS A SCIENCE FICTION MEGATEXT

GAYANE MURADYAN

This paper considers the literary genre of science fiction characterized by considerable attention to accurate detail in natural sciences, especially physics. The driving force of both the subject of physics and science fiction literature is time changes and evolutionary progress. The "impossible" technological concepts and tricks are the extrapolation of the fundamental concepts of physics. This means that the laws, concepts and rules of physics in literary science fiction works are transferred into means of manifesting ingenious imagination. Moreover, the human imagination modifying, transforming, expanding or narrowing the theories, postulates and laws of physics, creates new, seemingly natural phenomena, concepts and technological devices practically applicable in the sci-fi worlds, and presents these concepts through a unique combination of scientific and artistic linguistic units.

Key words - science fiction discourse, physics, extrapolation, rational and imaginative linguistic units.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

XIX դարի երկրորդ կեսին ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՍԻԿՅԱՆ

Սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունները ուրիշ նպատակ չունեին, քան ազդել ժողովրդագրական ցուցանիշների վրա, որպեսզի ապահովվեր նվաճող ժողովրդի քանակական գերազանցությունը:

Վերլուծության ճանապարհով հանգել ենք այն հետևության, որ նման պայմաններում անհրաժեշտություն էին դառնում արևմտահայության գոյապայքարը, վարվող ոչնչացնող քաղաքականության դիմակայումը:

Քանալի բառեր – նահանգ, պատճառ, Թուրքիա, Եվրոպա, կապիտալ, բարեփոխում, Ղուրան, պետական, տնտեսություն, քրիստոնյա:

XIX դարի երկրորդ կեսին Թուրքիան աղմկոտ անցյալի ծաղրանկար էր: Օգտվելով կայսրության տնտեսական հետամնացությունից՝ Եվրոպական տերությունները Թուրքիան վերածեցին կիսագաղութի: Իսկ երբ բորբոքվեց «Արևելյան հարցը», երբ մեկը մյուսի հետևից բռնապետության դեմ ազատագրական պայքարի ելան նվաճված ժողովուրդները, Թուրքիան կարծես թևակոխում էր մասնատման, ապա և կործանման ժամանակաշրջան: Հսկայածավալ կայսրությունը փլուզումից փրկելու ուրիշ ելք չտեսնելով՝ սուլթանները քայքայման ընթացքը դանդաղեցնելու, ռազմական հզորությունը վերականգնելու, ֆեոդալական մասնատվածությունը հաղթահարելու համար դիմեցին բարենորոգումների: Սակայն բարենորոգումները հազվադեպ բացառությամբ մնացին թղթի վրա, ավելին՝ հետադեմ մահմեդական գաղափարախոսությունը, հոգևորականությունը, խոշոր հողատերերը, կառավարությունը և առաջին հերթին սուլթանը կատաղի դիմադրություն կազմակերպեցին, և բարեփոխումներ խոստացող թանգիմաթներն ու սահմանադրությունը տեղ չգտան կյանքում: Բարենորոգումների տապալմանն էին ձգտում նաև Եվրոպական տերություններն ու Ռուսաստանը, որովհետև նրանց շահերին դեմ էր Թուրքիայի վերակենդանացումը:

Այնուամենայնիվ, բարեփոխումներին խանգարող ամենամեծ ուժը թուրքական իրականությունն էր : Եվրոպական տերությունների ներկայացուցիչների այն հարցին, թե ինչու չիրագործվեցին բարենորոգումները, Ֆաուդ փաշան պատասխանում է, որովհետև «...հնարավոր չէրավ իրականացնել սովորույթների ռեֆորմ»¹: Թուրքիայում պահպանվեցին Ղուրանի սկզբունքների վրա հենված հողօգտագործման օրենքները, ոչ մուսուլման հպատակների իրավական անհավասարությունները, հարստահարությունները, հալածանքները:

Բարենորոգումները, որ բարձրագույն հայտարարվում էին մայրաքաղաքում, մինչև նահանգներ հասնելը դառնում էին գաղտնիք: Կարինի նահանգապետը, ստանալով 1856թ. հրամանագիրը, իր մոտ է կանչում լուսավորչական և կաթոլիկ եպիսկոպոսներին, նրանց ծանոթացնում է հրամանագրին և զգուշացնում լուրեր չտարածել, եթե ոչ ինքը պատասխանատու չէ նրանց կյանքի համար²:

Երկրի տնտեսության առաջընթացն արգելակող բռնատիրական կարգերը, դատարկ գանձարանը, քրիստոնյա հպատակների հալածանքներն ու հարստահարություններն այն գործոններն էին, որոնք հնարավորություն էին տալիս օտար միջամտության համար, և երկիրը դրվում էր եվրոպական շահագործման տակ: Ռազմական ուժերն օգտագործելով քրիստոնյա հպատակների տնտեսական կարողությունների քայքայման նպատակին, իրավական անհավասարությունը ծառայեցնելով իսլամացման քաղաքականությանը՝ թուրքական բռնապետությունն իր գոյության ապահովումը տեսնում էր ազգային-ազատագրական շարժումները խեղդելու, հպատակների ծուլման ու ստրկացման մեջ:

Պետական քաղաքականության վերածված այդ դժնդակ կարգերն իրենց ողջ ծանրությամբ ընկած էին նաև արևմտահայության վրա: Արևմտահայ գյուղացիական տնտեսությունները՝ հարկային եկամտի հիմնական աղբյուրներից մեկը, ենթարկվում էին անողոք շահագործման ու թալանի:

Հողատիրության անարդար կարգերը քրիստոնյաների հողազրկման պատճառ էին դառնում: Հողազուրկ ուսանող ավելի ձեռնտու էր թուրք ֆեոդալին, քան թեկուզ փոքր հողակտոր ունեցողը: Արևմտյան Հայաստանում

¹ **Фадеев И. Л.** Официальные доктрины в идеологии и политики Османской империи. Москва, 1985, стр. 77.

² **Новичев А. Д.** История Турции. Т. 4, Е., 1978, стр. 128-129.

Ազգային ժողովում Մ. Խրիմյանը հայտարարում է, որ հարստահարությունները միշտ էլ պետք է լինեն, որովհետև այնտեղ ապրող ժողովուրդներից մեկի ձեռքին Ղուրանն է, մյուսի ձեռքին՝ Ավետարանը: «Ղուրանի հավատացողը այնպես կկարծե թե նա, որ հավատք չընծայեր անոր, արժանի է հարստահարության, իսկ Ավետարանը կըսե, ուրիշ իրավունք մը չունիս, այլ պիտի հարստահարվիս մինչև գերեզման»³:

Կարինի պատվիրակ Վահան վարդապետը, հանդիպելով Թուրքիայում Անգլիայի հյուպատոս Լեյարդին, հայության հողագրկման քաղաքականությունը բնութագրում է այսպես. «Տաճիկ կառավարությունը երեք կերպով կուզե հայերը փճացնել. 1) բոլոր հողերն աստիճանաբար իսլամաց ձեռքն անցնել. 2) մասնավոր պատրվակներով բանակներ հանել և ժողովուրդը ճնշել. 3) քուրդերի մեջ իսլամություն տարածել և կրոնական կարգադրությամբ նորա մոլեռանդությունը վառ պահել»⁴:

Բացի նշված միջոցներից, Ղրիմի պատերազմից հետո կառավարությունը կալվածագիրք կազմելու պատրվակով խաբեությամբ հայերից հավաքում է կալվածագրերը: Որոշ ժամանակ անց հայերը տեղեկանում են, որ իրենք այլևս իրենց հողերի տերերը չեն, որ հողերը իբրև սեփականություն գրված են քաղաքաբնակ մահմեդականների վրա⁵ :

Այդ նենգ ճանապարհով միայն Կարինի նահանգում բռնագրավվեցին 36 գյուղերի 1632 դեսյատին 362 հողակտորներ, 190 դեսյատին 40 արոտավայրեր, 280 դեսյատին այլ հողեր, չհաշված պարտքերի դիմաց խլված հողերը⁶:

Կարինի նահանգում, ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներում, իրենց անարգել, դաժան քաղաքականությունն էին շարունակում, Չարենցի խոսքերով ասած՝ «հավիտենական հիվանդի թափթիուկ հորդաները»՝ քրդերն ու թուրքական խուժանը:

Բռնագրավումը, թալանը կարինահայության անբաժան ուղեկիցներն էին: Սանձարձակ քրդական ուժերը 1890թ. հունիսին, արոտավայրեր խլելու նպատակով, հարձակվում են նահանգի գյուղերից մեկի վրա: Հայերը թեև դիմադրում են, բայց զգալով ուժերի անհավասարությունը՝ գնում են բանակցությունների: Քրդերը սպանում են չորս բանագնացներից երկուսին:

³ «Փորձ», 1876, թիվ 4, էջ 16:

⁴ «Մշակ», 1879, թիվ 209:

⁵ Նույն տեղում:

⁶ Бекгулянц Р. По турецкой Армении... Ростов-на-Дону, 1914, стр. 67.

Դեպքի վայր «շտապող» պաշտոնյան ու ոստիկանները բավական ուշացումով տեղ հասնելուց հետո մարդասպաններին փնտրելու փոխարեն մեղքը բարդում են հայերի վրա և բանտարկում նրանց: Բանտարկվածներից պահանջված չափի կաշառք ստանալուց հետո պաշտոնյան խոստանում է հայերին ազատել միայն այն ժամանակ, երբ կգտնվեն հանցագործները: Կարճ ժամանակ անց մարդասպանները բռնվում են, բայց դատվում են ... հայերը: Այն բանից հետո, երբ դատարանում ապացուցվում է հայերի անմեղությունը, նրանք ազատ են արձակվում: Իսկ քրդերը մարդասպանության համար անգամ պատասխան չեն տալիս և «առ այսօր էլ շարունակում են ծառայել նորին մեծություն սուլթանին»⁷:

Անհամակարգ հարկային քաղաքականությունն ավելի էր քայքայում նահանգի հայության տնտեսությունը: Գանձարանի դատարկ սնդուկները լցնելու ուրիշ միջոցներ չունենալով՝ բռնապետությունը հարկային համակարգի ողջ ծանրությունը դնում էր քրիստոնյա հպատակների վրա: Բազմաթիվ անանուն, օրինական ու անօրինական հարկերը կեղեքումների այդ համակարգի վառ ապացույցներն են: Սկսած տասանորդից ու եկամտահարկից, զինվորական ու գլխահարկից, վերջացրած անճանապարհ երկրի ճանապարհային, ցանկացած ժամանակ կողոպուտի ենթակա հայի տան ապահովության հարկով՝ բոլոր հարկերը կողոպուտի համակարգի դասական ձևերն էին, մարդկային իրավունքների դեմ գործող միջոցներ: Հարկային քաղաքականությունը, կատարելով իր հիմնական դերը՝ հայության տնտեսական կարողությունները ոչնչացնելու պարտականությունը, հնարավորություն էր ստեղծում նաև «Նոր օսմանների» հիմնական նպատակի իրագործման համար: Երկրի մահմեդականացումը մի միջոցառում էր, որը հնարավորություն կտար խուսափելու եվրոպական միջամտությունից և չհրկիզվող պահարան նետելու Արևելյան հարցի պատմության արյունոտ էջը՝ Հայկական հարցը:

XIX դարի երկրորդ կեսը նշանավորվեց արևմտահայության տեսանելի տեղաշարժերով, որի առաջին վկայությունը սահմանադրական շարժումն էր: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Ղրիմի պատերազմից հետո Թուրքիան իր գոյությունն ապացուցում էր անուժ հրովարտակներ հրապարակելով: Անժամանակ արևմտահայության դեմ բացահայտ պայքար հայտարարելով՝ սուլթանն ու Բ.Դուռը երկրի դեմոկրատացումն ապացուցող թանգիմաթների

⁷ “Положение армян в Турции до вмешательства держав в 1895г.”. Ереван, 1896, стр. 345.

արանքում տեղ տվեցին նաև արևմտահայ սահմանադրությանը, որը գործադրվելու իրավական հնարավորությունից զուրկ մի կանոնադրություն էր: Այդ ժամանակաշրջանի առաջադեմ գործիչներից մեկը՝ Մ.Խրիմյանը, այն անվանում էր Կ.Պոլսի համայնքի սահմանադրություն, որում բացակայում էին գավառահայությանն իրավունքներ արտոնող բառերը: Ահա թե ինչու, Հ.Աճառյանի բնորոշմամբ, սահմանադրությունը «ազգին մեկ մասեն սպասված ընդունելությունը չգտավ»⁸:

Հայ առաջադեմ գործիչների ջանքերով, սահմանադրության բացթողումները լրացնելու նպատակով, մշակվեց գավառների բարենորոգումների ծրագիրը: Սահմանադրական շարժման բաղկացուցիչ մասն էր նաև Կարինի բարենորոգումների ծրագիրը: Այն, խորացնելով հարցը, առաջադրում էր համարձակ պահանջներ: Երեք փաստաթղթերը դիտելով իբրև մեկ շարժման բաղկացուցիչ մասեր՝ ավելի ցայտուն են ընդգծվում արևմտահայության քաղաքական գիտակցության բարձրացման վերընթաց ուղին, ազատագրական գաղափարախոսության սկզբունքները, որոնք հետագայում վերածվեցին կուռ տեսության:

Բեռլինի կոնգրեսից հետո սաստկացող հալածանքներին դիմակայելու նպատակով ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Կարինի նահանգում ստեղծվեցին ընկերություններ ու կազմակերպություններ, որոնց մեջ իր որոյն տեղն ունեին «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը: «Պաշտպան հայրենյացը» այն բոցավառվող խարույկն էր, որի շուրջը համախմբվեց ազատատենչ արևմտահայության ազատագրական ողջ միտքը: Կազմակերպությունը շրջադարձային նշանակություն ունեցավ արևմտահայության ազատագրության գաղափարախոսության ձևավորման գործընթացի վրա: Դա մի ժամանակահատված էր, երբ եվրոպական դիվանագիտությունից խաբված ժողովրդի մեջ հասունանում էր սեփական ուժերով ազատագրության հասնելու գաղափարը:

Հաղթահարվում էր այն մտայնությունը, թե հայ ժողովուրդը «ժամանակակից ու օրվա խնդիրները թողած, սարեր ձորեր է ընկնում և իրան համար անմարսելի նյութ հնարում և ծամում...», երբ «զլխացավի դեղ փնտրելու փոխանակ, կը գնանք աստղեր կը հաշվենք, և թվաբանություն սովորելու տեղ սայր կը քաղենք»⁹:

⁸ Սվաճյան Հ., Հրապարակախոսություն, Երևան, 1960, էջ 301:

⁹ «Մշակ», 1880, թիվ 145:

Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմից հետո սուլթանական հանցախումբը եկավ այն համոզման, որ դարեր շարունակ կրկնվող հալածանքները չկոտրեցին հայության դիմադրությունը: Մնում էր վերջին միջոցը՝ կոտորածների իրականացումը՝ զուլումի քաղաքականության իրագործումը, որտեղ առաջին ջութակի դերը կատարելու էին քրդերը: Սա մտացածին քայլ էր, Եվրոպայի «խաչակրաց արշավանքներին» ու գործնական քայլերից զուրկ պահանջներին բավարարություն տալու հեշտ միջոց, որպեսզի ստեղծվեր այն սպավորությունը, թե արևմտահայության կոտորածները ոչ թե պետական մշակված քաղաքականություն է, այլ սոսկ քրդերի ու հայերի ընդհարում:

Անսանձ քրդական հորդաներն ավերեցին Արևմտյան Հայաստանի գյուղերն ու ավանները, հայաթափ արեցին քաղաքները: Հայ ժողովուրդը մեծ ճիգերի գնով դիմադրում էր: Սակայն ուժերն անհավասար էին, բնաջնջումն իրականացնողները՝ բիրտ ու անագորույն: «Քրդերը համդիե են, սուլթանի ծառաները: Այդպես վարվելը նրանց իրավունքն է», - բողոքներին պատասխանում էին տեղական իշխանությունների ներկայացուցիչները¹⁰:

Կարինում, որտեղ տեղավորված էին եվրոպական յոթ երկրների հյուպատոսությունները, օրը ցերեկով նրանց աչքի առաջ սկսվեց հայության կոտորածը: Միայն Կարին քաղաքում սպանվեցին ավելի քան 5000 հայեր, պատճառվեց կես միլիոն օսմանյան լիրայի վնաս, ավերվեցին 1500 կրպակ, հարյուրավոր տներ: 1894-1896թթ. ջարդերի ժամանակ եղեռնաբար սպանվեցին 300 000 հայեր, 100000 մարդ գաղթեց Ռուսաստան, Բուլղարիա¹¹, հիմնահատակ ավերվեցին 8000 գյուղեր, 100000 մարդ խեղանդամ դարձավ, անօթևան մնացին 300000 հոգի, բռնի կրոնափոխվեցին 40000 մարդ¹²:

Ջարդերից հետո եվրոպական պետությունների դեսպանները «պատասխան» են պահանջում: Բայց արյունարբուն. «...բոլորին կարողացավ համոզել, - իր հուշերում գրում է Զիա բեյը, - որ դժբախտությունից չափազանց ցնցված է և մեղավորներին պատժելու համար կօգտագործի բոլոր միջոցներն ու իր ողջ իշխանությունը: Նայելով նրան, կարելի էր կարծել, թե այդ խորամանկ մարդը իրոք ափսոսում է անբախտ զոհերի համար»¹³:

¹⁰ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1967, էջ 333:

¹¹ **Завриев Д. С.**, К новейшей истории северо-восточных вилайетов Турции. Тбилиси, 1947, стр. 142.

¹² Նույն տեղում:

¹³ “Убийца на троне”. Петроград, 1918, стр. 222.

XIX դարի երկրորդ կեսը Կարինի նահանգի հայության ծանր ժամանակահատվածներից էր: Կրելով «հավիտենական հիվանդի» հայաջինջ քաղաքականության դաժան հարվածները՝ կարինահայությունը ոտք էր դնում առավել բախտորոշ մի հարյուրամյակ, երբ հարցականի տակ էր դրվելու իր ֆիզիկական գոյության խնդիրը:

Այսպիսով, նահանգի ժողովրդագրության փոփոխությունների վրա մեծ ազդեցություն ունեին.

Ա. տնտեսական հալածանքները, որոնց պայմաններում արևմտահայությունը, ընկնելով դժոխային կացության մեջ, ֆիզիկական գոյության պահպանության համար դիմում էր գաղթի կամ ուժացման տարբերակներին:

Բ. Քաղաքական անկարելի վիճակը, անձի գույքի անապահով կացությունը, կրթության, մշակույթի նկատմամբ իշխանությունների թշնամական քաղաքականությունը ստիպում էին մոռացության մատնել ազգայինը, հայկականը, և արևմտահայությունը կանգնում էր օսմանիզմի քաղաքականության գոհերի շարքում:

Գ. Պարտադրված կրոնափոխությունը, եվրոպացի քարոզիչների նկատմամբ պետական հովանավորչությունն ունենում էին այն արդյունքը, որ տարեցտարի արևմտահայության նորանոր խմբեր հեռանում էին ազգային կյանքից, խարխվում էր հայության հոգևոր, քաղաքական միասնությունը, մեծանում էր ծուլման հավանականությունը, դյուրացվում էր օսմանլի ազգի ձևավորման գործընթացը:

Դ. Թուրքացման քաղաքականությանը մեծապես նպաստում էին XVI դարից գործադրության ընդունված, պետականորեն իրականացվող արշավանքները դեպի Արևմտյան Հայաստան, որոնք ղեկավարում էին պետական բարձրաստիճան պաշտոնյաներն ու կրոնական առաջնորդները: Այդ արշավանքների արդյունքում ասպարեզից վերանում էին հարյուրավոր գյուղեր, հայրենի բնակավայրերը դառնում էին քոչվորական ցեղերի բնակատեղի, հայ բնակչությունը բռնի կրոնափոխվում էր:

Ե. Ժողովրդագրության փոփոխության գործում նշանակալի արդյունք էր տալիս հալածանքների, բռնազավթումների տարափի տակ ընկած հայ բնակչությանը հովանավորչության պարտադրումը, երբ գյուղերին, քաղաքներին, վականներին տեր ճանաչված քուրդ և թուրք բեկերը ժամանակի ընթացքում փոխում էին գյուղերի անունները, իսկ գյուղերի հայ բնակչությունը, առերես ընդունելով պարտադրանքը, գաղտնի պահպանում էր իր հավատը,

ավանդույթները: Այսպես առաջացան կեսկես կոչվածները, որոնք չէին հաշվվում որպես հայեր:

Զ. Բնակչության ազգային կազմի փոփոխության վրա ազդում էին նաև մահմեդականների պետականորեն կազմակերպված ներգաղթերը, երբ գոյության պահպանության միջոցներից զուրկ հարստահարիչների այդ բանակն ուղղվում էր հայկական գյուղերի վրա, որի հետևանքով, ունենալով իշխանությունների հովանավորությունը, գաղթականները տեր էին դառնում հայկական գյուղերին, հայերի ունեցվածքին՝ բնիկներին ստիպելով կամ գաղթել, կամ ընդունել իրենց «հովանավորությունը»:

Է. Ժողովրդագրության փոփոխությունների վրա իրենց կործանիչ ազդեցությունն էին ունենում պարբերաբար կրկնվող բացահայտ ու գաղտնի կոտորածները:

Ը. Պետական հայաջինջ քաղաքականությանը նպաստում էին նաև հրապարակված բարենորոգումների, 61-րդ հոդվածի իրագործման լծակների բացակայությունը, «հայասեր» եվրոպական տերությունների ու ցարիզմի կողմնակալ քաղաքականությունը, երբ թուրքական հանցագործ վարչակարգերը հնարավորություն էին ստանում անարգել իրականացնելու Արևմտյան Հայաստանը հայաթափելու պետական ծրագիրը:

Թ. Հիմնահարցի խորացման վրա իր բաժին ազդեցությունն ունեցավ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը, երբ արշավող ու նահանջող թուրքական բանակի բիրտ հարվածներից ոչնչացան բազմաթիվ հայկական բնակավայրեր ու գյուղեր:

Ժ. Հայակոլ պետական քաղաքականության դեմ պայքարելու նպատակով բարեգործականի անվան տակ գործող հայկական կազմակերպությունները, միություններն ու ընկերությունները, քաղաքական կուսակցություններն անկարող եղան ծավալելու լիարժեք գործունեություն, որի պատճառով արևմտահայությունը զրկվեց ինքնապաշտպանության, հայակործան քաղաքականությանը դիմադրելու հնարավորությունից:

ПРИЧИНЫ ДЕМОГРАФИЧЕСКИХ ИЗМЕНЕНИЙ В КАРИНСКОЙ ГУБЕРНИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX - НАЧАЛЕ XX ВЕКОВ

Социально-экономические и политические отношения не имели другой цели, кроме влияния на демографические показатели, чтобы было обеспечено количественное преимущество народа-завоевателя.

Путем анализа мы пришли к тому выводу, что в данных условиях становилась необходимой борьба за выживание западных армян, осуществляемое противодействие уничтожающей политике.

Ключевые слова – Губерния, причина, Турция, Европа, капитал, реформа, куран, государственный, хозяйство, христиане.

THE CAUSES OF DEMOGRAPHIC CHANGES IN THE PROVINCE OF KARIN IN THE SECOND HALF OF THE XIX AND BEGINNING OF THE XX CENTURIES

HOVANNES ZADIGYAN

The Socio-economic and political relationships had to exert an impact on the demographic data, in order to ensure quantitative advantages for the people who had conquered.

Through investigations, we concluded that in similar circumstances, it has become a necessity for the Western Armenians to fight for survival, an achievable counteraction to the destructive policy.

Key words – Province, reason, Turkey, Europe, capital, reform, Koran, government, economy, Christian.

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԴԵՐԸ

ԼԻԼԻԹ ՄԱՏԻՆՅԱՆ

Ամփոփելով Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը բանաձևերի ու հայտարարության մակարդակով՝ կարող ենք ասել, որ թեև դրանք չունեն նորմատիվային բնույթ, բայց չափազանց կարևոր ու լուրջ դեր են խաղում ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացում:

Բանալի բառեր – դատապարտում, ճանաչման գործընթաց, Հայ դատի հանձնախմբեր, լրբբիստական գործունեություն, տարածքային ամբողջականություն, իրավական պետություն, բանաձև, փոքրամասնությունների խտրականություն, կուսակցական շահեր:

Հայ ժողովուրդն արդեն մի քանի տասնամյակ պայքարում է Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և նրա հետևանքների հաղթահարման համար: Չնայած Թուրքիան համառորեն ժխտում է այդ իրողությունը, այնուամենայնիվ, 1960-ական թթ. սկսած՝ նկատելիորեն ուժեղանում է համաշխարհային հանրության հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ:

1965-ից՝ ստալինականության կողմից պարտադրված լուրջությունից հետո, Խորհրդային Հայաստանի կառավարությունը սկսեց ամեն տարի ապրիլի 24-ին նշել Հայոց եղեռնի տարելիցը: 1988թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Օրենք Օսմանյան Թուրքիայում հայերի 1915թ. ցեղասպանության դատապարտման մասին»¹:

Հայոց ցեղասպանության հարցը դառնում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնաժողովի քննարկման առարկա: 1975-1983 թթ. սկսվում է ահաբեկչության շրջանը, որն իրագործվում էր երկու տարբեր, հաճախ նաև ընդդիմադիր ուժերի՝ ԱՍԱԼԱ-ի և դաշնակցության «Հայ դատի պաշտպան» ընդհատակյա խմբերի կողմից: Թուրք դիվանագետները դարձան այս ահաբեկչական գործողությունների հիմնական նշանակետը: Ահաբեկչության մեղադրյալների դատավարությունները «հնարավորություն տվեցին լսելի

¹ **Կիրակոսյան Ա.**, Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 2006, էջ 35:

դարձնել ահաբեկչության պատճառներ հանդիսացող հանգամանքները և դատարաններում հավաքված փորձագետներին կրկին ցույց տալ ցեղասպանության էությունը կազմող փաստերն ու գործերը»²:

Հայկական համայնքներում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում հատկապես մեծ է Հայ դատի հանձնախմբերի գործունեությունը: Սակայն այդ գործընթացում նրանց դերի և մասնակցության մասին ևս շատ քիչ նյութեր կան, քանի որ դրանք հրապարակման ոչ ենթակա նյութեր են՝ հաշվի առնելով անվտանգության և դրանց գաղտնիության պահպանման գործոնները: Այդ իսկ պատճառով կփորձենք տալ նրանց գործունեության ընդհանուր բնութագիրը:

Հայ դատի հանձնախումբը 1945 թ. իր գրասենյակն է հիմնում Նյու Յորքում և սկսում ձեռնարկել իր աշխատանքները: Հայ դատի հանձնախմբի առաջին մտահոգությունը եղավ պետություններին հիշեցնել Հայ դատի գոյությունը և նրա լուծման անհրաժեշտությունը: Նրա գլխավոր նպատակն էր վերականգնել հայ ժողովրդի ոտնահարված իրավունքները, պաշտպանել նրա պահանջներն ու ազգային ձգտումները³:

Հայ դատը հայ ժողովրդի ազգային գլխավոր իրավունքների վերականգնման հարցն է: Հայ դատի կարևոր խնդիրներից է համարվում Սփյուռքի տարագիր հայության համախմբումն իր հայրենի հողերի վրա, ինչպես նաև «Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի կերտումը»⁴:

Հ. Յ. Դաշնակցության Հայ դատի հանձնախմբերն այդ անունով գործում են շուրջ չորս տասնամյակից ի վեր: Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի կապակցությամբ 1965 թ. Սփյուռքի մի շարք համայնքներում կազմվում են հատուկ հանձնախմբեր, որոնք ՀՅԴ Հայ դատի հանձնախմբեր անունով գործում են նաև եվրոպական մի շարք երկրներում, ինչպես օրինակ՝ Անգլիայում, Ավստրիայում, Բելգիայում, Բուլղարիայում, Գերմանիայում, Իտալիայում, Հոլանդիայում, Հունաստանում, Շվեդիայում, Ռուսաստանում և Ֆրանսիայում:

Վերջին տասնամյակներում միջազգային քաղաքական կյանքի կարևո-

² **Տերոն Իվ**, Անպատժելիություն, վրեժ և ժխտում. Հայկական ցեղասպանությունը միջազգային աստիճանների առջև, Երևան, 2003, էջ 33:

³ Տե՛ս **Հովհաննիսյան Է.**, Հայ Դատի խնդիրները և դրանց լուծման ուղիները, Երևան, 2003, էջ 5:

⁴ Այժմ պետք է քարոզչությունը հասցեագրել թուրքերին, Հայ Դատն այսօր (Յօդաձևերի ժողովածու), Թեհրան, 2005, էջ 98:

րագույն մայրաքաղաքներում՝ Վաշինգտոնում, Բրյուսելում, Մոսկվայում ՀՅԴ-ն հաստատել է Հայ դատի գրասենյակներ (Armenian National Committee of America, Общественная организация “Русско-армянское содружество” և այլն): Մոսկվայի գրասենյակը բացվել է 1993 թ. և հիմնականում գործում է որպես Դաշնակցության Բյուրոյի քաղաքական գրասենյակ: 2010 թ. Հայ դատի գրասենյակներ են բացվել Փարիզում և Սիդնեյում, վերականգնվել է Բուլղարիայի հանձնախումբը, կազմվել է Իսպանիայի հանձնախումբը:

Այսօր Հայ դատի հանձնախումբը Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության հասարակական աշխատանքների և կառավարական հարաբերությունների ազգային կառույցն է: Նպատակն է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, արևմտահայկական հողերի կցումը Հայաստանի Հանրապետությանը, տարագիր հայության վերադարձը Հայրենիք: Հայ դատ հասկացությունն ընդգրկում է հայ ժողովրդի հիմնախնդիրների տարբեր ուղղություններ՝ քաղաքական, տարածքային, իրավական և սոցիալ-տնտեսական՝ հիմնական գործելակերպ ունենալով լոբբիստական գործունեությունը: Հանձնախմբի գործունեության մեջ մեծ տեղ է զբաղեցնում Հայոց ցեղասպանության բլոկը: Հայ դատի իրականացման գործունեության առաջին փուլը կարելի է համարել Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը: Նախատեսված ճանաչման և դատապարտման համար գոյություն ունի մի քանի իրավական ձև և ճանաչման տարածման շրջանակ՝ ա) ճանաչում պետության կողմից (իրավական ակտի կամ հայտարարության ձևով), բ) դատապարտում, գ) ճանաչում ֆեդերալ պետության ֆեդերալ օկրուգի մասշտաբով, դ) ճանաչում միջազգային կազմակերպությունների կողմից:

Այս չորս ձևերով Հայոց ցեղասպանությունը ճանաչել են աշխարհի շուրջ երեսուն պետություն և կազմակերպություն, ինչպես նաև ֆեդերալ պետությունների տասնյակ ֆեդերալ շրջաններ ու քաղաքներ: Հայ դատի հանձնախմբերի գործունեությունն այս ուղղությամբ նպատակ է հետապնդում ստեղծել միջազգային համապատասխան օրենսդրություն:

Բելգիահայ շուրջ 7000-ոց համայնքի կատարած աշխատանքների շնորհիվ էլ 1998 թ. Բելգիայի Խորհրդարանը ճանաչել է Թուրքիայում հայերի ցեղասպանության փաստը⁵: Բելգիայի Սենատը 1997-1998 թթ. նստաշրջանում անդրադարձել է հայերի ցեղասպանության հարցին: Սենատը, իր քննարկումներում նկատի ունենալով XX դարի սկզբին Թուրքիայում հայ ազգա-

⁵ Տե՛ս Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2013, էջ 115:

քնակչության իրավիճակին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունները, ինչպես նաև ՄԱԿ-ի ցեղասպանությունը կանխելու և դատապարտելու մասին կոնվենցիան և դատական այն վճիռները, որոնք վերաբերում են 1915 թ. Թուրքիայում ապրող հայերին, մասնավորապես 1995 թ. հունիսի 21-ին Փարիզում գերագույն դատական ատյանի կայացրած որոշումը և 1987 թ. հունիսի 18-ի Եվրախորհրդարանի ընդունած բանաձևը, որը վերաբերում է «Հայկական հարցի քաղաքական լուծմանը» և որտեղ ասվում է, որ Թուրքիայում ապրող հայերն Օսմանյան կայսրությունում 1915 թ. ենթարկվել են ցեղասպանության, գտնում է, որ չպետք է կասկածել այն պատմական իրողության վրա, որ վերաբերում է հայերի կազմակերպված և համակարգված սպանություններին: Սենատը այն համոզմունքն է հայտնում, որ անցյալի սխալների և ոճիրների ճանաչումը հաշտություն կստեղծի ժողովուրդների միջև, և որ առանց արդարության չի կարող խաղաղություն լինել ո՛չ Հայաստանում և ո՛չ էլ այլ վայրերում⁶:

Բելգիայի Դաշնային խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի «Ժողովրդավար ֆրանկոֆոն ֆեդերալիստներ» (FDF) խմբակցությունը 2015 թ. մայիսի 2-ին Հայոց ցեղասպանության ժխտման համար պատիժ նախատեսող օրինագիծ է ներկայացրել: Ցեղասպանության ճանաչման հարցով քննարկումները վերադառնում են Ներկայացուցիչների պալատի օրակարգ: FDF-ի կողմից ներկայացված նախագծի համաձայն՝ նախատեսվում է ընդլայնել 1995թ. ընդունված՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին գերմանական սոցիալ-դեմոկրատական՝ նացիստական ռեժիմի կողմից իրականացված ցեղասպանության (Հոլոքոստի) հերքումը կամ արդարացման փորձերը քրեականացնող օրենքի գործողության ոլորտը: Դրանով առաջարկվում է օրենքը տարածել նաև հայերի դեմ ու Ռուանդայում իրականացված ցեղասպանությունների, ինչպես նաև միջազգայնորեն և իրավականորեն ճանաչված այլ ցեղասպանությունների հերքման դեպքում:

FDF խմբակցության կողմից նախատեսվում է նույնօրինակ նախագիծ ներկայացնել Բրյուսելի մայրաքաղաքային տարածաշրջանի խորհրդարան՝ Հայոց ցեղասպանությունը տարածաշրջանի և Բելգիայի ֆրանսիական համայնքի մակարդակով ճանաչելու նպատակով⁷:

⁶ St' u Genocid arмян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Т. 2, ч. 1. Москва, 2003, стр. 740:

⁷ St' u Բելգիայի խորհրդարանը ցանկանում է քրեականացնել Ցեղասպանության

2000 թ. նոյեմբերի 10-ին Հռոմի Հովհաննես Պողոս Բ Պապի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի համատեղ հայտարարության մեջ դատապարտվում էր քսաներորդ դարի սկզբին հայերի դեմ իրականացված ոճրագործությունը: Հայտարարության մեջ ասվում էր. «Հայոց ցեղասպանությունը նախերգանքն էր այն ողբերգական իրադարձությունների, որին հաջորդեցին երկու համաշխարհային պատերազմներ, անհամար տարածաշրջանային կոնֆլիկտներ, կանխամտածված ոչնչացման կազմակերպված արշավներ, որոնք միլիոնավոր հավատացյալների կյանքեր արժեցան»⁸: Համանման հայտարարությամբ Նորին Սրբությունը հանդես է գալիս նաև 2001 թ. սեպտեմբերի 27-ին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հրավերով գտնվում էր Հայաստանում⁹:

Տրանսիսկոս պապը ապրիլի 14-ին մատուցված նոր պատարագի ընթացքում պատասխանել է թուրքական կողմի բողոքներին: Նա նշել է, որ եկեղեցու ուղին անկեղծությունն է: Այն պետք է ազատ խոսի: Չկա այլ ճանապարհ, քան ասել ճշմարտությունը, նույնիսկ՝ դառը: Նա բոլոր իր հետևորդներին կոչ է արել ասել ճշմարտությունը և չվախենալ դրա համար¹⁰:

1997 թ. նոյեմբերի 18-ին Միլանի քաղաքային խորհուրդը որոշում է ընդունում, որտեղ ասվում է, որ 1998 թ. լրանում է թուրք զինվորականների կողմից ձեռնարկված հայ ժողովրդի կոտորածների ուսուներեքերորդ տարեկիցը, և նշում է, որ մեկուկես միլիոն մարդու կյանք խլած այդ հանցագործությունը 1985 և 1986 թթ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների ենթահանձնաժողովի և 1987 թ. Եվրախորհրդարանի կողմից ճանաչվել է իբրև ցեղասպանություն: Միլանի քաղաքային խորհուրդը դիմում է Իտալիայի կառավարությանը՝ ճանաչելու հայերի ցեղասպանությունը ՄԱԿ-ի, Եվրախորհրդարանի, ԱՄՆ Ծերակույտարանի և բազմաթիվ այլ ազգերի կողմից արդեն ընդունված որոշումների հիման վրա: Քաղաքային խորհուրդն իր լիարժեք համերաշխությունն է արտահայտում հայ ժողովրդին՝ պատմական ճշմարտության ճանաչման ու իր անքակտելի իրավունքների պաշտպանությանն ուղղված պայքարում¹¹:

ժխտումը, <http://yerevan.today/am/article/2662>:

⁸ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Т. 2, ч. 1, стр. 815.

⁹ Նույն տեղում, էջ 834:

¹⁰ http://it.radiovaticana.va/news/2015/04/13/francesco_chiesa_abbia_coraggio_di_parlare_con_franchezza/1136329 կամ <http://www.panarmenian.net/arm/news/190656/>.

¹¹ Տե՛ս Իտալիայի Խորհրդարանի Փոքր պալատում Հայոց ցեղասպանության ճանաչ-

2000 թ. հունիսի 16-ին Հռոմի Քաղաքային խորհուրդը, որն արդեն երեսուներկուերորդ իտալական քաղաքն էր, միաձայն որոշում է ընդունում՝ դիմելով իտալական կառավարությանը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչով: Քաղաքային խորհուրդը նշում է, որ ցեղասպանությունը բոլոր հանցագործություններից ամենահրեշավորն ու անմարդկայինն է, որն ուղղված է ամբողջ ազգի, նրա մշակույթի և պատմության ոչնչացմանը¹²: Մինչ այդ համանման որոշումներ էին ընդունել Ֆլորենցիայի, Պադովայի, Իմոլայի և տասնյակ այլ իտալական մեծ ու փոքր քաղաքների խորհուրդներ: Եվ ի վերջո, նման ընդունված որոշումներն իրենց արդյունքը տալիս են:

Իտալիայի պատգամավորների պալատը նշում է նաև, որ վերջին բանաձևն առնչվում է հայ ժողովրդի վերաբերյալ հարցերին՝ հատուկ նշանակություն ունեցող երեք կետերով՝ «մենք կոչ ենք անում հայ փոքրամասնության (Օսմանյան կայսրությունում) նկատմամբ ցեղասպանության ճանաչմանը, որն իրականացվել է մինչև ժամանակակից Թուրքիայի Հանրապետության ստեղծումը (կետ 10): Կովկասում գտնվող Թուրքիայի հարևանների հետ հարաբերությունների բարելավումը, որն առաջարկվել է իր՝ Թուրքիայի կառավարության կողմից (կետ 20) և, ի նպաստ ԵՄ – Թուրքիա հարաբերությունների երկկուսակցական խորհրդարանական հանձնաժողովի նախագահի կողմից 21-րդ կետում առաջ քաշված առաջարկության, հրավիրում ենք Թուրքիայի կառավարությանը՝ բանակցություններ սկսելու Հայաստանի Հանրապետության հետ, վերականգնելու դիվանագիտական և առևտրային հարաբերությունները, ինչպես նաև վերջ դնելու ներկայիս շրջափակմանը»¹³: Պատգամավորների պալատը հետևաբար, նկատի ունենալով Եվրախորհրդարանի այս բանաձևը, կոչ է անում Իտալիայի կառավարությանը եռանդաբար հետամուտ լինել այդ տարածաշրջանի (այսինքն՝ Կովկասի) ժողովուրդների և փոքրամասնությունների միջև եղած լարվածությունների թուլացմանը՝ ստեղծելու երկու պետությունների տարածքային ամբողջականության պատշաճ պահպանում, խաղաղ համակեցություն՝ այդպիսով ավելի արագացնելով Թուրքիայի և ամբողջ տարածաշրջանի ինտեգրումը եվրոպական համայնք¹⁴:

ման նախագծի 2000 թ. ապրիլի 3-ի քննարկումները, Երևան, 2001, էջ 3:

¹² St' u Genocid arмян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Т. 2, ч. 1, стр. 808.

¹³ Նույն տեղում, էջ 817:

¹⁴ St' u նույն տեղում:

Հայոց ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ Իտալիայում Տոսկանայի նահանգը մարտի 25-ին խորհրդարանական նիստում ընդունել է բանաձև, որով զորակցություն է հայտնել հայ ժողովրդին: Բանաձևը ներկայացրել են Մաուրո Ռոմանելլին, Դանիելա Լասթրին եւ Ջանլուկա Լաձձերին: Բանաձևում ասվում է, որ այն պետք է ուղարկվի Հռոմի հայ համայնքի խորհրդի քարտուղարությանը, որպեսզի այն փոխանցեն Հայոց ցեղասպանության թանգարան¹⁵:

Նիդեռլանդների Խորհրդարանի Գլխավոր ասամբլեայի երկրորդ պալատը 2004 թ. դեկտեմբերի 21-ին ընդունել է բանաձև Հայոց ցեղասպանության ճանաչման մասին: Մնալով այն կարծիքին, որ այս ամենի հետ անխզելիորեն կապված է սեփական պետության պատմության ճշմարտացի ընդունումը՝ Պալատը խնդրում է կառավարությանը Թուրքիայի հետ իր երկխոսության շրջանակներում շարունակաբար և ստիպողաբար բարձրացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը¹⁶:

Նիդեռլանդների Խորհրդարանի Ներկայացուցիչների պալատը ապրիլի 9-ին ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընդունել է որոշում, որով կարևորվում է Թուրքիայի և Հայաստանի կողմից իրենց պատմության վերաբերյալ ընդհանուր համաձայնության ձեռքբերումը: Հանձնարարվում է կառավարությանը, 2004թ. որոշմանը համահունչ, երկկողմանիորեն և ԵՄ համատեքստում շարունակել կոչ անել Թուրքիայի կառավարությանը նոր խթան հաղորդել Հայաստանի հետ մերձեցմանը և հաշտեցման եզրեր փնտրել Հայաստանի կառավարության հետ¹⁷:

2015 թ. ապրիլի 24-ին Բունդեսթագն իր 101-րդ նիստը մեկնարկել է Հայոց ցեղասպանության մասին որոշման քննարկմամբ: Օրակարգում ներառված հարցը կոչվում էր «1915/1916թթ. հայերի զանգվածային սպանություններն ու տեղահանությունները»: Քննարկումը տևել է մեկ ժամ, որի ընթացքում երեք զեկույցով են հանդես եկել Քրիստոնեադեմոկրատական միությունը (ԲԴՄ), Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և Ձախակողմյանների

¹⁵ Իտալիայի Տոսկանայի նահանգը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, <http://news.am/arm/news/259018.html>.

¹⁶ Տե՛ս Գեոցիդ армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Т. 2, ч. 2. Москва, 2005, стр. 62.

¹⁷ Նիդեռլանդների Խորհրդարանի Ներկայացուցիչների պալատն ընդունել է Հայոց ցեղասպանության մասին որոշում, <http://armenpress.am/arm/news/801195/niderlandnerikhorhrdarani-nerkayacucichneri-palatn-yndunel.html>.

կուսակցությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձև է ներկայացրել նաև «Դաշինք 90-Կանաչներ» քաղաքական ուժը, որոնց խմբակցության ղեկավարն ազգությամբ թուրք Ջեմ Օզդեմիրն է: Ըստ նրա՝ Գերմանիան, որպես հայերի ցեղասպանության մեջ իր մասնաբաժինն ունեցող երկիր, պետք է բացահայտ անդրադառնա այդ հարցին: Այնուամենայնիվ, Գերմանիայի Բունդեսթագը գտնում է, որ Թուրքիան աստիճանաբար մոտենում է եվրոպական մշակույթին¹⁸:

2010թ. մարտի 11-ին Շվեդիայի Խորհրդարանը՝ Ռիկսդագը, կրկին անդրադառնալով Հայոց ցեղասպանությանը, բանաձև է ընդունել, որով ճանաչում է 1915թ. Օսմանյան Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանությունը¹⁹:

2015 թվականի ապրիլի 22-ին Ավստրիայի Խորհրդարանը Հայոց ցեղասպանության մասին հայտարարություն է ընդունել: Հայտարարությունը սահմանում է, որ 1915-ին Օսմանյան կայսրությունում հայերի հետ կատարվածը ցեղասպանություն է, և «Թուրքիայի պարտականությունն է անկեղծորեն առերեսվել իր անցյալի մութ ու ցավալի դրվագի հետ և Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրագործված հանցագործությունը որպես ցեղասպանություն ճանաչել»²⁰:

2015 թ. մայիսի 6-ին Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության Խորհրդարանը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև: Մինչև այս բանաձևը Լյուքսեմբուրգը չէր անդրադարձել Հայոց ցեղասպանությանը: Պատգամավոր Լորենթ Մոսարը նշել է, որ կարևոր է մատնանշել իրականացված դաժան ցեղասպանությունն ու հատկապես հարգել հարյուր հազարավոր զոհերի հիշատակը²¹:

Հոլոքոստից հետո 1915 թվականի հայերի ցեղասպանությունը համարվում է արդի ժամանակների ամենաուսումնասիրված գործը, որտեղ անուրանալի մեծ է Հայ դատի հանձնախմբերի դերը:

¹⁸ Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Т. 2, ч. 2, стр. 62.

¹⁹ Շվեդիայի խորհրդարանի բանաձևը, <http://www.parliament.am/library/cexaspanutyun/36.pdf>.

²⁰ Վիեննայի քաղաքային խորհուրդը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, <http://armeningenocide100.org/vienna-city-council-recognizes-the-armenian-genocide/>

²¹ <http://www.tageblatt.lu/nachrichten/welt/story/20770512>

Եվրոպական բազմաթիվ երկրներ ունեն Հայոց ցեղասպանությունը չճանաչելու սեփական պատճառները. առաջինը քաղաքական կուսակցությունների շահերի առկայությունն է. այդ կուսակցությունները չեն ուզում գրգռել և կորցնել իրենց թուրք ընտրողներին, այդ իսկ պատճառով հաճախ դեմ են արտահայտվում Ցեղասպանության ճանաչմանը: Երկրորդ՝ Ցեղասպանության ճանաչումը կրեթի Ցեղասպանության միջազգային հետազոտությունների, որն էլ, իր հերթին, կվկայի Օսմանյան կայսրությանն աջակցած որոշ պետությունների մասին:

Հայ ժողովուրդն արդեն մի քանի տասնամյակ պայքարում է Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և նրա հետևանքների հաղթահարման համար: Սակայն պետք է նշել, որ Թուրքիան ոչ միայն պատրաստ չէ ընդունել իր մեղքն ու հատուցել, ինչպես Գերմանիան՝ հրեական Հոլոքոստի պարագայում, այլև պետական մակարդակով շարունակում է ժխտել սեփական հանցագործությունը և նույնիսկ գործուն քայլեր է ձեռնարկում՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարբեր խորհրդարաններում ընդունվող բանաձևերը տապալելու համար: Մինչև ՀՀ-ի անկախության հռչակումը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված տվյալ մարտավարությունը եղել է արդարացված և ընդունելի, բայց դրանից հետո այն բավարար չէր միջազգային իրավունքի սուբյեկտ պետության և իրավագրված ազգի շահերի պաշտպանության համար: Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման առաջադրանքն այժմ հռչակված է Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը: Հայկական համայնքներում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում հատկապես մեծ է Հայ դատի հանձնախմբերի գործունեությունը:

ПРОЦЕСС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН В ЕВРОПЕЙСКИХ СТРАНАХ И РОЛЬ КОМИТЕТОВ "АЙ ДАТА"

МАТИНЯН Л.В.

Армянский народ, уже несколько десятилетий борется за признание и осуждение геноцида армян, а также преодоление его последствий. Однако, нужно отметить, что Турция не только не готова признать свою вину, и возместить ущерб, как Германия в случае с Холокостом, но и на Государственном уровне продолжает отрицать свое преступление, и даже предпринимает дейст-

венные шаги для препятствия принятия в парламентах различных стран законопроект относительно геноцида армян. До провозглашения Независимости Республики Армения политика направленная на продолжение последствий геноцида была оправдана и приемлема. Но затем стала недостаточно эффективной для защиты интересов международных прав государства-субъекта и нации, лишенной своих прав. Задача признания и осуждения геноцида армян ныне провозглашена одной из первостепенных задач внешней политики Армении. В процессе признания и осуждения геноцида армян в Армянской диаспоре особенно важна деятельность комитетов "Ай Дата". Обобщая признания и осуждения геноцида армян на уровне резолюций и заявлений можно сказать, что несмотря на то, что они не нормативного характера, однако играют очень важную и серьезную роль в процессе признания и осуждения геноцида армян.

Ключевые слова - осуждение, процесс признания, комитеты "Ай Дата", Лоббистская деятельность, территориальная целостность, правовое государство, формула, дискриминация меньшинств, партийные интересы.

THE ARMENIAN GENOCIDE'S RECOGNITION BY THE EUROPEAN COUNTRIES AND THE ROLE OF "HAY DAT" COMMITTEES

LILIT MATINYAN

The Armenian people have been for several decades striving for the recognition and condemnation of the Armenian Genocide, and struggling to overcome its consequences.

Nevertheless, it should be mentioned, that Turkey is not ready to accept its guilt yet and consequently compensate for committing the persecution and genocide of the Armenians as Germany did in the case of the Jewish Holocaust. Furthermore, Turkey continues to deny the crime it has committed at the state level and is trying to exert pressure and threats on the countries whose parliaments recognize the Armenian killings as Genocide.

Prior to the proclamation of the independence of the Republic of Armenia, a policy aimed at overcoming the consequences of the genocide was justified and acceptable. Later, it was not effective enough to protect the interests of a state, subject of international law and of a nation deprived of its rights. In Armenia's foreign policy, priority is currently given to the issue of the Armenian genocide's recognition and condemnation. The activities of the committees of "Hay Dat" in all armenian diasporas all over the world are of great importance.

Summarizing, it should be affirmed that the recognition and condemnation of the Armenian Genocide, on the level of resolutions and statements, though deprived of normative character, still play a major and serious role in the Armenian Genocide recognition and condemnation process.

Key words – condemnation, the process of recognition, Committees of "Hay Dat", lobbying activities, territorial integrity, legal state, formula, discrimination of minorities, interests of parties.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԻՍԼԱՆԴԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՁՈՂԱԶԿՆԱՅԻՆ ՊԼԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 1972-75 ԹԹ.

ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իսլանդիայի և Մեծ Բրիտանիայի հակամարտությունը 1958-1975 թթ. ստացել է «ձողածկնային պատերազմներ» անվանումը: Իսլանդիան ձգտում էր իր ափամերձ ջրային տարածքներում ձողածկան որսի մենաշնորհի ստանալ՝ սահմանափակելով այլ երկրների ձկնորսական նավերի ներկայությունն իր ջրային տարածքներում: Իր նպատակին հասնելու համար Իսլանդիան որդեգրել էր սպառնալիքի քաղաքականությունը՝ խոստանալով պահանջել դուրս բերել իր երկրում տեղակայված ՆԱՏՕ-ի ռազմակայանը, որն ուներ կարևոր ռազմավարական նշանակություն Սառը պատերազմի պայմաններում: Ի վերջո, Իսլանդական սպառնալիքներն արդյունք են տալիս, և ՆԱՏՕ-ի միջամտությամբ բրիտանական իշխանությունները ճանաչում են Իսլանդիայի իրավունքներն ափամերձ 200 ծովային մղոն տարածքում:

Բանալի բառեր – ձողածկնային պատերազմներ, Իսլանդիա, Մեծ Բրիտանիա, Կեֆլավիկ, ծովային մղոն, հատուկ տնտեսական գոտի, ՆԱՏՕ, Սառը պատերազմ, փոքր պետություններ:

Ձողածկնային պատերազմները, իսլանդերեն՝ ֆորսքաթրիվին, մի շարք առճակատումներ էին Միացյալ Թագավորության և Իսլանդիայի միջև Հյուսիսատլանտյան շրջանում ձկնորսական իրավունքների շուրջ: Այդ վեճերից յուրաքանչյուրն ավարտվեց Իսլանդիայի հաղթանակով: Ձողածկնային վերջին պատերազմն ավարտվեց Իսլանդիայի համար ավելի բարենպաստ համաձայնագրով, քանի որ Միացյալ Թագավորությունը ստիպված էր զիջել 200 ծովային մղոն (370 կմ) երկարությամբ բացառիկ ձկնորսության գոտին: Պատճառը իսլանդական սպառնալիքներն էին, որոնց համաձայն՝ Իսլանդիան պատրաստ էր դուրս գալու ՆԱՏՕ-ից, որով կվտանգվեր ՆԱՏՕ-ի մուտքը ֆարերաիսլանդական սահմանագիծ, որը հակասուզանավային կարևոր հատված էր Ատլանտյան օվկիանոսում Սառը պատերազմի տարիներին: Արդյունքում բրիտանական ձկնորսական ընկերություններին արգելվեց մուտք գործել

ձողաձկներով հարուստ տարածքներ, ինչը հանգեցրեց մեծ ցնցումների և հազարավոր աշխատատեղերի կորստի:

Ուսումնասիրողներն առանձնացնում են 3 ձողաձկնային պատերազմ XX դարում՝ 1958-1961 թթ. 12 մղոն ձկնորսական գոտու, 1972-1973 թթ. 50 մղոն ձկնորսական գոտու և 1975-1976 թթ. 200 մղոն ձկնորսական գոտու համար մղված պատերազմ: Առանձնացվում է նաև 1952-1956 թթ. տեղի ունեցած պրոտո կամ նախաձողաձկնային պատերազմ, որը հիմքեր նախապատրաստեց առճակատման ընդլայնման համար: Ձողաձկնային պատերազմներն իրականում ամբողջական պատերազմներ չէին: Դրանք ավելի ճիշտ կլինի անվանել ռազմականացված միջպետական վեճ (militarized interstate dispute): Ողջ ընթացքում պաշտոնապես տեղեկացվել է միայն մեկ գոհի մասին: Ձուռ իսլանդացի ճարտարագետ էր՝ սպանված Երկրորդ ձողաձկնային պատերազմի ընթացքում¹:

Բրիտանա-իսլանդական հակամարտությանը «Ձողաձկնային պատերազմ» անվանումը տվել են բրիտանացի լրագրողները 1958 թ. սեպտեմբերին: Պատճառը ձողաձկան որսորդության համար անհրաժեշտ գոտու համար վեճն էր, քանի որ իսլանդական կողմը ձգտում էր ընդարձակել իր իրավունքները ծովային տարածքների նկատմամբ²:

Որոշ իսլանդացի պատմաբաններ դիտարկում են Իսլանդիայի պատմությունը որպես պայքար իր ծովային ռեսուրսների վերահսկողության համար՝ բաժանելով այն տասը դրվագների (կամ տասը ձողաձկնային պատերազմների): Առաջինը Նորվեգիայի և Անգլիայի միջև վեճն էր 1415-1425 թթ. վերջինիս՝ Իսլանդիայի առևտրի հետ կապված, որը Նորվեգիայի իսլանդական առևտրի մենաշնորհի խախտում էր: Այս վեճն ավարտվեց, երբ անգլիացիները ձերբակալեցին Էրիկ Պորանիացուն՝ վերականգնելով անգլո-իսլանդական առևտուրը: 1976 թ. ձեռք բերված պայմանավորվածությունը (որով ավարտվել է Երրորդ ձողաձկնային պատերազմը) համարվում է վերջնական և տասներորդ ձողաձկնային պատերազմը³:

Պրոտո և Առաջին ձողաձկնային պատերազմների արդյունքում Իսլանդիան հասավ նրան, որ կարողացավ ընդարձակել իր ձկնորսական գոտին

¹ <http://www.yorkshirepost.co.uk/our-region/east-yorkshire/how-the-cod-war-of-40-years-ago-left-a-yorkshire-community-devastated-1-7636401>

² <http://britishseafishing.co.uk/the-cod-wars/>

³ Baldur Thorhallsson, Tómas Joensen «Iceland's External Affairs from the Napoleonic Era to the Occupation of Denmark: Danish and British Shelter», Stjórnmal & Stjórnsysla, p.188

մինչև 12 մղոն: Սակայն իսլանդական կառավարությունը չէր պատրաստվում սահմանափակվել այդքանով⁴:

1972 թ. սեպտեմբերի 1-ին հրապարակվեց նոր օրենք, որով Իսլանդիան հայտարարում էր իր ափերից 50 մղոն հեռավորությամբ գոտու նկատմամբ վերահսկողություն հաստատելու մասին: Այն հետապնդում էր հետևյալ նպատակները.

1. պահպանել ձկան պաշարով հարուստ շրջանները,
2. ավելացնել ընդհանուր որսի՝ Իսլանդիայի մասնաբաժինը:

Պատճառը, որ Իսլանդիան ընդարձակեց իր ձկնորսության գոտին մինչև 50 մղոն, այլ ոչ թե 200 մղոն, ինչի շուրջ ևս ընթանում էին բանավեճեր, այն էր, որ ձկան կուտակման հիմնական շրջանները գտնվում էին հենց 50 մղոնի սահմաններում, և այդ ժամանակ բարդ էր օրենք անցկացնել 200 մղոնի վերաբերյալ⁵:

Մեծ Բրիտանիան վիճարկեց իսլանդական ընդարձակումը՝ ունենալով երկու նպատակ.

1. վիճարկվող ջրերում բրիտանական ձկնորսների համար հասնել ձկնորսության առավելագույն հնարավոր քվոտային,
2. կանխել ձկնորսական գոտու ընդարձակման միակողմանի դե ֆակտո ճանաչումը, որը կարող է դառնալ նախադեպ այլ ընդարձակումների համար⁶:

Արևմտաեվրոպական բոլոր երկրները, ինչպես նաև Վարշավայի պակտի պետությունները դեմ դուրս եկան այս օրենքին: Աֆրիկյան երկրները կողմ արտահայտվեցին իսլանդական ընդարձակմանն այն բանից հետո, երբ Իսլանդիայի վարչապետը 1971թ. հանդիպմանը հայտարարեց, որ իսլանդական նախադեպը գաղութացման և իմպերիալիզմի դեմ պայքարի բաղկացուցիչ մասն է կազմում⁷:

Օրինագծի ընդունման առաջին օրը բրիտանական ու գերմանական մի

⁴ Guðmundsson, Guðmundur Hörður. 15. Annað þorskastríðið. Tímabilið 19. maí 1973 til nóvember 1973. (PDF). Short essay for history class at University of Iceland. Retrieved 15 March 2013.

⁵ Hart, Jeffrey A. (1976). The Anglo-Icelandic Cod War of 1972–1973. Berkeley: University of California. pp. 19, 24.

⁶ Guðmundsson, Guðmundur J. (2000). "The Cod and the Cold War". էջ 67–68.

⁷ Ingimundarson, Valur (2002). The settlement with the outside world (Uppgjör við umheiminn). p. 147.

շարք ուղկանապարկակիր նավեր (տրալեր) շարունակում էին ծողածկան որսը նոր գոտում: Իսլանդիայում այդ ընթացքում իշխանության էին եկել ձախակողմյան ուժերը, որոնք անտեսեցին նախկինում ստորագրված համաձայնագիրը, որով նախատեսվում էր Միջազգային դատարանի մասնակցությունը վեճերի լուծման գործում: Ձախակողմյան կոալիցիան հայտարարում էր, որ իրենք կապված չեն կենտրոնական-աջակողմյան ուժերի կողմից ստորագրված համաձայնագրերով՝ շեշտելով, որ անկախության հիմնաքարը տնտեսական անկախությունն է⁸:

Հաջորդ օրը իսլանդական պարեկային նավը, հետապնդելով 16 ուղկանապարկակիր նավերի, հարկադրել է նրանց դուրս գալ 50 ծովային մղոն գոտուց:

Հաջորդ երկու ամիսների ընթացքում լարվածությունը շարունակում է աճել: Իսլանդական կողմը սկսում է կիրառել ցանց կտրող նավեր, որոնք լուրջ վնաս են հասցնում ինչպես բրիտանական, այնպես էլ արևմտագերմանական և այլ պետությունների ձկնորսական նավերին, որոնք ձկնորսություն են իրականացնում 50 ծովային մղոնի սահմանների ներսում:

1973 թ. մայիսի 17-ին բրիտանական ուղկանակիր նավերը լքում են իսլանդական ջրերը՝ վերադառնալով երկու օր անց բրիտանական ֆրեգատների ուղեկցությամբ: Վիճարկվող ջրերում բրիտանական ուժերը կիրառում են Նիմրոդ ծովային պարեկային ինքնաթիռները, որոնք հայտնաբերում էին իսլանդական պարեկային նավերը և այդ մասին հայտնում բրիտանական ֆրեգատներին և ուղկանակիրներին: Իսլանդական ղեկավարությունը, զայրացած թագավորական նավատորմի ներխուժումից, պատրաստվում է դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին կամ կիրառել ՆԱՏՕ-ի կանոնադրության 5-րդ հոդվածը: Ըստ Ֆրեդերիկ Իրվինգի, ով այդ ժամանակ ԱՄՆ-ի դեսպանն էր, Օլաֆուր Յոհաննեսը պահանջել է, որ Միացյալ Նահանգներն ինքնաթիռներ ուղարկեն և ոմբակոծեն բրիտանական ֆրեգատները: Մայիսի 24-ին 1973 թ. Ռեյկյավիկում տեղի ունեցան բողոքի լուրջ ակցիաներ Մեծ Բրիտանիայի դեսպանատան դիմաց, մասնավորապես դեսպանատան բոլոր պատուհանները կտրվել էին, և շենքը գրեթե մատնվել էր կրակի:

Օգոստոսի 29-ին իսլանդական ափամերձ պաշտպանությունը կրեց միակ մարդկային կորուստն այն բանից հետո, երբ իսլանդական պարեկային

⁸ "Interview by the BBC in 1973". Youtube.com 2010թ. դեկտեմբերի 5, <https://www.youtube.com/watch?v=YEIMDdxtSeA&feature=related/>

Նավը ընդհարում ունեցավ բրիտանական ֆրեգատի հետ: Իսլանդական նավի ճարտարագետը մահացավ՝ հոսանքահարվելով իր եռակցման սարքավորումից, երբ ծովի ջուրը լցվեց նավի այն հատվածը, որտեղ նա աշխատում էր:

1973 թ. սեպտեմբերի 16-ին Ջոզեֆ Լանսը՝ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը, ժամանում է Ռեյկյավիկ և հանդիպում Իսլանդիայի նախարարների հետ, ովքեր կողմնակից էին Իսլանդիայի՝ ՆԱՏՕ-ից դուրս գալու գաղափարին, քանի որ ՆԱՏՕ-ն ոչ մի օգնություն չի ցուցաբերել իսլանդական կողմին հակամարտության ընթացքում: (Մեծ Բրիտանիան և Իսլանդիան ՆԱՏՕ-ի անդամներ էին: Թագավորական նավատորմն իրավունք ուներ օգտվելու Իսլանդիայում գտնվող ռազմակայաններից Սառը պատերազմի ժամանակ, իսկ հիմնական պարտականությունը Գրենլանդիա-Իսլանդիա-Մեծ Բրիտանիա առանցքի պահպանությունն էր):

Այնուհետև, ՆԱՏՕ-ի շրջանակներում մի շարք բանակցություններից հետո բրիտանական ռազմանավերը հետ են կանչվում հոկտեմբերի 3-ին: Համաձայնագիրը ստորագրվում է նոյեմբերի 8-ին, որով սահմանափակվում էր բրիտանական ձկնորսական գործունեությունը որոշակի վայրերում 50 ծովային մղոն սահմանաչափի ներսում՝ այդ պահի դրությամբ միառժամանակ վերջ դնելով վեճին: Աթինգը հաստատեց այս համաձայնագիրը 1973 թ. նոյեմբերի 13-ին: Ըստ համաձայնագրի՝ բրիտանական ուղկանապարկակիր նավերը կսահմանափակեն իրենց ամենամյա որսի ծավալը մինչև 130.000 տոննա: Իսլանդացիները հայտնում էին, որ պատրաստ են տրամադրելու մինչև 156,000 տոննա սահմանաչափ, սակայն 1973 թ. գարնանը փոխում են իրենց պահանջներն ու առաջարկում 117,000 տոննա (իր հերթին բրիտանական կողմը պահանջում էր 145,000 տոննա): Այս համաձայնագիրը ուժը կորցրեց 1975 թ., երբ սկսվեց Երրորդ «ձողաձկնային պատերազմը»⁹:

Երրորդ ձողաձկնային պատերազմը սկսվեց այն ժամանակ, երբ դեռևս չէին ավարտվել 1973 թ. կնքված համաձայնագրի երկարացման վերաբերյալ բանակցությունները: 1975 թ. ՄԱԿ-ի՝ ծովերի մասին օրենքի երրորդ կոնֆերանսում մի շարք պետություններ հայտարարեցին, որ ցանկանում են ընդարձակել տարածքային ջրերի սահմանը մինչև 100 ծովային մղոն: 1975 թ. հուլիսի 15-ին իսլանդական կառավարությունը հայտարարեց, որ ցանկանում է ավելացնել իր ձկնորսական սահմանաբաժինները՝ հասցնելով 200 ծովային մղոնի: Բրիտանական կառավարությունը չճանաչեց այս փոփոխությունը և դիմեց

⁹ <http://gurukul.ucc.american.edu/ted/ice/codwar.htm>

կոշտ քայլերի՝ կրկին իսլանդական ջրեր ուղարկելով իր հաճանավերը: Երրորդ ծողաձկնային պատերազմը (1975 թ. նոյեմբեր-1976 թ. հունիս) համարվում է ամենաձանրը, բացի ձկնորսական ցանցերը կտրելուց, եղան նաև միմյանց խոյահարման դեպքեր¹⁰:

1976թ. փետրվարի 19-ին Բրիտանիայի գյուղատնտեսության, ձկնորսության և սննդամթերքի նախարարը հայտնեց առաջին զոհի մասին: Ձկնորսին ծանր ու մահացու հարված հասցրեց կտրված ուռկանի պարանը: Սա կարելի է որակել որպես դժբախտ պատահար: Սակայն բրիտանական խորհրդարանական աղբյուրի հաղորդմամբ 1993 թ. կայացած բանավեճերի ժամանակ հայտնեցին, որ բրիտանացի ձկնորսը սպանվել էր իսլանդական նավից արձակված կրակոցի հետևանքով¹¹:

Բրիտանական նավատորմը պատրաստվել էր Սառը պատերազմի պայմաններում թշնամու հնարավոր հարձակմանը դիմակայելու համար: Ուստի բրիտանացիները կարողացան արագորեն կենտրոնացնել անհրաժեշտ թվով ռազմանավեր և որոշ չափով կանխել իսլանդական նավերի հարվածները: Նման պայմաններում իսլանդական կառավարությունը դիմեց ԱՄՆ-ին «Էշվիլ» դասի ռազմանավերի ձեռքբերման խնդրանքով, սակայն Հ.Քիսինջերը մերժեց իսլանդացիներին: Մերժում ստանալով՝ իսլանդական կողմը շտապեց բանակցություններ սկսել խորհրդային «Միրկա» դասի ռազմանավերի ձեռքբերման ուղղությամբ:

1976թ. փետրվարի 19-ին Իսլանդիան խզեց Մեծ Բրիտանիայի հետ դիվանագիտական հարաբերությունները, ինչի հետևանքով բարձրացավ Իսլանդիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ մնալու նպատակահարմարության հարցը: Իսլանդական թերթերը հանդես եկան Կեֆլավիկում ՆԱՏՕ-ի ռազմակայանի դուրսբերման պահանջներով: Երկրում տեղի ունեցան մի շարք հանրահավաքներ, մարդիկ փակում էին փողոցները՝ թույլ չտալով ռազմակայանի աշխատակիցներին հասնել աշխատավայր: Այթինգի անդամներն առաջ քաշեցին օրինագիծ՝ կոչ անելով դուրս բերել Կեֆլավիկի ռազմակայանն ու ամերիկյան ողջ անձնակազմը¹²:

Այս ռազմակայանը կարևոր դեր էր խաղում ՆԱՏՕ-ի ողջ ռազմավարական համակարգում և Խորհրդային Միության հարձակման դեպքում պետք է

¹⁰ "Interview by the BBC in 1973". Youtube.com 2010թ. դեկտեմբերի 5, <https://www.youtube.com/watch?v=YEiMDdxtSeA&feature=related/>

¹¹ <http://hansard.millbanksystems.com/commons/1976/feb/19/fishing-industry>

¹² **Jonsson**, Hannes Friends in Conflict, Hurst & Co., London, 1982. p. 174

պաշտպաններ Ատլանտյան օվկիանոսում նավագնացությունը: Ռազմակայանի կորուստը լուրջ հարված կլիներ ՆԱՏՕ-ի համար: Իսլանդիայի այս քայլը ստիպեց ՆԱՏՕ-ին միջամտել հակամարտությանը՝ վերջինիս խաղաղ լուծում տալու նպատակով:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կազմակերպել էր խորհրդակցություն Իսլանդիայի խնդրանքով՝ փորձելով լուծում տալ հակամարտությանը: Իսլանդական կողմի դժգոհությունն այն պատճառով էր, որ մասնավորապես 1975 թ. դեկտեմբերի 11-ին բախում է տեղի ունեցել, որի ժամանակ մի քանի բրիտանական ռազմանավեր բազմիցս խոյահարել են Իսլանդիայի ափային պահպանության նավը: Մեծ Բրիտանիան պնդում էր այլ բան, որ անգնեն բրիտանական քաղաքացիական նավերը փորձում էին ապաստան գտնել ծանր եղանակային պայմաններում և պատահաբար մտել են իսլանդական ջրային տարածք: Բրիտանական նավերը ենթարկվել են ծովափնյա պահպանության նավերի հարձակմանը, իսկ նշված խոյահարումները պարզապես խուսանավելու փորձի հետևանք են: Անվտանգության խորհուրդը որևէ քայլ չձեռնարկեց այդ հակամարտության կարգավորման հարցում, սակայն որոշում ընդունվեց «մնալ իրավիճակին ներգրավված»¹³:

1976 թ. հունվարին Իսլանդիան պահանջեց հանդիպում կազմակերպել ՆԱՏՕ-ում՝ Ձողածկնային պատերազմի քննարկման նպատակով: Մոտավորապես նույն ժամանակահատվածում ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ ՆԱՏՕ-ն առաջարկում են իրենց միջնորդությունը Մեծ Բրիտանիայի և Իսլանդիայի միջև բանակցություններում, քանի որ խիստ անհանգստացած էին ՆԱՏՕ-ից դուրս գալու և Կեֆլավիկի ռազմակայանը փակելու վերաբերյալ իսլանդական սպառնալիքից, եթե հակամարտությունը շարունակվի:

ԱՄՆ-ի միջնորդ լինելու առաջարկը մերժվեց, իսկ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար դոկտոր Ջոզեֆ Լանսը աշխատանքային հանդիպում ունեցավ երկու երկրների վարչապետների հետ: Բանակցությունների մեծ մասը ընթացավ Մեծ Բրիտանիային թույլատրվող ձկան որսի ծավալների որոշման շուրջ: Հակամարտության սկզբում Մեծ Բրիտանիան ցանկանում էր հնարավորություն ունենալ բռնելու 110,000 տոննա, իսկ Իսլանդիան առաջարկում էր փոխարենը 65,000 տոննա ձուկ: Բանակցությունների ընթացքում Իսլանդիան նույնիսկ հանդես եկավ ավելի ցածր քանակի առաջարկով՝ 45.000 տոննա: Բանակցություններն առաջ չէին գնում 4-5 ամիս. կողմերը համաձայնության

¹³ UN Chronicle, January, 1976, 24-6.

չէին գալիս, թե ինչ ծավալի ծուկ կարելի է որսալ և որտեղ:

Ձուգահեռաբար Իսլանդիան բանակցություններ էր վարում նաև այլ երկրների հետ, որոնք զբաղվում էին ձկան արդյունաբերական որսով իր ջրերի մոտակայքում: Այսպես, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության և Բելգիայի հետ համաձայնագիր կնքվեց 1975 թ., որով երկու պետություններն էլ նվազեցնում էին ձողաձկան որսաքանակն իսլանդական ջրերում՝ համապատասխանաբար հասցնելով այն 5000 տոննայի և 1500 տոննայի: 1976 թ. մարտին նմանատիպ համաձայնագրեր ստորագրվեցին Նորվեգիայի, իսկ մայիսին՝ Ֆարերյան կղզիների հետ:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի միջամտությունից հետո, ինչպես նաև Նորվեգիայի վարչապետի միջնորդական գործունեության արդյունքում հնարավորություն եղավ հասնելու համաձայնության: Իսլանդիան և Մեծ Բրիտանիան համաձայնագիր ստորագրեցին 1976 թ. հունիսի 2-ին: Համաձայն այս պայմանագրի՝ Մեծ Բրիտանիայի համար առավելագույն թույլատրելի որսի քանակը սահմանվեց 50.000 տոննա, որը 15.000 տոննայով պակաս էր, քան առաջարկում էր Իսլանդիան ձողաձկնային պատերազմի սկզբին¹⁴:

Համաձայնագիրը սահմանափակում էր նաև բրիտանական նավերի քանակը, որոնք կարող էին գտնվել 200 ծովային մղոն սահմանների ներսում՝ հասնելով 24 ուղկանակիրների: Բացի այդ ստեղծվեցին հատուկ պահպանման 4 գոտիներ, որտեղ առհասարակ արգելված էր բրիտանական նավերի մուտքը: Ավելին, իսլանդական պարեկային նավերն իրավունք էին ստանում կանգնեցնելու և ստուգման ենթարկելու բրիտանական ձկնորսական նավերը, եթե կային պայմանագրի դրոյթների խախտման կասկածներ¹⁵:

Համաձայնագրի տևողությունը կազմում էր 6 ամիս, որից հետո բրիտանական նավերի կողմից ձկնորսությունը 200 ծովային մղոնի սահմաններից ներս ամբողջովին արգելվում էր:

Իսլանդական դիրքորոշումը բոլոր երեք հակամարտությունների ընթացքում նույնն էր: Գլխավոր գաղափարն այն էր, որ Իսլանդիան կախված է ձկնորսական արդյունաբերությունից ավելի, քան ցանկացած այլ երկիր: Իսլանդիան բնական պաշարներով աղքատ պետություն է՝ առանց անտառափայտի և նավթի, գյուղատնտեսական ցածր ներուժով և առանց օգտակար հանածոների: Ողջ տնտեսությունն ամբողջովին կախվածության մեջ է ձկնոր-

¹⁴ <http://gurukul.ucc.american.edu/ted/ice/codwar.htm>

¹⁵ "Now, the Cod Peace," Time, June 14, 1976. p. 37.

սությունից ներքին կարիքների բավարարման և արտահանման ասպարեզում: Առավել պատկերավոր ներկայացնելու համար Իսլանդիայի կախվածությունը ձկնորսական արդյունաբերությունից՝ իսլանդական կողմը հայտնում էր, որ 1881-1976 թթ. ընթացքում ձկան որսը միջինում կազմում էր Իսլանդիայի ողջ արտահանման 89.71%-ը, այդ իսկ պատճառով ձկան պաշարները համապատասխան շրջաններում կենսական նշանակություն ունեին¹⁶:

Բացի այդ Իսլանդիան պնդում էր, որ օտարերկրյա ձկնորսները Ֆարերյան կղզիներից, Բելգիայից, Արևմտյան Գերմանիայից ու Մեծ Բրիտանիայից Իսլանդիայի մերձակայքում ձկնային պաշարների կրճատման պատճառ են դառնում: 1970-ականներին ձողածկնային պաշարները նվազեցին երեք անգամ: Իսլանդիան կոչ էր անում նվազեցնել ձկնորսության ծավալները: Եվ քանի որ իսլանդական տնտեսությունն ամբողջովին կախված էր ձկնային արդյունաբերությունից, ապա ձկնորսության ծավալները պարտավոր էին նվազեցնել մյուս պետությունները¹⁷:

Իսլանդական կողմը վախենում էր, որ հնարավոր էր՝ ձողածուկը նույն ճակատագրին արժանանար, ինչին արժանացավ ծովատառեխը: Վերջինիս քանակությունը իսլանդական ջրերում հաշվվում էր շուրջ 8.5 միլիոն տոննա 1958 թ. դրությամբ, սակայն 1970 թ. այն գրեթե ամբողջովին անհետացավ: Այս տազնապը ստիպում էր Իսլանդիային մշակել պահպանման մեթոդներ: Իսլանդիայի բոլոր քայլերը տարատեսակ հարթակներում ավարտվեցին անարդյունավետ, և միակ ելքը իսլանդական ղեկավարության տեսակետով 200 ծովային մղոն հատուկ տնտեսական գոտու հռչակումն էր: Բացի դրանից, հենց այդ տարածքում իսլանդական ծովափնյա պահպանության նավերը կարող էին վերահսկել ձկնորսանավերի տեղաշարժերը:

Մեծ Բրիտանիան այլ կարծիք ուներ այս հարցի շուրջ: Ընդունելով ձկան թվի նվազման միտումները՝ Մեծ Բրիտանիան համոզված չէր, որ պատճառը ձկան որսի չափազանց մեծ քանակն էր, ոչ էլ պատրաստ էր գնալու այդ քանակի սահմանափակման: Չնայած հայտարարված որոշակի սահմանափակումներին և անհրաժեշտ չափաբաժիններին, սակայն, ըստ էության, քիչ բան էր հայտնի ձկան պաշարների ամբողջ էկոլոգիայի վերաբերյալ: Մեծ Բրիտանիան պնդում էր նաև, որ դեռևս նոր էր ձևավորվում 200 մղոնի սահմանաչափի միջազգային համակարգը, և այն ամբողջովին համաձայնեցված

¹⁶ <http://www1.american.edu/ted/icefish.htm>

¹⁷ <http://gurukul.ucc.american.edu/ted/ice/codwar.htm>

չէր, ուստի Իսլանդիան իրավունք չունէր միակողմանիորեն կիրառելու նման սահմանափակում:

Ինչպէս նշվեց, հակամարտությունը տևեց 7 ամիս: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն անցկացրեց մի շարք խորհրդակցություններ որոշակի բախումներից հետո, սակայն ոչ մի գործողություն չիրականացրեց իրավիճակը կարգավորելու ուղղությամբ: Հյուսիսային խորհուրդը Իսլանդիային աջակցելու վերաբերյալ հայտարարություն ընդունեց: ՆԱՏՕ-ն և ԱՄՆ-ը ստիպված եղան ներքաշվել այս հակամարտության մեջ այն ժամանակ, երբ Իսլանդիան սպառնաց փակել Կեֆլավիկում տեղակայված ՆԱՏՕ-ի ռազմակայանը, եթէ հակամարտությունը Մեծ Բրիտանիայի հետ շարունակվի: Չնայած ԱՄՆ-ը առաջարկեց իր միջնորդությունը, սակայն հենց ՆԱՏՕ-ի միջամտությունն օգնեց հասնելու հակամարտության ամբողջական կարգավորմանը:

Ի վերջո, հենց անդամակցությունը ՆԱՏՕ-ի նման կառույցին օգնեց Իսլանդիային հասնել խնդրի իր համար ցանկալի հանգուցալուծմանը: Որոշումների կայացման գործընթացը ՆԱՏՕ-ում, ինչպէս նաև Սառը պատերազմի պայմանները ճիշտ օգտագործելով սեփական շահերի համար, իսլանդական կողմը, լինելով թույլ, փոքր պետություն, կարողացավ իր պայմանները թելադրել այնպիսի պետության, ինչպիսին այդ ժամանակ Մեծ Բրիտանիան էր: Անշուշտ Իսլանդիային այդ ժամանակ օգնեց աշխարհաքաղաքական լարված իրավիճակը, սակայն սեփական ուժերի ու նույն իրավիճակի ճիշտ գնահատումը մեծապէս նպաստեցին իսլանդական արտաքին քաղաքականության հաղթանակին:

ИСЛАНДСКАЯ ДИПЛОМАТИЯ ВО ВРЕМЕНА ТРЕСКОВЫХ ВОЙН В 1972-1975 ГОДАХ

АРАМАИС ГРИГОРЯН

Конфликт между Исландией и Великобританией в 1958-1975 гг. известен как «тресковые войны». Исландия стремилась получить монополию в своих прибрежных водах, ограничивая присутствие рыболовных судов других стран в своих территориальных водах. Для достижения своей цели Исландия использовала политику угроз и пообещала потребовать от НАТО вывода военной базы из страны, которая имела стратегическое значение в период «холодной войны». Наконец, исландские угрозы дали результат, и благодаря

посредничеству НАТО, британские власти признали права Исландии на прибрежные зоны в радиусе 200 морских миль.

Ключевые слова – Исландия, тресковые войны, Великобритания, НАТО, исключительная экономическая зона, Кеблавик, морская миля.

ICELAND DIPLOMACY IN THE COD WARS IN 1972-1975

ARAMAYIS GRIGORYAN

The conflict between Iceland and Great Britain in the 1958-1975 years is known as "cod wars." Iceland sought to obtain a monopoly in its coastal waters, thus limiting the presence of fishing vessels from other countries in its territorial waters. To achieve their goal Icelandic statesmen threatened to withdraw Iceland's NATO membership, expel the NATO forces from the military base, which was of great strategic importance during the Cold War and ultimately close it. Eventually, the Icelandic threats through NATO's mediation had an outcome. The British authorities conceded to a 200-nautical-mile Icelandic coastal zone.

Key words - Cod Wars, Cold war, Iceland, Great Britain, Keflavik, nautical miles, special economic zone, NATO, Cold War, small states

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՄԱՆԻԶՄԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Հոդվածը նվիրված է արդի հումանիզմի բնորոշ գծերի ու առանձնահատկությունների վերլուծությանը, արդիականության գլոբալ պրոբլեմների լուծման գործում նրա դերի բացահայտմանը:

Բանալի բառեր – հումանիզմ, համամարդկային արժեքներ, հասարակական առաջադիմություն, մշակույթների երկխոսություն, սոցիալական արդարություն, ռացիոնալիզմ, արդիականության գլոբալ պրոբլեմներ, հումանիզմի հակոտնյաներ:

Հումանիզմն իր սկզբնավորման ժամանակներից ի վեր անգնահատելի դեր է խաղացել մարդկության սոցիալ-քաղաքական ու հոգևոր առաջընթացի, ամբողջությամբ վերցրած՝ մարդկային քաղաքակրթության զարգացման գործում:

Օժտված լինելով ստեղծարար բացառիկ ներուժով՝ հումանիզմը պատմական էվոլյուցիայի ընթացքում ոչ միայն չի կորցրել իր կենսունակությունը, այլև տեսական մտքի նվաճումներով և հասարակական առաջընթացի կենդանի պրակտիկայով հարստացած՝ խորացրել է իր բովանդակությունը՝ մեր օրերում ձեռք բերելով արտակարգ կարևորություն:

Դասական հումանիզմի գաղափարները, որոնք վառ դրսևորվեցին Վերածնության դարաշրջանի, իսկ այնուհետև՝ Լուսավորականության, գերմանական դասական փիլիսոփայության մեջ և մարքսիզմի փիլիսոփայական ուսմունքում, իրենց դրոշմ են դրել անցյալ դարաշրջանի վրա: Այդ գաղափարների բարերար ազդեցությամբ է ընթացել վերջին մի քանի դարերի համաշխարհային պատմությունը: Մի ամբողջ շարք նոր, հիմնարար հասկացություններ ու սոցիալական արժեքներ (աշխարհիկ մտածողություն, բանականության պաշտամունք, անհատի իրավունքներ և ազատություններ, սոցիալական առաջադիմության, լուսավորության ու գիտության դերի նոր ըմբռնում և այլն) մարմնավորվեցին իրական կյանքում, սոցիալ-քաղաքական պրակտիկայում ու մարդկանց համոզմունքներում՝ դառնալով հասարակական զարգաց-

ման զորեղ լծակ: Հումանիզմի հիմնարար գաղափարներից ու սկզբունքներից շատերն այդ ընթացքում ներթափանցեցին հասարակության սոցիալական ու հոգևոր կյանքի տարբեր ոլորտներ՝ որոշակիորեն պայմանավորելով ոչ միայն մարդկության զարգացման ընթացքը, այլև ապագայի միտումները:

Սակայն դասական հումանիզմի երախտավորների երազանքը բանականության դարաշրջանի հաստատման մասին մնաց անկատար: Հատկապես XX դարի երկրորդ կեսից սկսած՝ հումանիզմի գաղափարները սկսեցին հարցականի տակ դրվել ոչ միայն դասական հումանիստական ժառանգության մերժմամբ հանդես եկած հետմոդեռնիզմի փիլիսոփայության մեջ, այլև սոցիալական պրակտիկայի, մարդկության նորագույն պատմության բուն ընթացքով: Ակներև դարձավ, որ հետմոդեռնիստական քաղաքակրթության մի շարք երևույթներ ոչ միայն չեն համապատասխանում հումանիստական արժեքներին ու իդեալներին, այլև իրենց բնույթով ուղղակի հակահումանիստական են: Աշխարհը լի է սուր բախումներով, հակասություններով ու կոլիզիաներով, իր մի շարք կողմերով անարդար ու անբանական է նոր սոցիալական իրականությունը: Այդ ամենի հետևանքով որոշակի ճգնաժամ է ապրում և դասական հումանիզմը: Եվ հարց է առաջանում՝ հրաժարվե՞լ, արդյոք, դասական հումանիստական ժառանգությունից, թե՞ հենվելով դասական հումանիզմի ավանդույթների, նրա նվաճումների վրա՝ ձեռնամուխ լինել արդի աշխարհայացքային սկզբունքների, հումանիստական նոր հայեցակարգի մշակմանը:

Հումանիզմի պրոբլեմն աննախադեպ ակտուալություն է ձեռք բերում մեր օրերում՝ կապված արդի դարաշրջանում մարդկության առջև ծառայած նոր մարտահրավերների և սպառնալիքների հետ, որոնք աչքի են ընկնում աննախադեպ մասշտաբներով ու վտանգավորությամբ: Սպառնալի չափեր են ընդունում հատկապես հումանիզմի այնպիսի հակոտնյաներ, ինչպիսիք են միջուկային տեխնոլոգիաների տարածումն ու տիեզերքի ռազմականացումը, զինված հակամարտությունների ծավալումը, միջազգային ահաբեկչությունը, բնապահպանական կոլիզիաները, գիտատեխնիկական առաջադիմության բացասական հետևանքների խորացումը, բնական պաշարների աստիճանական սպառումը, կենսական ռեսուրսների նվազումը, բնակչության արագ ու չվերահսկվող աճը, կենսամիջոցների թերարտադրությունը, առանձին երկրների ու տարածաշրջանների հետամնացությունն ու աղքատությունը, անգրագիտության բարձր մակարդակը և այլ բացասական դրսևորումներ, որոնք, ցավոք, շարունակում են մնալ մեր օրերի ուղեկիցը:

Այդ վտանգները կրում են համապարփակ, գլոբալ բնույթ՝ սպառնալով համայն մարդկությանը, նրա բուն գոյությանը: Ուստի և դրանց դեմ պայքարը ձեռք է բերում արտակարգ հրատապություն, դառնում բոլոր ազգերի ու ժողովուրդների ընդհանուր խնդիրը՝ պահանջելով ընդհանուր նպատակների շուրջ նրանց համախմբում, համայն մարդկության նյութական ու հոգևոր ներուժի միավորում:

Մյուս կողմից՝ նոր, այսպես կոչված տեղեկատվական քաղաքակրթությունը, որը հավակնում է փոխարինել հետինդուստրիալ հասարակությանը, բնորոշվում է ոչ միայն հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգի վերարտադրության սկզբունքորեն նոր տեխնոլոգիական եղանակով, այլև մարդու, տեխնիկայի և բնության փոխներգործության յուրահատուկ բնույթով: Սոցիալ-տնտեսական իմաստով շեշտը դնելով նոր, միջին դասակարգի վրա՝ տեղեկատվական քաղաքակրթությունը փորձում է ավարտված համարել մարդկության պատմության այն տևական ժամանակաշրջանը, որը բնորոշվում էր դասակարգերի գոյությամբ ու պայքարով:

Հասարակական արտադրության սոցիալական վերակողմնորոշման և մարդու աշխատանքային գործունեության հումանիզացման միտումները, ծանրության կենտրոնի տեղափոխումը դեպի ինտելեկտուալ, հոգևոր ոլորտ օբյեկտիվորեն նպաստում են հասարակական կյանքում հումանիզմի դերի ու նշանակության աննախադեպ աճին: Տեղեկատվական քաղաքակրթության զարգացումը պահանջում է մարդու, նրա արարող դերի ու ստեղծագործական ունակությունների մշտական կատարելագործում: Նոր պայմաններում մարդը դառնում է ոչ միայն հասարակության հիմնական սոցիալական չափումը, այլև նրա գլխավոր սոցիալական բովանդակությունը:

Սակայն կյանքի տարբեր ասպարեզներում ընթացող հասարակական վերափոխումները, զուրկ լինելով սոցիալական ուղղվածությունից, շատ դեպքերում հանգեցնում են անցանկալի երևույթների, սոցիալական կապերի ու հարաբերությունների դեհումանիզացիայի, սոցիալական անարդարության ուժեղացման, ճգնաժամային երևույթների սրման: Հարցականի տակ են դրվում ու մերժվում դարերի միջով անցած, իրենց կենսունակությունը հաստատած և ամեն մի քաղաքակիրթ ժողովրդի հոգևոր նկարագրի անկապտելի մասը հանդիսացող բարոյական արժեքներն ու սկզբունքները: Հասարակության մեջ նկատվում է հաշտվողականություն դեպի բռնությունը, հանդուրժողականություն դեպի հանցավորությունը: Տիրապետող է դառնում արժեքային վակուումը, և որպես հետևանք՝ տեղի է ունենում մարդկանց աշխար-

հայացքի ճնախեղում, իռացիոնալիզմի ու միստիկայի աճ, մարդկանց կենսական կողմնորոշման նահանջ ռացիոնալիզմի դիրքերից:

Ուստի արդի անցումային հասարակության պայմաններում հումանիստական արժեքների, աշխարհայացքային ճիշտ կողմնորոշիչների հաստատման, պատմական նոր իրադրությունում հումանիզմի գաղափարների վերափմաստավորման, հասարակական ու անհատական գիտակցության մեջ դրանց ներդրման, հասարակական հարաբերություններից բռնության և դատաժանության դուրսմղման, սոցիալական իրականության մարդկայնացման հարցերը դառնում են ոչ միայն բարեփոխումների իրականացումը ռացիոնալ հուն մղելու անհրաժեշտ պայման, այլև յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության ապահովման հրամայական:

Հասարակական կյանքում հումանիզմի դերի աճն ընդլայնում է նրա մասշտաբները, այն դուրս բերում համամլորակային մակարդակ: Եվ դա տեղի է ունենում ամենևին ոչ պատահաբար, այլ պայմանավորված է մի կողմից՝ հումանիզմի գաղափարների համամարդկային բնույթով, մյուս կողմից՝ արդի աշխարհում հումանիստական արժեքների լայն տարածմամբ՝ կապված նաև ժողովրդավարության սահմանների անընդհատ ընդլայնման, մարդկանց ու ազգերի միջև քաղաքակիրթ հարաբերությունների հաստատման և տրանսմշակության կապերի սերտացման հետ:

Ժամանակակից աշխարհում հումանիզմի գաղափարներին վիճակված է մեծ ու պատմական առաքելություն: Եվ դա ամենից առաջ այն պատճառով, որ դրանք ամենալայն ընդգրկումով համամարդկային գաղափարներ են, որոնք ընկած են բոլոր քաղաքակրթությունների ու մշակույթների, բոլոր կրոնների ու կոնֆեսիաների, արևելյան ու արևմտյան աշխարհընկալումների հիմքում և ընդունակ են նոր հազարամյակի հիմնախնդիրներին դեմ հանդիման դառնալու հուսալի կամուրջ՝ միավորելու համար բոլոր երկրներն ու ժողովուրդներին, համայն մարդկությանը: Օժտված լինելով ստեղծարար մեծ ներուժով՝ այդ գաղափարներն ընդունակ են ոչ միայն լուծում տալու արդիականության հրատապ հիմնախնդիրներին, այլև միտված են գալիքին և նախապատրաստում են այն:

Ընդ որում հումանիզմը հանդես է գալիս որպես «մտածող աշխարհայացք»¹: Արդի հումանիզմն իր այդ հիմնարար հատկանիշի՝ ռացիոնալիզմի շնորհիվ, որը նրա ստեղծարար ուժի ու կենսունակության աղբյուրն է, ըն-

¹ Ալբերտ Շվեյցերի արտահայտությունն է (տե՛ս **Швейцер А.** Культура и этика. Москва, 1973, стр. 82):

դունակ է արթնացնելու և զարգացնելու մարդու հոգևոր ընդունակությունները: Եվ ընդհանրապես, «Ցանկացած իրական առաջադիմություն աշխարհում կանխորոշված է վերջին հաշվով ոսցիոնալիզմով»²:

Նոր հազարամյակում մարդկությանը վիճակված գլոբալ ճգնաժամի հաղթահարումը պահանջում է մշակել ու հասարակական գիտակցության մեջ սերմանել նոր դարաշրջանի հասունացած խնդիրներին ու ներքին պահանջ-մունքներին համահունչ գաղափարներ, աշխարհընկալման ու կենսական արժեքների գնահատման նոր եղանակ՝ միտված արդի հասարակության գաղափարաքաղաքական վերափոխմանը, մարդկանց ու ժողովուրդների գործունեության հումանիստական սկզբունքների ձևավորմանը, ընդհանուր նպատակների ու համամարդկային արժեքների շուրջ երկրների ու ժողովուրդների համախմբմանը, նրանց փոխհարաբերությունների ներդաշնակեցմանը, խաղաղ ու անկոնֆլիկտ աշխարհի ստեղծմանը: Մարդկության զարգացման նման հեռանկարը հավանաբար նկատի ունի մեր ժամանակների գերմանացի հայտնի փիլիսոփա ու հասարակագետ Յուրգեն Հաբերմասը, երբ նշում է, որ եթե XIX-XX դարերում մարդն իրեն դրսևորել է որպես անհաշտ, առճակատող էակ, ապա նոր դարում նա պետք է դառնա համաձայնող, կոմպրոմիսի ձգտող:

Այն մնայուն ու անանց արժեքների ու հիմնարար գաղափարների շարքում, որոնց շուրջ կարող է համախմբվել մարդկությունը, իրենց նշանակալիությամբ ու միավորիչ ներուժով խիստ առանձնանում են հումանիզմի, մարդասիրության գաղափարները, որոնք ներթափանցված են խոր լավատեսությամբ ու կենսահաստատ մեծ ուժով և առավել համահունչ ու ներդաշնակ են քաղաքակրթության զարգացման ներկա փուլի կենսական պահանջմունքներին, նոր դարաշրջանի ոգուն: Դրանք առավել կենսունակ ու համամարդկային գաղափարներ են, որոնք ընկած են բոլոր քաղաքակրթությունների ու մշակույթների, կրոնների ու կոնֆեսիաների, արևելյան ու արևմտյան աշխարհընկալումների հիմքում:

Այստեղից էլ՝ հումանիստական աշխարհընկալման ձևավորման, հումանիզմի գաղափարների տարածման, մարդկանց, ազգերի ու պետությունների փոխհարաբերություններում հումանիզմի սկզբունքների արմատավորման հույժ կարևորությունն ու հրատապությունը մեր օրերում:

² Տե՛ս նույն տեղում, էջ 84:

Նոր ժամանակների հրամայականներին, մարդկությանն սպառնացող վտանգներին դեմ հանդիման անհրաժեշտ է գործի դնել հումանիզմի գաղափարների մոբիլիզացնող ու կոնսոլիդացնող ներուժը, ըստ ամենայնի նպաստել վարքագծի հումանիստական սկզբունքների ու նորմերի ձևավորմանը, մարդկանց ու ժողովուրդների փոխհարաբերություններում դրանց արմատավորմանն այն հաշվով, որ թույլ չտրվի հասարակական հարաբերությունների ապամարդկայնացում, հումանիզմի սկզբունքների ու պահանջների անտեսում:

Արդի աշխարհում հույժ կարևոր է ազգերի ու ժողովուրդների հոգևոր շփման ու համագործակցության հաստատումը: Ազգային, մշակութային մեկուսացման ձգտումը, ուրիշ մշակույթների նկատմամբ նիհիլիստական, մերժողական վերաբերմունքը, առավել ևս՝ անհանդուրժողականությունը հակասում են նոր ժամանակների ոգուն, մշակույթների զարգացման իմանենտ օրենքներին ու տրամաբանությանը: Ոչ մի մշակույթ, իր ինքնատիպությամբ ու արժեքավորությամբ հանդերձ, ինքնաբավ ու կատարյալ չէ և իր սեփական նեղ սահմաններից դուրս գալու, մյուս մշակույթների հետ շփման ներքին պահանջ է զգում: Մյուս մշակույթների հետ ակտիվ շփումն ու համագործակցությունն էլ հենց դառնում են կարևոր խթան՝ բացահայտելու համար այն ստեղծագործական ներուժը, որը պարունակում է տվյալ մշակույթը:

Բռնությունն ու կոպիտ ուժը տարանջատում ու խորթացնում են մարդկանց ու ազգերին՝ նրանց դնելով համընդհանուր առճակատման եզրին: Պատերազմներն ու ռազմական գործողությունները չեն կարող և չպետք է դառնան աշխարհում առկա խնդիրների լուծման միջոց, ուստի և դրանք պետք է փոխարինվեն քաղաքական, տնտեսական, դիվանագիտական և հոգևոր-մշակութային ներգործության միջոցներով, որոնք կծառայեն ոչ թե ժողովուրդների օտարմանը, այլ մերձեցմանը:

Դա նշանակում է, որ մարդկության ապագան պետք է փնտրել ոչ թե պառակտման ու դիմակայման ուղիներում, այլ տարբեր քաղաքակրթությունների ու մշակույթների, կրոնների ու դավանանքների, Արևելքի ու Արևմուտքի երկխոսության, փոխըմբռնման ու համագործակցության մեջ: Միայն մարդկանց ու ժողովուրդների միջև համագործակցության հաստատմամբ, բարեկամության ու համերաշխության միասնական ոգով ու համատեղ ջանքերով է հնարավոր դիմագրավել մեր ժամանակների փոթորկալի իրադարձություններին, մարդկությանն սպառնացող մարտահրավերներին, հասնել առկա հիմնախնդիրների լուծմանը, ներկա հազարամյակում քաղաքակրթության ան-

նախընթաց վերելքի ապահովմանը, հակամարտություններից ու բախումներից ազատ, խաղաղ ու ներդաշնակ աշխարհի ստեղծմանը:

Դա թույլ կտար լուծել ոչ միայն մեր օրերում մարդկության առջև ծառայած գլոբալ խնդիրները, այլև միաժամանակ հնարավոր կդարձնեք հաջողությամբ կենսագործել «աշխարհի առանց պատերազմի, առանց էթնիկական ու կրոնական բախումների» մարդասիրական նշանաբանը՝ նոր հազարամյակը դարձնելով մշակույթների ու քաղաքակրթությունների, Արևելքի ու Արևմուտքի միջև շահագրգիռ երկխոսության ու փոխշահավետ համագործակցության ժամանակաշրջան: Դա մեծապես կնպաստեր տարբեր ժողովուրդների, հատկապես անմիջական հարևանությամբ, պատմական հանգամանքների բերումով կողք կողքի ապրող ազգերի միջև առկա կոնֆլիկտների ու անցյալից եկող թնջուկների ու անհամաձայնությունների փոխգիշումային կարգավորմանը, ազգային էգոիզմի, օտարման, թշնամանքի ու առճակատման աստիճանական հաղթահարմանը, անցյալի իրողությունների ու պատմական արդարության հիմքի վրա փոխշահավետ շփումների ու բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը: Դա կծառայեր նաև տարածաշրջանային բախումների կարգավորմանն ու կանխմանը:

Այնժամ հումանիզմի գաղափարները, ձեռք բերելով կենսական միս ու արյուն, կդառնան պատմական զարգացման ներկա փուլում մարդկանց ու ազգերի փոխհարաբերությունների սկզբունքները որոշող և նրանց միավորող մեծ ու ստեղծարար ուժ, հուսալի պատվար՝ ընդդեմ մարդկության միասնությունը ջլատող գործոնների, նոր ժամանակների սպառնալիքների ու մարտահրավերների, գայիք ժամանակների անակնկալների: Դրանք կծառայեն բանականության ու արդարության սկզբունքների վրա խարսխված և ապագային միտված նոր հասարակության կերտմանը, մարդու գոյության և ստեղծագործության համար այնպիսի պայմանների ստեղծմանը, երբ մարդկային ուժի զարգացումը կդառնա գերիշխող սկզբունք, հասարակական առաջադիմության գերագույն նպատակ:

ГУМАНИЗМ И СОВРЕМЕННОСТЬ

ГРИГОР АСАТРЯН

Статья посвящена анализу характерных черт и особенностей современного гуманизма, раскрытию его роли в решении глобальных проблем современности.

Ключевые слова – гуманизм, общечеловеческие ценности, общественный прогресс, диалог культур, социальная справедливость, рационализм, глобальные проблемы современности, антиподы гуманизма.

HUMANISM AND MODERNITY

GRIGOR ASATRYAN

The article is devoted to the analysis of the characteristic features and distinguishing traits of modern humanism thus revealing its role in solving the global problems of modernity.

Key words – humanism, universal values, social progress, dialogue of cultures, social justice, rationalism, global problems of modernity, antipodes of humanism.

ՀԱԿԱՌԻՏՈՊԻԱՆ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱՅԻ ԿԱՆԽՈՐՈՇՄԱՆ ՄԻՋՈՑ

ՄԵՐԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հոգվածում հակաուտոպիան ներկայացվում է որպես ապագան կանխատեսող սոցիոմշակութային երևույթ: Հակաուտոպիան ուտոպիայի քննադատությունն է ուտոպիական իդեալի ձգտման և կատարելության հասնելու տեսանկյունից: Այստեղ ներկայացվում է կատարյալ բացասական սոցիալական աշխարհի մոդել: Այս վատագույն հասարակության մոդելներում, ըստ էության, պայքարն անշունչ, մեքենայացված հասարակության, անհատի ոչնչացման, ամբողջատիրական համակարգի դեմ է: Հակաուտոպիան սոցիալական իրականության ախտորոշման միջոց է, քանի որ այստեղ ներկայացված հիմնախնդիրները բխում են հենց ներկայի բացերից:

Բանալի բաներ – ուտոպիա, հակաուտոպիա, իդեալ, անցանկալի հասարակություն, ապագա, սոցիալական իրականություն, ամբողջատիրական համակարգ:

Պատմություն կերտող մարդն է՝ իր ցանկություններով, իդեերով, հույսերով, մոլորություններով ու սխալներով, աշխարհը կատարելագործելու, իրեն հարմարեցնելու և էլ ավելի գեղեցիկ դարձնելու մղումով: Այս ճանապարհին աստղերի պես առկայծում են մարդկային հույսերը, վեհ գաղափարներն ու իդեալները, որոնք ժամանակ առ ժամանակ վեր են հառնում մոխրացած կրակից և լուսավորում քաղաքակրթության դարավոր ուղին: Իդեալականին ձգտող բազմաթիվ միջոցներից մեկն էլ ուտոպիան է: Ուտոպիական նախագծերը գործող սոցիալական իրականության այնպիսի այլընտրանքներ են, որոնցում ուրվագծվում են ապագա հասարակության կառուցարկման և կանոնակարգման ամենայն մանրամասները՝ հնարավորություն ստեղծելով նորի ընկալման և հաստատման համար, մարդուն սովորեցնելով ցանկալ լավագույնն ու հուսալ: Ուտոպիական նախագծերում շատ պարզորոշ ի հայտ են գալիս մարդու հույսերն ու սպասումները սոցիալական առաջընթացի նկատմամբ: Սակայն աստիճանաբար այդ հույսը կարծես մարում է, և ուտոպիան վերածվում է հակաուտոպիայի: Արևմտյան փիլիսոփայությանը բնորոշ էր հավատը մարդու կատարելագործման և արդար աշխարհի ստեղծելու, իդեալական հասարակություն կառուցարկելու նկատմամբ, սակայն անցյալ դարաշրջանից սկսած՝ այսօրինակ տրամադրությունները խամրեցին, գրեթե վերջ դրվեց դարավոր հույսի շքերթին՝ ճանապարհ բացելով հուսահատության համար, որը

շարունակելու էր էլ ավելի խորանալ, քանի որ առջևում էին աշխարհին սպասվող նոր հիասթափությունները: Է. Ֆրոմմի դիտարկմամբ այս փոխակերպումն ամենապարադոքսալն էր մարդկային պատմության մեջ, քանի որ մարդը, հասնելով գրեթե իր բոլոր երազանքներին, կանգնեց այդ երազանքի հույսի կորստի առաջ¹:

Եթե ուտոպիան հույսի դրսևորում է, ապա հակաուտոպիան ամբողջովին պարպում է այդ հույսը՝ վերածվելով սոցիալական անհուսության ցուցանիշի: Հակաուտոպիան ուտոպիայի տրամաբանական զարգացումն է, ինչից ելնելով այն ոչ թե պետք է հակադրել ուտոպիային, այլ համարել դրա տարատեսակ, որտեղ դասական ուտոպիայի կատարյալ հասարակությունն է, և որտեղ հեղինակն իր ձևով կիրառում է դրական ուտոպիայի հիմնական դրույթները: Ցանկացած հակաուտոպիայի ներսում անպայմանորեն կա ուտոպիա, առանց այդ ներքին կառուցի չի լինի նաև հակաուտոպիան: Հակաուտոպիայում, ըստ էության, նույնպես ներկայացվում է ապագայի կատարյալ հասարակություն՝ իր սոցիալական ինստիտուտներով և գործառնական համակարգերով, սակայն այստեղ ուտոպիայի առաջարկած դրական իդեալը վերածվում է բացասականի: Այն կարծես թե ուտոպիայի ծաղրանմանակումն է և քամահրական վերաբերմունքը դրա հավերժական ձգտումներին՝ հավասարություն, երջանկություն, ազատություն և այլն: Հակաուտոպիան ուտոպիայի քննադատությունն է ուտոպիական իդեալի ձգտման և կատարելության հասնելու տեսանկյունից, ինչին ի հակադրություն այն մոդելավորում է կատարյալ բացասական սոցիալական աշխարհ: Այստեղ, ըստ էության, արդեն ամեն բան կատարյալ է և վերջնական, ինչն էլ դառնում է չարիքի սկզբնաղբյուրը. կատարելություն, որը կանգնած է ծուռ հայելու առաջ: Ժամանակային առումով հակաուտոպիայում ստացվում է մի պատկեր, երբ սոցիալական ժամանակի ընթացքն այլևս հաստատված «իդեալական հասարակությունից» հետո է շարժվում՝ ընդգծելով ընթացքի մեջ շարունակվելու այդ հասարակության անկարողությունն ու կաղապարվածությունը:

Որպես գրական ժանր՝ հակաուտոպիան զարգացավ XX դարի սոցիալական փորձարարությունների պայմաններում, որոնց հետևանքների մասին

¹ Ст'ю Фромм Э. Комментарии к «1984».

//http://orwell.ru/library/novels/1984/russian/rnt_ef/-24.12.2015:

այս ստեղծագործություններում խոսվեց կանխավ, մինչ դրանց պարզորոշ նշմարվելը: Այսպիսով, հակաուտոպիան դարձավ սոցիալական ճգնաժամերի բարդ հետևանքներն ընդգծելու ևս մեկ միջոց: Հակաուտոպիայի ծաղկմանն ու փառքի գագաթնակետին հասնելուն միանգամից տարբեր հանգամանքներ նպաստեցին, որոնք պարարտ հող էին ստեղծել հիասթափության և վախի սերմերի համար: XIX – XX դարերի գիտատեխնիկական վերելքը, կյանքի որակի բարձրացումը, համատարած բարեկեցության հասնելու ճգնումը լավատեսության փոխարեն ավելացրին հոռետեսական, վախճանաբանական տրամադրությունները, ինչն առիթ դարձավ հակաուտոպիայի արմատավորման համար: Գիտատեխնիկական առաջընթացը բնականաբար հեշտացրել ու հարմարավետ է դարձրել կյանքը, սակայն մարդուն նետել է անազատության ճիրանները: Այս հասարակության մոդելի միջոցով փորձ է արվում ցույց տալու, թե հասարակ քաղաքացին ինչպես է վճարում առաջադեմ գաղափարի իրագործման համար:

Բացասական ապագայի սպասումների տարածման հիմնական պատճառներից կարելի է համարել նաև սոցիալ-քաղաքական իրադրությունն ու այդ դաշտի հակասականությունները: Մասնավորապես ԽՍՀՄ-ի հաստատումն ու ֆաշիզմի տարածումն իրարամերժ տրամադրություններ ստեղծեցին, քանի որ իրականություն էին դարձել երբեմնի ուտոպիական անհավանական նախագծերը, որոնցում նախատեսված համատարած բարեկեցությունը, երջանկությունն ու ազատությունը կարծես թե հակընթաց ուղի էին բռնել: Երկրի վրա դրախտ ստեղծելու մարդկային երազանքներն այն վեր են ածում դժոխքի, որի ընթացքը հետզհետե դառնում է անկառավարելի: Կատարյալ և կյանքի բոլոր ոլորտներում գերձգրիտ գործող համակարգը սարսափի աղբյուր էր, որի ապագա հնարավոր հետևանքները շատ իրատեսականորեն են ներկայացվում հակաուտոպիաներում: Հակաուտոպիան որոշ դեպքերում նաև հենց ուտոպիայի գաղափարի հերքումն է, պատահական չէ, որ այն առավել մեծ տարածում գտավ ֆաշիզմի և կոմունիզմի հիմնավորման շրջանում՝ որպես իրագործված ուտոպիայի քննադատություն, դրա վատ հետևանքների ընդգծում: Հակաուտոպիան կարծես ուտոպիական ոգու և ուտոպիական հույսի մերժումն է, քանի որ գերիրական է մեկ հարվածով քանդել հինն ու ստեղծել լրիվ նոր սոցիալական իրականություն: Հակաուտոպիաներում շեշտադրվում է այն հանգամանքը, որ կյանքի կոչված ուտոպիան ոչ թե առաջընթաց է բերում, այլ հետընթաց: Այստեղ մի կողմից դասական ուտոպիայի քննադատություն է տեղի ունենում, մյուս կողմից արդեն իրականացված ուտոպիայի, որը հատել է

ներկայի և ապագայի միջև սահմանագիծը: Բոլոր դարաշրջաններում հիմնահատակ փոխակերպումների ձգտմամբ զանազան նախագծեր են առաջ քաշվել, որոնք պատմության խորքից շատ փայլուն և զարգացման մեծ հեռանկար են խոստացել, սակայն հավանականությունը մեծ է, որ տվյալ ժամանակահատվածի համար ճշմարիտը հետագայում կարող է դառնալ սխալների աղբյուր: Հասարակությունը, առաջնորդվելով լավագույն իդեալներով, աշխարհը փոխելու, լավը դարձնելու մղումներով, հաճախ չի նկատում, որ իր սպասումները չեն արդարացնում իրենց: Ֆ. Ֆոն Հայեկը նշում է, որ ցանկացած ճգնաժամի աղբյուր մարդը փորձում է գտնել ամենուր, բայց չի ցանկանում ընդունել, որ որոշակի կարևորագույն արժեքների, իդեալների ձեռքբերման ձգտումն է հանգեցրել այդ իրավիճակին, և որ դրանց հետևանքներն այնքան էլ չեն համընկնում սպասելիքներին²: Հավերժական իդեալներին քաղաքակրթության այս անբավ մղումը դարերի ընթացքում շրջվեց մարդկության դեմ և սկիզբ դարձավ ամբողջատիրական համակարգի ձևավորման համար: Այս համատեքստում Կ. Պոպպերը նկատում է, որ հասարակության ամբողջական վերափոխման միջոցով իդեալական պետություն ստեղծելու ուտոպիական փորձերը պահանջում են փոքրամասնության կենտրոնացված իշխանություն և մեծամասամբ հանգեցնում են բռնատիրության³:

Փաստորեն մի կողմից ուտոպիական նախագծերի կյանքի կոչումը, մյուս կողմից դրանց թերի մնալը կամ ձախողվելն ավելացրին հակաուտոպիական մոտեցումները: Հակաուտոպիաներում առաջ քաշվող ապագայի մոդելի հենասյուները խարսխված են ներկայում՝ բացահայտելով սպասվելիք իրադարձությունները մութ և խտացված գույներով, ինչը նպատակ ունի մարդու մեջ հակակրանք առաջացնելու իր կյանքի և կենսաձևի նկատմամբ: Իսկապես, շատ դրույթներ, որոնք ներկայացված էին հակաուտոպիաներում, դարձան իրականություն, այդ իսկ պատճառով էլ այն վերածվեց ապագայի կանխատեսման յուրատիպ գործիքի: Հակաուտոպիան, ինչպես և ուտոպիան, նկատում և իմաստավորում է սոցիումի դեռ նոր տարրորոշվող հիվանդության ախտանիշները, որոնք տարիներ հետո են մյուսների կողմից գիտակցվելու և գնահատվելու: Բացասական ուտոպիան անցանկալի, հիվանդ աշխարհի

² Տե՛ս **Хайек Ф.** Дорога к рабству. Москва, 2005, стр. 38, 39:

³ Տե՛ս **Поппер К.** Открытое общество и его враги. Москва, 1992, стр. 203:

պատկերն է, աշխարհ, որը գլորվում է լեռն ի վար և իր ճանապարհին չունի արգելափակոցներ⁴:

Հասարակական մտքի այս հոսանքի անբաժան եռամիասնությունն են կազմում Եվ. Զամյատինի «Մենք», Օլ. Հակալիի «Հրաշալի, նոր աշխարհ» և Զ. Օրուելլի «1984» ստեղծագործությունները, որոնք հակաուտոպիան դարձրին հանրաճանաչ: Այս ստեղծագործությունները դրողում են հասարակ քաղաքացուն հայացք նետել սեփական կեցության խորքերն ու փնտրել իրեն և իր կերպարն այդ ապագայի հասարակության մոդելներում. ինչ-որ իմաստով դրանք օգնում են մարդուն ու հասարակությանն ինքնաճանաչման հարցում: Իրենց ներկայացրած սոցիալական մոդելների միջոցով, օրինակ, Եվ. Զամյատինը պայքարում է «մարդու հոգևոր աշխարհի կորստի» դեմ, Օլ. Հակալին՝ «սպառողական հասարակության» դեմ, Զ. Օրուելլը՝ «գաղափարի հասարակության», պարտադրված կենսաձևի դեմ: Սրանք նախազգուշացնող ուտոպիաներ են, որտեղ ծաղրական կերպով ցույց է տրվում դասական ուտոպիայում ներկայացված սոցիալական կարգի շրջված պատկերը, այստեղ ընդհանրապես բացակայում է ձգտումն իդեալին և լավագույնին: Բայց ապագայի հանդեպ վախ ներշնչող բացասական այս ուտոպիաները, այնուամենայնիվ, նույն նպատակն ունեն, ինչ դրական ուղղվածություն ունեցողները, այն է՝ անհրաժեշտ երջանկության հաստատումը: Իսկապես, այս երկու ստեղծագործությունների վերջնանպատակը մարդուն դրդելն է, որ նա փոխի առկա իրականությունը: Երկու դեպքում էլ ազդեցությունը նույնական է՝ երևան հանել տվյալ հասարակության թերի և ախտահարված ոլորտները: Ուտոպիան և հակաուտոպիան ցանկալի և անցանկալի աշխարհների զուգորդումներ են, որոնք գործառնական նմանություններ ունեն՝ մի կողմից ապագայի կանխատեսում, մյուս կողմից՝ նախազգուշացում. սրանք էական են երկուսի համար էլ: Հակաուտոպիան նաև տվյալ սոցիումի քննադատությունն է՝ ի ցույց դնելով այն ամենը, ինչը խաթարում է հասարակության բնականոն գործառնությունը, դնում սխալ ուղու վրա՝ ահագանգելով, որ պետք չէ շարունակել ապրել այնպես, ինչպես ապրում ենք: Այս՝ առերևույթ իրար հակասող ստեղծագործությունները կատարում են նույն գործառույթները: Ինչպես նշում է Է. Բատալովը, հակաուտոպիան ընդամենը բացասական նշանով ուտոպիան է⁵:

⁴ Տե՛ս **Баталов Э. Я.** В мире утопии: Пять диалогов об утопии, утопическом сознании и утопических экспериментах. Москва, 1989 // <http://www.marsexx.ru/utopia/batalov-v-mire-utopij.html> - 12.01.2016:

⁵ Տե՛ս նույն տեղում:

Ապագայի նկատմամբ այս մտահոգությունները վախի հետևանք էին, քանի որ մի կողմից XX դարին սպառնում էր ամբողջատիրությունը, մյուս կողմից՝ սպառողական հասարակությունը, որոնք երկուստեք սպանում էին մարդու մեջ գոյող «մարդկայինը»: Հասարակությունը զարգացման որակական նոր շրջան էր մտել, որն Օլ. Հակսլին անվանում է «ֆորդիզմի փուլ»⁶, այն սպառողականության և մեքենայացման, մեքենային մարդու զոհաբերության դարաշրջան էր, որտեղ մեռնում է ստեղծագործող և մտածող մարդը: Դարաշրջանի փոխակերպումները, որոնք նաև «նոր» մարդու ձևավորման, նրա կերպարի և բնույթի փոփոխության պատճառ դարձան, խորությամբ քննարկվում են հակաուտոպիաներում: Այս վատագույն հասարակության մոդելներում, ըստ էության, պայքարն անշունչ, մեքենայացված հասարակության դեմ է, մարդկայինի կորստի դեմ:

Հակաուտոպիաներում բարձրաձայնվում են տարբեր հարցեր, որոնք վերաբերում են ինչպես կառավարման համակարգին, տնտեսությանը, ներքին և արտաքին քաղաքականությանը, այնպես էլ հասարակության խորքային խնդիրներին, նրանում տեղ գտած փոխհարաբերություններին, մարդու տեղին և դերին: Սովորաբար հակաուտոպիայի հերոսի միջոցով ներկայացվում են ապագայի այդ հասարակության մեջ ապրող մարդու հոգեվիճակը, զգացմունքներն ու ապրումները: Այստեղ բազմակողմանիորեն արծարծվում են անհատի, նրա ոչնչացման և ազատության ոտնահարման հիմնախնդիրները, ի տարբերություն դասական ուտոպիայի, որտեղ կարծես թե համատարած նույնական անհատների հասարակություն է, չկան անհատական ցանկություններ և ձգտումներ, ուշադրության կենտրոնում է հասարակության ներդաշնակ և խաղաղ գործառնությունը: Հակաուտոպիայում պայքար կա անհատի ճնշման, համահարթեցման և նույնության, ռեժիմի դեմ, որն իր հավերժության համար սպանում է շուրջն ամեն բան: Հասարակության այս մոդելներում առանձնահատուկ ընդգծվում են պետական մեքենայի կողմից անձի ճնշումը, մարդու մեջ կենդանու վերածնումը, մարդկային հարաբերությունների փոփոխությունները, որոնք ուղեկցվում են զգացմունքների, կապվածության, սիրո կորստով: Իրենց ստեղծագործությունների միջոցով հեղինակներն ապագայի մարդու կերպարն են ցուցադրում՝ համարելով, որ մարդն աստիճանաբար մոռանում է իրեն մարդ դարձնող հատկություններն ու էութենական գծերը: Այս իրավիճակի պատճառն այն է, որ մարդը գտնվում է անդադրում հսկողության

⁶ St 'u Хаксли Ол. О дивный новый мир. Москва, 2014, стр. 6:

ներքո, երբ շրջապատում ամեն բան հիշեցնում է, որ դու ոչինչ ես, որ «Ավագ եղբայրը նայում է քեզ»⁷ և հետևում նույնիսկ մտքերիդ ընթացքին: Այս աշխարհում, ըստ էության, մարդկային բնույթը համակարգն է ստեղծում, և մարդը վերածվում է խամաճիկի, ում կենսագործունեությունը լրիվ կառավարվում է համակարգի կողմից, և շեղվել նախանշված ուղուց անհնարին է, եթե անգամ ցանկությունը մեծ է: Մարդն այլևս ոչինչ է, եթե անգամ նրա մտքերն են հսկողության ներքո: Օրինակ՝ Օլ. Հակալիի ներկայացրած հասարակության մեջ մարդու ոչնչացումը տեղի է ունենում «քաղցրաբլիթով», իսկ Ջ. Օրուելլի աշխարհում՝ «մտրակով»: Այս սոցիալական մոդելներում կարելի է ճանաչել սեփական հասարակությունը, կառավարման համակարգն ու ընդհանրապես գործող սոցիալական ինստիտուտները: Հակաուտոպիայի արդիականությունն այն է, որ այստեղ ներկայացված սոցիալական, մարդաբանական փոփոխությունները ժամանակակից մարդը զգում է սեփական մաշկի վրա, դրանք ապագայի նախագուշացումներ են, որոնք մերօրյա հասարակությանը բնորոշ գծերի վառ ցուցադրություն են: Ինչպես նկատում է Օլ.Հակալին, մոտ ապագայում ամբողջատիրական պետություններն ստիպված չեն լինի բռնի ուժ գործադրել, քանի որ առավել արդյունավետորեն կկառավարեն հասարակությանը, որը բաղկացած է ստրուկներից, ովքեր շատ են սիրում իրենց ստրկությունը: Կարևորը սովորեցնել սիրել ստրկությունը, ինչը մեծ հաջողությամբ արվում է բոլոր մակարդակներում՝ սկսած դպրոցից մինչև լրատվամիջոցներ: Ընդամենը պետք է մանկուց մարդուն ներարկել այն, ինչն անհրաժեշտ է լիարժեք ենթարկվելու և չհակադրվելու համար. սա հնարավոր է միայն մարդկային բնույթի խորքային փոփոխությունների միջոցով: Իսկ դրական արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է հասարակության անդամների ֆիզիկական և նյութական պահանջմունքների բավարարում: Դե իսկ նման հասարակություններում մեռնում է ստեղծագործող և մտածող մարդը, ով վերածվում է բացառապես որոշակի գործառույթ իրականացնողի՝ լավ աշխատանք կատարողի: Կարծես ինկուբատորից դուրս են գալիս ամբողջովին իրար նման մարդիկ⁸, որոնք դրսևորում են ամբոխային վարք և չեն էլ փորձում փոխել իրենց սոցիալական միջավայրը: Մարդը ձգտում չունի դեպի վեր, չկա ինքնագիտակցումը, աշխարհի ուղղաձիգ կառուցարկումը վերանում է, և գերիշխող է դառնում լայնքով տարածվող քաղաքակրթությունը, որը մտածող

⁷ **Оруелл Дж.** 1984. М., 2015, стр. 4.

⁸ **St' u Хаксли Ол.** Указ. соч., стр. 7:

և վեհ արժեքներ կրող մարդու փոխարեն առաջարկում է անհոգ և միայն իրեն նախապես վերապահված գործառույթներն իրագործող մեքենա:

Ե՛վ ուտոպիան, և՛ հակաուտոպիան ուտոպիական գիտակցության դրսևորման ձևերն են, որոնք ակտիվանում են ճգնաժամային իրադրություններում: Այդ գիտակցությունն անընդհատ մղում է ելքերի փնտրտուքի, որը տարբեր ձևերով է դրսևորվում: Վերջինս ցանկացած պարագայում սոցիալական աշխարհը նորոգելու և վերածնելու միտում ունի, լինի դա եղածից հիմնովին տարբերվող նոր, կատարելագործված իրականության կառուցարկման միջոցով, թե բացարձակ վատ հասարակության ներկայացման, որն իր հերթին սխալ ուղու ցուցադրությունն է: Ուտոպիական գիտակցության ակտիվացումը կարող է օգնել վերագնահատելու և արմատապես այլ դիտակետից ընկալելու իրականությունը, որում ապրում ենք, դուրս գալ դրա սահմաններից, օբյեկտիվորեն վերլուծել ստեղծված իրավիճակի խորքային հիմքերը: Հակաուտոպիայի միջոցով հեղինակը փորձում է ազդել մարդկանց գիտակցության, աշխարհընկալման վրա, ստիպում հասկանալ սեփական կյանքն այլ դիտանկյունից, նկատել մանրուքներ, որոնք փոխում են իրեն և իրականությունը, որում ապրում են:

Բացասական հասարակության մոդելներում ծայրահեղացված և ողբերգական երանգներով ներկայացվում է հեղինակին ժամանակակից կյանքը, բայց այստեղ նոր կառույցներ չեն ստեղծվում, այլընտրանք չի կառուցարկվում: Եթե ուտոպիան առաջարկում է նորը, ապա հակաուտոպիան չունի այդ գործառույթը: Հակաուտոպիայում ներկայացված անցանկալի հասարակության մոդելը ոչ մի դեպքում ցանկալի չէ իրագործել, իսկ ահա ուտոպիայի իրագործումը ցանկալի է: Ուտոպիան ապագայի հասարակության նախագիծ է, իսկ հակաուտոպիան՝ առավելապես մոդել: Այսինքն՝ ապագան այս դեպքում դրական երանգավորում կունենա, եթե առաջարկված մոդելը չդառնա իրականություն, ոչ թե հույս ներշնչի, այլ հաղորդի կամքի ուժ՝ խուսափելու դրա իրագործումից և դրանից բխող անցանկալի զարգացումներից:

Անիրաժեշտ է ուտոպիական գիտակցության առկայծումները դիտարկել ճիշտ տեսանկյունից: Երբ այլ ելք չկա, պետք է մտածվի, ստեղծվի նորը, սա է իրական ուտոպիան: Այսինքն՝ ուտոպիան այս պարագայում նշանակում է անել այն, ինչը տվյալ խորհրդանշանային կոորդինատում թվում է անհնարին⁹:

⁹ St' u Философские наброски скифской утопии от Славой Жижека. // <http://newskif.su/2012/skifskai-utopii-slavoy-jijek/> - 11.01.2016:

Ուտոպիան և հակաուտոպիան երկխոսում են միմյանց հետ՝ թողնելով հետևություններն ապագա սերնդին. Վա՛խ, թե՛ հույս, ահա այս հարցի առաջ է կանգնած ժամանակակից մարդը, ով, ականատեսը լինելով արդեն իսկ իրականություն դարձած ուտոպիական նախագծերի, հակաուտոպիական մոդելների, այնուամենայնիվ, փնտրում է ելքեր ապագայի համար: Եթե հարցին մոտենանք սպառողական հասարակության դիտանկյունից, ապա նկատելի է դառնում, որ այդ հասարակությունը հիմնվում է ցանկության, պահանջարկի ստեղծման վրա: Այս դիտակետից ուտոպիան առաջին հերթին բացակայի ցանկությունն է կամ ցանկության անդադրում արտադրությունը, նրա անվերջ հաստատումը կամ ինքնաշարժումը¹⁰: Իսկ հակաուտոպիան այդ ցանկության հետմղումն է, անհատնում ցանկությունների շղթայի մասնատումը:

Հակաուտոպիան և ուտոպիան կարծես իրար զուգահեռ աշխարհներ լինեն, որոնք, ճանապարհի մի հատվածում խաչվելով, հերքում են միմյանց, բայց, հետագայում կրկին զուգահեռվելով, բարձրաձայնում են փոխլրացնող խնդիրներ, որոնք կարող են վտանգաժին լինել ապագայում: Ի դեպ, եթե ուտոպիան, ցույց տալով իրականությունը, մարդուն մղում է իրականության սահմաններից դուրս, որպեսզի ստեղծի նորը, ապա հակաուտոպիան նրան վերադարձնում է այդ իրականություն՝ ցույց տալով դրա դեռևս ոչ այնքան ակնբախ, սակայն տազնապներով լի վիճակը: Եթե ուտոպիան մարդկության երազանքի դրսևորումն է, ապա հակաուտոպիան՝ վատ երազի, որն ստիպում է մարդուն ընդհանրապես չերազել, քանի որ այն կարող է երբևէ իրական դառնալ:

АНТИУТОПИЯ КАК СПОСОБ ПРЕДОПРЕДЕЛЕНИЯ БУДУЩЕГО

МЕРИ МИКАЕЛЯН

В этой статье антиутопия представляется как социокультурное явление, нацеленное на предсказание будущего. Антиутопия это критика утопии с точки зрения стремления к утопическому идеалу и достижения совершенства. Кроме того, выявлена модель совершенного отрицательного социального мира. По сути, в таких наихудших моделях общества борьба разворачивается против бездушного, механизированного общества, а также против уничтожения личности и тоталитарной системы. Антиутопия являет собой способ диагности-

¹⁰ Տե՛ս և **Гройс Б.** Утопия и обмен. Москва, 1993, стр. 8:

рования социальной реальности, так как проблемы, обозначенные в нем, исходят из пробелов настоящего.

Ключевые слова – утопия, антиутопия, идеал, нежелательное общество, будущее, социальная реальность, тоталитарная система.

DYSTOPIA: A MEANS OF PREDICTION THE FUTURE

MERI MIKAYELIAN

This article depicts dystopia as a sociocultural phenomenon, extrapolating the future or foreseeing it. Dystopia is a denouncement of utopia from the point of striving towards the ideal and attaining perfection. A model of a world compromising a very negative society is presented in this article. In the worst of these models, the struggle in essence is against an inanimate automated society, destruction of individuals, and totalitarian systems. Dystopia is a way to diagnosis the social reality as the presented issues emanate from current omissions.

Key words – utopia, dystopia, ideal, undesirable society, future, social reality, totalitarian system.

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բոլոնիայի գործընթացին անդամակցության տասնամյա ժամանակահատվածում ՀՀ-ում կազմակերպվող մասնագիտական կրթական համակարգում գրանցվել են լուրջ արդյունքներ: Սակայն, դրա հետ մեկտեղ, բարեփոխումների գործընթացը դեռևս հաշվի չի առնում այն խորքային հատկանիշները, որոնք առնչվում են մասնագիտական կրթության որակի ապահովմանը: Հոդվածում քննարկվում են կրթական բարեփոխումների ուղիները՝ «ավագ դպրոց-բակալավրիատ-մագիստրատուրա-ասպիրանտուրա» շղթայով, որոնք ունեն նաև սոցիալական նշանակություն:

Բանալի բաներ – Բոլոնիայի գործընթաց, ավագ դպրոց, բակալավրիատ, մագիստրատուրա, հետբուհական կրթություն, ուսուցման վերջնարդյունքներ:

Սոցիալական ուղղվածությունը մասնագիտական կրթության կազմակերպման կարևորագույն բաղադրիչներից է, որի վրա լուրջ ուշադրություն պետք է դարձվի մեր հանրապետությունում: Մի կողմից՝ մասնագիտական կրթական ծառայությունների զգալի մասը կատարվում է վճարովի հիմունքներով, մյուս կողմից՝ ոչ միշտ է իրականացվում աշխատաշուկայի պահանջներին թիրախավորված կրթություն, և արդյունքում քոլեջներն ու բուհերն ավարտելուց հետո մեր շրջանավարտները, աշխատանք չգտնելով, պարզապես լրացնում են մասնագիտական կրթություն ունեցող գործազուրկների դժգոհ բանակը:

Ավագ դպրոցը առայժմ չի ծառայում իր գլխավոր նպատակին՝ շրջանավարտի մասնագիտական կողմնորոշումների ձևավորմանը¹, ինչպես նաև համալսարանական կրթության բեռնաթափման նպատակով բուհական որոշ առարկաների ներառումը դպրոցական ծրագրեր (բնապահպանություն, պատմություն, քաղաքաշտպանություն և այլն): Ավագ դպրոցի և բուհական համա-

¹ Տե՛ս **Մելքումյան Յու.**, ՀՀ ավագ դպրոցի աշակերտների մասնագիտական կողմնորոշման մեթոդական խնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի», Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, 2015, # 3(18), էջ 5:

կարգի խզման պատճառներից է այն, որ բուհի ընդունելությունը կազմակերպվում է շտեմարաններով, որոնք մեր կարծիքով, չեն նպաստում մասնագիտական կրթական կողմնորոշվածությանը և մասնագիտական կրթության ծառայությունների արդյունավետ մատուցմանը:

Այս առումով նպատակահարմար կլինի ավագ դպրոցում կազմակերպել մասնագիտական կողմնորոշումների դասընթացներ, որոնց կարող են մասնակցել նաև բուհերը՝ ներկայացնելով մասնագիտական ներածության ծրագրեր: Հարկավոր է ընդունելության քննությունները կազմակերպել ոչ թե համընդհանուր շտեմարաններով, այլ ըստ մասնագիտական ուղղորդման ծրագրերի: Անհրաժեշտ ենք համարում նաև ավագ դպրոցի ավարտական դասարաններում ներմուծել համալսարանական ծրագրերով ընդհանուր հումանիտար առարկաների ուսուցում, որը հնարավորություն կտա մի կողմից՝ բեռնաթափելու բուհական կրթական ծրագրերը, մյուս կողմից դպրոցի աշակերտների ակտիվում կուտակելու ակադեմիական կրեդիտներ, որոնք փոխճանաչելի կլինեն համալսարաններում:

Ինչ վերաբերում է բակալավրիատին, ապա ոլորտը մեր կարծիքով, բարեփոխումների ընդհանրապես չենթարկվեց և ընդամենը կրեց կոսմետիկ փոփոխություններ (կրեդիտային համակարգ, ինքնուրույն աշխատանք, միջանկյալ քննություններ և այլն): Բակալավրիատում խորքային բարեփոխումների հիմնական թիրախներ պետք է լինեն առարկայական ծրագրերը, որոնք պետք է ուղղորդվեն ոչ միայն գիտելիքի կուտակմանը, այլ որ ամենակարևորն է, մասնագիտական հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը: Կարևորվում են նաև շրջանավարտների ուսումնառության վերջնարդյունքների թիրախավորումը և հասցեագրումն աշխատանքի շուկայի պահանջներին, քանի որ գործատուն առավելապես հետաքրքրված է ոչ միայն խելացի, այլև կարող համալսարանական շրջանավարտներով²:


Կարևորում ենք նաև ակադեմիական կրեդիտների բուհից բուհ շարժունության ավելացումը: Ներկայումս անհասկանալի է բակալավրիատում ակադեմիական կրեդիտներ հավաքելը, երբ դրանք «քարացած» մնում են բուհերում և պարզապես արձանագրվում դիպլոմի հավելվածում: Կրեդիտներ չփոխանցելը բուհից բուհ ոչ միայն չի նպաստում ուսանողների շարժունությանը, այլև կորչում է դրանց դերակատարումը կրթական ծառայությունների

² St'u Communiqué of the Conference of European Ministers Responsible for Higher Education, Leuven and Louvain-la-Neuve", 28-29 April 2009, paragraf 23.

արդյունավետ կառավարման համակարգում, որի համար էլ հենց ստեղծվել են:

Կարևորվում է նաև բակալավրիատի ուսումնառության թե՛ տարիների և թե՛ ծրագրերի բեռնաթափումը. հարկավոր է ուսումնական ծանրաբեռնվածության մի մասը տեղափոխել ավագ դպրոց և քոլեջներ: Բակալավրիատը՝ որպես քոլեջների և ավագ դպրոցի ակադեմիական իրավահաջորդ, պետք է իր ակադեմիական մթնոլորտով շաղկապված լինի վերջիններիս հետ և չգործի մեկուսացած՝ շատ դեպքերում կրկնելով անցած նյութը: Մյուս կողմից, եթե բակալավր շրջանավարտը ստանում է մասնագիտական հմտություններ՝ ավանդական խնդիրներ լուծելու համար, ապա հարկ է նշել նաև, որ մագիստրատուրան իր կրթական հայեցակարգով մինչև այժմ ամբողջովին չի ընկալվում համալսարանների կողմից և այդ իսկ պատճառով բովանդակային առումով դեռևս չի կայացել: Ի լրացումն դրա՝ մագիստրոսը, ստանալով հավելյալ կրթություն, գործնականում արհեստավարժ մասնագետի «ավանդական» պարտականություններից ավելին է կատարում, մասնավորապես լուծում է կառավարչական, գիտահետազոտական և ինովացիոն խնդիրներ³:

Գործնականում մագիստրոսներից նորարարական առաջարկների, նորամուծությունների, գիտահետազոտական արդյունքների սպասելիքներ կան, և այդ է պատճառը, որ մագիստրոսական կրթության ուսումնական ծրագրերը պետք է խիստ տարբերվեն բակալավրիատի ուսումնական ծրագրերից: Մագիստրոսական կրթության «ուղղահայաց» կազմակերպումը ենթադրում է բակալավր շրջանավարտի նեղ մասնագիտացում, երբ ուսումնառության ծանրության կենտրոնը տեղափոխվում է մասնագիտության խորացման վրա: «Հորիզոնական» մագիստրոսական կրթությունն առավելապես նպատակաուղղվում է ոչ թե մասնագիտացմանը, այլ գործնական կառավարման ոլորտում մագիստրոսի ճկուն հմտությունների ձեռքբերմանը (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Մագիստրոս շրջանավարտի որակական հատկանիշների ձևավորման ընթացքը մասնագիտական կրթության երկրորդ աստիճանում⁴


³ Տե՛ս The European Higher Education Area in 2014: Bologna Process Implementation Report, page 26.

⁴ Տե՛ս **Երիցյան Ս.**, Մասնագիտական կրթության մարտահրավերները, Երևան, 2012, էջ 57:

Մեր բուհերի ներկայիս մագիստրատուրան կրթության համատարած «ուղղահայաց» ուղղվածություն ունի, այդ պատճառով էլ ցանկալի արդյունք չենք ստանում, ուստի պետք է բարեփոխումների ենթարկվի հետևյալ ուղղություններով.

- մագիստրատուրան պետք է կազմակերպվի գիտահետազոտական հենքով ողջ կրթության ընթացքում և ոչ թե միայն ավարտական կիսամյակում թեզեր գրելով, որոնք հաճախ գիտագործնական նշանակություն չունեն,
- մագիստրոսական թեզերի որակը պարզապես անվերահսկելի է դարձել անգամ գրախոսությունների և պետական քննական հանձնաժողովների առկայության պարագայում: Այդ պատճառով պետք է կրթության և գիտության նախարարությանը կից ստեղծվի «Թեզերի գրանցման կենտրոնացված ռեգիստր», որը կենտրոնացված կվերահսկի որակը և կբացառի գրագողությունը,
- բակալավրիատում դասավանդվող մթողները չպետք է փոխադրել մագիստրատուրա և դրանով կրթությունը ծանձրալի դարձնել մագիստրոսի համար: Մագիստրատուրայում դեռևս ակտիվորեն չեն կիրառվում կլոր սեղաններ, միջառարկայական քննարկումներ, բանավիճալին ակումբներ, վեբ/սեմինարներ, այլ ընդամենը նույն կաղապարներով բակալավրիատի դասախոսություններն ու սեմինար պարապմունքներն են մատուցվում:

Բարեփոխումների մարտահրավերների առջև է կանգնած նաև մասնագիտական կրթության երրորդ մակարդակը: Ասպիրանտուրայի զարգացման միջազգային և հայրենական փորձի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ հետբուհական հետազոտական և կրթական ներկայիս համակարգը Հայաստանի Հանրապետությունում արմատական փոփոխությունների կարիք ունի: Ընդ որում, անհրաժեշտություն է զգացվում, մի կողմից, ընդլայնելու ասպիրանտուրայի ինքնավարության շրջանակը և բուհերին այս ոլորտում տալու ակադեմիական լայն ազատություններ, մյուս կողմից՝ առավել խստապահանջություն դրսևորելու որակյալ հետազոտական արդյունքների որոշակիացված հասցեագրման, ինովացիոն առաջարկների ներդրման ու սպառման ուղղությամբ:



Գծապատկեր 2. Ասպիրանտուրայի կազմակերպման առաջարկվող բարեփոխումների փուլերը ՀՀ-ում⁵

Իրենց լուծումներին են սպասում զայցբուրգյան սկզբունքների հենքով ասպիրանտական համակարգից դոկտորանտուրային անցման հիմնախնդիր-

⁵ Տե՛ս **Ճուղուրյան Ա., Մխիթարյան Ա.**, Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, Երևան, 2016, էջ 102:

ները⁶, որոնք մեր կողմից ներկայացվում են մի շարք նկատառումներով: Նախ՝ ասպիրանտուրայի գիտահետազոտական արդյունքները պետք է հնարավորինս պահանջված լինեն, ունենան իրենց հասցեատերերը և սպառողները, հակառակ դեպքում գիտության վերջնարդյունքները և դրանց վրա ծախսվող ռեսուրսները կարող են փոշիանալ: Հետևաբար՝ կազմակերպման կարևոր բաղադրիչ է լինելու գիտության շուկայի մարքեթինգը: Այս առումով պարտադիր պայման է համալսարաններում գործող հետբուհական մասնագիտական կրթական կառույցում մարքեթինգի ստորաբաժանման հիմնումը, որը պետք է նպաստի ինովացիոն մշակումների առևտրայնացմանը, ընդլայնի գիտահետազոտական արդյունքների ներկայացուցչական շրջանակը գիտության շուկայում, բացահայտի գիտական նորույթներն սպառողներին, ապահովի ակադեմիական ոլորտի ներկայությունը ինդուստրիալ շուկայում:

Բացի դրանից, գիտության ներկայիս շուկայում մրցունակ են համարվում այն ծրագրերը, որոնք իրականացվում են միջգիտակարգային բազմազանության հիման վրա⁷: Միջգիտակարգային ասպիրանտական ծրագրերի իրագործումը խրախուսում է ասպիրանտուրայում շարժունությունը և համատեղ դիպլոմների տրամադրումը: Այս առումով անհրաժեշտ է հստակեցնել և կանոնակարգել համատեղ դոկտորանտուրա կազմակերպելու գործընթացը, մշակել ասպիրանտների շարժունության և միասնական դիպլոմների տրամադրման գործառույթներ ոչ միայն հայրենական գիտակրթական կենտրոնների, այլև միջազգային համալսարանների հետ: Ժամանակակից գիտությունը չի կարող մեկուսացած զարգանալ, քանի որ նկատվում է նորույթների միջգիտական համակցման միտում, որն էլ ասպիրանտների շրջանում միջգիտակարգային ուսումնահետազոտական ծրագրերում ընդգրկվելու գրավիչ նախադրյալներ է ստեղծում:

Եվ վերջապես, ատենախոսության գիտական նորույթի ներդրումը և որոշակի սպառողին հասցեագրումը պարտադիր պայման պետք է լինեն աստիճանաշնորհման գործընթացում: Եթե նորույթն իր կիրառումը չի ստացել, ապա դա պետք է փոխհատուցվի միջազգային գրախոսվող հանդեսներում հրատարակված առնվազն երկու հոդվածի հրատարակմամբ, որը կաջակցի


⁶ Տե՛ս “BOLOGNA SEMINAR DOCTORAL PROGRAMMES FOR THE EUROPEAN KNOWLEDGE SOCIETY”, Salzburg, 3-5 February 2005, paragraph 1.

⁷ Տե՛ս Implementation of Salzburg Principles in Republic of Armenia, Training Kit, Tempus-VERITAS, page 96.

ինովացիոն առաջարկների պոտենցիալ սպառողների բացահայտման գործընթացին:

Հետևաբար՝ Բոլոնիայի գործընթացի շրջանակում գործող զայքբուրգյան սկզբունքների հենքով ասպիրանտուրա կազմակերպելիս արմատապես վերանայվում են ամբիոնի, առաջատար կազմակերպության, մասնագիտական խորհուրդների, գիտական ղեկավարի ինստիտուտի, ՀՀ ԲՈՀ-ի գործառույթները (տե՛ս գծապատկեր 2)՝ հիմնականում նպատակ ունենալով ձևավորելու մրցունակ դոկտորանտուրա:

Կարևոր ցուցանիշ է համարվում նաև բուհն ավարտելուց հետո շրջանավարտի աշխատանք գտնելու տևողությունը, որը ԲԿԵՏ-ում միջինը կազմում է 4 ամիս և ըստ երկրների՝ ունի հետևյալ բաշխվածությունը (գծապատկեր 3):




Գծապատկեր 3. Համալսարանն ավարտելուց հետո շրջանավարտների աշխատանքի անցնելու տևողությունը (ամիսներ) ⁸

Աշխատանքի շուկայում անընդհատ աճում է հմտությունների ավելի բարձր մակարդակների և փոխանցելի կարողությունների պահանջը: Աշխատանք գտնելու կարողությունն անհատին լիովին օգնում է օգտվելու աշխատաշուկայի փոփոխվող պահանջների ընձեռած հնարավորություններից: Բուհը պետք է արձագանքի գործատուների կարիքներին՝ թույլ տալով վերջին-

⁸ Տե՛ս Eurostat, Labor Force Survey (LFS) ad-hoc module.

ներիս ավելի լավ հասկանալ կրթական ծառայությունների մատուցման հեռանկարները: Բուհերը պետք է բարելավեն ուսանողների և շրջանավարտների կարիերայի և աշխատանքային գործունեության հետ կապված կողմնորոշիչ ծառայությունների տրամադրումը, մատչելիությունը և որակը:

Ուստի համալսարանական կրթական բարեփոխումների շրջանակներում հիմնախնդիրներ են համարվում յուրաքանչյուր կրթական աստիճանի համար աշխատանքի տեղավորման հնարավորությունների դիտարկումը և գնահատումը: Այս առումով բուհերը պետք է սերտ համագործակցեն գործատուների և այլ շահառուների հետ՝ ուսումնական ծրագրերի արդիականացման, նոր կրթական աստիճանային համակարգերում կարիերայի կառույցների համադրելիության ուղղությամբ:



Գծապատկեր 4. Շրջանավարտների զբաղվածության կանոնավոր հաշվառումը ՀՀ պետական բուհերում⁹

Եթե թվարկված վերոնշյալ խնդիրները որոշ առումներով իրենց լուծումներն են ստանում Եվրոպայում, ապա մեր հանրապետությունում դրանք դեռևս զուտ մակերեսային քննարկումների կամ ձևական մեկնաբանությունների տեղիք են տալիս: Նախ և առաջ ՀՀ բուհերը, որոնք անգամ հանրային ֆինանսավորմամբ պետպատվերով կրթություն են իրականացնում, պատասխանա-

⁹ Տե՛ս Բոլոնիայի գործընթացի իրականացումը ՀՀ պետական բուհերում: Վերլուծական զեկույց, // Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, 2012 թ., էջ 116:

տու չեն պետպատվերի շրջանակում կրթություն ստացած շրջանավարտների աշխատանքի տեղավորման գործում:

«Հ բուհերում անխտիր գործում են կարիերայի կենտրոններ, որոնք, իրենց հիմնական առաքելությունը չիրականացնելով, ընդամենը պրակտիկաների կազմակերպման հարցեր են լուծում: Մինչդեռ այդ կենտրոնների առանցքային խնդիրը պետք է լինի շրջանավարտների զբաղվածության ապահովումը, «բուհ-աշխատաշուկա» հարաբերությունների փոխկամրջումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ ՀՀ բուհերում շրջանավարտների զբաղվածության կանոնավոր հաշվառում չի իրականացվում (տե՛ս գծապատկեր 4):

Ներկայումս մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման շրջանակում խնդիր է դրվում նաև բարձրացնելու կրթական ծառայությունների մրցունակության աստիճանը: Որքան էլ որ կարևոր ենք համալսարանական կրթական բարեփոխումների իրագործումը, միևնույնն է, այն արդյունավետ չի լինի, եթե հասցեագրված չլինի կրթական ծառայությունների սպառողներին: Իսկ մասնագիտական կրթության առանցքային սպառողը շրջանավարտն է, որը կրթության է ձգտում՝ հասարակության մեջ ցանկալի դիրքի հասնելու համար: Հետևաբար, մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումները պետք է առաջին հերթին բավարարեն կրթական ծառայությունների սպառողների շահերը:

Բակլավրիատի կամ մագիստրատուրայի շրջանավարտը, դեռևս որպես համալսարանի դիմորդ հանդես գալով, պետք է համոզմունք ունենա, որ տվյալ մասնագիտության գծով պահանջված է լինելու աշխատաշուկայում: Այս առումով Բոլոնիայի գործընթացի ներկա փուլում էապես ուշադրություն է դարձվում ուսումնառության մրցունակ վերջնարդյունքներին, երբ կրթությունն ամբողջովին հասցեագրվում է աշխատաշուկայի պահանջներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս¹⁰, որ Բարձրագույն կրթության եվրոպական տարածում (ԲԿԵՏ) համալսարանական շրջանավարտների գործազրկության շարժառիթների շարքում, տնտեսական ճգնաժամերից բացի, կարևոր պատճառ կարող է հանդիսանալ ուսումնառության ընթացքում մասնագետի հմտությունների և կարողությունների անհամապատասխանությունը գործատուի պահանջներին: Այս առումով համալսարանները պետք է ձգտեն հնարավորինս ուսումնառության վերջնարդյունքներն ուղղորդել մասնագետի

¹⁰ Տե՛ս The European Higher Education Area in 2015: Implementation Report, pp. 171-173.

այն հմտություններին և կարողություններին, որոնք պահանջվում են մասնագիտական կրթական առաջին կամ երկրորդ մակարդակում:

Եվ խնդիրը միայն այն չէ, որ շրջանավարտ մասնագետը կարող է չունենալ բավարար հմտությունների կամ կարողությունների ընդգրկուն շրջանակ և դրանով իսկ պահանջված չլինել գործատուի կողմից: Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ կրթության ընթացքում ձեռք բերած մասնագիտական հմտությունների լայն շրջանակը չի բավարարում գործատուին, քանի որ այն որոշակիորեն կիրառելի չէ աշխատանքի ընթացքում: Եվ ստացվում է այնպես, որ բարձրագույն կրթության մասնագետների աշխատաշուկայում առաջարկի ավելցուկի պարագայում շրջանավարտները գործատուների կողմից գնահատվում են «գերորակավորված» և արդյունքում աշխատանքի չեն անցնում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արևմտյան Եվրոպայի համալսարանական գործազուրկ շրջանավարտների շրջանում գործատուի համար «գերորակավորում» ունեցող երիտասարդ մասնագետների տեսակարար կշիռը տատանվում է 14-35%-ի միջակայքում¹¹:

Այդ իրավիճակն ավելի սուր բնույթ է ստանում Հայաստանի Հանրապետությունում, քանի որ, ըստ պաշտոնական վիճակագրության, վերջին տարիներին գործազուրկների մեջ առավել մեծ թվաքանակ են կազմում բարձրագույն կրթությամբ անձինք (տե՛ս աղյուսակ 1), որոնք ունեն կրթական ցենզի բարձր մակարդակ և իրենց մասնագիտական հմտությունների ու կարողությունների որակով գերազանցում են գործատուների պահանջմունքների մակարդակը, և, վերջիններիս կողմից գնահատվելով «գերորակավորված», պարզապես աշխատանքի առաջարկ չեն ստանում:

Այս առումով կարծիք է հայտնվում, որ չնայած ՀՀ-ում Բոլոնիայի գործընթացի որոշակի ձեռքբերումներին՝ իրականացված բարեփոխումները հիմնականում դեռևս առնչվում են բարձրագույն կրթության կառուցվածքային բնութագրերին և, ընդհանուր առմամբ, դեռևս չեն անդրադարձել կրթական ծրագրերի բովանդակությանը և որակին¹²: Դրանք իրենց հերթին բերում են նրան, որ կրթական համակարգը ընդհանուր առմամբ դեռևս շարունակում է «կտրված» մնալ աշխատաշուկայից և ամբողջովին հաշվի չի առնում գործատուների պահանջները: Մասնագիտական կրթական ծրագրերը հաճախ գեր-

¹¹ Տե՛ս The European Higher Education Area in 2015: Implementation Report, p. 182.

¹² Տե՛ս **Գաբրիելյան Մ.**, Բոլոնիայի գործընթաց. ուսանողակենտրոն համակարգ // Բաց հասարակության հիմնադրամ- Հայաստան, 2015:

հագեցած են լինում շրջանավարտներից պահանջվող հմտություններին ու կարողություններին ուղղակիորեն չառնչվող առարկաներով կամ էլ չեն ընդգրկում արդիական այնպիսի առարկաներ, որոնք կզարգացնեին այսօրվա շրջանավարտի ունակությունները՝ հասցեագրված գործատուի պահանջներին:

Կրթական գործընթացի կազմակերպման հարթությունում ակնհայտ է մարդկային գործոնի կարևորությունը: Բազմաթիվ են օրինակները, երբ առկա են բավարար տեղեկատվություն, հնարավորություններ, սակայն ուսանողներն ու դասախոսները չեն օգտվում կամ չեն ցանկանում օգտվել դրանցից: Հետևաբար՝ համալսարանները հրատապ անցում պետք է կատարեն ուսումնառության վերջնարդյունքների հենքով կրթության կազմակերպմանը՝ մասնագիտական կրթական ծրագրերում հստակ նշելով, թե որ առարկան ինչ չափով և ինչպես է առնչվում շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Այս ճանապարհով հնարավոր կլինի բեռնաթափել ուսումնական ծրագիրը գերծանրաբեռնող «անուղղակի» առարկաներից՝ փոխարենն ուսումնառության գործընթաց ընդգրկելով աշխատաշուկայի պահանջարկը բավարարող վերջնարդյունքներով նոր առարկաներ: Ուսումնառության վերջնարդյունքների թիրախավորումն աշխատաշուկայի պահանջներին մեծապես կբարձրացնի մասնագիտական կրթական համակարգում բարեփոխումների արդյունավետությունը:

Մասնագիտական կրթության մրցունակության բարձրացման ուղենիշ պետք է համարել նաև ստեղծարար մտածելակերպի ձևավորումն ուսանողության շրջանում: Փորձը ցույց է տալիս, որ մեր հանրապետությունում կազմակերպվող բակալավրիատի կամ մագիստրատուրայի ծրագրերը զուրկ են ինովացիոն բովանդակությունից: Ուսանողական և պրոֆեսորադասախոսական կազմի որոշ մասի մոտ դեռևս գերակայում են կրթական գործընթացի մեխանիկական ընկալումները, երբ ուսումնառությունը դեռևս դիտվում է որպես դասախոսության միջոցով գիտելիք փոխանցելու և այնուհետև քննության ընթացքում այն ստուգելու գործողություն:

Հետևաբար, այս պարագայում կրթական գործընթացը դասախոսների և ուսանողական համակազմի մի մասը դեռևս շարունակում է դիտարկել որպես գիտելիք, տեղեկություն փոխանցելուն, այլ ոչ թե մտածողություն ձևավորելուն ուղղված գործընթաց: Սակայն համալսարանի այսօրվա շրջանավարտի կոմպետենցիաների շրջանակում կարևորվում են ոչ միայն մասնագիտա-

կան գիտելիքները, այլև նրա ստեղծարարության, նորարարության հակումների ինքնադրսևորման կարողությունները:

Ուստի, այսօր մրցակցային են համարվում այն կրթական ծրագրերը, որոնց վերջնարդյունքներով ձևավորվում են ոչ միայն «գիտակ», այլև «ստեղծարար հմտություններով» շրջանավարտներ: Այս առումով մասնագիտական կրթական ծրագրերում ներկայումս մեծ ուշադրություն պետք է դարձվի ուսանողի ոչ թե ձևական, այլ արդյունավետ անհատական աշխատանքի վերջնարդյունքներին՝ նպատակ ունենալով սովորողի մեջ զարգացնելու ստեղծարարությունը, նորարարությունը և ինքնադրսևորումը, որը Բոլոնիայի ներկայիս գործընթացի պահանջներից մեկն է¹³:

Մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման մրցունակության գնահատման նպատակով արդեն ավանդույթ է դարձել բուհերի վարկանիշային սանդղակների հրատարակումը, որն արդեն մի քանի տասնամյակ կիրառվում է միջազգային պրակտիկայում՝ վարկանիշավորման տարբեր գործակալությունների կողմից: ՀՀ-ում բուհերի վարկանիշավորման պրակտիկան ընդամենն իր կիրառությունը գտավ 2013 թվականից¹⁴, որը մի քանի նպատակ է հետապնդում.

- գնահատել բուհերի մրցակցային դիրքերը և բարելավել համալսարանական հաշվետվողականությունը,
- ընդլայնել բուհական համակարգի շահառուների՝ ուսանողների, դիմորդների, գործատուների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի տեղեկացվածությունը կրթական ծառայությունների մատուցման որակի, արդյունավետության մասին,
- խթանել բուհերի աշխատանքը տեսանելի ապագայում նպաստավոր մրցակցային դիրքերի մոտիվացիոն առումով:

¹³ ԲԿԵՏ նախարարների կոնֆերանս, Երևանի կոմյունիկե, 2015 թ.:

¹⁴ Նշենք, որ 2015 թվականի միասնական վարկանիշով առաջին տասնյակը գլխավորում է Երևանի պետական համալսարանը, 2-րդը՝ Հայ-ռուսական սլավոնական համալսարանը, 3-րդը՝ Երևանի պետական բժշկական համալսարանը, 4-րդն Ամերիկյան համալսարանն է, 5-րդը՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, 6-րդը՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանը, 7-րդը՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, 8-րդը՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, 9-րդը՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը, 10-րդը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը:

Աղբյուրը՝ www//ranking.armedu.am

Սակայն բուհերի վարկանիշավորումը միանշանակ չի ընդունվում կրթության ոլորտի շահառուների կողմից: Այսպես, Եվրոպական ուսանողների միությունն ընդունեց հռչակագիր՝ ընդգծելով վարկանիշավորման թերությունները: Նախ և առաջ ուսանողները գտնում են, որ Բուլոնիայի գործընթացը առավելապես պետք է կենտրոնանա համալսարանների կողմից որակի ապահովման հաշվետվողականության և ոչ թե վարկանիշավորման վրա: Եթե որակի տեղեկատվությունը կողմնորոշիչ է դառնում ուսանողության համար, ապա վարկանիշավորումը սրում է բևեռացումը Արևմուտքի և Արևելքի միջև և ավելորդ անգամ ընդգծում կրթական դաշտի անհավասարությունը ԲԿԵՏ-ում:

Բացի այդ, ուսանողներն ընդդիմանում են բուհերի շուկայականացմանը՝ վարկանիշավորումը դիտելով բարձրագույն կրթության աճող շուկայականացման գործոն¹⁵: Նրանք գտնում են, որ վարկանիշները սպառնալիք են սոցիալական ուղղվածության տեսակետից և չեն կարող հիմնավոր կողմնորոշիչ դեր կատարել բուհի ընտրության գործում, քանի որ վարկանիշավորումը կրթական շուկայում թիրախավորվում է բուհի հեղինակության գովազդին և համապարփակ չի արտացոլում ուսանողի և դիմորդի շահերը:

Հետևաբար, մրցունակ կարող են համարվել բակալավրիատի և մագիստրատուրայի այն կրթական ծրագրերը, որոնք հասցեագրված են ուսումնառության գործընթացի շահառուներին և բավարարում են վերջիններիս պահանջները:

ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНОЙ ОРИЕНТАЦИИ ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ

НОННА ХАЧАТРЯН

За десять лет Болонского процесса в системе профессионального образования в РА достигнуты серьезные результаты. Тем не менее, процесс реформирования по-прежнему не охватывает глубинные свойства, целенаправленные на обеспечение качественного профессионального образования. В статье представлены пути образовательных реформ по цепочке “старшая школа - бакалавр - магистратура- аспирантура”.

¹⁵ St’u The Dangers of University Ranking System, //European Students Union, 2013.

Ключевые слова – Болонский процесс, старшая школа, бакалавр, магистр, постдипломное образование, результаты обучения.

THE SOCIAL ISSUES OF PROFESSIONAL EDUCATION

NONNA KHACHATRYAN

The professional educational system organized in Armenia has secured serious results during the ten-year membership in the Bologna. Nevertheless, the reform process is not considering deep-rooted properties that would secure quality vocational education. This article considers certain reform methods in the High school, Bachelor, Masters and Doctorates educational cycles, that have a social significance as well.

Key words – Bologna process, high school, bachelor, master, postgraduate education, learning outcomes.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕՏԱՐՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՌԵԶԱ ԷՄԱՄԻ (ԻՐԱՆ)

Հոդվածը նվիրված է սոցիոլոգիայում և փիլիսոփայության մեջ լայնորեն կիրառվող «օտարում» հասկացության վերաբերյալ տարբեր մտածողների տեսակետներին: Մասնավորապես հեղինակն անդրադարձել է օտարմանը քրիստոնեության և հրեականության մեջ, քննության առել դրա վերաբերյալ Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելի, Բրունո Բաուվերի, Կարլ Մարքսի, Մաքս Վեբերի, Գեորգ Զիմելի և Մելվին Սիմենի տեսակետները:

Բանալի բառեր – «օտարում», Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգել, Բրունո Բաուվեր, Կարլ Մարքս, Մաքս Վեբեր, Գեորգ Զիմել, Մելվին Սիմեն:

Նախաբան

«Օտարում» հասկացությունը լայն կիրառություն ունի սոցիոլոգիայի և փիլիսոփայության տեսական գրականության մեջ: Այս հասկացությունը մի ժամանակ մարքսիստական գաղափարախոսության ընդգծված երանգ էր կրում և հենց այդ իմաստով էլ օգտագործվում է սոցիոլոգիայի բնագավառում և հասարակագիտական նորագույն հետազոտություններում:

«Օտարում» հասկացության տարբեր սահմանումներն ունեն երկու ընդհանուր գաղափար. առաջինը հեռացումը և մեկուսացումն է այն բանից, որ պետք է լինի անձի մեջ, երկրորդը՝ գաղափար այն բանի մասին, որ պետք է գոյություն ունենա: Օրինակ, երբ խոսվում է օտարման վիճակում կյանքի անիմաստ դառնալու մասին, անհրաժեշտ է պարզել, թե որն է մեզ համար կյանքից ակնկալված բուն իմաստը, և դա որտեղից ենք վերցրել: Մտավորականների կարծիքով դա բնությունն է, որից մարդ արարածը հեռանում ու օտարանում է:

Ստորև հպանցիկ կանդրադառնանք օտարացման վերաբերյալ տարբեր մտավորականների տեսակետներին:

Օտարացումը քրիստոնեության և հրեականության մեջ

Մարդ արարածի՝ Աստուծոց օտարվելու (շնորհից զրկվելու) համար սգում են թե՛ քրիստոնեությունը և թե՛ հրեական դավանանքը: Մարդ արարածն իր ամբարտավանությամբ հեռացել է Բարձրյալից: Քրիստոսի առաքելությունն էլ

հենց դա է՝ փրկել մարդուն իր ինքնաստարված վիճակից , որ ստեղծվել է իր իսկ ձեռքերով¹:

Օտարումից փրկվելու ուղին քրիստոնեությունը տեսնում է այս աշխարհից կտրվելու և Աստծուն ու հրեշտակներին միանալու մեջ: Նրանք, ովքեր հեռու են Աստծուց, օտար են և ուրիշ, իսկ քրիստոնեություն դավանողները Քրիստոսի միջոցով փրկվում են օտարումից²: Քրիստոնեությունը շեշտը դնում է Աստծուց հեռանալու հետևանքով առաջացած օտարման վրա, որը պիտի վերանա քրիստոնեական հավատքի միջոցով, իսկ հրեականությունն իր հետևողներին քարոզում է, որ Աստծուն միացածներդ այլևս օտար չեք, սակայն կան օտարներ, ովքեր հրեա չեն, և նրանք ծառայելու են ձեզ, այլ խոսքով, դուք ընտրյալ եք և ավելի վեր նրանցից և հաղթելու եք նրանց: Սա է պատճառը, որ օրինակ՝ հրեական կրոնի մեջ արգելվում է հավատակից «եղբայրներից» տուկոս վերցնելը, մինչդեռ նույնը թույլատրվում է օտարների հետ ունեցած առևտրային գործարքներում, Մասարոշի բնորոշմամբ հրեականության ոգին վերջին հաշվով կարելի է համարել կապիտալիստական ոգի³:

Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգել Georg Wilhelm Friedrich Hegel

Օտարման գաղափարը թեև վաղեմի արմատներ ունի հրեական և քրիստոնեական ավանդույթներում, սակայն փիլիսոփայական ոլորտում այս հասկացությունն առաջին անգամ նկատելիորեն արտահայտվեց Հեգելի տեսությունում, հատկապես նրա հասուն շրջանի գործերում: Նրա սկզբնական շրջանի գործերում ևս որոշ ակնարկներ եղել են այս իմաստով, սակայն «Ֆեմենոլոգիա» գրքում, որը երբեմն համարվում է Հեգելի գլխավոր գործը, նա նշում է. «Օտարացումը գիտակցության պատմության ամենահիմնային արտահայտությունն է»⁴:

Հեգելի դիտարկումը մետաֆիզիկական (մարդկային բացարձակ գիտակցության) ոգով էր կատարված՝ մարդու օտարացումն ինքն իրենից: Հեգելը XVIII դարի ամենամեծ փիլիսոփան է, ում Մարքսը համարում էր պատմության ընդհանուր օրինաչափության, այսինքն՝ դիալեկտիկայի բացահայ-

¹ **Մասարոշ Իշտուվան**, Մարքսի օտարացման տեսությունը, թարգմանիչներ՝ Հասան Շամսավարի և Քազեմ Ֆիրուզմանդ, «Մարքազ» հրատարակչություն, Թեհրան, 2001, էջ 30:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 33:

⁴ **Chiodi P.** Sartre and Marxism, Harvester Press Ltd, 1976, p. 80.

տողը⁵: Ըստ Հեգելի տեսության՝ մարդու ճանաչողությունն աշխարհից սուբյեկտիվ է և հնարավոր չէ հասնել կատարյալ օբյեկտիվ ճանաչողության: Չուտ և կատարյալ գիտակցությունը Հեգելը համարում է հոգի, որը մշտական կատարելագործման ընթացքում է: Եթե մարդիկ այդ գիտակցությունը որպես առանձին ուժ իրենց մտքից դուրս պատկերացնեն, ապա կենթարկվեն օտարացման: Ինչպես տեսնում ենք, Հեգելի կանխավարկածը, որից հետագայում օգտվեց նաև Մարքսը, ինքը ևս սուբյեկտիվ է և փիլիսոփայական դատողությունների արդյունք:

Բրունո Բաուվեր (Bruno Bauer)

Բրունո Բաուվերը Հեգելի հետևորդներից մեկն էր, ով օտարման հասկացությունը կիրառեց կրոնական ոլորտում: Բաուվերը Աստվածաբանություն էր դասավանդում և իրեն համարում Ս. Գրքի քննադատ: Նա նկատեց, որ կրոնական գաղափարները, հատկապես քրիստոնեական գաղափարները մարդու գիտակցության մեջ առաջացնում են որոշակի դասակարգումներ կամ ջրբաժաններ: Նրանք այդ գործը կատարում են՝ գիտակցությանը դիմագրավելով որպես առանձին մի ուժ, հետևաբար կրոնը հակված է ինքնագիտակցության այնպիսի էության, որն օտար է ինքն իրենից: Այս առնչությամբ Բաուվերն օգտագործեց «ինքնօտարացում» եզրույթը, որն արագորեն տարածվեց երիտասարդ հեգելականների շրջանում:

Բաուվերն այն կարծիքին է, որ կրոնն աստիճանաբար տարանջատվում է մարդու ճանաչողությունից, և քանի որ այն ոչ մի կապ չունի մարդու՝ աշխարհից ունեցած ճանաչողության հետ և առանձին է մարդուց, ուստի օտարվում է նրանից: Ինչպես տեսնում ենք, Բաուվերի տեսությունում առաջնությունը տրվում է մարդկային ճանաչողությանը, որն օտարանում է, երբ կրոնական ճանաչողությանն է դեմ առնում⁶:

Կարլ Մարքս (Karl Marx)

Արագորեն սեկուլարացվող միջավայրում Մարքսն առաջադրեց իր բացատրությունն օտարման վերաբերյալ: Օտարման («Alienation») իմաստն արտահայտելու համար Մարքսն օգտվեց երկու գերմաներեն բառից՝ «Entausserung» և «Entfremdung»:

⁵ Cooper D.E. Existentialism, Blackwell Publishers Ltd, 1996, p. 26.

⁶ The Dictionary of the History of Ideas, Electronic Text Center at the University of Virginia Library, Vol.1, p. 37.

Այս երկու բառի միջև սահմանագիծն այնքան էլ պարզ չէ: Դրանք երբեմն հոմանիշներ են թվում և կիրառվում են միասին: Ինչ որ է, «Entfremdung» բառն ավելի շուտ երկու հոգու միջև օտարացման իմաստ է պարունակում, մինչդեռ «Entausserung»-ը նշանակում է օտարում որևէ մեկի հանդեպ՝ իրավական և առևտրային իմաստով: Մարքսը «<Եզեյի ճշմարտության մասին փիլիսոփայության կրիտիկա» գրքում սկզբում ամենայն մանրամասնությամբ շարադրեց իր գաղափարները քաղաքական օտարացման վերաբերյալ, որտեղ կետ առ կետ վերլուծեց «<Եզեյի ճշմարտության փիլիսոփայությունը» և հավակնեց, որ <Եզեյի բնութագրմամբ պետությունն ինքն է արտադրում և ստեղծում մարդկային էության օտարացումը⁷:

Էլեստերի կարծիքով Մարքսը բացահայտել է կապիտալիզմի երեք հիմնական թերությունները.

1. անգործունակությունը. այս դրույթը մեծ կարևորություն ունի Մարքսի՝ արտադրության եղանակների տեսության համար (այս բաղադրիչը բացատրում է, թե ինչո՞ւ կոմունիզմը կփոխարինի կապիտալիզմին):

2. Շահագործում. այս դրույթը չափազանց կարևոր է Մարքսի դասակարգային պայքարի տեսության համար:

3. Օտարում. այս դրույթը հիմնական դեր է խաղում Մարքսի նորմերի տեսության համար: Օրինակ, այն բացատրում է, թե ինչո՞ւ կոմունիզմը պետք է փոխարինի կապիտալիզմին⁸:

Օտարման էությունը Մարքսը տեսնում է մարդու հանդեպ իր իսկ ձեռքով ստեղծվող արտադրանքի և ապրանքների օտարման մեջ, որը հանգեցնում է ստեղծողի վրա ապրանքի տիրապետությանը: Մարքսը նշում է. «Տարանջատումն արտացոլվում է այն իրողությամբ, որ իմ կյանքի իրերն ու առարկաները պատկանում են մեկ ուրիշին, և իմ երազանքները ուրիշի հարստությունը և անհասանելի ունեցվածքն են»: Մարքսի կարծիքով ոչ մարդկային մի ուժ իշխում է ամեն ինչին և բոլորի վրա⁹:

Մաքս Վեբեր (Max Weber)

Սոցիոլոգիայի տեսաբանների հիմնական մտահոգությունը վերաբերում

⁷ The Dictionary of the History of Ideas, Electronic Text Center at the University of Virginia Library, Vol.1, p. 39.

⁸ Elster Jon, Introduction to Karl Marx, Cambridge University Press, 1986.

⁹ Մարքս Կարլ, Մարքսի գործերից ընտրանի հատվածներ, թարգմանիչ՝ Մաջիդ Մադադի, «Արդավան» հանդես, 3-րդ համար, Ա տարի, Մշակույթի և իսլամական ուղղորդման նախարարություն, Թեհրան, 1994, էջ 42:

էր հասարակական անկայունությանը, գիտական սրընթաց առաջխաղացմանը և հասարակության սեկուլարացմանը: Տվյալ ժամանակահատվածը համընկնում էր XVIII դարից (<Եզեյի ժամանակներից) մինչև XX դարի սկիզբը: Վերոնշյալ երեք խնդիրներից Մաքս Վեբերն առավել մեծ ուշադրություն դարձրեց գիտական առաջընթացին և հասարակության սեկուլարացմանը: Նա կիրառեց «Կախարդանքի վերացում» եզրույթը, քանի որ նրա դիտարկմամբ մոդեռն հասարակությունը սոցիալական հարթություններից կջնջի կրոնն ու ընտանիքը, և դրանց փոխարինելու կգա գիտությունը: Վեբերի օրոք գիտական զարմանալի ձեռքբերումները կախարդել ու հիացրել էին բոլորին, և ամենքը փորձում էին հասարակությունը ծրագրել բնական գիտությունների հիման վրա: Սակայն Վեբերը կարծում էր, որ գիտությունը չի կարող պատասխանել մարդկանց հիմնական հարցադրումներին, այդ իսկ պատճառով կախարդանքի վերացումը մարդուն կտանի դեպի մոլորություն: Երբ գիտությունը կասկածի տակ է առնում նույնիսկ ինքն իրեն և մշտապես ենթակա է նորացման, ինչպե՞ս կարող է պատասխանել գոյության և տիեզերքի նպատակների ու վերջնակետի մասին հարցին: Վեբերի կարծիքով գիտության ու տեխնոլոգիաների ձեռքբերումները, հատկապես բյուրոկրատիան և նպատակակետին հակված մտածողությունը մարդուն կբանտարկեն երկայնա վանդակում, միևնույն ժամանակ Վեբերը կարծում էր, որ մարդու ճակատագիրը դատապարտված չէ, որովհետև մարդկությունը վերջ չունի: Վեբերը մարդկանց ազատ էր համարում ընտրություն կատարելու հարցում¹⁰:

Էմիլ Դյուրկհեյմ (Emile Durkheim)

Է. Դյուրկհեյմը դասական այն սոցիոլոգների շարքում է դասվում, ով ամենից շատ հավատարիմ մնաց բուն սոցիոլոգիային, այսինքն՝ սոցիոլոգիային՝ որպես մի գիտության: Դյուրկհեյմի խոհերում հիմնախնդիրն իր ապրած ժամանակներում ֆրանսիական հասարակության անկարգությունն ու խախտված համակարգն էր: Այս հարցը մշտապես զբաղեցրել է նրա միտքը և արտահայտություն գտել նրա բոլոր գործերում: Նա իր «Ինքնասպանություն» գրքում ապացուցում է, որ ինքնասպանության երևույթն ունի սոցիալական պատճառներ, իսկ «Սոցիալական աշխատանքի բաշխում» գրքում ապացուցում է, որ հասարակությունում ձևավորվել են աշխատանքների բաժանման ինչ-որ նոր կարգեր, և աշխատանքի բաժանման հին ձևի վերացումը չի

¹⁰ **Maley Terry**, Max Weber and the Iron Cage of Technology, Bulletin of Science, Technology & Society, Vol 24, No.1, 2004, p. 69-86.

նշանակում անկարգություն: Բնութագրելով մոդեռն հասարակությունների դժվարությունները՝ նա կիրառեց «Անոմիա» եզրույթը: Անոմիա նշանակում է նորմերի և չափանիշների բացակայություն, երբ հասարակության անդամները չգիտեն ինչպես վարվել և ո՞ր նորմերին հետևել: Դյուրկհեյմի դիտարկմամբ այս խնդիրը բոլոր մոդեռն հասարակությունների դժվարությունն է: Անոմիան, սակայն, հիմնային տարբերություն ունի օտարացման հետ: Նկատի առնելով Դյուրկհեյմի պոզիտիվիստական մոտեցումները՝ պետք է ասել, որ նրա առաջադրած անոմիա հասկացությունն ավելի գիտական է, քան Մարքսի օտարումն ու Վեբերի երկաթե վանդակը և ավելի նվազ չափով է կրում գաղափարախոսական ազդեցություններ: Վեբերի տեսանկյունից անոմիան հասարակական նորմերի հետ է փոխառնչվում, և չի քննվում այն խնդիրը, որ այդ նորմերն արդյոք համապատասխանո՞ւմ են մարդկային էությանը, թե՞ ոչ: Այս առումով հիմնական տարբերություն կա փիլիսոփաների կողմից առաջադրված օտարացման և սոցիոլոգների կողմից առաջադրված անոմիայի միջև¹¹:

Գեորգ Զիմել (Georg Simmel)

Առաջին սոցիոլոգների խմբից Զիմելին շատ անգամ որպես դասական սոցիոլոգ չեն անվանում, սակայն նրան ճանաչում են որպես մոդեռնացման առաջին սոցիոլոգ: Պոստմոդեռնիստ հետազոտողները ևս հաճախ իրենց աշխատություններում հղում են կատարում նրան¹²:

Նա ուսումնասիրել է մոդեռն հասարակության առանձնահատկությունները և նշել նրա տարբերություններն ավանդական հասարակությունից: Այս շարքի գործերից հայտնի է նրա «Խոշոր քաղաքը և սուբյեկտիվ կյանքը» հոդվածը:

Զիմելն իր «Փողի փիլիսոփայություն» դասական և ծավալուն գրքում, որը բավականին ուշ թարգմանվեց անգլերեն, քննարկում է փողի՝ իբրև մի ամբողջության կապը հասարակության տարբեր կողմերի հետ: Նա նշել է փողի մի շարք առավելությունները և թերությունները: Այս ուսումնասիրության մեջ նա մոդեռն հասարակության առանձնահատկություններից է համարում որակների քանակային դառնալը, իսկ փողը՝ քանակական դառնալու միջոց և գործիք: Մոդեռն հասարակարգում ամեն ինչ չափվում ու գնահատվում է փողի օգնությամբ: Զիմելը գտնում է, որ կյանքի տարբեր հարթություններում փողի

¹¹ Ասդարփուր Մասուկեհ Ահմադեգա, Հասարակական խնդիրների սոցիոլոգիան, «Փեյվանդ» հրատարակչություն, Թեհրան, 2007, էջ 10:

¹² Deflem Mathieu, The Sociology of Money, Journal of Classical Sociology, Sage Publications, 2003.

տարածմամբ ու ընդլայնմամբ արդի մարդը անցյալի համեմատությամբ խոր փոփոխության է ենթարկվել, սակայն Ջիմելը չի անդրադառնում մոդեռն աշխարհում մարդկային էությունից անձի օտարացման հարցին:

Ընդհանուր առմամբ Ջիմելն այն համոզմանն է, որ խոշոր քաղաքներում (մեգապոլիսներում) ապրելը հանգեցնում է էգոիզմի, աշխատանքների բաժանման, մասնագիտացման և մտավոր ոգու փոխարեն առարկայական ոգու գերադասության, ինչը մարդուն մղում է դեպի ինքնաստարացում: Նրա դիտարկմամբ ինքնաստարացումը նորագույն հասարակության մեջ մարդու մոլորվածության հիմնական գործոնն է¹³:

Մելվին Սիմեն (Melvin Seeman)

Սիմենի կարծիքով օտարումը մեկ միասնական գործոնի պատճառով չի առաջանում: Ժամանակակից հասարակության մեջ հիերարխիկ նոր կառուցվածքը ձևավորել է այնպիսի պայմաններ, որտեղ մարդիկ չեն կարող կառավարել սեփական վարքի և գործերի արդյունքներն ու հետևանքները: Բացատրելով և մեկնաբանելով օտարացման տարբեր տեսակները՝ նա տալիս է դրա երկու հանգուցային և հիմնական հասկացությունները.

Ա. անձի սպասելիքը ստացվելիք խրախուսանքներից:

Բ. Հասարակության վերահսկումն ու կառավարումը սոցիալական խրախուսանքի միջոցով:

Սիմենի կարծիքով, երբ անձը չի կարողանում կապ գտնել իր վարքի և հասարակությունից ստացվող խրախուսանքի միջև, օտարացման զգացում է ունենում և հասարակության հանդեպ որդեգրում պասիվ ու անհանդուրժող կամ չհարմարվող ռեակցիա: Սիմենն օտարման վարքագծերը հինգ խմբի է բաժանում.

1. անզորության զգացում, **2.** նորմերի բացակայության զգացում, **3.** սոցիալական մեկուսացման զգացում, **4.** անիմաստության զգացում, **5.** ինքն իրեն ատելու զգացում:

Էդգար Ֆրիդենբերգ (Edgar Friedenberg)

Ֆրիդենբերգն օտարումը կիրառել է դժգոհության իմաստով և կարծում է, որ դժգոհ մարդը տարանջատում ու հեռացում է զգում իր շրջապատի առարկայական խնդիրներից, նա իրեն առանձին ու անջատ է զգում այն ամենից, ինչին կապված էր անցյալում: Այսպիսի վիճակում մարդն ինքն իրեն դի-

¹³ **Սոթուդեհ Հեդայաթուլլահ**, Սոցիալական դիագնոստիկա (շեղումների սոցիոլոգիա), «Ավայե նուր» հրատարակչություն, Թեհրան, 1999, էջ 243:

տարկում է որպես առանձին խնդիր, մի տեսակ կոնֆլիկտ է զգում իր անձի և շրջապատող առարկայական խնդրի միջև, բախում, ընդհարում և հակադրություն, կապի բացակայություն: Դժգոհություն և անբավարարվածություն զգացող մարդն իրեն անզոր է զգում որևէ փոփոխություն առաջացնել սեփական անձի կամ շրջապատի կացությունում, ուստի մատնվում է անհուսության և անօգնականության զգացումի:

Դժգոհության և անբավարարվածության զգացումը քննելիս Ֆրիդենբերգը հիմնականում անդրադառնում է երիտասարդ սերնդի դժգոհության պատճառներին: Նա կարծում է, որ երիտասարդ սերնդի դժգոհության զգացումի ձևավորման մեջ դերակատար են տարբեր գործոններ՝ ուսումնական միջավայրը և կրթական փորձը, ընտանեկան կյանքը և ազգակցական կապերը, հասակակիցների խումբը կամ այլ մարդիկ, որոնց հետ շփվում է անձը:

Երիտասարդ սերնդի օտարման պատճառների վերաբերյալ փորձարարական հետազոտություններում Ֆրիդենբերգը հիմք է ընդունում այն ընդհանուր կանխավարկածը, որ անձը սեփական դժգոհությունն արտահայտում է անհանդուրժող կամ չհարմարվող վարքագծերով, սոցիալական արժեքներին, նորմերին ու կանոններին հակառակվելով և դրանց դեմ պաշտպանական, ատելության, հոռետեսության կամ պասիվության կեցվածք ընդունելով¹⁴:

Ամփոփում

Օտարացումը հումանիտար գիտությունների, հատկապես սոցիոլոգիայի ոլորտում կիրառվող ամենաբարդ ու խրթին եզրույթներից մեկն է, որը չունի մասնագիտական հստակ ու միանշանակ սահմանում:

Օտարացում հասկացության արմատները հասնում են մինչև հրեակալություն և քրիստոնեություն: Նոր շրջանի փիլիսոփաներից առաջինը Հեգելն էր, ով իր փիլիսոփայական հայեցակարգում անդրադարձավ օտարացման իմաստին: Այնուհետև Բրունո Բաուվերը, քննադատելով Հեգելի տեսությունը, անցավ մատերիալիզմին: Կարլ Մարքսը անդրադարձավ օտարացման հարցին և այն սահմանեց իր ուրույն մեթոդով: Դասականների խմբից Մաքս Վեբերը, առաջադրելով երկաթե վանդակի միտքը, բավականին մոտեցավ օտարացման իմաստին: Գեորգ Զիմելը, քննելով փողի ազդեցությունները մոդեռն հասարակությունում, փողին վերագրեց մի քանի օտարացնող հատկանիշներ: Դասական սոցիոլոգներից էմիլ Դյուրկեյմը ամենից շատ է հեռացել

¹⁴ **Մոսեսի Թաբրիզի Ղուամոեզա**, Օտարում, Սոցիալական գիտությունների հանդես, 2-րդ հատոր, թիվ 2, Թեհրանի համալսարանի սոցիալական գիտությունների ֆակուլտետ, Թեհրան, 1991, էջ 69:

օտարացման իմաստից, իսկ Մելվին Սիմենը սոցիալական օտարացում է համարում այն զգացումը կամ վիճակը, որ յուրաքանչյուր անձ զգում է իր, այլոց և հասարակության հանդեպ: Ֆրիդենբերգի դիտարկմամբ դժգոհությունը թե՛ օտարացման պատճառ է և թե՛ անհարմարվողական վարքագծերի առաջացման գործոն:

ОБЩИЕ НАБЛЮДЕНИЯ О ПОНЯТИИ СОЦИАЛЬНОЕ ОТЧУЖДЕНИЕ

РЕЗА ЭМАМИ (ИРАН)

Статья посвящена разным точкам зрения мыслителей относительно термина “отчуждение”, широко применяемого в социологии и философии. В частности, автор обратил внимание на “отчуждение” в христианстве и иудаизме, исследовал относительно этого точки зрения Георга Вильгельма Фридриха Гегеля, Бруно Бауэра, Карла Маркса, Макса Вебера, Георга Зиммеля и Мелвина Саймона.

Ключевые слова – отчуждение, Георг Вильгельм Фридрих Гегель, Бруно Бауэр, Карл Маркс, Макс Вебер, Георг Зиммель и Мелвин Саймон.

OBSERVATIONS ON THE CONCEPT OF SOCIAL ALIENATION

REZA EMAMI (IRAN)

This article considers ‘alienation’, a concept considerably employed in sociology and philosophy. Emami has studied the concept from several thinkers’s perspectives. He has specifically assessed the concept of ‘alienation’ in Christianity and Judaism and the stance of Georg Wilhelm Friedrich Hegel, Bruno Bauer, Carl Marx, Max Weber, Georg Simmel, Melvin Seeman, Emile Durkheim and Edgar Friedenberg on the notion.

Key words – alienation, Georg Wilhelm Friedrich Hegel, Bruno Bauer, Karl Marx, Max Weber, Georg Simmel, Melvin Seeman, Emile Durkheim, Edgar Friedenberg.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գիտական հոդվածում վերլուծության է ենթարկվել հարկ վճարող կազմակերպությունների իրավական վիճակը (կարգավիճակը), դասակարգվել են նրանց իրավունքները և պարտականությունները, առանձնացվել են դրանց բնութագրող որոշակի տարրեր, թվարկվել են նման կազմակերպությունների դադարեցման դեպքերը, բացահայտվել են դրանց իրավական պատասխանատվության հիմքերը և տեսակները, պատասխանատվությունից ազատելու հիմքերը:

Բանալի բաներ – հարկ վճարող կազմակերպություն, իրավական կարգավիճակ, իրավունքներ և պարտականություններ, հարկային մարմին, հարկային գաղտնիք, հաշվառման վայր, գտնվելու վայր, բարդ կազմակերպություններ, պարզ կազմակերպություններ, իրավախախտում, իրավաբանական պատասխանատվություն:

Հարկ վճարող կազմակերպության իրավական կարգավիճակը դրսևորվում է նրա՝ որպես հարկային իրավունքի սուբյեկտի իրավունքներում, պարտականություններում, ինչպես նաև պատասխանատվության մեջ: Նման իրավունքների և պարտականությունների բովանդակությունը պայմանավորված է նրանով, թե կազմակերպությունն ինչպիսի դեր է կատարում հարկային-իրավական հարաբերություններում:

Հարկ վճարող կազմակերպությունը հարկային իրավահարաբերություններում կարող է հանդես գալ տարբեր իրավական կարգավիճակներով: Հարկ վճարող կազմակերպության իրավական կարգավիճակի ընդհանուր տեսակային հատկանիշներից ելնելով՝ առանձնացվում են հարկ վճարող կազմակերպությունների այն հիմնական իրավունքները և պարտականությունները, որոնք նաև հարկ վճարող ֆիզիկական անձանց իրավական կարգավիճակի տարրեր են: Այսպես, հարկային օրենսդրությամբ նախատեսված և կազմակերպության հարկային-իրավական կարգավիճակի բովանդակությունը կազմող հիմնական իրավունքներից և պարտականություններից պետք է առանձնացնել.

1. գործող հարկերի և տուրքերի մասին հարկային մարմնից տեղեկատվություն ստանալու իրավունքը,
2. օրենքով սահմանված հարկային արտոնությունից օգտվելու իրավունքը,
3. ավելի վճարված կամ այլ հարկի հաշվին վճարված գումարը հետ ստանալու իրավունքը,
4. ստուգման գործընթացում հարկային մարմնին և (կամ) նրա լիազոր անձին հարկային օրենսդրության պահանջներին հետևելու պահանջ ներկայացնելու իրավունքը,
5. հարկային մարմնի ակտը, գործողությունը կամ անգործությունը դատական կամ վարչական կարգով բողոքարկելու իրավունքը,
6. հարկային գաղտնիքին հետևելու պահանջի իրավունքը,
7. հարկային մարմնի կամ նրա լիազոր անձի ոչ օրինական որոշման, գործողության կամ անգործության արդյունքում պատճառված վնասի հատուցում պահանջելու իրավունքը,
8. օրենքով սահմանված հարկերը վճարելու պարտականությունը,
9. հարկային մարմնում հաշվառման կանգնելու պարտականությունը,
10. մուտքերի և ելքերի հաշվառում իրականացնելու պարտականությունը,
11. հարկային մարմնին անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունը,
12. հարկը հաշվելու, այն դրամային շրջանառությունից պահելու և համապատասխան բյուջետային (ներբյուջետային) հաշվին փոխանցելու պարտականությունը:

Վերոշարադրյալների հետ մեկտեղ հարկ վճարող կազմակերպության հարկային-իրավական կարգավիճակում հնարավոր է առանձնացնել նաև այնպիսի տարրեր, որոնք բնորոշ են բացառապես իրավական կարգավիճակի այդ տեսակին: Դրանց շարքում կարելի է դասել հարկ վճարող կազմակերպության հարկային-իրավական կարգավիճակի հետևյալ հատուկ տեսակները: Այն է.

1. հարկ վճարող կազմակերպությունների հարկային ռեզիդենտությունից ելնելով՝ դրանք բաժանվում են.

1. կազմակերպությունների, որոնք, կախված իրենց **հաշվառման վայրից**, ռեզիդենտ են,
2. կազմակերպությունների, որոնք, կախված իրենց **գործունեության իրականացման վայրից**, ռեզիդենտ են,

3. կազմակերպությունների, որոնք, կախված իրենց **գույքի գտնվելու վայրից**, ռեզիդենտ են,
4. կազմակերպությունների, որոնք, կախված իրենց **եկամտի ստացման վայրից**, ռեզիդենտ են:

II. Հարկ վճարող կազմակերպությունների սեփականության ձևից ելնելով՝ դրանց իրավական կարգավիճակները լինում են՝ **պետական և մասնավոր**:

III. Հարկ վճարող կազմակերպությունների տնօրինչական գործունեության տեսակից ելնելով՝ **առևտրային և ոչ առևտրային** գործունեություն իրականացնող կազմակերպություններ:

IV. Հարկ վճարող կազմակերպությունների հարկ վճարելու ձևից ելնելով՝ առանձնացվում են նրանց հետևյալ իրավական կարգավիճակները.

1. կազմակերպություններ, որոնք **հարկը վճարում են ավելացված արժեքից**,
2. կազմակերպություններ, որոնք **հարկը վճարում են ստացված շահույթից**:

V. Հարկ վճարող կազմակերպությունների կառուցվածքից ելնելով՝ առանձնացվում են նրանց հետևյալ կարգավիճակները.

1. **բարդ կազմակերպություններ**, որոնք ունեն մասնաճյուղեր և ներկայացուցչություններ,
2. **պարզ կազմակերպություններ**, որոնք չունեն առանձնացված ստորաբաժանումներ,
3. **կազմակերպություններ**, որոնք արտասահմանյան կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ են¹:

Յուրաքանչյուր հարկ վճարող կազմակերպություն հարկային իրավունքի սուբյեկտ է, ուստի և ունի հարկ վճարողի յուրահատուկ իրավական կարգավիճակ:

Արդյունքում կարելի է եզրահանգել, որ **հարկ վճարող կազմակերպության հարկային-իրավական կարգավիճակի առանձնահատկությունը պայմանավորված է տվյալ սուբյեկտի առանձնահատկությամբ և հանդես է գալիս նրա հարկային իրավունքներում, պարտականություններում և իրավաբանական պատասխանատվության մեջ**:

¹ Տե՛ս **Щербакова О. Е.** Правовой статус налогоплательщиков-организаций. Москва, 2002, стр. 56-58:

Հարկ վճարող կազմակերպության հարկային-իրավական կարգավիճակը կարող է դադարել հետևյալ երեք դեպքում.

1. երբ դադարում է կազմակերպության գործունեությունը,
2. երբ օրենքը տվյալ տեսակի կազմակերպությանը հանում է հարկ վճարողների շրջանակից, ազատում նրան հարկ վճարելու պարտականությունից,
3. երբ կազմակերպությունը կորցնում է իր ռեզիդենտությունը:

Հարկային-իրավական կարգավիճակի շրջանակներում կազմակերպության հիմնական առանձնահատկությունը դրսևորվում է հարկային հարաբերություններում նրա յուրօրինակ պատասխանատվություն կրելու մեջ: Հարկ վճարողները հարկային-իրավական նորմերի խախտման համար ենթարկվում են հարկային (նախատեսված է ՀՀ հարկային օրենսդրությամբ), վարչական և նյութական պատասխանատվության: Ընդ որում, կազմակերպություն-իրավախախտը փաստացի կարող է ենթարկվել միայն հարկային պատասխանատվության, մինչդեռ նման իրավախախտում կատարած ֆիզիկական անձը, բացի հարկային պատասխանատվությունից, կարող է ենթարկվել նաև քրեական պատասխանատվության:

Հարկ վճարող կազմակերպության պատասխանատվության մյուս առանձնահատկությունն այն է, որ հարկային իրավախախտում կատարելու մեջ կազմակերպության մեղքը պայմանավորված է լինում նրա լիազոր անձի կամ ներկայացուցչի մեղքով, գործողությամբ (անգործությամբ), որը հանգեցրել է տվյալ հարկային իրավախախտմանը: Ըստ որում, հարկային իրավախախտման սուբյեկտիվ կողմում հարկ վճարող ֆիզիկական անձի մեղքի աստիճանը որոշվում է տվյալ իրավախախտման մեջ նրա մասնակցության ձևով:

Մեր կարծիքով **հարկային օրենսդրությամբ նախատեսված կազմակերպության կողմից կատարվող իրավախախտումը պետք է պայմանավորել հարկ վճարող կազմակերպության մեղքով, որն այդ հարցում պետք է դիտարկել հիմնականը:** Ինչպես նշում է Ս. Ն. Բրատուսը. «Կազմակերպության գործունեությունը, որն իրականացվում է նրա մարմնի միջոցով, կազմակերպության կողմից իրականացվող գործունեություն է, ուստի կազմակերպության մարմնի մեղքը կազմակերպության և ոչ թե նրա մարմնի մեղքն է»²:

Մեր կարծիքով օրենքով պետք է հստակ նախատեսել այն դեպքերը,

² Տե՛ս **Братусь С. Н.** Юридическая ответственность и законность. Москва, 1976, стр. 206, 207:

երբ հարկ վճարող կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հարկային իրավահարաբերություններում իր լիազոր անձի և (կամ) ներկայացուցչի մեղավոր, հակաօրինական գործողության (անգործության) համար:

«Հ հարկային օրենսգրքի³ 399-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Հարկ վճարողին կամ հարկային գործակալին հարկային իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելը չի ազատում նրանց կամ նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վարչական, քրեական կամ այլ պատասխանատվության կիրառումից»:

Մեր կարծիքով ՀՀ հարկային օրենսդրությամբ պետք է նախատեսել նորմ, թե կոնկրետ որ դեպքում հարկային իրավախախտման համար պետք է պատասխանատվության ենթարկվի կազմակերպության լիազորված անձը կամ ներկայացուցիչը, իսկ կազմակերպությունը ճանաչվի անմեղ և ընդհակառակը: Մասնավորապես ՀՀ հարկային օրենսդրությամբ պետք է նախատեսել նորմեր, համաձայն որոնց կազմակերպությունները պատասխանատվություն չեն կրում հարկային իրավախախտումների համար, եթե նրանց լիազորված անձինք կամ ներկայացուցիչները, դուրս գալով իրենց իրավասությունների (լիազորությունների) շրջանակներից և (կամ) առաջնորդվելով իրենց սեփական շահերով, կատարել են գործողություններ (ցուցաբերել են անգործություն), որոնք հանգեցրել են հարկային որոշակի իրավախախտումների: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ, առաջին՝ եթե կազմակերպության լիազորված անձը (մարմինը) գործում է իր իրավասությունների շրջանակներում, ապա նրա գործունեությունը դիտարկվում է որպես կազմակերպության գործունեություն, և երկրորդ՝ եթե լիազորված անձը (մարմինը) դադարում է գործել կազմակերպության շահերից, նրա գործողություններն ուղղված են միայն սեփական պահանջների բավարարմանը, ապա նման գործունեությունը վերաձվում է մասնավոր անձի գործունեության:

Այս աշխատության մեջ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև հարկ վճարող կազմակերպության հարկային-իրավական կարգավիճակի տարրեր հանդիսացող պատասխանատվության ևս մեկ խնդրի՝ իրավախախտումը պայմանավորող և հակաիրավական գործողությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներին:

³ Ընդունվել է 04.10.2016 թ. և ուժի մեջ մտել 01.01.2018 թ.:

Տնտեսության անկայունության հետ կապված՝ կարող են ի հայտ գալ ամենատարբեր իրադրություններ, որոնք կարող են ազդել հարկային իրավախախտման իրականացման վրա: Օրինակ, Ս. Բ. Պրոնինն առանձնացնում է կազմակերպություն-իրավախախտների մի քանի խումբ: Ըստ նրա՝ իրավախախտների առաջին խմբում դասվում են այն կազմակերպությունները, որոնք չեն ցանկանում մարել իրենց հարկային պարտավորությունները, չեն ցանկանում վճարել հարկերը՝ դրա համար օգտագործելով տարբեր ֆինանսական և իրավաբանական հնարքներ: Հեղինակը կազմակերպություն-իրավախախտների երկրորդ խմբում դասում է «մեկանգամյա» իրավախախտներին, որոնք ի սկզբանե ստեղծվում են մեկ կամ մի քանի տնօրինչական գործառույթների իրականացման նպատակով և այդպես էլ չեն ցանկանում վճարել հարկերը: Կազմակերպություն-իրավախախտների այս խումբը գիտակցում է, որ կարճ ժամանակ անց լուծարվելու է, և արդյունքում հարկային իրավախախտում կատարելու համար որևէ մեկը պատասխանատվություն չի կրելու: Երրորդ խմբի մեջ մտնում են «հարկադրված» ապառքապան-կազմակերպությունները, որոնք, ծավալելով շահութաբեր գործունեություն և ստանալով շահույթ, անվճարունակ են դառնում տվյալ տարածքում ստեղծված տնտեսական ճգնաժամի, բանկերի համատարած սնանկացման և այլ պատճառներով: Եվ վերջին՝ չորրորդ խմբին պատկանում են «վնասաբեր» կազմակերպությունները, որոնք գործում են՝ պետության հանդեպ ունենալով պարտավորություններ: Հիշյալ կազմակերպությունները չեն վճարում օրենքով նախատեսված հարկերը եկամտի բացակայության պատճառով⁴: Կարծում ենք, որ նման դասակարգումն ունի գործնական նշանակություն: Անկասկած, առաջին և երկրորդ խումբ իրավախախտների պարագայում նրանց նկատմամբ պետք է կիրառել օրենքով նախատեսված ամենախիստ սանկցիաները, իսկ մյուս երկու խմբերի դեպքում պահանջվում է բանիմաց վարչական կառավարում, որի արդյունքում կազմակերպությունը կարող է շարունակել գործել՝ վճարելով նաև պետության հանդեպ ունեցած իր հարկային պարտավորությունները: Գտնում ենք, որ երրորդ և չորրորդ խումբ կազմակերպություն-իրավախախտներին պատասխանատվության ենթարկելիս օրենքով սահմանված հարկերը վճարելու պարտականությունը չիրականացնելը պետք է դիտարկել որպես պատիժը և պատաս-

⁴ Տե՛ս **Пронин С. Б.** Обращение недоимки по налогам на имущество юридических лиц // Финансы. Москва, 1996, стр. 31, 32:

խանատվությունը մեղմացնող հանգամանք, ինչը չի կարելի ընդունել առաջին երկու խումբ իրավախախտների պարագայում:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի և 4-րդ գլխի համաձայն՝ հարկային իրավախախտումների համար հարկային պատասխանատվության իրականացումը վերապահված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին: Վերջինս այդ գործառույթն իրականացնում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, հիմքերով և գործընթացով (վարույթով): ՀՀ հարկային օրենսդրությամբ հարկ վճարող կազմակերպությունների հարկային-իրավական խախտումների համար պատասխանատվություն է սահմանված «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-28.5-րդ հոդվածներով, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով և այլ հարկային օրենքներով:

Հարկային իրավախախտումների համար կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելիս ՀՀ հարկային օրենսդրությամբ չկան կազմակերպություն-իրավախախտի պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների կիրառման կառուցակարգեր (մեխանիզմներ), ինչը չի կարելի ասել ֆիզիկական անձանց պատասխանատվության դեպքերի մասին: Գտնում ենք, որ հարկային օրենսդրությամբ պետք է նախատեսել կազմակերպության պատասխանատվությունը մեղմացնող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են ծանր դրությունից ելնելով կատարված իրավախախտումները, դրանք սպառնալիքի կամ նյութական ուժի ազդեցության տակ կատարելը և այլն: Իսկ ծանրացնող հանգամանքների մասով ՀՀ հարկային օրենսդրությունը կարծես թե պատասխանատվությունը կարգավորող նորմերով նախատեսել է հարկադրանքի միջոցի ծանրություն՝ կապված պատճառված վնասի չափի հետ, նախկինում նման արարքներ կատարած լինելու հանգամանքի հետ և այլն⁵:

Մեր կարծիքով ՀՀ հարկային օրենսդրությամբ պետք է հստակ նախատեսել հարկ վճարող կազմակերպությունների պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, որը կարող է նպաստել հարկադրանքի կիրառման միջոցի արդարության, օրինականության, ըստ մեղքի պատասխանատվության կիրառման սկզբունքների ամրապնդմանը:

⁵ Մանրամասն տե՛ս, օրինակ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխ, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48.1, 158, 165, 169, 169.5-րդ և այլ հոդվածներ:

Հարկային-իրավական գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ հարկ վճարող կազմակերպությունների իրավաբանական պատասխանատվությունն ունի երկու բնույթ՝ դրական և բացասական:

Պատասխանատվության դրական բնույթը դրսևորվում է որպես հարկի վճարման ապահովման անհրաժեշտ պայման, ընդ որում հարկ վճարողը տեղյակ լինելով, որ օրենքով սահմանված հարկային պարտականությունները չկատարելու համար կարող է ենթարկվել պատասխանատվության, ամեն կերպ փորձում է կատարել օրենքով սահմանված պարտականությունները, ջանում է ցուցաբերել օրինական վարքագիծ հարկային իրավահարաբերություններում: Պատասխանատվության նման բնույթի մասին խոսվում է միայն իրավաբանական գրականության մեջ: Ի. Գ. Դենիսովի կարծիքով հարկային իրավախախտումների հիմնական պատճառների շարքում պետության խնդիրն է իրականացնել հարկ վճարողների «դաստիարակություն», նրանց ակտիվության դրսևորում օրինապահ վարքագիծ ցուցաբերելու ուղղությամբ, ինչպես նաև հարկ վճարողների մեջ մտցնել այն գաղափարը, որ հարկերը վճարելու պարտավորությունը նպաստում է հենց իր՝ հարկատուի գործունեության ապահովմանը: Այսինքն՝ առաջ է քաշվում այսպես կոչված հարկ վճարողի պոզիտիվ պատասխանատվության կանոնակարգումը:

«Հ հարկային օրենսդրությամբ ամենից շատ կարգավորված է կազմակերպության հարկային-իրավական պատասխանատվության բացասական բնույթը, որի վերլուծության հիման վրա կարելի է ներկայացնել հարկային-իրավական պատասխանատվության հետևյալ սահմանումը. **հարկային իրավական պատասխանատվությունը կոնկրետ հարկային-իրավական խախտման համար պետության կողմից կիրառվող հարկադրանքի միջոց է, որը դրսևորվում է տույժի, տուգանքի կամ պատասխանատվության այլ միջոցի կիրառմամբ:**

Հարկ վճարող կազմակերպությունների ինչպես դրական, այնպես էլ բացասական պատասխանատվությունը սահմանափակվում է նրանով, որ այն կախված է կազմակերպության լիազորված անձի կամ ներկայացուցչի վարքից՝ անկախ դրդապատճառներից: Նրանց իրավագիտակցության մակարդակը պայմանավորում է կազմակերպության պարտավոր, իրավաչափ վարքի պատշաճ դրսևորումը հարկային-իրավական հարաբերություններում:

Վերոշարադրյալի հիման վրա կարելի է ներկայացնել հարկ վճարող կազմակերպությունների հարկային իրավական կարգավիճակի հետևյալ բնորոշումը. **հարկ վճարող կազմակերպության հարկային-իրավական կարգա-**

վիճակը հարկային իրավահարաբերություններում նրա իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար վրա հասնող պատասխանատվության միջոցների ամբողջությունն է:

СТАТУС ПЛАТЯЩИХ НАЛОГ КОМПАНИЙ

ТАМАРА ГРИГОРЯН

В данной научной статье проанализировано правовое положение (статус) платящих налог компаний, классифицированы их права и обязанности, отделены некоторые элементы характеризующие их, перечислены случаи прекращения действия таких организаций, раскрыты основы и виды их юридической ответственности, основания для освобождения от ответственности.

Ключевые слова – компания платящая налог, правовой статус, права и обязанности, налоговый орган, налоговый секрет, место регистрации, место жительства, комплексные компании, простые компании, правонарушение, юридическая ответственность.

STATUS OF TAXPAYING COMPANIES

TAMARA GRIGORYAN

This scientific article analyzes the legal status of taxpaying companies, classifies their legal liability. Some of their definite characterizing features are segregated. Closing cases of such companies are enumerated. Moreover, the theories and types of their legal liability and the grounds for exemption from liability are as well revealed.

Key words – taxpaying company, legal status, legal liability, tax authorities, tax secrets, tax residency, residence, complex companies, simple companies, breach of law, legal liability.

РОМАНО-ГЕРМАНСКАЯ КОНЦЕПЦИЯ ИСТОЧНИКОВ ПРАВА

ТИГРАН ТОРОСЯН

В статье подробно представлены особенности романо-германской правовой системы, источники права и доктрина этой системы о сути, содержании, классификации и особенностях источников права.

Статья имеет важное научно-познавательное, практико-прикладное значение в сфере прикладной юридической деятельности и правотворчества.

Ключевые слова – правовая система, нормы права, становление, развитие, правовая семья, приспособление, использование, исторические условия.

Континентальная правовая система является самой старой и самой распространенной, которая включает в себя практически все страны Европы, за исключением Великобритании, страны СНГ, Азии, многие страны Латинской Америки, ряд стран Африки и так далее¹.

Континентальная, или романо-германская система права является результатом творческого развития римского частного права европейскими учеными, главным образом в университетах².

Континентальное право развивалось под определяющим влиянием доктрины права, и прежде всего римского права. При создании его норм научные абстракции, человеческий разум и деятельность ученых играли и играют решающую роль. Большинство жизненных ситуаций рассматривается через призму доктрины и под нее подстраивается. Сущность континентального подхода состоит не в том, чтобы найти в практике и отшлифовать то или иное решение. Главное – выработать общий идеальный принцип, а затем "регулиру-

¹ Подробно см. **Рене Давид, Камилла-Жоффе Спинози**. Основные правовые системы современности. М., 2011, стр. 29-111; **Кристофер Осаке**. Сравнительное правоведение в схемах: общая и особенная части. М., 2000, стр. 24-40; **Марченко М.Н.** Курс сравнительного правоведения. М., 2000, стр. 418-612; **Марченко М.Н.** Сравнительное правоведение: общая часть. М., 2001, стр. 263-361; **Марченко М.Н.** Правовые системы современного мира. Учебное пособие. М., 2001, стр. 25-112; **Петросян Р.** Сравнительная характеристика романо-германского и англо-саксонской систем гражданского процесса в современной правосудии. "Вопросы правосудия", 1997, N 4.

² См. Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. Том 2. Теория права. Ред. **Марченко М.Н.**; Москва, 2011, стр. 112.

ровать" при помощи него общественные отношения.

Не претендуя на полный охват всех отличительных черт романо-германского права, остановимся на рассмотрении лишь некоторых, наиболее важных из них, по существу фактически определяющих его характер и содержание.

Среди них следует выделить, во-первых, органическую связь романо-германского права с римским правом, его становление и развитие на основе римского права.

Многократно подчеркивая данную отличительную черту романо-германского права, отечественные и зарубежные исследователи особо фокусируют внимание на том, что романо-германская правовая семья сложилась «на основе изучения римского права в итальянских, французских и германских университетах, создавших в XII—XVI вв. на базе Свода законов Юстиниана общую для многих европейских стран юридическую науку»³, и что сердцевиной этой правовой семьи явилось «римское *jus civile* - частное право, которое применялось лишь к римским гражданам и в отношениях между римскими гражданами на территории и в пределах Римского государства»⁴.

Следует заметить, что некоторые авторы-компаративисты придают настолько большое значение прямому воздействию римского права на процесс формирования и развития романо-германского права, что даже пытаются определять последнее путем указания на его неотъемлемую связь с первым.

Одним из примеров такого определения может служить распространенная «рабочая дефиниция», в соответствии с которой романо-германское (цивильное) право рассматривается как система права или правовая семья, «в которой Свод законов Юстиниана (*Justinians Corpus juris civilis*) всегда был и остается если не важнейшей составной частью этого права, то, по крайней мере, той силой, которая оказывает на него прямое и весьма эффективное воздействие»⁵.

Соглашаясь в принципе с подобного рода определениями и с положением о том, что на природу и характер романо-германского права, в отличие от других правовых семей, решающее воздействие оказало римское право, нельзя в то же время избежать вопроса, рассматривалось ли такое воздействие

³ Саидов А. Л. Сравнительное правоведение. М., 2014, стр. 21-22.

⁴ См. Покровский И.А. История римского права. С-Петербург, 1998, стр. 293-294.

⁵ См. Проблемы общей теории права и государства. Под общей ред. акад. Нерсесяна В.С. М., 2006, стр. 285.

в одинаковой мере на всю романо-германскую правовую семью, или же оно затрагивало лишь ее отдельные составные части.

Ведь если римское право оказывало сильное воздействие на все, без исключения, национальные правовые системы - составные части романо-германской правовой семьи, то и в этом случае мы будем иметь одну историческую картину и сможем без оговорок заявлять, что римское право действительно стало методологической и юридической основой всего романо-германского права. Ибо речь при этом идет не столько о рецепции, своеобразном «внедрении» норм римского права в систему романо-германского права, сколько о приспособлении и использовании в новых исторических условиях его основных идей, институтов, образа юридического мышления, подходов, правовых доктрин⁶.

Римское право оказывало далеко не одинаковое влияние на процесс формирования и развития различных национальных правовых систем — составных частей романо-германского права.

Разумеется, все западноевропейские народы в период средневековья испытали влияние античной культуры и «римского права как неотъемлемой его части», хотя это происходило в разное время и по-разному⁷.

В Германию, например, римское право пришло сравнительно поздно, в основном в середине XV в., но его воздействие на местное право было значительно сильнее, чем, скажем, во Франции. Это проявлялось, в частности, в том, что ни в одной западноевропейской стране «процесс рецепции не только институтов и понятий римского права, но и древнеримской юридической мысли не получил столь широкого распространения, как в Германии»⁸.

Основные причины такого явления лежат более всего в политической сфере, нежели в правовой или иных сферах. А именно - в существенном ослаблении центральной имперской власти в данный период и в одновременном усилении власти отдельных феодалов и больших городов.

В научной литературе при этом указывается на разные обстоятельства и даются различные объяснения ослабления центральной власти в Германии в рассматриваемый период. Говорится, например, о том, что германские импе-

⁶ **Марченко М.Н.** Курс сравнительного правоведения. М., 2000.

⁷ **Берман Дж.** Традиции западного права. М., 1994.

⁸ **Цвайгерт К., Кетц Х.** Указ. соч, стр. 205.

раторы «чрезмерно увлеклись итальянскими делами в ущерб интересам внутренней политики». Указывается на то, что императорская власть оказалась неспособной, в силу разных причин, окончательно решить проблемы ленных владений и тем самым сплотить вокруг себя феодальных баронов «в той мере, как это имело место во Франции или в Англии»⁹.

Однако, как бы там ни было, ясно одно, что ослабление императорской власти в стране и усиление самостоятельности немецких княжеств способствовали рецепции римского права. Исследователями справедливо указывалось на то, что раздробленность политической власти помешала становлению и консолидации, прежде всего общегерманского частного права, появлению «общегерманской судебной системы и общегерманского юридического сословия»¹⁰. А это, в свою очередь, могло бы, как показывает пример Франции и Англии, стать противовесом римскому праву и в значительной мере ослабить ее влияние.

В Германии, между тем, этого не случилось. Отсутствие в стране в средневековый период сильной централизованной политической и судебной властей, с помощью которых можно было бы консолидировать как социальную систему, преодолев раздробленность многочисленных народов, населявших Германию, немецких племен и свободных городов, так и правовую систему, способствовало созданию там важнейших предпосылок для укоренения в правовой системе римского права¹¹.

Раздробленность германского общества и слабость централизованной политической власти, сочетаемые с отсутствием юридического сословия в стране и слабостью имперского суда, в значительной мере зависимого от центральной политической власти и уже в силу этого не имевшего сколько-нибудь значительного влияния в обществе, - все это и многое другое создало условия для сохранения в Германии в течение длительного времени весьма архаичной и раздробленной национальной правовой системы, с одной стороны, и широкого проникновения в нее норм, канонов и доктрин римского права - с другой.

Этому же в значительной мере содействовали церковь и университеты.

⁹ Цвайгерт К., Кетц Х. Указ. соч., стр. 205.

¹⁰ Там же, стр. 138-147.

¹¹ См. Жалинский А., Рерихт А. Введение в немецкое право. Москва, 2001, стр. 22-23.

Традиция изучать право в германских университетах того времени пришла в страну как наследие от итальянских университетов, где изучение римского права стояло превыше всего. Первоначально оно изучалось «для разрешения религиозных вопросов (каноническое право)», а позднее - в силу того, что высокоразвитое римское право было преобладающим правом в Италии.

Известно, что в рассматриваемый период германские студенты сначала учили римское право в итальянских университетах, а затем, начиная с XVI столетия, по мере становления и развития университетского образования в Германии, изучение его было перенесено «естественным путем» на территорию собственно самой Германии. Более того, многие германские университеты были вначале созданы как теологические колледжи, где преподавалось каноническое право, «основанное на римском праве»¹².

Названные политические, академические и иные причины, способствовавшие укоренению и развитию в Германии римского права, в научной литературе нередко называют теоретическими причинами.

Теоретические причины объясняют многое в соотношении римского и местного права Германии в данный период, но далеко не все, например, то, почему римское право было воспринято в столь широком объеме именно в этой стране и почему местное право, пусть даже раздробленное, оказалось неудовлетворительным¹³.

Это связывают с тем, что формы отправления правосудия в Германии уже более не отвечали потребностям времени. В частности, в соответствии с традицией судьи принимали решение на основе уже состоявшихся правовых понятий, практической сметки, житейского опыта и знания дела, интуитивного понимания того, что наиболее соответствовало конкретной жизненной ситуации, которая была у них перед глазами¹⁴.

Такой, основанный не на умозаключениях, а на чувственном восприятии «органолептический» метод отправления правосудия, уходящий корнями в далекое прошлое, в основном перестал соответствовать экономическим и социальным условиям позднего средневековья, которые становились все более сложными, многообразными и запутанными. В этот вакуум и устремилось

¹² Цвайгерт К., Кетц Х. Указ. соч., стр. 14-15.

¹³ Там же, стр. 207.

¹⁴ См. там же.

римское право. «И не потому, что его нормы были по содержанию лучше или правильнее, чем нормы обычного германского права, а благодаря многообразию выработанных им понятий и формализации правового мышления, с помощью которых даже трудные проблемы можно было опосредовать юридически, подвергнуть логическому анализу и раскрыть их суть, сделав предметом доступной для понимания аргументации»¹⁵.

Разумеется, если бы в Германии в данный период существовало свое «национальное» сословие юристов - высококвалифицированных судей, адвокатов и профессоров права, способных, с одной стороны, обобщить и систематизировать нормы местного права, а с другой - дополнить и обогатить местное право с помощью норм, институтов и понятий римского права, как, например, во Франции, то в таком виде нормы и институты местного права, с точки зрения специалистов в области истории и теории германского права, могли бы полностью отвечать потребностям своего времени.

Однако, ничего этого не случилось. Для подобной эволюции местного права Германии в это время не созрели еще ни социальные, ни политические предпосылки. Поэтому местное право как бы застыло в «преднаучном», неупорядоченном, раздробленном состоянии. В силу этого понятия и институты римского права были восприняты в большинстве государственно-территориальных образований Германии и в большинстве отраслей права как таковые, «в чистом виде», без учета национальных особенностей единой правовой культуры, «которой попросту не существовало, как не существовало и сплоченного сословия судей и адвокатов, которые могли бы ее создать»¹⁶.

К этому следует добавить, что в то время римское право не было каким-либо действующим иностранным правом. Оно рассматривалось как право Римской империи, и его притязания на применение в Германии «могли основываться на том, что Священная римская империя германской нации, как свидетельствует уже одно ее название, считала себя преемницей Римской империи», а германский император претендовал на роль наследника римских цезарей.

Не затрагивая другие стороны процесса рецепции римского права в средневековой Германии, отметим лишь два связанных с этим обстоятельства

¹⁵ См. там же.

¹⁶ Цвайгерт К., Кетц Х. Указ. соч., стр. 207.

и вытекающих из них вывода: а) данный процесс в Германии приобрел гипертрофированный характер по сравнению с другими странами, правовые системы которых относятся к романо-германскому праву; и б) в связи с неравномерностью воздействия римского права на национальные правовые системы - составные части романо-германского права, его можно лишь весьма условно считать юридической, интеллектуальной и методологической базой этой правовой семьи.

Таковой она представляется лишь в сравнении с другими правовыми семьями, и прежде всего с англосаксонским правом. Однако, некоторые авторы считают, что последнее, и в особенности английское право, «в некоторых отношениях» (казуистический характер норм права, пренебрежение общими формулами и т. п.) находится даже ближе к римскому праву, чем романо-германское право. Однако, данная точка зрения разделяется лишь отдельными исследователями- компаративистами.

В западной научно-исследовательской литературе в связи с этим традиционно указывается на то, что «работы ученых-юристов (*La doctrine, die Rechtslehre*), подобно решениям суда, пользуются значительным влиянием в системе гражданского права». Их значение усиливается особенно тогда, когда право, призванное регулировать те или иные общественные отношения, находится в процессе становления и весьма неопределенно, или же когда вообще отсутствуют те или иные востребованные самой жизнью нормы права и институты. В этих условиях правовая доктрина может играть весьма заметную роль¹⁷.

Сравнивая «уровень доктринальности» романо-германского и англосаксонского права и подчеркивая, что во Франции право, будучи относительно автономным социальным явлением, «полностью отделено от политики и религии», многие авторы- компаративисты рассматривают французское право, а вместе с ним и всю романогерманскую правовую семью скорее «в терминах фундаментальных принципов», с точки зрения различных концепций и абстрактных подходов, нежели с позиций его как важнейшего средства разрешения возникающих в обществе, между его членами и их организациями споров или же средства «установления социального мира».

¹⁷ **Бошно С.В.** Доктрина как форма и источник права. «Журнал права». N 12, 2003, стр. 70-79.

Романо-германская правовая семья более доктринальна в смысле восприятия и абсорбирования правовых теорий и доктрин, нежели англосаксонская.

Согласно сложившейся в рамках романо-германского права право не должно быть лишь профессиональным достоянием юристов, «существовать только ради их сохранения как некой касты или сословия и обслуживаемых ими судов». Восприятие права при этом традиционно выходит за пределы того, что в англосаксонском понимании считается «чистым» правом - системой юридических правил, «судейских» и иных вырабатываемых в процессе правоприменения принципов, отдельных судебных решений, статутов и норм. Оно не только не изолируется от окружающей, «не юридической» среды и «других интеллектуальных дисциплин», а, наоборот, органически сочетается с ними, фокусируя при этом внимание, прежде всего, на «правах и обязанностях, признанных в обществе в соответствии с идеалами справедливости».

Сущность права при этом усматривается не столько в существовании системы неких «механически» установленных, «технических норм, с помощью которых решаются те или иные задачи», сколько в наличии социально-правовых принципов и общих идей, на основе которых оно формируется и развивается, которые оно само, в свою очередь, порождает.

В отличие от англосаксонского права, где «юридические нормы вырабатываются судами при решении спорных вопросов применительно к каждому конкретному, специфическому случаю»¹⁸, в системе романо-германского права все обстоит несколько иначе. А именно - в процессе его формирования и развития исходят не из конкретных спорных дел или случаев, а из определения «общих принципов» и правовых доктрин, на основе которых не только создаются те или иные нормы права, но и решаются конкретные дела.

Среди отличительных черт романо-германского права следует указать на особую значимость закона в системе источников права.

Отмечая данную особенность, исследователи романо-германского права справедливо акцентируют внимание на том, что в современных условиях в странах, правовые системы которых относятся к рассматриваемой правовой семье, как правило, считается, что для юриста «лучшим способом установ-

¹⁸ См. **David R.** English and French Law. L., 1980, p. 56-84.

ления справедливого, соответствующего праву решения» является обращение именно к закону¹⁹.

Эта тенденция восторжествовала в XIX в., когда в подавляющем большинстве государств романо-германской правовой семьи были приняты кодексы и писанные конституции. Она еще более укрепилась в современную эпоху в силу ряда причин, и прежде всего благодаря значительному расширению роли государства практически во всех областях жизни общества.

Такого рода тенденция - опираться на закон как основной источник права, с одной стороны, соответствовала, по мнению авторов, установленным в обществе принципам демократии, а с другой — оправдывалась тем, что государственные органы обладают гораздо большими возможностями по сравнению с любыми иными организациями «для координации деятельности различных секторов общественной жизни и для определения общего интереса»²⁰.

Кроме того, закон уже «в силу самой строгости его изложения» рассматривался как лучший «технический способ» установления «четких норм в эпоху, когда сложность общественных отношений выдвигает на первый план, среди всех аспектов правильного решения, его точность и ясность». Последнее имеет немаловажное значение как для эффективности правоприменения, так и для сохранения и поддержания единства романо-германской правовой семьи, где, несмотря на сложность и огромную географическую протяженность последней, нормы права понимаются и оцениваются одинаково.

В романо-германской правовой семье, где наука традиционно занимается упорядочением и систематизацией решений, выносимых по конкретным делам, «правовая норма перестала выступать лишь как средство решения конкретного случая». Благодаря усилиям науки «норма права поднята на высший уровень». Ее понимают и оценивают не иначе как «правило поведения, обладающее всеобщностью и имеющее более серьезное значение, чем только лишь ее применение судьями в конкретном деле».

Следует особо подчеркнуть, что в странах романо-германской правовой семьи, в отличие от стран общего права, норма права не создается судьями. «У них для этого нет времени». Кроме того, заботы о справедливости решения

¹⁹ Рене Давид, Камилла-Жоффе Спинози. Указ. соч., стр. 78.

²⁰ См. Теория государства и права. Под редакцией А.С. Пиголкина. М., 2015, стр. 376.

именно по тому или иному конкретному делу «отстраняют все иные соображения». К тому же судьи согласно, например, законодательству Франции (ст. 5 Гражданского кодекса Франции) не могут выносить решения в виде «общих распоряжений». Правовая норма, которая не может и не должна быть творением судей, появляется позднее. Она создается как «продукт размышления, основанного частично на изучении практики, а частично на соображениях справедливости, морали, политики и гармонии системы, которые могут ускользнуть от судей».

По своей природе и характеру норма права в романо-германской правовой семье, выступающая как основа кодификации права, является «чем-то средним между решением спора - конкретным применением нормы - и общим принципом права»²¹. При этом вполне справедливо подмечается, что сам термин «норма», так же как и термин «закон», ассоциируется в нашем сознании с определенной степенью обобщенности, ибо без этого невозможно было бы вообще говорить о применении содержащегося в них правила для решения каких бы то ни было конкретных дел.

Однако вопрос применительно к романо-германскому праву заключается в том, какова же должна быть степень этой обобщенности нормы права, каков должен быть ее наиболее оптимальный вариант? В теоретическом и практическом плане вопрос этот далеко не простой, а тем более - не тривиальный. От его успешного решения в значительной мере зависят как степень востребованности закона, содержащего в себе те или иные правовые нормы, так и степень его эффективности.

Искусство юриста в странах романо-германской правовой системы состоит в умении найти нормы и сформулировать их с учетом необходимости поддержания некоего равновесия между конкретным применением нормы права, с одной стороны, и общими принципами права - с другой.

Нормы права не должны быть слишком общими, поскольку в этом случае они перестают быть «достаточно надежным руководством для практики». Но в то же время они должны быть «настолько обобщенными, чтобы регулировать определенный тип отношений, а не применяться, подобно судебному решению, лишь к конкретной ситуации.

²¹ Рене Давид, Камилла-Жофре Спинози. Указ. соч., стр. 70.

Разумеется, что применительно к различным отраслям права требование сохранения подобного равновесия не может быть одинаковым. В отношении таких отраслей права, как уголовное или налоговое, степень конкретизации норм права по возможности должна быть максимальной. Это необходимо прежде всего для того, чтобы свести к минимуму возможный «произвол администрации».

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ՈՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿՈՆՑԵՊՏԻԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հոդվածում հանգամանորեն ներկայացվում են ռոմանագերմանական իրավական համակարգի առանձնահատկությունները, իրավունքի աղբյուրները և այդ համակարգի դոկտրինը՝ իրավունքի աղբյուրների էության, բովանդակության, դասակարգման և առանձնահատկությունների մասին:

Հոդվածն ունի գիտաճանաչողական, գործնական-կիրառական զգալի նշանակություն՝ իրավակիրառական գործունեության և իրավաստեղծագործության ոլորտներում:

Բանալի բառեր – իրավական համակարգ, օրենքի նորմեր, ձևավորման, զարգացման, իրավական ընտանիքի, ադապտացիայի, օգտագործման, պատմական պայմաններում:

ROMAN-GERMANIC CONCEPT OF LAW SOURCES

TIGRAN TOROSYAN

This article precisely and meticulously presents the characteristic features of the Romance and Germanic legal system. Its law sources as well as the doctrine concerning the essence, content, classification and features of these sources of law.

The article is of a scientifically cognitive, practically applicable huge importance in the law-making and law-creating fields.

Key words – legal system, norms of law, formation, development, legal ‘system’ or legal ‘family’, adaptation, utilization, historical conditions.

ՀԱՆՐԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հոդվածում հանգամանորեն քննարկվում են հանրային-իրավական ռեժիմները, դրանց էությունը, բովանդակությունն առանձնահատկությունների իրավակարգավորումների գործընթացում:

Բանալի բառեր – հանրային, իրավական, ռեժիմ, էություն, բովանդակություն, առանձնահատկություն, իրավակարգավորում:

Իրավական ռեժիմների առանձին տեսակների՝ հանրային – իրավական և մասնավոր-իրավական ռեժիմների ուսումնասիրությունն անկյունաքարային նշանակություն ունի ժամանակակից իրավունքի տեսության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման գործընթացում: Ավելին, հանրային-իրավական ու մասնավոր-իրավական ռեժիմների ուսումնասիրությունը պետք է կատարվի ոչ թե հանրային ու մասնավոր իրավունքի առանձին ճյուղերի հանդեպ, այլ որպես երևույթներ, որոնք բնորոշում են իրավունքի միասնական ենթահամակարգերը հարմարեցված առարկայով, մեթոդով, իրավական կարգավորման մեխանիզմով ու սկզբունքներով: Այն ոչ միայն իրավունքի բնագավառների մեխանիկական միասնականություն է, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունների որոշակի տիպ: Բանն այն է, որ իրավունքի նորմերի տարանջատումն իրավունքի ճյուղերի հիմնվում է մեկ չափանիշի վրա՝ իրավունքի ու հասարակական հարաբերությունների համագործակցություն, իսկ իրավունքի նորմերի մասնավոր ու հանրային տեսակների բաժանման հիմքում ընկած է հասարակության ու հանրային իշխանության համագործակցությունը:

Այսպես, Ա.Ա. Ալեքսեևը, հիմնավորվում է, որ հանրային իրավունքի ու իրավունքի բնագավառը չեն համընկնում՝ նշելով, որ «հանրային իրավունք» և «վարչական իրավունք» հասկացությունների մերձավորության հետ մեկտեղ, նրանց միջև չի կարելի դնել հավասարության նշան: Եթե հանրային իրավունքն արտահայտում է իրավունքի սկիզբը, որոնք կապված են բանակա-

նության հետ, նրա իմաստը, ապա վարչական իրավունքը ազգային իրավաբանական համակարգի բնագավառ է»¹:

Ճյուղային ու «դուալիստական» մոտեցումների անհամապատասխանության օգտին փաստարկն այն է, որ հանրային ու մասնավոր իրավունքում բաժանման բնագավառային չափանիշների կիրառման դեպքում տեղի է ունենում հանրային ու մասնավոր իրավունքների մեթոդների ու առարկաների հատում, իսկ ավելի ճիշտ՝ բնագավառների հատում, որոնք պատկանում են մասնավոր հանրային իրավունքին: Օրինակ, կառավարչական հարաբերություններն ավանդապես կազմում են վարչական իրավունքի առարկան և հետևաբար՝ հանրային իրավունքի առարկան: Սակայն կառավարչական հարաբերությունները նույնպես կարող են հանդիսանալ քաղաքացիական իրավունքի առարկա: Խոսքը այսպես կոչված «կորպորատիվ հարաբերությունների» մասին է, որոնց բնույթը հիմնված է իշխանության ու ենթակայության հարաբերությունների վրա:

Ինչ վերաբերում է իրավական կարգավորման մեթոդների հատմանը, որոնք կիրառվում են իրավունքի հանրային ու մասնավոր ոլորտների կողմից, ապա առկա է իրավունքի բնագավառների շարք, որտեղ կիրառվում են ինչպես հանրային–իրավական, այնպես էլ մասնավոր–իրավական մեթոդներ: Դրանց շարքում է դասվում, օրինակ, աշխատանքային իրավունքը, որը հիմնվում է մի կողմից դիսպոզիտիվ նորմերի (պայմանագրի ազատության, կողմերի ինքնավարության ու իրավաբանական հավասարության), մյուս կողմից՝ իմպերատիվ նորմերի վրա (աշխատանքային ռեժիմի պաշտպանության, պատասխանատվության բնագավառ): Նույնը կարելի է ասել ընտանեկան իրավունքի մասին, որտեղ հանրային–իրավական մեթոդների միջոցով կարգավորվում են այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են ծնողական իրավունքների սահմանափակումը կամ ծնողական իրավունքներից զրկումը: Այսպիսով, հանրային–իրավական ռեժիմը նման չէ վարչական–իրավական, իսկ մասնավոր–իրավականը՝ քաղաքացիական իրավական ռեժիմներին: Հետևաբար, առաջանում է հանրային ու մասնավոր–իրավական ռեժիմների՝ որպես իրավագիտության ինքնուրույն կատեգորիաների խորը հետազոտության պահանջմունք: Հանրային–իրավական ռեժիմները դիտարկելիս անհրաժեշտ է դիտարկել նաև Յու.Ա. Տիխոմիրովի տեսակետը, համաձայն որի՝ հանրային իրավունքի առարկան կապված է հետևյալ օբյեկտների հետ՝ պետության ու նրա

¹ Տե՛ս **Алексеев С.С.** Восхождение к праву. Поиски и решения. Москва, 2001, стр. 549.

ինստիտուտների կառուցվածքն ու գործարկումը, քաղաքացիական հասարակության ինստիտուտները, ինքնակառավարման մեխանիզմն ու մակարդակները, իրավական համակարգի, իրավաստեղծման ու իրավակիրառման հիմքերը, միջպետական հարաբերությունների ու միջազգային կազմակերպությունների նորմերն ու հաստատությունները²: Դրա հետ մեկտեղ, հեղինակը նշում է, որ վերոնշյալներից որոշ օբյեկտներ բացառիկ են, քանի որ կապված են միայն հանրային իրավունքի հետ, իսկ մյուսները հարակից են, քանի որ կարող են անցնել մասնավոր իրավունքի բնագավառային կարգավորում: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել հանրային-իրավական կարգավորման սահմանները:

«Հանրային շահ» հասկացությունն օժտված է բարդ տեսական-իրավական կառուցվածքով և ակտիվորեն կիրառվում է օրենսդրությունում: Հանրային շահերի, նրա հնարավոր խախտման կամ պաշտպանության հետ են կապված որոշակի իրավական հետևանքներ:

Իրավական ռեժիմի հասկացության ընդհանուր տեսական մոտեցման հիման վրա կարելի է սահմանել, որ հանրային-իրավական ռեժիմը հանրային շահերի ապահովման միջոց է, որոնք կարգավորվում են հանրային իրավունքի կողմից, հասարակական հարաբերությունների այն բնագավառներում, որտեղ անհրաժեշտ է նման համալիր կարգավորչի կամ պաշտպանական ազդեցությունը:

Հանրային-իրավական ռեժիմի ընդհանուր ուղղությունների սահմանման նորմատիվ-իրավական հիմքը կարելի է ճանաչել բյուջետային օրենսդրության նորմերը, որոնք սահմանում են պետական ծախսերի հիմնական ուղղությունները: Դրանք են.

ա. ընդհանուր պետական հարցեր՝ ՀՀ նախագահի, բարձր պաշտոնատար անձի, մունիցիպալ կրթության, պետական իշխանության մարմինների ու մունիցիպալ կազմավորումների ներկայացուցչական մարմինների գործունեությունը, դատական համակարգը, հարկային, մաքսային, ֆինանսական մարմինների ու ֆինանսական վերահսկողության մարմինների գործունեության ապահովումը, ընտրությունների, հանրաքվեների անցկացման ապահովումը, միջազգային հարաբերությունները և միջազգային համագործակցությունը, պետական նյութական ներուժը, հիմնարար հետազոտություններ,

² См'у Тихомиров Ю.А. Публичное право. Москва, 1995, стр. 31, 32:

պահուստային հիմնադրամներ, հարցեր կիրառական գիտական հետազոտություններ պետական ոլորտում, այլ համապետական հարցեր:

բ. Ազգային պաշտպանությունը:

գ. Ազգային անվտանգությունը և իրավապաշտպան գործունեությունը, դատախազական և ոստիկանական մարմինները, արդարադատության մարմիններ, պատժի կատարման համակարգ, անվտանգության մարմիններ, սահմանապահ ծառայության մարմիններ, թմրանյութերի ու հոգեմետ նյութերի շրջանառության վերահսկողության մարմիններ, բնական ու տեխնոլոգիական բնույթի արտակարգ իրավիճակների տարածքի ու ազգաբնակչության պաշտպանություն, քաղաքացիական պաշտպանություն, հրդեհային անվտանգության ապահովում, միզոցիոն քաղաքականություն, ներքին գործերի, գործադիր իշխանության փրկարարական ծառայությունների, որը լիազորված է քաղաքացիական պաշտպանության խնդիրների լուծման համար, իրավապահ ու այլ մարմինների մոդեռնիզացիա, կիրառական գիտական հետազոտություններ ազգային անվտանգության ու իրավապահ գործունեության բնագավառում, այլ հարցեր ազգային անվտանգության ու իրավապահ գործունեության ոլորտում:

դ. Ազգային տնտեսություն, համատնտեսական հարցեր, վառելիքային-էներգետիկ համալիր, տիեզերական տարածության հետազոտություն և կիրառում, հանքային-հումքային բազայի վերարտադրություն, գյուղատնտեսություն և ձկնաբուծություն, ջրային տնտեսություն, անտառային տնտեսություն, տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն, կապ և ինֆորմատիկա, կիրառական գիտական հետազոտություններ ազգային տնտեսության բնագավառում, այլ հարցեր ազգային տնտեսության բնագավառում:

ե. Բնակկենցաղային տնտեսություն, բնակարանային տնտեսություն, կենցաղային տնտեսություն, բարեկեցություն, կիրառական գիտական հետազոտություններ բնակկենցաղային տնտեսության ոլորտում, այլ հարցեր բնակկենցաղային տնտեսության ոլորտում:

զ. Շրջակա միջավայրի պաշտպանություն, բնապահպանական վերահսկողություն, թափոնների հավաքում և վերացում, հոսքային ջրերի մաքրում, բնական ու կենդանական աշխարհի օբյեկտների ու նրանց սնուցման միջավայրի պաշտպանություն, կիրառական գիտական հետազոտություններ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում, այլ հարցեր շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում:

է. Կրթություն, նախադպրոցական կրթություն, ընդհանուր կրթություն,

սկզբնական մասնագիտական կրթություն, միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական նախապատրաստում, վերապատրաստում ու որակավորման բարձրացում, բարձրագույն ու հետբուհական մասնագիտական կրթություն, երիտասարդական քաղաքականություն և երեխաների առողջացում, կիրառական գիտական հետազոտություններ կրթության ոլորտում, այլ հարցեր կրթության ոլորտում:

ը. Մշակույթ, կինեմատոգրաֆիա, կիրառական գիտական հետազոտություններ մշակույթի, կինեմատոգրաֆիայի ոլորտում, այլ հարցեր մշակույթի, կինեմատոգրաֆիայի ոլորտում:

թ. Առողջապահություն, կայուն բժշկական օգնություն, ամբուլատոր օգնություն, բժշկական օգնություն բոլոր տիպի ցերեկային ստացիոնարներում, շտապ բժշկական օգնություն, սանատոր-առողջապահական օգնություն, դոնորի արյան ու նրա բաղկացուցիչների նախապատրաստում, վերամշակում, պահպանում և ապահովում, սանիտարական-համաճարակաբանական բարեկեցություն, կիրառական-գիտական հետազոտություններն առողջապահության ոլորտում, այլ հարցեր առողջապահության ոլորտում:

ժ. Սոցիալական լայն քաղաքականություն, կենսաթոշակային ապահովում, բնակչության սոցիալական սպասարկում, բնակչության սոցիալական ապահովություն, մանկության ու ընտանիքի պաշտպանություն, կիրառական գիտական հետազոտություններ սոցիալական քաղաքականության ոլորտում, այլ հարցեր սոցիալական քաղաքականության ոլորտում:

ի. Ֆիզիկական մշակույթ և սպորտ, զանգվածային սպորտ, բարձրագույն ձեռքբերումների սպորտ, կիրառական գիտական հետազոտություններ ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի բնագավառում, այլ հարցեր ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի բնագավառում:

լ. ԶԼՄ, հեռուստատեսություն և ռադիոհեռարձակում, պարբերական տպագրություն և հրատարակություն, կիրառական գիտական հետազոտություններ ԶԼՄ բնագավառում, այլ հարցեր ԶԼՄ բնագավառում:

Բյուջետային դասակարգման տվյալ բաժինները և ենթաբաժինները հանդես են գալիս որպես հանրային-իրավական ռեժիմների սահմանման ու գործարկման բնագավառների համար հիմքեր:

Հանրային իրավունքի մեթոդի հետազոտությունը չի կարող կառուցվել միայն հանրային իրավունքի համակարգում ընդգրկված իրավունքի բնագավառների կարգավորման մեթոդների վերլուծության հիման վրա: Այս առումով անարդյունավետ է համարվում հանրային իրավունքի մեթոդի առանձին բնա-

գավառների մեթոդների բնութագրերի միջոցով բացահայտելու փորձերի ճանաչումը, որոնք կենտրոնացած արտահայտում են հանրային իրավունքի առանձնահատկությունները:

Համապատասխանաբար հանրային-իրավական կարգավորման մեթոդի հետազոտությունը պետք է ուղղորդվի այն բանի պարզորոշ գիտակցմամբ, որ հանրային իրավունքը չի կարող դիտարկվել ճյուղային բնութագրերում, ազգային իրավունքի բնագավառային կառուցվածքի մասին ընդհանուր պատկերացումներում:

Առավել տարածված է հանրային-իրավական մեթոդի՝ որպես հասարակական հարաբերությունների վրա ազդեցության իմպերատիվ միջոցի, բնութագրությունը: Այսպես, սուբորդինացիան հանրային իրավահարաբերություններում պայմանավորել է հանրային իրավունքի մեթոդի որպես սուբորդինացիոն, համապետական հետաքրքրությունների իրավունքների բոլոր սուբյեկտների կենտրոնացած ենթակայության ապահովմանն ուղղված երևույթի սահմանումը: Կատարելով միջանկյալ եզրահանգում՝ կարելի է ասել, որ հանրային իրավունքի մեթոդը կարելի է անվանել իմպերատիվ, իշխանության ու ենթակայության մեթոդ, սուբորդինացիոն, կենտրոնացած կարգավորման մեթոդ:

Հանրային իրավունքի մեթոդն իրավական կարգավորման առարկայով ու օրենսդրի կամքով պայմանավորված իրավական միջոցների համակարգ է, որոնք սահմանվում են կենտրոնացած պաշտոնական իրավաստեղծման գործընթացում, որոնց շրջանում հիմնական են համարվում պահանջ-միջոցները, միջոց-սահմանափակումները, որոնք կիրառվում են՝ անկախ կարգավորվող հարաբերությունների մասնակիցներից: Սակայն տվյալ սահմանման մեջ հեղինակը նույնականացնում է իրավական կարգավորման միջոցներն ու եղանակները: Այսպիսի մոտեցման դեպքում առկա է հանրային իրավունքի հանրային-իրավական կարգավորման մեխանիզմով փոխարինման որոշակի վտանգ, քանի որ մեթոդը չի համակցվում իրավական միջոցներին, այլ պետք է նրանց վրա հիմնվի: Միևնույն ժամանակ չի կարելի չնշել հեղինակի ուշադրությունը համապատասխան իրավական նախատեսումների սահմանման միջոցների հանդեպ, որն արժեքավոր է ինչպես մեթոդի բնութագրման, այնպես էլ հանրային-իրավական կարգավորման մեխանիզմի համար, որի միջոցով արտահայտվում է հանրային-իրավական ռեժիմը:

Այսպիսով, իրավունքի հանրային բնագավառների իրավական կարգավորման մեթոդի համար բնորոշ են.

- իմպերատիվությունը, որը հիմնված է դրական պարտականությունների ու արգելքների վրա,
- սուբյեկտներից մեկին լիազորությունների տրամադրում իր իրավասության շրջանակներում,
- սուբյեկտների անհավասարություն, «իշխանություն-ենթակայություն» հարաբերությունների կառուցում:

Իրավունքի հանրային բնագավառների իրավական կարգավորման մեխանիզմը հիմնվում է դրական պարտականությունների վրա. սկզբում առաջանում է պարտավորեցնող իրավական նորմը, հետո՝ հարաբերական իրավահարաբերությունը և իրավաբանական պարտականությունների իրականացումը՝ ուղղորդելով դեպի պարտականությունների կատարման պահանջները:

ПУБЛИЧНО-ПРАВОВЫЕ РЕЖИМЫ И ИХ ОСОБЕННОСТИ

ЕГОР КАРАПЕТЯН

В данной статье обстоятельно рассматриваются сущность, содержание и особенности в процессе правового регулирования.

Ключевые слова – публичное, правовое, режим, сущность, содержание, особенности, правовое регулирование.

PUBLIC-LEGAL REGIMES AND THEIR FEATURES

YEGOR KARAPETYAN

This article circumstantially considers the essence, content, and features of public-law (public-legal) regimes in the law regulation processes.

Key words – public, legal, regime, essence, content, feature, law regulating

ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Հոդվածը նվիրված է իրավունքի հատուկ իրավական սկզբունքների դասակարգմանը: Հոդվածում տրվել է իրավունքի հատուկ իրավական սկզբունքների սահմանումը: Մեկնաբանվել է իրավունքի հատուկ իրավական սկզբունքներից յուրաքանչյուրի բացատրությունը, բերվել են օրինակներ միջազգային և ներպետական նորմատիվ իրավական ակտերում դրանց ամրագրումների մասին: Ըստ հեղինակի՝ իրավունքի հատուկ իրավական սկզբունքների ճշգրիտ ամրագրումը նորմատիվ իրավական ակտերում և դրանց իրագործման համար անհրաժեշտ երաշխիքների ապահովումը հնարավորություն են տալիս ամբողջական և խորը ծավալով պատկերացում կազմելու իրավահարաբերության յուրաքանչյուր ոլորտի առանձնահատկությունների մասին, որի միջոցով էլ ամրապնդվում է իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների իրացման համար երաշխիքների ստեղծումը:

Քանալի բառեր – իրավունքի սկզբունքներ, հատուկ իրավական սկզբունքներ, անհրաժեշտ երաշխիքներ, իրավահարաբերություն, իրավական կարգավիճակ:

Իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ: Դրանց էությունն առավել ընկալելի դարձնելու համար պետության և իրավունքի տեսության մեջ իրավունքի սկզբունքները դասակարգվում են՝ ելնելով մի շարք առանձնահատկություններից: Ըստ Լ. Ս. Յավիչի՝ իրավունքի սկզբունքները բաժանվում են ընդհանուր-սոցիալական սկզբունքների և հատուկ իրավական սկզբունքների¹: Ընդհանուր-սոցիալական սկզբունքներն իրենց հերթին բաժանվում են՝ տնտեսական, քաղաքական, բարոյական, գաղափարախոսական և սոցիալկառուցվածքային սկզբունքների:

Պետության և իրավունքի տեսության մեջ առանձնակի ուշադրության են արժանի հատուկ իրավական սկզբունքները, քանի որ դրանք առավել ընդ-

¹ Явич Л.С. Общая теория права, под. ред проф. А.И.Королева. Ленинград, 1976, стр. 149.

գրկուն և առանձնակի կարևորություն ունեն իրավունքի ցանկացած ճյուղի համար: Իրավունքի հատուկ իրավական սկզբունքները տարածվում են բոլոր նորմատիվ իրավական ակտերի վրա և առավելություն ունեն իրավունքի այլ սկզբունքների նկատմամբ: Հայրենական և արտասահմանյան ուսումնասիրված իրավաբանական գրականությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հատուկ իրավական սկզբունքների դասակարգումը գրեթե բոլոր հեղինակների մենագրություններում և գիտական աշխատություններում միևնույն ձևով է դրսևորվում: Այս հոդվածում հղում է կատարվել այն հեղինակների կողմից տրված դասակարգմանը, որոնք առավել ընդունելի են ճանաչված իրավագետների լայն շրջանակների կողմից:

Հատուկ իրավական սկզբունքները հիմնադրույթներ են, որոնք սահմանում են ամբողջությամբ վերցրած իրավունքի առավել էական գծերը, նրա բովանդակությունը և առանձնահատկությունները՝ որպես ողջ հասարակական հարաբերությունների կարգավորիչ:

Հատուկ իրավական սկզբունքների թվում են դասվում իրավունքի գերակայության, օրինականության, իրավահավասարության, իրավաբանական իրավունքների և պարտականությունների միասնության, հումանիզմի, ժողովրդավարության /դեմոկրատիայի/, սոցիալական արդարության, սոցիալական ազատության, մեղքի համար համարժեք պատասխանատվության սկզբունքները:

Իրավունքի գերակայության սկզբունքը, հանդիսանալով իրավական պետության հիմքը, ենթադրում է փոխապայմանավորված և փոխլրացնող այն բոլոր իրավապայմանների միաժամանակյա առկայություն, որոնց համար անհրաժեշտ է օրենսդրական և հատկապես սահմանադրական երաշխիքների ապահովում: Գործնական առումով իրավունքի գերակայության, ինչպես նաև իրավունքի մյուս հատուկ սկզբունքների առկայությունը, երաշխավորումը, ինչպես նաև դրանց ապահովումը, խարսխված է և բխում է իշխանության լեգիտիմության և լեգալության աստիճանից: Վ.Ս. Ներսեսյանցը նշում էր. «Լեգիտիմ և լեգալ իշխանության հիմքը լինելով՝ իրավունքի գերակայության սկզբունքը ապահովում է ոչ միայն նորմատիվ իրավական ակտերի անաչառ իրագործումը, հասարակության իրավագիտակցության բարձրացումը, իշխանությունների բաժանման, հակակշիռների և զսպման հիմքը, այլ նաև ապահովում է պետության և անհատի, պետության և հասարակության միջև ամուր

կապի ստեղծումը»²: Իրավունքի գերակայության սկզբունքը, հանդիսանալով պետության, անհատ և հասարակություն ամուր կապի հիմնական բաղադրիչը, թույլ է տալիս, որպեսզի այս երեք տարրերը, միաժամանակ անկախ լինելով միմյանցից, անուղակի և ուղղակի պատասխանատու լինեն միմյանց առջև: Քանի որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, սակայն դրա իրականացումն ուղղակի և անուղղակի ընտրությունների միջոցով դրվում է իշխանությունների վրա, ուստի և՛ անհատը, և՛ հասարակությունը, և՛ պետությունը պատասխանատու են իրավունքի գերակայության սկզբունքի ապահովման, դրա իրագործման համար անհրաժեշտ երաշխիքների ստեղծման համար: Լինելով իրավունքի գերակայության սկզբունքի իրացման և իրագործման պատասխանատու՝ պետք է գիտակցենք, որ ցանկացած ոչ իրավաչափ գործողություն կարող է կանգնեցնել իրավական պետություն կերտելու գործընթացը:

Առավել կարևոր է օրինականության սկզբունքը, որը կոչված է ապահովելու իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավական նորմերի ճշգրիտ և անշեղ իրականացումը: Օրինականության սկզբունքը, ապահովելով իրավունքի նորմերի կենսագործումը, զուգահեռաբար նպաստում է մյուս սկզբունքների անարգել իրագործմանը: Ինչպես իրավունքի գերակայության սկզբունքը, այնպես էլ օրինականության սկզբունքն իրավական պետության հենքն է: Օրինականության սկզբունքն առավել շատ իրավագետներ համարում են սկզբունքների սկզբունքը, քանի որ այս սկզբունքի կենսագործումից է կախված մյուս սկզբունքների իրավական կարգավորման հիմնախնդիրը: Նման դիրքորոշման կողմնակիցներ են Վ. Ն. Կուդրյավցևը, Վ.Վ. Բորիսովը, Լ. Ս. Յավիչը: Վերջիններիս կարծիքով օրինականության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմք, ապահովում է մյուս հատուկ իրավական սկզբունքների ազատ իրագործումը: Օրինակ՝ Վ. Ն. Կուդրյավցևը գտնում էր. «Օրինականության սկզբունքը իշխանության իրացման ամենադեմոկրատական սկզբունքն է: Ամենադեմոկրատական սկզբունք լինելու էությունն այն է, որ պետությունը /անկախ կառավարման համակարգից/, իշխանության ճյուղերը, հասարակությունը, անհատը պարտավոր են պահպանել իրավունքի այս հիմ-

² Ներսեսյանց Վ.Ս., Պետության և իրավունքի տեսություն, Երևան, «Նաիրի», 2001, էջ 198:

նարար սկզբունքը»³: Այս տեսակետն արդիական կլիներ, եթե խոսքը վերաբերեր ժողովրդավար պետություններին: Սակայն, եթե որևէ ավտորիտար կառավարման ձև ունեցող երկրում իշխանությունը ի սկզբանե ոչ լեգիտիմ է, ինչպես կարելի է ասել, թե օրինականության սկզբունքն անկախ այդ հանգամանքից պետք է պահպանվի կամ գերիշխի: Այս տեսակետն առավել վիճարկելի է դառնում, երբ ծանոթանում ես Մ. Ն . Մարչենկոյի և Ե. Մ. Դերյաբինի մոտեցումներին: Այս հեղինակների կարծիքով օրինականության սկզբունքը ստանում է հնարավորություն՝ իրագործվելու, եթե դրա համար կան անհրաժեշտ սահմանադրական երաշխիքներ: Օրինակ՝ Մ. Ն. Մարչենկոն կարծում էր, որ իրավունքի ցանկացած սկզբունք ստանում է առավելություն, եթե դրա համար ստեղծվում են անհրաժեշտ նորմատիվ ակտեր, որոնց մեջ իրավունքի ընդհանուր սկզբունքներն այս կամ այն ձևով գտնում են իրենց արտացոլումը⁴: Հեղինակն այս դիրքորոշման մեջ չի նշում ցանկացած կառավարման համակարգի պայմանը, ուստի կարելի է եզրահանգել այն տեսակետին, որ օրինականության սկզբունքի ամրագրումը նորմատիվ ակտերում կարևոր հանգամանք է, բայց դրա իրագործման երաշխիքների ստեղծման պարտականությունն այնուամենայնիվ դրվում է պետության վրա: Միայն այս պարագայում կարելի է ասել, որ օրինականության սկզբունքը, հենվելով իրավունքի գերակայության սկզբունքի վրա, ապահովում է իրավական պետության գոյության հանգամանքը:

Իրավահավասարության սկզբունքը ենթադրում է օրենքի առաջ բոլորի հավասարությունը: Այս սկզբունքն իր ամրագրումն է ստացել «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», այն է՝ բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք: ՀՀ սահմանադրության համաձայն. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սո-

³ Казимирчук В. П., Кудрявцев В. Н. Современная социология права. Москва, 1995, стр. 196.

⁴ Марченко М.Н., Дерябина Е.М. Теория государства и права: учебно-методическое пособие. 2-е изд. Москва, 2015, стр. 720.

ցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»⁵: Աշխարհի բոլոր զարգացած երկրներում, որտեղ մարդը գերագույն արժեք է, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» վավերացվել է և դարձել այդ երկրների իրավական համակարգի անբաժանելի մասը:

Իրավաբանական իրավունքների և պարտականությունների միասնության սկզբունքի էությունը հասարակական հարաբերությունների մասնակիցների իրավաբանական իրավունքների և պարտականությունների պատճառահետևանքային կապի մեջ է: Խոսել միայն ինչ-որ իրավունքի իրական լինելու մասին կարելի է այն դեպքում, երբ գոյություն ունի դրան համապատասխան իրավաբանական պարտականություններ: Օրինակ՝ խախտվել է քաղաքացու որևէ իրավունք, վերջինս խախտված իրավունքը իրացնելու արգելքը վերացնելու համար դիմում է դատարան, իսկ դատարանը, օժտված լինելով արդարադատություն իրականացնելու իրավունքով, պարտադրում է իրավախախտին վերացնել արգելքը, որպեսզի մյուս քաղաքացին իրացնի իր իրավունքը: Այս սկզբունքը, ինչպես և նախորդ սկզբունքները, իրագործելի են իրավական պետություն ունեցող հասարակություններում: Իրավական պետությունը չի ենթադրում միայն նորմատիվ իրավական ակտերում սկզբունքների ամրագրում, այլ նաև ապահովում է դրանց անարգել իրացումը: Դատարանին տալով արդարադատություն իրականացնելու իրավունք՝ պետությունը նաև պետք է ապահովի օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքների համապատասխանությունն իրավունքի հատուկ իրավական սկզբունքներին: Օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքները բերված օրինակում ի վերջո կիրառում է դատարանը, եթե օրենքով լիարժեք ամրագրված չլինեն քաղաքացու խախտված իրավունքը վերականգնելու հնարավոր տարբերակները, դատարանը ոչ միայն սահմանափակված կլինի անաչառ որոշում կայացնելու հնարավորությամբ, այլ նաև դատարանի կողմից ընդունված որոշումը կարող է մնալ անկատար, եթե դրա իրագործման համար չլինեն անհրաժեշտ օրենսդրական երաշխիքներ:

Հումանիզմի սկզբունքը իրավունքի սկզբունքների համակարգի կարևորագույն և արժեքավոր ելակետային հիմնադրույթն է: Հումանիստական արժեքները հատուկ են բոլոր քաղաքակիրթ երկրներին, քանի որ հումանիզմի սկզբունքի հիմքում ընկած է մարդը՝ որպես բարձրագույն արժեք: Համաձայն

⁵ ՀՀ Սահմանադրություն /ընդունված 1995թ. հուլիսի 5-ին Հանրաքվե, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով/ հոդված 14.1:

այս սկզբունքի՝ պետության կողմից ընդունված ցանկացած նորմատիվ իրավական ակտի հիմքում պետք է դիտարկվեն մարդու իրավունքները և ազատությունները՝ որպես բարձրագույն արժեքներ: Օրինակ՝ հումանիզմի սկզբունքի հստակ դրսևորում է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում» ամրագրված հետևյալ նորմը. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, առողջության, անձնական ազատության, պատվի և արժանապատվության, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք»⁶: Եթե «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» ամրագրել է վերոթվարկված իրավունքները և ազատությունները, ապա «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» և «Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրերն առավել մանրամասն են ամրագրում հումանիզմի սկզբունքի դրսևորումները: «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անօտարելի իրավունք: Այդ իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի զրկել կյանքից»⁷:

Ժողովրդավարության սկզբունքն արտացոլվում է պետական իշխանության մարմինների գործունեության, կազմակերպման, անհատի և պետության փոխհարաբերությունները կարգավորող նորմերում: Այս սկզբունքի ամենավաղ դրսևորումներից է միջազգային պրակտիկայում առկա պետությունների վարքագիծը: Օրինակ՝ հանրաքվեների միջոցով երկրի մայր օրենքի ընդունումը կամ դրանում առկա փոփոխությունների իրականացումը: Կախված պետության կառավարման համակարգից, ռեժիմից՝ հիմնական օրենքի ընդունումը տեղի է ունենում տարբեր եղանակներով: Ժողովրդավարության սկզբունքը շատ պետությունների մայր օրենքներում իր արտացոլումն է գտնում, բայց այդ սկզբունքի ամրագրումը դեռ չի նշանակում, որ երկիրը, ժողովրդավարության սկզբունքը ամրագրելով, հետևում է այդ սկզբունքին: Գրեթե միշտ իրենց ժողովրդավարական են հռչակում տոտալիտար ռեժիմի պետությունները: Ուստի կարևոր է ոչ միայն ժողովրդավարության սկզբունքի ամրագրումը համապատասխան նորմատիվ իրավական ակտերում, այլ նաև դրա իրագործման համար անհրաժեշտ ինստիտուտների, կառուցվածքների և երաշխիքների ստեղծումը:

Սոցիալական արդարության սկզբունքն ունի բարոյաիրավական բովան-

⁶ Международные акты о правах человека. Сборник документов. Москва, 2000, стр. 539.

⁷ Международный пакт о гражданских и политических правах человека /от 19 декабря 1966г. // BBC СССР. 1976. Москва, стр. 291.

դակություն: Այս սկզբունքը հնարավորություն է տալիս հասարակության մեջ ապահովելու անհատների գործնական դերի և նրանց սոցիալական կարգավիճակի հավասարությունը, նրանց իրավունքների և պարտականությունների հավասար բաշխումը, ինչպես նաև բացահայտելու աշխատանքի և պարզևատրման, հանցագործության և պատժի, մարդու կողմից կատարված հանրագուտ աշխատանքների և հասարակության գնահատականի միջև գոյություն ունեցող անքակտելի կապը: Սոցիալական արդարության սկզբունքը նույնպես իրավական կարգավորման պրակտիկայում առաջատար սկզբունքներից է, քանի որ իրավական նշանակության հարցեր լուծելու ընթացքում չանդրադառնալ այս սկզբունքին կնշանակի ոչ միայն խզել կապը պետության և անհատի միջև, այլ նաև հասարակության մեջ առաջացնել շերտավորում և անարդարություն⁸: Ուստի իրավունքի այս սկզբունքի հստակ ամրագրումը և ճիշտ կիրառումը հնարավորություն կտան հասարակության մեջ պահպանելու համաչափությունը:

Սոցիալական ազատության սկզբունքի օգնությամբ քաղաքակիրթ երկրները հնարավորություն են ընձեռում սեփական քաղաքացիներին ընտրելու աշխատանքային գործունեության ձև, մասնագիտություն, բնակավայրի ընտրություն, իր ստացված եկամուտները ազատ տնօրինելու, սոցիալական ընդհանուր բարիքների բաշխմանը մասնակցելու և գործազրկությունից պաշտպանված լինելու իրավունք: «Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրն առավել հստակ է սահմանում սոցիալական ազատության սկզբունքի տարրերը: Այս դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունքը, ինչպես նաև ապահովում են նվազագույն աշխատավարձի, համարժեք աշխատանքի դիմաց արդարացի աշխատավարձի, հանգստի, ժամանցի, վճարովի արձակուրդի բոլոր և անհրաժեշտ երաշխիքները⁹:

Մեղքի համար պատասխանատվության սկզբունքի համաձայն՝ անձը կարող է ենթարկվել պատասխանատվության միայն այն դեպքում, երբ համապատասխան պետական մարմինների կողմից ապացուցված է մեղքի առկայությունը: Անձի արարքում մեղքի բացակայության դեպքում նրա նկատմամբ չեն

⁸ **Buergentai T.** International Systems for the Protection of Human rights/ Human rights in the International Law. Legal and policy Issues. Oxford, 1984. Vol.2, էջ 487:

⁹ **Marie Jean-Bernard**, Human Rights Law Journal, Strasbourg, Arlington, 1966.

կարող կիրառվել իրավաբանական պատասխանատվության միջոցներ: Բացի այդ անձը համարվում է անմեղ, քանի դեռ չկա օրենքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ: Այս սկզբունքն ամրագրվել է ՀՀ սահմանադրությամբ: «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ»¹⁰: Մեղքի համար պատասխանատվության սկզբունքը ենթադրում է նաև, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու՝ իր խախտված իրավունքները վերականգնելու, դատական պաշտպանության, արդար դատաքննության, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք¹¹:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ հատուկ իրավական սկզբունքները բնորոշ են իրավունքի բոլոր ճյուղերին: Դրանք գործում են իրավահարաբերությունների բոլոր ոլորտներում և միասնական ու պարտադիր են այդ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների համար: Դրանց խախտմամբ զուգորդվող ցանկացած գործողություն /վարքագիծ/ չի կարող իրավաչափ համարվել: Ուստի և չի կարող ինչպես տվյալ իրավահարաբերության անմիջական մասնակիցների, այնպես էլ այլ անձանց համար ստեղծել, փոփոխել կամ դադարեցնել իրավունքներ և առաջացնել պարտականություններ:

КЛАССИФИКАЦИЯ СПЕЦИАЛЬНО-ЮРИДИЧЕСКИХ ПРИНЦИПОВ ПРАВА

ЛИАНА МАЛХАСЯН

Эта статья посвящена классификации специально-юридических принципов права. В статье были даны определения специально-юридических принципов права. Интерпретированы понятия каждого специально-юридического принципа права, были приведены примеры о фиксации специально-юридических принципов права в международных и внутригосударственных нормативных актах. По мнению автора, конкретная фиксация специально-юридических принципов права в нормативных актах дает полное представление о степени и глубине конкретных особенностей правовой связи между

¹⁰ ՀՀ Սահմանադրություն /ընդունված 1995թ. հուլիսի 5-ին, Հանրաքվե, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով/ հոդված 21:

¹¹ ՀՀ Սահմանադրություն /ընդունված 1995թ. հուլիսի 5-ին, Հանրաքվե, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով/ հոդվածներ 18, 19, 20:

сторонами, с помощью которой укрепляются законные гарантии сторон правоотношения.

Ключевые слова – принципы права, специально-юридические принципы права, необходимая гарантия, правоотношение, правовой статус.

CLASSIFICATION OF SPECIAL LEGAL PRINCIPLES

LIANA MALKHASYAN

This article is devoted to the classification of special legal principles of law. The definitions of the special principles of law are given. Explanations of each of the special legal principles of law are interpreted and examples of their fixation in the international and domestic normative legal acts are represented as well.

According to Malkhasyan the precise fixation of the special legal principles of law in normative legal acts and the securing of necessary guarantees for their realizations, give an opportunity to fully and deeply understand the peculiarities of each sphere of the legal relationship. These reinforce the establishment of guarantees for the exercise of legal rights of the participants' relationships.

Key words – Principles of law, special legal principles, necessary guarantees, a legal relationship, legal status.

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՍԱՐՈՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1962-1991ԹԹ. ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

ԱՆՈՒՇ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ

«Ես դեմ եմ Ամերիկյան թափրոնի հեղափոխության գրեթե ամեն ինչին, ներառյալ դրա մեթոդները, նպատակները և մարդկանց»¹:

Վիլյամ Սարոյան

Հոգվածում անդրադառնում ենք 1962-91թթ. հայ թատրոնում բեմադրված Սարոյանի ստեղծագործությունների՝ այս կամ այն իմաստով նշանակալից ներկայացումներին և դրանց մասին գրված թատերախոսականներին, որոնք ընդգրկված են գրքերում և ժողովածուներում: Հայտնաբերում ենք, որ միևնույն բեմադրության մասին հեղինակների կարծիքները, որպես կանոն, չեն համընկնում, ընդգծված հակասական են: Որոշ դեպքերում գրքերի հեղինակ-տեսաբանները, ծանոթ լինելով միմյանց թատերախոսականներին, մերժում են իրար՝ այսպիսով չտալով մեկ ամբողջական պատկեր սարոյանական բեմադրությունների մասին: Աճեմյանից հետո սարոյանական բեմադրությունների պատմությունը հայ բեմում մի բավական հետաքրքիր եզրակացության է մեզ մղում. հայ բեմադրիչները միայն երկրորդ մոտեցումից են Սարոյանին ըմբռնում և հաջողում (օրինակները թվարկված են հոգվածում):

Քանալի քաներ – Վիլյամ Սարոյան, Վարդան Աճեմյան, թատրոն, դրամա, Հենրիկ Մայան, Սունդուկյանի անվան թատրոն, ամերիկյան թատրոն:

Հայ բեմի առաջին իսկ հպումը Սարոյանի ստեղծագործությանը պսակվեց մեծ հաջողությամբ: «Իմ սիրտը լեռներում է»-ն ձևավորեց հայ բեմում Սարոյան բեմադրելու ավանդություն և այնպիսի բարձր չափանիշ սահմանեց, որը մի քանի տարի չէր հաղթահարվում:

«Իմ սիրտը լեռներում է»-ից հետո լույսը ստացան խախտել են

¹ Saroyan William, «Razzle-Dazzle», Harcourt, Brace and Company, New York, 1942, p. 17.

1964թ. Ստեփանակերտի Գորկու անվան թատրոնում/ռեժ.՝ Բ.Չալախյան, նկարիչ՝ Գ. Ծատուրյան/, իսկ 1967թ. հուլիսին Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում ռեժիսոր Օ.Ավետիսյանը բեմադրել է Սարոյանի «**Հեռացի՛ր, ծերուկ**» պիեսը²: Ռուբեն Սանոյանը Աճեմյանի բեմադրությունից հետո արված բեմադրությունները հիմնականում համարում է տապալումներ. «*Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի «ուրն էլ քարին առավ...»³*, - գրում է նա «Հեռացի՛ր, ծերուկ»-ի մասին, «...>այսպեղ նույնիսկ փորձ չէր արված հասկանալու, իմաստավորելու գլխավորը՝ դրամատուրգի ասելիքը: *Ներկայացման հեղինակները հստակ ու բարեխղճորեն գաղափարախոսական պատվեր էին կատարել*»:

Սարոյանի այս պիեսն արդեն մեկ անգամ Միացյալ Նահանգներում ձախողվել էր, և դա բնական է. Հոլիվուդի «կադրից դուրս» ողջ ճշմարտությունն անխնա մերկացնող պիեսը չէր կարող սիրվել Նահանգներում: Կինոտնօրենների դիկտատուրայի դեմ ուղղված Սարոյանի բողոքն էր այն ամբողջովին, այն բանից հետո գրված, երբ Սարոյանը, հրավիրված լինելով աշխատելու Հոլիվուդում «Մարդկային կատակերգություն» ֆիլմի սցենարի վրա, խոր հիպոթափություն է ապրում՝ տեսնելով փողի գերիշխանությունն ու մերժելի բարքերը: Պիեսը երկար ժամանակ ձեռքից ձեռք է անցնում, բրոդվեյան պրոդյուսերները հիմնականում պահանջում էին փոփոխություններ մտցնել, կրճատել, ի վերջո 1943-ին «Հեռացի՛ր, ծերուկ»ը բեմադրվում է, սակայն միայն յոթ անգամ է խաղացվում: Սովետական ընթերցողի համար սա բոլորովին անծանոթ մի թեմա էր, և Սանոյանի վերաբերմունքն արդարացված է թվում: Սակայն ներկայացման մասին կա երկրորդ կարծիք ևս. «*Բեմադրիչ Օ.Ավետիսյանը ճիշտ է բացահայտել պիեսի գաղափարախոսությունը, չի հասարակացնում կոնֆլիկտը հիմնական հերոսների միջև, չի փանտում անձնական հարաբերությունների պարզաբանման, այլ բարձրացնում է սոցիալական հնչողության*», - գրում է Հրանտ Լալայանցը⁴: Քննադատի անունը չտալով, սակայն մեջբերելով նախադասություններ ներկայացման մասին գրված մի թատերախոսականից՝ Սանոյանը հակադրվում է այդ տողերին՝ տող առ տող մեկնա-

² Տվյալը վերցված է Բաբկեն Հարությունյանի «Խորհրդահայ թատրոնի տարեգրություն» գրքից, հատոր III (1961-1970), ԵՊՀ հրատ., Երևան, 2008, էջ 163, 299, բեմադրության մասին տեղեկություններ չգտանք:

³ **Սանոյան Ռ.**, Մեծ բիթիսցու առեղծվածը (թարգմ.՝ Խաչատուր Ավագյան), ՀԳՄ, Երևան, 2004, էջ 100:

⁴ **Լալայանց Грант.** «Солнце рампы». Ереван, 1983, стр. 140.

բանելով ու բացահայտելով թատերախոսության չհամոզող դրույթները: Հնարավոր է՝ Սանոյանը նկատի է ունեցել հենց Լալայանցի՝ 1967թ. գրած «Убери-райся, старик!» հոդվածը «Солнце рампы» հոդվածների ժողովածուում, որտեղ հոդվածագիրը շատ բարձր գնահատական է տալիս ներկայացմանը⁵: Եվ միայն մեկ անգամ է խոսում քննադատաբար, այն էլ ոչ թե ռեժիսորական մեկնաբանության, այլ դերասանական խաղի մասին. «Ավարտվու՞մ են ռեժիսորական կորուստներն այնտեղ, որտեղ սկսվում են դերասանականները: <...> Ե. Վասիլևսկայան, ցավոք սրտի, չկարողացավ ամբողջությամբ բացահայտել իր հերոսուհու կերպարը, և նրա խաղը հանդիսարեսին անտարբեր է թողնում», - գրում է Լալայանցը⁶: Սանոյանը, մատնացույց անելով նաև հոդվածագրի անկարողությունը, բացատրում է, որ «Գնահատող» քննադատներից ոմանց գրչի տակ Վիլյամ Սարոյանը ամերիկյան քաղքենիական կենսակերպի քարոզիչ է, նույնիսկ «Ամերիկյան իմպերիալիզմի» ջարդագով, իսկ այլոց՝ քննադատների ու բեմադրողների գնահատությամբ ու մեկնաբանությամբ էլ Վիլյամ Սարոյանը Ամերիկայի անմարդկային կերպարանքի վճռական ու անողորմ երկացնողն է⁷: Ասել է թե համընդհանուր անըմբռնողականություն է տիրում թատրոններում Սարոյան բեմադրելիս:

Նման անհանդուրժող վերաբերմունք ունի Սանոյանը «Ձեր կյանքի ուղին» ներկայացման հանդեպ: Թատերագետն այս անգամ էլ չի գրում ստեղծագործական խմբի անունը, սակայն եթե նկատի ունենանք, որ խորհրդային տարիներին Սարոյանի «Քո կյանքի ժամերը» բեմադրվել է միայն մեկ անգամ 1986 թվականին Սունդուկյանի անվան թատրոնում, պետք է կարծել, որ Սանոյանը նկատի ունի հենց Նիկոլայ Ծատուրյանի բեմադրությունը: Սանոյանը թատրոնի հասցեն որոշակիացնում է. «Ձեր կյանքի ուղին», Սունդուկյանի անվ. Պեդական ակադեմիական թատրոն, alma mater՝ ինչպես նրան կոչում են Հայաստանում⁸: Կասկած է առաջացնում միայն վերնագիրը: Ծատուրյանի բեմադրությունը մամուլում հիշատակվում է «Քո կյանքի ժամանակը» վերնագրով⁹, սակայն խնդիրը թարգմանությանն է վերաբերում: Տարբեր են նաև Վարսիկ Գրիգորյանի և Ռուբեն Սանոյանի գնահատականները: «Ներկայաց-

⁵ Հմմտ.՝ Սանոյան Ռ., Վիլյամ Սարոյանն այնտեղ, ուր մենք՝ սոցցամբարականներ... երեկ էինք//⁵ Նույնի՝ Մեծ բիթլիսցու առեղծվածը /էջ 96-118/:

⁶ Лалаянц Грант. «Солнце рампы», стр. 145.

⁷ Սանոյան Ռ., Մեծ բիթլիսցու առեղծվածը, էջ 102:

⁸ Նույն տեղում, էջ 96:

⁹ Գրիգորյան Վ., Վիլյամ Սարոյանը հայ թատրոնում, Վան Արյան-2010, էջ 11:

ման հեղինակների հղացմամբ՝ նախաբան ներմուծած ռիթմիկ կակաֆոնիայի փակ գործող անձինք փրկնիկների նման ցարկոպում են, մեխանիկական շարժումներ անում և երաժշտության դադրելուն պես անշարժանում վերջին ակորդի պահի դիրքով: Ներկայացման բանալին է սա, իսկ դրանից հետո իրար են հաջորդում ինքնատեղացման, ինքնաաղտոտման պատկերներ»,- կարդում ենք Սանոյանի հոդվածում: Մյուս թատերագետն այսպես է տեսնում. «Մայր բեմի երրորդ «հպումը» «Քո կյանքի ժամանակն» էր 1986-ին: Բեմադրիչը երիտասարդ, վառ ու ցայտուն արտահայտչակերպի, ժանրային գունեղ բռնկումների ռեժիսոր Նիկոլայ Ծափուրյանն էր»¹⁰: Սանոյանի տողերը գնահատական են, Գրիգորյանինը և՛ այո, և՛ ոչ: Համենայնդեպս, առաջին տողերից տրամադրվածությունը դրական է, սակայն թատերագետն ավելի շատ հոդվածում վերլուծում է պիեսը, քան ներկայացումը և միայն հատվածի ավարտին գրում, որ «այնուամենայնիվ, բեմադրիչը պեպք է առանձին ուշադրություն դարձնել հեղինակի ռեմարկներում շարք հաճախակի հիշվող «Միստորիի վալսը» երգին, որը հնչում է նվագարկիչով»¹¹: Սանոյանը, թվարկելով Սարոյանի պիեսի հիմնական մոտիվների, հերոսների գծերի և գաղափարախոսության հանդեպ բեմադրիչի մեղանշումները, գրում է. «Նմանօրինակ «վարպետությամբ» ձևփոխելով նաև մյուս գործող անձանց, բեմադրող ռեժիսորն «ուղղում» ու «դզմզում է» դրամատուրգին և առաջարկում է և՛ սիրո, և՛ երազանքի, և՛ կյանքի իր խիստ «արդիականացված» ընկալումը»¹²: Սակայն Սանոյանն այս պատկերի համար ունի իր տեսակետը. «Ցավոք, մեզ, սոցիալաբարականներին, ամերիկյան գրող Վիլյամ Սարոյանը առաջին անգամ ներկայացվեց ծուռ հայելու մեջ, աղավաղված փեսքով: Պարզ է, որ սոցիալիստական ռեալիզմի գաղափարախոսական կանխադրույթներին հավատարմության, կամ նույն այդ կաշուն անհեթեթությունների իրադրության մեջ այլ կերպ չէր էլ կարող լինել»¹³:

1981-ին Հենրիկ Մալյանին Աճեմյանը հրավիրում է բեմադրելու «**Խաղողի այգին**»: Այս ներկայացումը նշանակալից է նաև այն փաստով, որ Աճեմյանը ստանձնել էր ներկայացման բեմանկարչական ձևավորումը: Սարոյանի երազանքն էր «Խաղողի այգին» տեսնել Սունդուկյանի անվան բեմում: Դեռևս Աճեմյանի «Իմ սիրտը լեռներում է»-ի վառ տպավորություններով ներշնչված, Սարոյանը 1971-ին հատուկ այս թատրոնի համար է գրում «Խաղողի այգին»:

¹⁰ Նույն տեղում, էջ 11:

¹¹ Նույն տեղում, էջ 13:

¹² **Սանոյան Ռ.**, Մեծ բիթիսցու առեղծվածը, էջ 98:

¹³ Նույն տեղում, էջ 103:

1976-ին, Երևանում դիտելով և իր շատ ոգեշունչ կարծիքը հայտնելով Աճեմյանի բեմադրության մասին, նա ասել է. «Շապ սիրեցի, շապ սիրեցի/«Իմ սիրտը լեռներում է»-Ա.Ա./,բայց կփափագիմ ան մյուսն փեսսել և ասի դյուրին է, կըսեմ... և եթե կարելի է իմ հոս ըլլալու ժամանակվան մեջ «Խաղողի այգին» ինձի ալ գոնե կարդացեք մինակ, որ ես անոր արժեքն ալ գիտնամ»¹⁴: Սարոյանը հավանաբար նկատի ունի պիեսի թարգմանությունն իր համար կարդալը, քանի որ, ինչպես հայտնի է, նա հայերեն միայն խոսում էր, չէր կարդում: Դաշտենցի թարգմանությունն իսկապես «սարոյանական» է: Դաշտենցն արդեն հրաշալիորեն թարգմանել էր «Իմ սիրտը լեռներում է»-ն: Սակայն բեմադրության մասին կարդում ենք. «Բեմադրությունն այն չէր՝ ինչ փայփայում էինք և մինչ օրս առեղծված մնաց, թե ինչպես կարող էր գերազանց ռեժիսորի ու գրեթե նույնպիսի դերակատարների մասնակցությամբ բեմադրությունը դատարարվել անհաջողության»¹⁵: Լևոն Հախվերդյանը բեմադրության մասին հողվածով հանդես է եկել «Գրական թերթում», նա բարձր է գնահատում Գրիգոր Թորգոմյանի դերակատար Սոս Սարգսյանի, Մակար Թորգոմյան-Ժան Էլոյանի, Շաքե Թովմանյանի-Շաքեի դերակատարումները և նկատում, որ «սարոյանական գեղագիտության դեմ մեղանչումները» ամենուրեք են՝ թե՛ խոսքի մատուցման, թե՛ անգամ Աճեմյանի բեմանկարչության մեջ: Այլ կարծիքի է Հրանտ Լալայանցը. «Սարոյանական բեմադրության մեջ հրաշալիորեն արտացոլված խաղողի այգու մթնոլորտը թույլ է փայլի ասես առարկայապես շոշափել ամենը, զգալ նրանում փրորող բարեկեցության ուրվականային լինելը...»: Նրան գոհացնում են թե՛ բեմանկարչական լուծումները, թե՛ բեմադրությունն ամբողջությամբ վերցված և թե՛ հատկապես Սոս Սարգսյանի դերակատարումը, այս վերջին գնահատականը թերևս կասկած չի հարուցում և համահունչ է մյուս արձագանքներին. «Ասել, թե Սոս Սարգսյանը հրաշալի է զգում Սարոյանական պերսոնաժին, քիչ է: Ողջ ներկայացման ընթացքում դերասանը վարպետորեն պահում է հերոսի վարքագծի իր իսկ գրած ճշգրիտ էմոցիոնալ ռեգիստրը»¹⁶: Ինքը՝ Մալյանը հետագայում այսպես է գրում. «Խաղողի այգին» բեմադրելու ընթացքում ես ո՛չ փառքի և ո՛չ էլ փապալման զգացումով չեմ համակվել, գուցե անհարմար է ասել, բայց ոչ մի շեշտ չի կլանել ինձ այդ օրերին, ուղղակի անդադար զգացել եմ մի մեծ մարդու շունչը, հուզառար կեն-

¹⁴ Մկրտչյան Լ., Վիլյամ Սարոյանը մոտիկից, էջ 137:

¹⁵ Գրիգորյան Վ., Վիլյամ Սարոյանը հայ թատրոնում, էջ 9:

¹⁶ Лалаянц Грант. «Солнце рампы», стр 173.

դանի ու փաթ շունչը մեծն Վիլյամ Սարոյանի»¹⁷: Տողերը հնչում են արդարացման պես, համենայնդեպս Մայյանն իր ասելիքը սպառված չի համարել սարոյանական խաղացանկում:

Ավելի բարձր է գնահատվել Մայյանի՝ 1983թ. «**Իմ անունն Արամ է**» բեմադրությունը Կինոտան թատրոնում, որտեղ Մայյանը միավորում է հինգ պատմվածք՝ «Իմ անունը Արամ է», «Ճամփորդություն Համֆորդ», «Վարսավիրը, ում քեռու գլուխը կրծել էր վագրը», «Խեղճուկրակ արաբը», «Նարինջները»: Այս վերջինը Մայյանի կինոբաժնի ուսանողուհի Լիզա Ազիզյանի բեմադրությունն էր, որն արժանացել էր Մայյանի հավանությանը և ընդգրկվել Մայյանի ներկայացման մեջ: «Դա մի սովորական ներկայացում չէր, այլ մի շքեղ հանդիսանք», -կարդում ենք ներկայացման մասին¹⁸: Մայյանը նույնպես իր հուշերում ավելի համարձակ է անդրադառնում Սարոյանին և իր այս բեմադրությանը: Իր ինքնակենսագրական գրքում Սարոյանի ներշնչանքով ու անգամ սարոյանական ոճով շարադրված ներկայացման մասին գրելիս Մայյանն անկեղծանում է. «Ես նույնիսկ Սարոյան էի, Վիլյամ Սարոյան: Գուցեն այնքան էլ դժվար չէր լինել Սարոյան»¹⁹: Մեզ այս տողերը հուշում են ներկայացման հնարանքներից մեկը. բեմադրիչն իրեն նույնացնում է գրողի հետ և մեկ սյուժետային գծի շուրջ կառուցում հինգ դրվագները, որոնցից յուրաքանչյուրը կարող էր դիտվել իբրև առանձին պատմություն: Այս ենթադրությունն անելիս կարող ենք հենվել նաև միևնույն հոդվածում շարադրված Մայյանի հետևյալ տողերի վրա. «Վիլյամ Սարոյանի բոլոր պատմվածքների և բոլոր պիեսների հերոսը ինքն է՝ հեղինակը»²⁰: Այսպիսով, եթե ըստ բեմադրիչի հերոսն ասացողը, հեղինակն է, իսկ բեմադրիչն իրեն նույնացնում է հեղինակի հետ, ապա Մայյանը դառնում է այս «պիեսի» պատմողը՝ հմտորեն կապելով-միահյուսելով պատմվածքները ասես մեկ պատմողի կողմից ստեղծված ամբողջական դրամատիկական երկի մեջ: Իր դատողություններում Մայյանը չի շրջանցել Սարոյանի անսահման բարության, հումանիզմի, իմաստության և երեխաներին մոտ կանգնած լինելը: Կարծում ենք, որ այս հատկանիշները բեմադրիչը կարևորել է նաև ներկայացման մեկնաբանության մեջ: «Նա սիրում է բոլոր մարդկանց՝ չար ու բարի, նրա վրա մարդկային արարները չեն թողնում

¹⁷ Մայյան Հ., Երկխոսություն երրորդի համար, էջ 171, 172:

¹⁸ Նույն տեղում, էջ 24:

¹⁹ Նույն տեղում, էջ 172:

²⁰ Նույն տեղում, էջ 173:

ոչ մի հետք»²¹: Ներկայացման մեծագույն ձեռքբերումներից է եղել լավ ընտրված դերասանական կազմը, նրանցից շատերը Մայյանի ուսանողներն են եղել: Թատերագետը նկատում է, որ բոլոր դերակատարները վառ են, ոգևորված, խարակտերային. «*Ամենաբնորոշը վարակիչ էքստրազն էր*», - գրում է նա հարկապես Աշոֆ Ադամյանի և Աշոֆ Աբաջյանի դերակատարումների մասին, որոնց «*հախտուն ինքնաարտահայտումից դժվար է զատորոշել հիմնական տեքստի ու իմպրովիզի սահմանները*»²²: Սարոյանի «Իմ անունը Արամ է» պատմվածքների ժողովածուն թերևս կերպարների ու բնավորությունների առումով կարելի է համարել ամենացայտունն ու բազմազանը, այնտեղ «...Սկզբից մինչև վերջ Սարոյանը ցուցաբերում է բնավորություններ կերպելու հասուն վարպետություն, բնավորություններ՝ օժտված շոշափելի ճկունությամբ, մարդկային անհատականության կենդանի ջերմությամբ»²³, - նկատում է Նատալյա Գոնչարը, և բնական է Մայյանի ընտրությունը: Այս ժողովածուի միանգամայն կենդանի և հետաքրքիր իրավիճակներում հայտնված վառ, ընդգծված անհատականություններով բնավորությունները, թվում է, պատմվածքներից ձգտում են բեմ:

Սարոյանի ստեղծագործություններին ամենաինքնատիպ մոտեցումը, թերևս, դրանք իբրև մնջախաղ մեկնաբանելն է: 1972-ին Երևանում առաջին մնջախաղային Տուշպա թատերախմբի ղեկավար Հենրիկ Պողոսյանի հրավերով Մոսկվայից գալիս է Արսեն Փոլադովը, ով ՎԳԻԿ-ի առաջին նորաբաց մնջախաղի դասարանի շրջանավարտ էր և հիմնում է մնջախաղի թատրոն: Քանի որ Պողոսյանի՝ թատրոնը թողնելու պատճառով թատերախումբն ամբողջությամբ կազմալուծվում է, Փոլադովը ստիպված է լինում վերստին թատերախումբ կազմավորել: Առաջին գործը Վիլյամ Սարոյանի «**Սովյալները**» պիեսն էր (Տղա-Սամվել Աղաբալյան, Աղջիկ-Նունե Օզանեզովա, կնոջ ամուսինը-Լևոն Իվանյան): 1974-ին հենց այս բեմադրության ամբողջական ցուցադրմամբ խումբը ճանաչվում է «Պրոֆեսիոնալ կոլեկտիվ» և ընդգրկվում է Հայիամերգի կազմ. այս տարեթիվը համարվում է թատրոնի ծննդյան տարեթիվը: Ներկայացումը սկսվում է բեմի խորքում լուսավորված դիմակով և ձայնագրված տեքստով: «*Հիշում եմ. «Սովյալներ»-ից հետո մի ծանր բան էր ճնշում մեզ՝ վրիպ, դալուկ, անկյանք ու սևազգեստ ֆիգուրներից: Ուղղակի դաջվեց մեր մեջ Լևոն Իվանյանի փխրադեմ Գրողը. մարդկանց հանդես*

²¹ Նույն տեղում, էջ 174:

²² Գրիգորյան Վ., Վիլյամ Սարոյանը հայ թատրոնում, էջ 25:

²³ Գոնչար Н. В. Сароян и его рассказы. Ереван, 1976, стр. 190.

համակ բարության փիպար, որ սեր է ներշնչում ոչ միայն անկյանք աղջնակին, այլև մեզ՝ հանդիսականին»²⁴: 1976-ին, երբ Սարոյանը Երևանում էր, դիտում է «Սովյալները» և «Հե՛յ, ով կա» պատումները: Ներկայացումից Սարոյանը շատ է տպավորվել և երբ իր դրվատական կարծիքն է հայտնել բարձրաձայն, դերասանները մի տետր են գտել, բերել, որ գրի իր խոսքը: Այս միջադեպի շնորհիվ թատրոնն ունենում է իր առաջին տպավորությունների գիրքը: Սարոյանի խոսքն իսկապես տպավորիչ է այնտեղ. «1976 թվական, նոյեմբերի 28. Շաբաթ: Երևանի մնջախաղի թատրոնի դերասաններին: Դուք կեցցեք, դուք հիանալի եք, ինչպես հիանալի է ձեր ներկայացումը: Շաբա ապրեք, դուք հուզեցիք իմ էությունը, շոյեցիք իմ ականջն ու հմայեցիք իմ սիրտը: Վիլյամ Սարոյան»²⁵:

Սարոյանը հենց այնպես գովեստներ շոայլող չի եղել, երբ խոսքը վերաբերել է իր պիեսների բեմադրություններին: Որպես կանոն, նրան գոհացնելը գրեթե անհնար է եղել, նա հաշտ չէր իր ժամանակի թատրոնի, բեմադրիչների հետ: Օրինակ՝ «Հայերի» բեմադրության մասին Տիգրան Կույումջյանին նա հետևյալն է պատմել. «...Բեմադրությունը հեռու է բնագրից: Սպիտակ է, որ նրանք ճղճղան, շինծու հնարք է: Հայերն աղմկոտ չեն: (էլիա) Կազանը նույնպես սփիպում է, որ բոլորը ցարկոտեն, հնարքներ են, հնարքներ շաբ է բանեցնում»²⁶: Սարոյանը սիրում էր թատրոնը յուրահատուկ սիրով: Իր կյանքի մեծ մասը նա նվիրել էր դրամատուրգիային ու թատրոնին, սակայն թատրոնում չէր սիրում մեկ բան՝ «թատրոնը». «Թատրոնի հիմնական թերությունը որպես արվեստ կայանում է նրանում, որ այն թատերային է/theatrical/, այն անմարդկային կամ հակամարդկային է (inhuman, or anti-human)»²⁷, գրում է թատրոնում արդեն մեծ փորձառություն ունեցող Սարոյանը: Արհեստական, չափազանցված թատերայնությունն ու հնարքները Սարոյանին խորթ էին: Նա թատրոնից պահանջում էր ավելին, քան կարող էր անել թատրոնը՝ «մեր առջև նույնքան ռեալ պիես է, ինչպես փողոցների խաչմերուկը»²⁸, գրում է նա «Իմ սիրտը լեռներում է»-ի նախաբանում, ահա այսչափ բնականություն, այսչափ «մարդկային թատրոն» էր պահանջում Սարոյանը:

Հայաստանում իր տեսած երկու բեմադրություններն էլ Սարոյանը բարձր է գնահատել և գոհացել է այնքան, որ հատուկ Սունդուկյանի թատրոնի

²⁴ Գրիգորյան Վ., Վիլյամ Սարոյանը հայ թատրոնում, էջ 18:

²⁵ Նույն տեղում, էջ 19:

²⁶ Սարոյան Վիլյամ, Հայկական եռագրություն, էջ 19:

²⁷ Saroyan William, «Razzle-Dazzle», p. 17.

²⁸ Ասնոյան Ռ., Մեծ բիթիսցու առեղծվածը, էջ 58:

համար գրել էր «Խաղողի այգին», որը չհասցրեց տեսնել: Ուրեմն պետք է ենթադրել, որ թատերական դպրոցների տարբերությունն է դեր խաղացել նաև: Սարոյանը, հավանաբար, հենց այն մարդկային ու բնական է տեսել այս երկու հայաստանյան բեմադրություններում: *«Սարոյանի թատերգությունները, հակառակ ակնհայտ պարզությանը, հաջող բեմադրելու համար ծայրահեղ բարդ են: Նրան գոհացնելը նույնպես երբեք դյուրին չի եղել»*²⁹, գրում է Տիգրան Կույումջյանը: Եվ սա ճշմարտություն է:

Աճեմյանից հետո սարոյանական բեմադրությունների պատմությունը հայ բեմում մի բավական հետաքրքիր եզրակացության է մեզ մղում, հայ բեմադրիչները միայն երկրորդ մոտեցումից են Սարոյանին ըմբռնում: Յու. Էլոյանը «Մարդկային կատակերգություն» վեպի սեփական բեմավորմանն անդրադարձել է երկու անգամ (1972, 73թթ. պատանի հանդիսատեսի թատրոնում և հեռուստաթատրոնում), Ծատուրյանի՝ 1986-ի «Քո կյանքի ժամեր»ի հանդեպ քննադատության հակասական կարծիքը փարատվեց 2008-ի Համազգային թատրոնի «Փրկության կղզի» բեմադրությամբ: Հենրիկ Մայլանը նույնպես այս օրինաչափության «հետևորդն» է. «Խաղողի այգին» ձախողելուց հետո նա Սարոյանի հիշատակի առջև իրեն արդարացնում է իր «Իմ անունը Արամ է» միանգամայն ինքնատիպ բեմադրությամբ: Արմեն Էլբակյանը նախ Ծատուրյանի՝ 1986 թվականի բեմադրության դերակատարներից էր, ապա 2006-ին՝ «Աշխարհի վերջին օրը» բեմադրությունն էր, որի շուրջ արձագանքներ չեղան: Այլ հարց է «Չե՞ս պարի ինձ հետ»-ը, որը հայ բեմում բեմադրված Սարոյանի ստեղծագործություններից լավագույնների շարքում է:

Այս չգրված «օրինաչափությունը» հաստատում է, որ Սարոյանի թատերգությունն իսկապես փորձաքար է ոչ միայն թարգմանիչների, այլև բեմադրիչների համար: Մեր այս դիտումից դուրս է միայն Վարդան Աճեմյանը, թեև նա էլ արդյունքի հասել է մոտ երկու տարվա փորձերի և Սարոյանի հետ ունեցած զրույցների շնորհիվ: Սարոյանն առնվազն փորձառություն է պահանջում, քանի որ դուրս է դրամայի ծանոթ օրենքներից: Այս դրամատուրգին նախ և առաջ հարկավոր է ճիշտ և խորությամբ ընթերցել սովորել: Սարոյանը թատրոնին առաջին հերթին մոտենում է լուրջ գրական հիմքի տեսակետից: *«Այն հասկացությունը, որ պիեսները ընթերցելու համար չեն, համոզիչ չէ»*³⁰, գրում է նա: Այսպիսով, Սարոյանը սովորեցնում է նաև իր ընթերցողին և բեմադրիչին՝ նախ բարեխիղճ վերաբերմունք գրված նյութի հանդեպ՝ սկսած բառից,

²⁹ **Սարոյան Վիլյամ**, Հայկական եռագրություն, էջ 19:

³⁰ **Saroyan William**, «Razzle-Dazzle», p. 15.

տեքստին, բառին: «Պիեսը, որպես գրական ձև ամբողջական է, ավարտված իր լռության ու անշարժության մեջ և կարիք չի զգում ամբողջի ներկայության, հանդիսավորության ու աղմուկի»³¹, - գրում է Հենրիկ Հովհաննիսյանը: Օրինաչափ է նաև, որ բեմն իր պայմաններն ունի, և գրված խոսքն այնտեղ դրություն պետք է դառնա՝ բխած հեղինակի տեքստից: «Բեմում գրական երկը խոսքային նյութ է, որ փոխակերպվում է, ի հայտ է գալիս որպես անձի կենդանի ներկայություն՝ այլ նյութ և այլ ձև»³²: Եվ սա պետք է լինի Սարոյանին մոտենալու առաջին և անվիճելի նախապայմանը: Այնինչ մեր բեմադրիչներից շատերը գնում են Սարոյանի ստեղծագործություններին (կլինի պիես, թե պատմվածք) իրենց հորինած տեքստերը հավելելու, նոր կերպարներ, նոր գործողություններ ու անգամ նոր տեսարաններ ավելացնելու մեթոդի ուղիով, ինչը դառնում է նրանց տապալման առաջին պատճառը:

ПРОТИВОРЕЧИЯ В КРИТИЧЕСКИХ ОЦЕНКАХ ПОСТАНОВОК ПО ПРОИЗВЕДЕНИЯМ САРОЯНА ЗА ПЕРИОД С 1962 ПО 1991 ГОД

АНУШ АСЛИБЕКЯН

Статья посвящена некоторым постановкам сарояновских произведений и обзору критических статей из книг и сборников о данных спектаклях. Становится очевидным, что имеется определенное противоречие во мнениях и оценках критиков по поводу одних и тех же постановок. В ряде случаев, авторы-теоретики, будучи знакомы с существующими статьями, сознательно обходя мнения коллег, зачастую просто отрицая друг друга, в своих оценках, дают полярное представление о событиях, не позволяя нам воссоздать объективную картину реальности. После знаковой аджемяновской премьеры Сарояна, также прослеживается определенная закономерность: как правило, армянские режиссеры постигают автора и добиваются успеха, лишь «со второго подхода».

Ключевые слова – Вильям Сароян, Вардан Аджемян, театр, драма, Генрих Малян, театр имени Сундукяна, американский театр.

³¹ Հովհաննիսյան Հ., Դերասանի արվեստի բնույթը, էջ 29:

³² Նույն տեղում:

CRITICAL CONTRADICTIONS IN THE PERFORMANCES OF SAROYAN'S WORKS /1962-1991 YEAR PERFORMANCES/

ANUSH ASLIBEKYAN

In this article we refer to somehow significant performances of Saroyan's works that were staged in Armenian theatre during 1962-91 years and also about theatrical criticism of those performances that were included in books and anthologies. We discover that the views of the authors about the same performance, as a rule, don't coincide and are emphasized contradictory. In some cases, the theorists-authors of the books, being familiar to each other's theatrical criticizing, reject each other thus doesn't giving a complete picture of Saroyan's performances. After Achemyan the history of Saroyan performances in Armenian stage brings us to a very interesting conclusion – Armenian directors manage to understand and succeed Saroyan only after second approach/the examples are listed in the article/.

Key words – William Saroyan, Vardan Achemyan, theatre, drama, Henrick Malyan, Sundukyan State Academic Theatre, American theatre.

**ԷԴՎԱՐԴ ՄԻՐՉՈՅԱՆԻ «ՊՈԵՄ» ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ
ՍՏԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ XX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ
ԵՐԱԺՇՏԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ**

ԱՆՆԱ ԹԱՄԻՐՕՂԼՅԱՆ

Այս գիտական հոդվածում ուսումնասիրվել են Էդվարդ Միրզոյանի «Պոեմ»-ում (1971) օգտագործված նոր ոճային առանձնահատկությունները, նրանց ձևաչափի մեջ արտահայտվող տարբեր արտահայտչամիջոցները ժամանակակից սերիական (դոդեկաֆոնիա) և սոնորիստիկ ուղղություններում, ինչպես նաև՝ կատարողական մեկնաբանման և կոմպոզիցիոն առանձնահատկությունների մեթոդական վերլուծությունները:

Բանալի բաներ – «նախապատրաստված դաշնամուր», սոնորիստիկա, դոդեկաֆոնիա, կատարողական և կոմպոզիցիոն առանձնահատկությունների վերլուծություն:

Էդվարդ Միրզոյանի (1921-2012) գործունեության ու կենսագրության մի շարք ուսումնասիրություններ և կարծիքներ են գրվել տասնամյակներ շարունակ: Նա իր հախուռն խառնվածքով, բազմակողմանի հետաքրքրություններով, զբաղմունքներով և պարտականություններով մշտապես եղել է իր ժողովրդի կողքին, նրանց պարզելն ինքնատիպ, սրտառուչ ու ազդեցիկ ստեղծագործություններ: Է.Միրզոյանի ստեղծագործական ժառանգությունը հիմնված է երկու ճանապարհների սինթեզման վրա՝ հայկական ժողովրդական երգարվեստի և արդիական երաժշտամիջոցների: Նա մշտապես բացահայտել է կյանքն իր բազմերանգ կողմերով, բնականությամբ, հույզերով, պոռթկումներով, ցատումով: Նրան հետաքրքրել է այն ամենը, ինչը կապված է եղել իրական կյանքի հետ: Չկորցնելով լավատեսությունը՝ նա հակված է եղել հավատալու ամենալավին, ամենաբարուն, որին արժանի է ցանկացած մարդ:

Նրա խոշոր կտավի, ինչպես նաև կամերային ստեղծագործությունները գերակշռում են դաշնամուրային գործերին, բայց վերջիններս իրենց գեղարվեստական ու գեղագիտական նշանակությամբ ևս կարևոր են, անշուշտ արժանի ուշադրության և ուսումնասիրության: Դեռ ուսանողական տարիներից Է.Միրզոյանը սկսել է ստեղծագործել դաշնամուրային երկեր, սակայն դրանցից տպագրվել են քչերը¹, որոնց թվում՝ «Պոեմը» 1971 թ.: Էդվարդ Միրզոյանն

¹ Ինչպես նաև՝ Տիկնիկների պարը - մանրանվագը, որը տպագրվել է Սարաջյան Գ.Վ., Ումր-Շատ Վ.Վ., Դաշնամուրի ձեռնարկ երաժշտական դպրոցների համար, գիրք 2, ուսուցման 3-4 տարի, 1973, 1978, էջ 55, 56, «Հայաստան» իրատ., վերահրատ. խմբ.՝

իր դաշնամուրային երկերի մասին գրում է. «Չհաշված 1946 թ. Մոսկվայում գրված Պոլիֆոնիկ սոնատը (Պարտիտա) քիչ են անդրադարձել դաշնամուրային ստեղծագործությունների ստեղծմանը: Փաստորեն դրանք են «Պոեմը» (1971) և «Ալբոմ թոռնիկիս» (1984 թ.)»²: Դաշնամուրային «Պոեմը»³ կոմպոզիտորը նվիրել է դստերը՝ Ջարուհի Միրզոյանին, Երևանի Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ դպրոցն ավարտելու առիթով: Այնուհետև Ջարուհին այս ստեղծագործությունը կատարել է ԽՍՀՄ կոմպոզիտորների V համագումարում, կամերային համերգների շրջանակում: «Պոեմը» հնչում է շատ դաշնակահարների կողմից, որոնց թվում՝ Արթուր Փափազյանի, Հայկ Մելիքյանի և այլոց կատարմամբ: Կոմպոզիտորի վկայմամբ «Պոեմը» հրաշալի է կատարել պրոֆեսոր Կետտի Մալխասյանը, որի ձայնագրությունը պահված է Ազգային ռադիոյի ֆոնդում: Տարիներ անց Միրզոյանի ընկերը՝ կոմպոզիտոր Սուլխան Ցինցաձեն պատմել է այն մասին, որ «Պոեմը» պարտադիր ստեղծագործություն է եղել Մոսկվայի կոնսերվատորիայի դաշնակահարների ավարտական քննության ժամանակ, երբ Ցինցաձեն եղել է պետական հանձնախմբի նախագահը: Է.Միրզոյանը հիշում է Ցինցաձեի խոսքերը. «35 անգամ լսել եմ քո «Պոեմը», շինծու սարսափով բացականչում էր նա»⁴: «Պոեմը» լիրիկո-դրամատիկ, պատմողական բնույթի պիես է, որի կառուցվածքը, պարունակելով ազատ ձևակառուցողական գրելաոճ, այնուամենայնիվ դիտվում է որպես պարզ եռամաս ձև՝ **Epico maestoso-Tranquillo-Tempo I (A-B-A1)**⁵՝ զարգացող միջին մասով, կրճատված ռեպրիզայով, որը մոտեցնում է այն սոնատային ձևին: Նշենք, որ «Պոեմ»⁵-ի դրամատուրգիական գծի բացահայտման համար Միրզոյանն օգտագործել է մի շարք արտահայտչամիջոցներ, որոնք առաջին հերթին ապահովում են պոեմի երաժշտական լեզվի դեկլարատիվ բնույթը, այդ թվում՝ անդրադարձել է դեռ XX դարի առաջին կեսի զար-

Քուրալյան Գ.Ե., Երևան, 2009, էջ 56, 57: Детские пьесы композиторов Закавказья для фортепиано. Москва, 1988, 1-ое издание /ред. Вл. Блок/, стр. 11-12.

² **Мирзоян Э.** Фрагменты, Литературная запись, составление приложений и общая редакция Армена Будагяна. Ереван, 2005, стр. 110.

³ Նշենք, որ 1920-1970 թթ. պոեմի ժանրին անդրադարձել են մի շարք հայ կոմպոզիտորներ՝ **Хачатурян А.** Поэма. Москва, 1928; **Егиазарян Г.** Поэма-сазандар. Москва, 1938; **Бархударян С.** Поэма. Тбилиси, 1948; **Тер - Гевондян Ан.** Поэма. Рукопись, 1960; **Бабаджаниян А.** Поэма. Москва, 1966.

⁴ **Эдвард Мирзоян.** Фрагменты, Литературная запись, составление приложений и общая редакция Армена Будагяна. Ереван, 2005, стр. 110.

⁵ Նույն տեղում, էջ 10-15:

գացած, մինչ օրս արդիականությունը պահպանած որոշ ուղղությունների (նոր մտածելակերպի ձևավորման, գրելաձևի նոր մեթոդների, կատարման, հնչյունարտաբերման առումով)՝ «նախապատրաստված դաշնամուրի», որի հիմնադիրներից են ամերիկացիներ Ջոն Քեյջը, Հենրի Կաուլը և այլն, ինչպես նաև՝ դոդեկաֆոնիայի և սոնորիստիկ ուղղությունների տեխնիկական հնարքներին⁶: Էդվարդ Միրզոյանը «Պոեմ»-ի մեջ վարպետորեն է օգտագործել նոր ոճային առանձնահատկությունները, նրանց ձևաչափի մեջ արտահայտվող տարբեր արտահայտչամիջոցները ժամանակակից սերիական և սոնորիստիկ ուղղություններում: Կոմպոզիտորի կողմից կիրառված արտահայտչամիջոցներն ուղղված են նկարագրելու կերպարայնության և տեխնիկական լուծման միջև համաձայնեցվածությունը: Ձևակառուցողական տեսակետից «Պոեմ»-ի առաջին մասը՝ **Epico maestoso**, կարելի է դիտել երեք տարբեր իմաստային դարձվածքների համակցման սկզբունքով: Այս ստեղծագործության կոտորակվածությունը, որը հիմնված է կտրուկ կոնտրաստների վրա, կարծես մարդկային խոսքի նմանակում լինի (ռեչիտատիվ-տեսարանների գործողություն): Առաջին մասի երեք հատվածների բաժանումը խիստ պայմանական է, չնայած այն փաստին, որ երկրորդ և երրորդ էպիզոդները բավականին երկար շարունակում են մնալ PP դինամիկ դաշտում՝ հակադրվելով առաջինի FF: Այդպիսի հակադրությունը, հնչողության ցածր դինամիկայի դեպքում կոմպենսացվում է նյութի բնույթով: Դիցուք առաջին մասի առաջին էպիզոդը կառուցված է դիսոնանս ակորդների ուղղահայաց շարվածքի հաջորդականությամբ FF-con forza դինամիկ դաշտով: Սկզբնամասում օգտագործվում է դոդեկաֆոնիկ ուղղության սերիական շարքի 6 հնչյուններից բաղկացած, ուղղահայաց դիսոնանս ակորդների շարք:

Այն կարծես լարված, մռայլ հանդիսությամբ, հուսահատ կերպարի ցատում արտահայտող տեսարան է՝ բաղկացած 12 (6+6) տակտից, 4/4 տևողությամբ: 1-2 տակտերը տոնալ անկատար են (cis-moll առանց V աստիճանի կամ A-dur), իսկ 3-4տ.՝ հանդես են գալիս սերիական շարքեր՝ դիսոնանս հնչողությամբ՝ es-f-h-cis-gis-d-6 հնչ. (3տ.) և e-g-a-b-ges-ces-6հնչ. (4տ.): Առաջին մասում հատկանշական է պոլիֆոնիկ ձայնատարության առկայությունը,

⁶ Որն արտահայտվեց Օ.Մեսիանի, Ա. Վեբերնի, նորվիեննացիների (Ա. Շյոնբերգի, Պ.Հինդեմիթի), Ի.Ստրավինսկու, Ս.Պրոկոֆևի, Դ.մ. Շոստակովիչի և այլոց ստեղծագործություններում:



Օրինակ 1 es-f-h-cis-gis-d e-g-a-b-ges-ces

Օրինակ 2

հատկապես ինտերվալների լուծումներով՝ փ.2-մ.2-մ.3-փ.3-փ.3.(5-7տ.): Այնուհետև՝ դիստանս 6 հնչյուններից բաղկացած սերիական շարքը b-b/x-a-h-des-as ռեգիստրների փոխադրումներով, (4 իջնելով կոնտրոստավա) և դիստանսի պատկերով P-cresc.-FF-marcato հասնում է կուլմինացիայի, որից հետո հետզհետե հանգչում է ձայնային ակուստիկայի տպավորությունը: Այստեղից էլ սկսվում է երկրորդ էպիզոդը (օրինակ 2): Երկրորդ էպիզոդը եռաշերտ է, որտեղ առաջին շերտի սոնորային ֆոնի վրա հնչում են կարճ մոտիվային սեկունդային դարձվածքները՝ ստեղծելով տազնապալից սպասման տպավորություն (կարծես կերպարի խեղդված լացը խանգարում է խոսելու, պատմելու՝ ազատվելու վատ հուշերից): Մոտիվային դարձվածքներով աստիճանաբար ընդլայնվում է հնչյունային դաշտը: Առաջին պատկերի պահված cis բասի ֆոնի վրա մուտք է գործում թեմատիկ պատկերը, որի հենքի վրա արտացոլվում է gis հնչյունը 3/4 չափի մեջ փոքր օկտավայում: Երկրորդ շերտում վերընթաց և վարընթաց օղակներով, կարճ ֆորշլագի պատրանք ստեղծելով և փոքր սեկունդաների⁷ խաղով հեղինակը ներկայացնում է մի հետաքրքիր պատկեր, որը բնորոշ է «նախապատրաստված դաշնամուր» ուղղության հնարքներից մեկի կիրառմանը: Գրառման տեսակետից երկրորդ շերտի նույն gis-ը արտահայտվում է x -նշանով, որը նշանակում է ստեղծող պահված այդ հնչյունի չհարվածվող լինելը: Gis հնչյունի այս վերընթաց կամ վարընթաց ինտոնացիոն խաղը՝ fisis-gis/x-a-gis/x, որտեղ սկզբից հիմնական մոտիվը՝ gis/x-ը, այնուհետև cis և g հնչյունները նախատեսված են կատարելու դաշնամուրային ֆլաժոլետի դերը, այսինքն՝ աջ ափով չհարվածվող լարը բաց դեմաֆերով (խլալարով)

⁷ Որոնք առատորեն օգտագործվում են ստեղծագործության բազմաբնույթ ֆակտուրային շարադրանքի հատվածներում՝ որպես ինտոնացիոն մտքի առանցք:

որպես ռեզոնանսային էֆեկտ հնչեցնելն է: «Երրորդ տակտում, շնորհիվ այն բանի, որ ռեալ հնչող *fisis* և *a* հնչյունները կապակցվում են մինչ այդ հնչեցրած *gis* նոտայի թողած հետքին, առաջանում է յուրատեսակ գունեղություն»⁸: Այս հնչյունային, տեմբրային ժամանակակից տարածական երաժշտական դարձվածքի դրսևորումը բնորոշ է սոնորիստիկ ուղղությանը, որը կարծես արտացոլում է հարվածային, կամիթային ժողովրդական գործիքների՝ սանթուրի (ցիմբալա/, քանոնի հնչողականության նմանակումը, որտեղ առկա են ռեզոնանսային լարերը: Իսկ բասի օկտավային շարժը, որն առաջին հայացքից դիտվում է որպես ուղղահայաց ակորդ-կլաստերների հյուսվածքների հենք, արտացոլվում է սերիական շարքի 9 հնչյունների միջոցով (*x*-ը այս դեպքում շարքի կրկնվող հնչյունն է՝ լիսանս) *cis-e-d-gis-fis-f-ais-fis/x-c-a*: Երրորդ էպիզոդում ավելի են ընդգծված մեղեդային՝ ժողովրդական երգին բնորոշ դիթամ-ինտոնացիոն դարձվածքները (մեծ 3, մեծ 2, փոքր 7, փ. 6, փ. 3 և մեծ/փոքր 2 հոգոցների վարընթաց գիծը: (Օրինակ 3). Առաջին մասն ավարտվում է երկրորդ էպիզոդով 1-ին օկտավայում առանց սոնոր հնարքի: Կերպարային առումով «Պոեմ»-ի առաջին մասն իր հոռետեսությամբ, դժգոհությունն արտահայտող պոռթկումներով առաջին և այդ տրամադրությանը հակադրվող, արտահայտվելուն խանգարող զուսպ լացի նկարագիրը մյուս՝ երկրորդ, երրորդ էպիզոդներում դարձնում է ստեղծագործությունը խորհրդավոր՝ տեղիք տալով սուբյեկտիվ վերլուծական մտածելակերպի:

Երկրորդ մասում (Tranquillo) սկզբից ևեթ կազմավորվում է ներքին էներգիայի կուտակման սրընթաց զարգացումը, որն էլ կանխորոշում է նյութի հետագա շարժման ուղղվածությունն ամենատարբեր դրսևորումներով: Հիմնականում նյութի ներքին և արտաքին դիթմիկ շարժումը պայմանավորված է 1/8, 1/16, 1/32 նոտաների խմբավորումներով (տե՛ս նաև օր. 6): Դիցուք, երկրորդ մասում 1/16 և 1/32 նոտաները (հնչյունները) գրառվում են հետևյալ կերպ՝ 4/4 տևողության մեջ ամեն ¼ արտահայտված է տրիոլներով՝ մեկ շերտը բաժանելով աջ և ձախ ձեռքերի նվագաբաժինների միջև, որտեղ կոմպոզիտորը կառուցել է նաև 12 հնչյուններից բաղկացած սերիական շարք՝ *es-ges-b-des-c-e-a-d-g-f-as-h*: Օրինակ 4.

⁸ **Դերոյան Ն.Վ.**, Երաժշտական ստեղծագործության վերլուծություն, «Լույս» հրատ., Երևան, 1985, էջ 124:

Այնուհետև արագացնելով և մի պահ հանգստանալով ֆերմատայով՝ շարունակում է հորիզոնական շարժումով նյութի դողեկաֆոնիկ ուղղության 11 հնչյուններից կազմված սերիական շարքերի պոլիօստինատային և պոլիլադային նյութի երկշերտ զարգացումը միջին ռեգիստրում, աջ ձեռքում՝ c-e-a-h-d-g - 6 հնչյուն (a-moll, G-dur), ձախ ձեռքում՝ b-des-es-ges-as - 5 հնչյուն (b-moll): Աջ ձեռքի օստինատը մնում է անփոփոխ, իսկ հետագա զարգացումը տեղի է ունենում մետրառիթմիկ պատկերների մանրացմամբ (ֆակտուրայի զարգացմամբ)՝ 1/16 սեքստոլների, 1/32 - 4 մասնաբաժնի բաժանելով: Իսկ ձախ ձեռքի օստինատը ենթարկվում է decalage-ի սերիական շարքի շեշտա-

Օրինակ 5

դրման տեղափոխմանը⁹ (շարքի յուրաքանչյուր 5 հնչյունից հետո շեշտն առաջ

⁹ Այսինքն՝ մետրական տարբեր շեշտավորման ճանապարհով և չնայած զուրկ են կանոնավոր հաջորդականությունից, այնուամենայնիվ, ենթարկվում են երաժշտական

է ընթանում տրիոլների միջոցով՝ 6,11,4 կամ տակտերի 1,2,3,4... մասերի տարբեր հնչյունների վրա՝ ստեղծելով նաև պերմուտացիա permutation՝ շարքի հնչյունների «հատումներ»։ Այս ամենը ստեղծում է անհանգստության, խառնաշփոթության լարված մթնոլորտ, այսինքն՝ տեղի է ունենում Ֆակտուրայի ցրման ընթացքը տարբեր խմբավորումների միջոցով, իսկ այդ հատվածները ներկայացված են 7,9 հնչյուններից բաղկացած սերիական շարքերից։ Օրինակ 6



Զարգացումը շարունակվում է կրկին 1/32 սեքստոլների խմբավորումներով՝ այն հասցնելով կուլմինացիայի զարգացման վերջնափուլին FF դինամիկ դաշտով։ Այստեղ հորիզոնական և ուղղահայաց դասավորությամբ 4,5,7,9 տոներից (h-fis-eis-h/c-eis/x-fis/x կամ f/g-e-dis-fis-dis/x-e/x) կառուցված կլաստերների համադրությամբ զարգացող դաշտ է ներխուժում ձախ ձեռքի նվագամասում նոր նյութի օկտավայի տարածական հնչողականությունը, որը նույնպես սերիական շարք է՝ բաղկացած 9 հնչյուններից՝ ուղղահայաց և հորիզոնական շարադրմամբ՝ fis-g-dis-a-as-d-e-es-f: Այս ֆակտուրայի շարադրանքն այնուհետև տեղափոխվում է աջ և ձախ ձեռքերի նվագաբաժինների միջև սերիական շարքով՝ ais-h-f-c-e-gis-fis (7):

Օրինակ 7.



Փաստորեն տվյալ հատվածում շարունակվում են ֆակտուրային հակադրվող տարածայնությունները, նյութը տոկատային շարադրմամբ զարգանում է և, ընդլայնելով դաշնամուրի ռեգիստրային հնարավորությունները

շարժման ներքին տրամաբանությամբ:

(կոնտրոկտավայից մինչև չորրորդ օկտավա), օգտագործելով պեդալի (ոտնակի) լայնածավալ հնարավորությունները, հզորացնում է տեմբրադինամիկ դաշտը՝ հասցնելով այն գագաթնակետին, ստեղծելով նաև սոնորիստիկ էֆեկտ: Այստեղից էլ այն մուտք է գործում ռեպրիզ *Tempo I*: Այսպիսով, երկրորդ մասում կառուցելով դոդեկաֆոնիկ և սոնորիստիկ հնչյունային, ինչպես նաև իմպրեսիոնիստական դաշտ, օգտագործելով պեդալ, ֆակտուրային ոչ բնորոշ բազմատեսակ ռիթմաինտոնացիոն խաղեր տևողությունների մանրացման հետևանքով, նպաստելով տեմպի արագացմանը առանց նրա փոփոխման և կտրուկ հակադրությունների միջոցով *pp-ff-con fuoco* ընդգծվում է կոլմինացիան դրամատիկության հասցնելու և անելանելի վիճակից դուրս բերելու նպատակը:

Երրորդ մասը՝ *Tempo I* –կրճատված առաջին մասի կուռ կրկնությունն է, որպես անցյալի հուշ (*reminiscence*), որտեղ հնչում են *ff-con forza* ընդգծված առաջին մասի մուտքի լարված, հզոր հնչողությամբ սերիական շարքի ակորդները և կտրուկ հակադրվող երկրորդ թեմատիկ պատկերը՝ սոնոր հնարքով: Հեղինակն ավելացնում է երրորդ հնգաշարը: Նշենք, որ այս փոփոխությունը տեքստում կատարվել է Շահան Արծրունու նոր խմբագրությամբ հեղինակի ցանկությամբ, քանի որ նախկին հրատարակություններում այն չկա: Բասերի՝ ձախ ձեռքի նվագամասի հետզհետե անջատվող հնչյունները և դինամիկ դաշտի *p-pp-ppp* չափազանց թուլացումը կարծես ստեղծում են մի փոքր հույսի նշույլ... Վերջաբանում ուղղահայաց շարադրանքով ութշերտանոց հնչյունների ակուստիկ դաշտը հետզհետե մարում է՝ թուլացնելով ձայնի օբերտոնների տատանումը, որով էլ ավարտվում է ստեղծագործությունը: Ստեղծագործության երաժշտության (բազմաթեմատիկ) հակադրությունները ծառայում են երկի բարձր գաղափարին: «Պոեմի» տեքստում բացակայում են մատնադրության նշումները՝ թողնելով կատարողի հայեցողությանը: Ի դեպ, գրվածը շատ հարմար է կատարողների համար: «Պոեմն» արժևորվում է նրանով, որ դրամատուրգիան արձարծվում է կոմպոզիտորի կիրառած արդի հնարներով ու արտահայտչամիջոցներով, որոնց երաժշտական կերպարի տրամադրության և լեզվամտածողության ոճական ուղղվածությունը կարելի է բնորոշել որպես էքսպրեսիոնիստական:

«Պոեմը» սուպագրված է առանձին¹⁰ և ժողովածուներում¹¹: 2004 թ.

¹⁰ Միրզոյան Է., Պոեմ դաշնամուրի համար, «Հայաստան» հրատ., Երևան, 1971, էջ 8 (խմբ.՝ Լ.Աստվածատրյան):

Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչությունը տպագրել է «Պոեմ» և «Ալբոմ թոռնիկիս» երկերը՝ դաշնակահար Շահան Արծրունու նոր խմբագրությամբ և իր կատարմամբ¹²:

**«ПОЭМА» ДЛЯ ФОРТЕПИАНО ЭДВАРДА МИРЗОЯНА СКВОЗЬ ПРИЗМУ
МУЗЫКАЛЬНОГО МЫШЛЕНИЯ ВТОРОЙ ПОЛОВИНЫ XX ВЕКА**

АННА ТАМИРОГЛЯН

В этой научной статье - «Поэма» Э. Мирзояна (1971), рассмотрены новые средства выразительности в современном серийном (дододекафонии) и сонористическом направлениях, а также методические указания с аналитическим подходом для выявления некоторых особенностей исполнительского-интерпретационного и композиционного плана.

Ключевые слова - «препарированное фортепиано», сонористика, додекафония, исполнительский аспект, анализ композиционных особенностей.

**THE APPRAISAL OF EDWARD MIRZOYAN'S PIANO PIECE
«ПОЕМ» (1971) BY THE MUSICAL THINKING STANDARDS OF THE SECOND
HALF OF THE XX CENTURY**

ANNA TAMIROGHLIAN

This article investigates the new stylistic features in modern twelve-note serialism (dodecaphonys) and sonorous trends employed in the piano piece «Поem» (1971) by Edward Mirzoyan. It also includes methodical analyses of the interpretative features of the piece as well as its compositional aspects.

Key words – «a prepared piano», sonority, dodecaphony, analysis of compositional and interpretative features.

¹¹ Пьесы композиторов Армении для фортепиано. Москва, 1977, стр. 2-7; **Мирзоян Э.** Поэма. Сб. произведения советских композиторов для фортепиано. Киев, 1978, стр. 2-7; **Мирзоян Э.** Поэма. Сб. виртуозные произведения. Ереван, 1984, стр. 51-56.

¹² **Միրզոյան Է.**, Պոեմ, Ալբոմ թոռնիկիս դաշնամուրի համար, ԳԱԹ հրատարակչություն, Երևան, 2004, 32 էջ.

ՄԻՀՐԱՆ ԹՈՒՄԱՃԱՆԸ՝ ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉՅԱՆԻ «ՆԱՆՈՐԻ» ՄԱՍԻՆ

ՍԱԹԵՆԻԿ ՂԱՓԼԱՆՅԱՆ

Հոդվածը նվիրված է Բարսեղ Կանաչյանի «Նանոր» a cappella խմբերգի վերաբերյալ Միհրան Թումաճանի նախաբան-նուղեցույցին, որը, ինչպես նաև Միհրան Թումաճանի՝ Լաթաքիայի քահանա տեր Սուրեն Փափախյանին հասցեագրված նամակը, գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Հեղինակը եզրակացնում է, որ «Նանոր»-ի մասին Թումաճանի նախաբան-նուղեցույցը յուրատեսակ պատմական ակնարկ է, նաև վերլուծություն, որտեղ նա շարադրել է ազգային ավանդական ծիսակատարությունների վերաբերյալ իր տեսակետը:

Բանալի բառեր – Բարսեղ Կանաչյան, Միհրան Թումաճան, «Նանոր», նախաբան-նուղեցույց:

«1964-ին էր, որ բախտավորություն ունեցա իմ հայրենիքին հողին վրա քալելու եւ քովես կամ դիմացես եկող անցնող մեծին ու պզդիկին շունչով ջերմանալու»:

Այս խոսքերի հեղինակը Մեծն Կոմիտաս վարդապետի հինգ սաներից մեկն է՝ բանասեր, բանահավաք, ազգագրագետ ու երաժշտագետ, գրախոս ու քննադատ Միհրան Թումաճանը: Նա իր կյանքի վերջին տարիներին ապրել է հայրենիքում: Հենց այստեղ էր հնարավորություն ընձեռվելու, որպեսզի վերջապես հրատարակվեր նրա ողջ կյանքի «երախայրիքը»՝ «Հայրենի երգ ու բանը»: Ժողովածուի առաջին հատորը լույս տեսավ 1972-ին, իսկ մնացած հատորների հրատարակությունն իրականացվեց արդեն հետմահու: Սեփական նյութերը հրատարակության պատրաստելուց բացի, Թումաճանը զբաղվում էր նաև իր մյուս ընկերների՝ «Կոմիտասյան հինգ սաների» աշխատանքները բացահայտելու, վերլուծելու և ներկայացնելու կարևոր գործով:

Երբ բարեբախտություն ունեցա կարդալու նրա նամակներից մի քանիսը, պարզվեց, որ Թումաճանը մշտապես հետաքրքրվել է իր մտերիմների արվեստով ու գործունեությամբ, հնարավորինս նպաստել դրանց տարածմանը: Այսպես, օրինակ, նրա միջնորդությամբ Ռ.Աթայանին է փոխանցվել

Վ.Սարգսյանի «Արեւագալի երգերու» տետրակը, որը հետագայում հրատարակվել է¹:

«1964-ին, երբ Երևան էի, Կանաչեանի ստեղծագործությանց շուրջ զեկուցում մը տված էի, ծանրանալով մասնավորապէս «Աբեղա» օպերային եւ, «Նանօր» խմբերգային լայնածավալ աշխատանքին վրա»²: Իր՝ Երևան այցելության ընթացքում Թումանճանը կազմակերպել էր «Աբեղայի» դաշնամուրային կատարումը, կից բացատրություններ տվել երկի մասին: Բայց «Աբեղան» միակը չէր: Դա ես հասկացա Թումանճանի նամակից, որ պահվում է նրա արխիվում: Շարունակեցի պրպտումներս. որոնումներս ապարդյուն չէին:

Թղթապանակներից մեկում պահպանվել էր «Այգ» օրաթերթի երկու համար՝ հրատարակված 1964 թվականի հոկտեմբերին Բեյրութում:

Օրաթերթում Թումանճանը մանրամասն վերլուծել էր «Նանօրը», կցել գլխավոր թեմաների նոտային օրինակները:

Թերևս Թումանճանի այդչափ հոգատար և պատասխանատու վերաբերմունքը դեպի իր գործընկերոջ արվեստը խթանեց գրել այս հոդվածը: Ինչպես հայտնի է, ուխտագնացության երգերը հայ ժողովրդական երգաստեղծության մեջ այդ ծեսի տարբեր պահերը ներկայացնող քնարական երգերի ամբողջություն են, որ կազմում են ծիսական ժանրի ճյուղերից մեկը: Դրանք «Մշո սուլթան» Սուրբ Կարապետի պաշտամունքին նվիրված երգեր են: Հայտնի են նաև Սուրբ Կարապետի երգեր անվանմամբ, որոնց բանաստեղծական տեքստերը հրատարակվել են տարբեր ժողովածուներում, նաև Ա.Սեդրակյանի «Քնար մշեցոց և վանեցոց» ժողովածուում 1874թ.³: Ուխտագնացության երգերի հիմքում ընկած է հայ ժողովրդի ազատ ու բարեկեցիկ կյանք ունենալու դարավոր երազանքը: Այս ժանրն իր լավատեսական բովանդակությամբ ոգեշնչել է Բարսեղ Կանաչյանին՝ «Նանօր» երաժշտական-դրամատիկ պատկերը ստեղծելու համար:

«Նանօրը» Կանաչյանի խմբերգային գոհարներից է, որը մշտապես կոմպոզիտորի համերգային ծրագրերի առանցքն է կազմել: Երկի ստեղծման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Սակայն այդ մասին Սուրեն Փափախյանին ուղղված Թումանճանի նամակում կա հետևյալ հիշատակումը, Բ.Կանաչյանը պատմում է. «1942-ին խումբով Լաթաքիա կոչուած Սուրիական քաղաք մը

¹ ԳԱԹ, Թումանճանի արխիվ, անմշակ, նամակ Թումանճանից Վ.Սարգսյանին, 1965թ.:

² ԳԱԹ, Թումանճանի արխիվ, անմշակ, պատճեններ և մեջբերումներ:

³ Ուխտագնացության երգերի եղանակներ հայտնաբերել է նաև Կոմիտասը:

գացինք: Տէր Սուրէն Փափախեանը, որ այնտեղ քահանայ էր, հրավիրած էր մեզի: Կիրակի առաւօտուն եկեղեցին պատարագը երգեցինք, իսկ կէսօրէ վերջ համերգը տուինք: Խումբի անդամները զանազան տուներու մէջ տեղաւորուցան: Իսկ մենք քահանային տունը հիւրասիրովեցանք: Նոյն գիշերը Տէր Սուրէնը ինծի տուաւ տետրակ մը որուն մէջ Սասնոյ երգերու բառեր կային: Անոնց մէջ հանդիպեցայ – դեռևս աչքերս լաւ էին-«Նանոր»ին»⁴:

Այստեղից կարելի է ենթադրել, որ «Նանորը» գրվել է 1942-ին կամ զուցե ավելի ուշ:

Նույն նամակից տեղեկացա, որ այդ բանաստեղծական տեքստից Կանաչյանն ընդօրինակել է միայն որոշ հատվածներ, իսկ մնացյալ տեքստը, ժողովրդականից ոգեշնչված, նույն ոճով հորինել է ինքը: «Նանոր, նանոր, հա նանոր», «Չանկլի, զիմ սիրածը տուր», «Պարի միջին շէկ աղջիկ», «Խմենք նոսն հատ գինին», ուրեմն «Նանորը» բացի այս նախադասութիւններէն, մնացածը-եղանակ կամ բառ,-բոլորը փորեհան են», - անկեղծացել է երգահանը⁵:

«Նանորը» մեծածավալ խմբերգ է՝ գրված a cappella երգչախմբի համար, որը երաժշտական ընդարձակ դրամա է հիշեցնում: Ստեղծագործությունը սկսվում է հանդարտ պատմողական բնույթի մինորային մեղեդիով, պահված բասի վրա: Սա ուխտավորների երթն է դեպի Մշո սուլթան Սուրբ Կարապետ, որի ճշմարտացի նկարագիրը կերտելու համար Կանաչյանը հորինել է արտակարգ գեղեցկության թեմաներ: Հատկապես արտահայտիչ է ստեղծագործության լայթթեման, որը պայմանականորեն կարելի է կոչել երթի թեմա: Այն կարմիր թելի նման անցնում է ողջ խմբերգով և իր կրկնողությունների շնորհիվ անմիջապես տպավորվում է ունկնդրի հիշողության մեջ: Սկզբնական թեմաները պատմողական, նկարագրողական են, ասերգային ոճի գերակշռությամբ, միջին հատվածներում դրանք լայնաշունչ են, երգային: «Նանոր»-ում Կանաչյանը երաժշտական մտածողությունը ենթարկել է բանահյուսական տեքստի զարգացման սկզբունքներին: Դա է պատճառը, որ ստեղծագործության բոլոր թեմաներն ունեն ազատ, անկաշկանդ շարադրանք: Դրանք կադապարված չեն ո՛չ մետրական և ո՛չ էլ կառուցվածքային տեսակետից: Տոնայնական կառուցվածքի բազմազանությունը, մետրական ազատությունը, փոփոխական չափերը ևս համահունչ են թեմաների անկաշկանդ բնույթին: Ուղղաձիգ ակորդային շարադրանքի կողքին Կանաչյանը կիրառել է պոլիֆոնիկ բազ-

⁴ ԳԱԹ, Թումանյանի արխիվ, անմշակ, նամակ, Թումանյանից՝ Փափախյանին:

⁵ Նույն տեղում:

մաճայնության ձևեր՝ ֆուգատո, զարգացման իմիտացիոն եղանակ, որի շնորհիվ զգալի է Կոմիտաս-Կանաչյան ժառանգականության գործոնը: Կոմպոզիտորը նյութի բովանդակային խորությունը կարողացել է ունկնդրին հասցնել պարզ և լակոնիկ արտահայտչամիջոցների օգտագործմամբ, որն էլ այս ստեղծագործության հաջողության գրավականն է:

Շարունակելով իր ուսուցչի՝ Մեծն Կոմիտասի գործը՝ Թումանյանն իր ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում հավատարիմ է մնացել հայ երաժշտական մշակույթի խորագնին ուսումնասիրության, ըստ ամենայնի արժևորման և քարոզչության հանձնառությանը: Դա դարձել է նրա կյանքի գործը, որին տրվել է անմնացորդ նվիրումով, մեծագույն բարեխղճությամբ և որը կատարել է գիտնականի բժախնդրությամբ և նրբաճաշակ գեղագետի անկեղծ ոգևորությամբ: Բանիմաց երաժշտագետի և զգայուն ազգասերի «Նանօր-Նանօր» վերլուծությունը ևս աչքի է ընկնում վերոհիշյալ հատկություններով: Անմիջապես ակնհայտ է դառնում, որ հեղինակը համակողմանի ուսումնասիրել է նյութը, այն է՝ նախաքրիստոնեականից մինչև Սուրբ Կարապետի ծիսակատարությունները և արժանահավատ ներկայացրել ուխտագնացությունը՝ որպես սրբազան հավատի արտահայտություն, որպես տոն, որում հառնում է ժողովրդի ոգին իր ողջ հուզականությամբ և վեհությամբ:

Ինչպես ճշմարիտ արվեստագետ, Թումանյանը, գնալով դեպի ակունքները, վեր է հանում ազգային մշակույթի խորքային բնութագիրը՝ շեշտված ուշադրություն դարձնելով բուն հայկական առանձնահատկությունների վրա, բայց և միաժամանակ հասնելով համամարդկային ընդգրկումների: Այդպիսին է ճշմարտացի ստեղծագործության էությունը:

Նրա բանիմացությունը, կոնկրետ նյութին տիրապետելը և երաժշտագետ-բանասերի արհեստավարժությունը ի հայտ են գալիս նաև ծիսակատարության բաղկացուցիչ տարրեր հանդիսացող մանրամասներում, ինչի շնորհիվ երաժշտական պատկերները դառնում են ավելի համոզիչ ու արժանահավատ: Այդպիսի օրինակներ են ուխտավորների ակնկալությունը, ճանապարհը հաղթահարելու դժվարությունները, հանգիստն ու գիշերելը ճանապարհին: Այսպիսով, Թումանյանն իրագործում է իր մտահղացումը՝ ժողովրդից վերցրածը վերադարձնել ժողովրդին ավելի բյուրեղացված և գեղարվեստորեն արժևորված:

Ստորև ներկայացնում ենք Մ.Թումանյանի նախաբան-ուղեցույցն ամբողջությամբ: Հեղինակային խոսքը վերաշարադրել ենք արևելահայերենով՝ հանրամատչելիության նկատառումով:

Ուխտագնացությունները հին դարերից մինչև մեր օրերը միշտ էլ գոյություն են ունեցել: Հեթանոս թե հերետիկոս, կոապաշտ թե քրիստոնյա, բոլորն էլ իրենց պաշտոնական հավատալիքներից բացի, ունեցել և պահպանել են ավանդույթներ, որոնք անփոփոխ են մնացել դարերի և քաղաքակրթությունների ընթացքում:

Այս ավանդական հավատալիքները կարելի է նույնիսկ նախապաշարումներ կոչել, բայց և այնպես պետք է ընդունել սրանց գոյությունը որպես մարդկային հոգու ամենատարրական պահանջներին գոհացում տվող միջոցներ: Դրանց հիմքում ընկած է «գերագույն Ոգիների» կողմից ապավեն փնտրելը՝ հավատարվել նրանց գոյությանը և ամենաբույժ շորությանը: Բոլոր կրոնների հիմքում Հավատն է Աստվածների կամ աստվածային ուժերի նկատմամբ: Բայց քանի որ Հավատն ինքնին շոշափելի չէ, անհրաժեշտություն է առաջանում փնտրել իրեղեն միջոցներ, որոնցով մարդը կարող է գոհացնել իր զգացմունքներն ու հույզերը և իր մարմնական ու հոգեկան ցավերին սպեղանի գտնել: Ահա թե ինչու ողջ աշխարհում մարդիկ միշտ որոնել են «անմիջական ուղիներ», որոնց միջոցով հույս են ունեցել «Գերագույն Ոգիների շորության» դռներին ավելի մոտենալ, ազատվել, բուժվել երևակայելի և աներևակայելի բոլոր ցավերից ու վերքերից: Հայ ժողովուրդն էլ անցել է պատմական բոլոր այս շրջանները՝ հեթանոսական աստվածների պաշտամունքից մինչև քրիստոնեական միակ Աստծու պաշտամունքը: Հին աստվածների մեհյանները քանդվել են, և նոր եկեղեցիներ կառուցվել: Քրմական տարազներն ու ծեսերը փոխակերպվել են քրիստոնեականի, կառուցվել են վանքեր ու մատուռներ: Բարի և չար աստվածների պայքարի փոխարեն բերվել են ամենագուրթ Աստծո և ամենանեղ Սատանայի հորհուրդները:

Այլ կերպ ասած այս բոլոր փոխակերպումների և արտաքին հեղաշրջումների մեջ մարդկային հոգին անփոփոխ է մնացել: Այսպիսով, ուխտագնացություններն ավանդաբար եկել, մինչև մեր օրերն են հասել և դեռ պետք է շարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ մարդ արարածն իր հոգու մեջ կրում է Գերագույն Ուժին ապավինելու պահանջը: Թումաճանն ուխտագնացությունները բաժանել է երկու գլխավոր տեսակների. առաջինը՝ կրոնական իշխանությունների կողմից հաստատված և գրեթե պարտադրված ուխտագնացություններ, օրինակ՝ դեպի Գանգեսի ափերը, Երուսաղեմ, դեպի Մեքքա և Հռոմ: Այս «պաշտոնական» ուխտագնացությունները կատարվում են ծեսերով ու հանդիսություններով: Ուխտավորները գնում են իրենց կամա թե ակամա

գործած մեղքերի համար թողություն ստանալու և աստվածային շնորհի արժանանալու:

Մյուս տեսակը մեզ տանում է դեպի մարդու մեջ ի սկզբանե եղած հոգևոր պահանջը աստվածային հրաշքի նկատմամբ: Սա մարդու ֆիզիկական գոյությունը պահպանելու, առօրյա կյանքում տրամաբյուրանից դեպի ուրախություն, հիվանդությունից դեպի առողջություն տանող ճանապարհն է: Այս ճանապարհն անհատական է, ամեն ոք իր բեռն ունի տանելու, ամեն հոգի իր ցավն ու խելճությունն է շալակած Ուխտի գնում Հրաշքի աղբյուրին: Մշո Սուլթան Սուրբ Կարապետի ուխտավորները Հրաշքի հավատացյալներ են: Մայրը տանում է իր խելապակաս զավակին, որ Սուրբ Կարապետի զորությամբ խելքի գա: Կոյրն իր կոպերը քսում է Սուրբ Կարապետի շեմերին, որպեսզի այքերին լույս գա: Կաղերն ու հաշմանդամներն իրենց մարմինը քարշ են տալիս մինչև Ս.Կարապետի սեղանը, որպեսզի նրան կոթնելով առողջանան: Երիտասարդ աղջիկները և տղաները դեպի Ս.Կարապետ են գնում ծափ ու ծիծաղով, որ իրենց սրտի սիրածին հասնեն: Բոլոր տկարների, զրկվածների և թշվառների միակ ապավենն է Սուրբ Կարապետը: Այդ հավատքով է ուխտավորը գնում Ս.Կարապետ: Եվ ով կարող է ասել, թե այս խոր և անսահման հավատքը չի կարող Լեռներ շարժել, Հրաշքներ գործել...

Սակայն ինչու է հատկապես Մշո Սուլթան Սուրբ Կարապետը ճանաչվել որպես մեծագույն Սուրբ, որը կարող է բոլորի երազանքներն իրագործել: Հին պատմությունից տեղեկանում ենք, որ Տարոնի գավառը եղել է քրմապաշտության կենտրոն: Հայտնի է, որ Գր.Լուսավորիչը, քանդելով Հայոց աշխարհի հեթանոսական բազիլիկները, նրանց տեղում քրիստոնեական եկեղեցիներ է կառուցել: Նրան լուր են բերում, որ Տարոնի գավառում դեռ կան գործող բազիլիկներ, որտեղ Դևերի պաշտամունքն է տիրում:

«Ի գավառն Տարոնայ երկուս բազիլիս մնացեալ են, որ դեռ ձօնեն Դիւաց, մինչեւ ի Սրբոյ Հոգոյն յայտնեալ եթէ նա իսկ է դրունք դժոխաց զոր Իննակնեան կոչեն»:

«...Եւ Սուրբ Գրիգոր յարտասուս եղեալ կոչեաց.- Մկրտիչ և Կարապետ Քրիստոսի, տես զինչ գործեն, եւ հասիր յօգնութիւն եւ արա զայս օրս նշանաւոր յազգիս...»:

Գրիգոր Լուսավորիչը պատվիրակ է ուղարկում Կեսարիա և բերել է տալիս Ս.Հովհաննես Մկրտչի աճյունից մի նշխարք, որի զորությունով հիմնահատակ կործանվում են բազիլիկները: Ավանդությունն ասում է, որ կործանված բազիլիկների ավերակների տակից չար Դևերը կաղեկաղ դուրս են գալիս,

ընկնում են Սուրբ Կարապետի ոտքերը՝ աղաչելով խնայել իրենց, խոստանալով ծառայել նրա զորությանը: Տարոնի ժողովուրդը մինչև այսօր էլ անգիր գիտե այս Կաղ Դևի ավանդությունը.

Լուսաւորիչ ժողվեց զդիւան, լըցեց զընդան.

Կաղ Դեւն եկաւ, ասաց. - Եաման

Զիկ մի թաղիր ի հոր զընդան.

Կեղնիմ Վանքին ես փոշեհան.

Տանիմ թափեմ Փրէ Պաթման,

Մինչանկ Քրիստոս գայ դատաստան...

Այսպիսով, Սուրբ Կարապետի ամենագոր բազուկը տարածվել է Հայոց աշխարհի բոլոր անկյուններում: Բոլոր այն տեղերում, որտեղ թեկուզ մի վանք, մի եկեղեցի կամ մի մատուռ կա Սուրբ Կարապետի անունով,- Կեսարիայից մինչև Պոլիս ու Սկյուտար,- ամեն տարի Վարդավառի Տոնին մեծաշուք տոնակատարություններ են կատարվում: Կարմրակատար աքաղաղներ, կամ մատուռազ գառնուկներ են բերվում դռան շեմին ու նրանց արյունով խաչեր ու այլ թալիսմանական նշաններ են գծվում պատերի վրա: Աղավնիներին, որպես անմեղության խորհրդանիշ, օդ են թոցնում, և նրանք իրենց ճախրանքով կարծես ազատում են բերում բոլոր ցավերից ու տառապանքներից:

Մեծագույն սուրբ է համարվել Մշո Սուլթան Սուրբ Կարապետը, որի գորության հավատն ունեցել են ոչ միայն հայերը, այլև շրջակա բնակավայրերի քրդերն ու թուրքերը, որոնք նույնպես ուխտի են գնացել գոչելով.

Եա Չանկլի Դիւան, Սըբ Կըրըբէթ...

Ղուրբան... դուրբան...

Ահա այսպես ամեն տարի Վարդավառի տոնին Հայոց աշխարհի չորս կողմերից հավաքված ուխտավորները քայլում են «ոլոր-մոլոր ճամփաներով», արևի տակ կամ «լուսնի լույսով», որ շուտով հասնեն «Չանկլի Դիւան», «Չանգակավոր՝ Սուրբ Կարապետի դռանը, որպեսզի նա ազատի չար դևերից, առողջություն տա հիվանդին, քաջություն ու շնորհք՝ տկարին, և մուրազ՝ բոլոր անմուրազ հոգիներին:

Մուրազատուր Սուրբ Կարապետն է, որ մարդկանց հոգիները լցնում է անսահման սիրով և մշտավառ հավատով:

«Նանորի» երաժշտությունը ևս մի ուխտագնացության պատկեր է դեպի Մշո Սուլթան Սուրբ Կարապետ:

Բ.Կանաչյանի համերգային երգեցողության համար հորինված այս երաժշտական ստեղծագործությունն այնքան պատկերավոր է և խորհրդավոր, որ

շատ հեշտությամբ կարելի է բեմում ներկայացնել իբրև երաժշտական դրամա: Այդ դրաման կարելի է բաժանել երկու գլխավոր տեսարանների, որոնք տեղի են ունենում Վարդավազի կիրակիին նախորդող երկու օրերի ընթացքում: Առաջինը Ուրբաթ հետմիջօրեին և գիշերը, երկրորդը՝ Շաբաթ՝ Կիրամուտի իրիկունը: Առաջին տեսարանը երկու պատկեր ունի՝ ճամփա գնալու և գիշերային հանգստի և ուրախության: Երկրորդ տեսարանը նախորդի շարունակությունն է, սկսվում է դարձյալ ճամփու պատկերով: Երևում է Սուրբ Կարապետի Զանգակատունը: Հեովից լսվում են զանգակների ղողանջը, աղաչանքի ու պաղատանքի հոգեբույս հնչյունները, ապա ցնձագին քայլերի ձայնը մայրամուտի ստվերների ներքո:

Առաջին տեսարանը բացվում է հեռավոր գյուղերից ու քաղաքներից հավաքված ուխտավորների բազմության դանդաղ քայլով դեպի Ս.Կարապետի վանքը: Նրանք երգում են.

Նանօր, նանօր,
 Նանօր, նանօր, հա նանօր
 Նանօր, նանօր, հա նանօր.
 Նանօր , նանօր, նանօր,
 Նանօր, նանօր, նանօր...

Երաժշտական գլխավոր թեմաները նոտագրված և թվագրված են այնպես, որ ընթերցողները հեշտությամբ հետևեն պատկերների նկարագրությանը:

Ճամփան հարթվում է: Ուխտավորների ընթացքն արագանում է: Նրանք աշխուժությամբ և հրճվանքով երգում են.

Նանօր, նանօր, հա՛ նանօր,
 Զընկլիկ-մընկլիկ, հա նանօր.
 Զանկլի դիան, Սուրբ Կարապետ
 Զընկլիկ-մընկլիկ, հա նանօր.....

Բազմության միջից հանկարծ լսվում է աշուղի ձայնը, որը Ս.Կարապետի գովքն է անում.

Մըշոյ Սուլթան, Սուրբ Կարապետ,
 Զուղաբ կու տաս ձիաւորին,
 Մուրազ կուտաս ոտաւորին
 Նանօր, նանօր, հա՛ նանօր...

Արդեն իրիկնամուտ է: Ճամփորդները հոգնած են ու քաղցած: Մոտենում են մի աղբյուրի կամ հյուղակի, որ հանգստանան, երգում են.

Սուրբ Կարապետ բարձր է բոլոր,

Ճամփայ ունի ոլոր-մոլոր.

Քեզի կու գանք լուսնի լույսով,

Ոլոր-մոլոր ճամփաներով...

Հանգստի ժամն է արդեն, վարագույրը փակվում է:

Հաջորդիվ երևում են խմբեր կազմած մարդիկ, ոմանք՝ նստած, ոմանք՝ ոտքի: Լուռ անցուդարձ, աղմուկ և փսփսուք: Լուսնկա գիշեր է: Կամաց-կամաց զանազան կողմերից հավաքվում են տղաներ ու աղջիկներ, տարեց հայրեր ու մայրեր, շրջան են կազմում: Եվ ահա սկսվում է նրանց պարը.

Խըմենք նըռան հատ գինի,

Գունը արուն կըլմնի.

Սէրը սիրողին վայլէ,

Գինին խըմողին անուշ...

Տարեցներն արդեն մի կողմ են քաշվել: Երիտասարդներն էլ վերջին անուշի հետ սկսում են դանդաղել: Արդեն գիշեր է, ուխտավորները դարձյալ քայլում են ձորերի ու բլրակների մեջ: Կրկնվում է ճամփա գնալու պատկերը՝ ավելի դանդաղ, բայց ոգևորված: Վերջին բլրակն է, որ պետք է բարձրանան: Հազիվ լսվում է նրանց աղերսալի և թախճագին ձայնը.

Ջուղաք կուտաս ձիաւորին,

Չընկլիկ-մընկլիկ, հա նանօր.

Հոգնած են և ուժասպառ... Եվ ահա մեծ աղաղակ ու պոռթկում...

Չանկլին...Չանկլին...

Հեռվում երևում է Ս.Կարապետի Ջանգակատունը: Արդեն Կիրակնա-մուտի պահն է: Ջանգակների հպարտ և թավ դողանջն արձագանքվում է ամեն կողմ: Ուխտավորները հափշտակված ծնկի են գալիս և կրկին աղերսում.

Չոքման կուգանք Սուրբ Կարապետ,

Չընկլիկ-մընկլիկ, հա նանօր.

Մեր քաջ պաշտպան, Սուրբ Կարապետ,

Չընկլիկ-մընկլիկ, հա նանօր:

Քանի դեռ զանգակների դղղանջը տարածվում է օդում, մի անդամալույծ հանկարծ պաղատագին պոռթկում է, կարծես ոտքի ելած լինի:

Չանկլի...Չանկլի...

Նրանց հոգիները պատվել են աննկարագրելի մի սարսուռով, Գերա-հրաշ Զորության հպումն են զգում իրենց մարմինների վրա: Դողողացող լույթան մեջ մրմնջում են Կիրամուտքի աղոթքի մի պատահիկը.

Ալելուեա Օրթի...

Հավատքի և Երանության Գերագույն գեղումով Հրաշքի կարոտ յուրաքանչյուր ոք աղերսում է .

-Չանկլի, զիմ մուրազը տուր...

Զիմ սըրտի սիրածը տուր...

Հրաշքն է իջել արդեն նրանց հոգիների վրա:

Ամեն ոք շտապում է հասնել Չանկլիի շեմին: Նրանց դեմքերը պայծառացած են, մոռացել են իրենց ցավերն ու դժվարությունները: Բոլորի մարմիններն ու հոգիները պարուրվել են երանության շնչով:

Ուրախության ճիչեր, երգ ու պար:

Այսպիսով, «Նանոր»-ի մասին Թումաճանի նախաբան-ուղեցույցը յուրատեսակ պատմական ակնարկ է, նաև վերլուծություն, որտեղ շարադրել է իր տեսակետն ազգային ավանդական ծիսակատարությունների վերաբերյալ: Ծեսը պարունակում է էկլեկտիզմի տարրեր: Դրանով պայմանավորված այն չի կադապարվում խմբերգին կամ երաժշտական-դրամատիկ ստեղծագործությանը բնորոշ ձևի շրջանակներով: Եվ հենց այստեղից է գալիս երկի վերլուծության՝ Թումաճանի մոտեցումը: Նա վերլուծել է ծեսն իր ողջ մանրամասներով, գիտականորեն վեր հանել դրա խորքային բովանդակությունը: Ահա այսպես է գրել Թումաճանն իր ընկերոջ ստեղծագործության մասին:

МИГРАН ТУМАЧАН О “НАНОР” БАРСЕГА КАНАЧЯНА

САТЕНИК КАПЛАНЯН

Статья посвящена Предисловию-указателю Миграна Тумачана к хорошему произведению *a cappella* “Нанор” Барсега Каначяна. Письмо Миграна Тумачана священнику латакийской епархии отцу Сурену Папахяну и упомянутое Предисловие-указатель вводятся в научный оборот впервые. Автор исследования приходит к выводу, что Предисловие-указатель Миграна Тумачана к “Нанор” – своеобразный исторический очерк с анализом и изложением собственной точки зрения на традиционные национальные обряды.

Ключевые слова – Барсег Каначян, Мигран Тумачан, “Нанор”, Предисловие-указатель.

MIHRAN TUMACHAN ON BARSEGH KANACHYAN'S "NANOR"

SATENIK GHAPLANYAN

This article considers Mihran Tumachan's Preface-guideline to "Nanor" – an a capella choral work by Barsegh Kanachyan. This Preface-guideline to "Nanor" together with Mihran Tumachyan's letter, addressed to Father Suren Papakhyan, a cleric of Latakia diocese are introduced for the first time to academic circles. Ghaplanyan comes to the conclusion that Tumachan's prologue-guide to "Nanor" is a kind of historical resume, as well as a review where the point of view of Tumachyan on national traditional rituals has been narrated.

Key words – Barsegh Kanachyan, Mihran Tumachan, "Nanor", Preface-guideline.

ԷՋԵՐ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՏՈՒԴԻԱՅԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

ՆԱԻՐԱ ՄԱԴՈՅԱՆ

Հոդվածը նվիրված է 1920-ական թվականների՝ Հայաստանի երաժշտական կյանքի կարևոր իրադարձություններից մեկին՝ Լենինականի երաժշտական ստուդիայի ստեղծմանը (1924թ.), որը շուտով դարձավ Լենինականի ու հարակից շրջանների երաժշտական դաստիարակության հիմնական օջախը, նաև՝ հանրապետությունում երաժշտական կադրերի պատրաստման կարևոր դարբնոց:

Ընդհանրապես անդրադառնում է ստուդիայի ստեղծման ու կայացման գործում կոմպոզիտոր Դանիել Ղազարյանի ավանդին:

Բանալի բառեր – Լենինականի երաժշտական ստուդիա, 1924թ., Դանիել Ղազարյան:

Լենինականում 1924-ի հունիսի 1-ին Դ.Ղազարյանի ջանքերով և անմիջական ղեկավարությամբ կազմակերպվում է առաջին երաժշտական օջախը՝ երաժշտական ստուդիան՝ դաշնամուրի, ջութակի, երգի, երաժշտության տեսության դասարաններով¹: Ստուդիայում գործել է նաև ժողովրդական գործիքների դասարանը:

Իր գործունեությունը Ստուդիան սկսեց 180 աշակերտներով², մինչդեռ ընդունվելու ցանկություն էին հայտնել շուրջ 700 երեխաներ: Նախնական քննությունից հետո մնում են 380-ը: Ցավոք, համապատասխան շենքի բացակայության և մասնագետ դասատուների սակավության պատճառով նորաստեղծ Ստուդիան ի գործու չէր ընդունել բոլոր ցանկացողներին, և աշնանը կատարված երկրորդ ստուգումից հետո մնում են 180-ը:

Ստուդիայում դասավանդելու են հրավիրվում Տ.Նալբանդյանը (երգ), Կ.Տեր-Ղուկասյանը (ջութակ), Ն.Գյանջումյանը (դաշնամուր), Վ.Ղազարյանը (ժողովրդական գործիքներ), Կ.Պապայանը (խմբական երգեցողություն) և ուրիշներ: Ստուդիայի դիրեկտոր է նշանակվում կոմպոզիտոր, խմբավար, երգիչ, մանկավարժ Դանիել Ղազարյանը, որը դասավանդում է նաև տեսական առարկաները³:

¹ **Մազմանյան Ռուզաննա**, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն, 1920-1945, Երևան, 1979, էջ 33:

² Տե՛ս **Տոնիկյան Արտակ**, Դանիել Ղազարյան, Երևան, 1977, էջ 37:

³ Նույն տեղում, էջ 37-38:

1924-ի հուլիսի 11-ին կայանում է Լենինականի երաժշտական ստուդիայի անդրանիկ երեկոն⁴:

Ստուդիայի ղեկավարությունը համագործակցում է Երևանի պետական կոնսերվատորիայի հետ. ռեկտոր Արշակ Ադամյանն ու կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը հաճախակի այցելում են Լենինական, ունկնդրում աշակերտական համերգները, ցուցաբերում մեթոդական արժեքավոր օգնություն: Ստուդիայի գեղարվեստական խորհրդի աշխատանքներում ներգրավվում է Նիկողայոս Տիգրանյանը: Այսպիսով, երաժշտական ստուդիան դառնում է Լենինականի ու հարակից շրջանների երաժշտական դաստիարակության հիմնական օջախը, նաև՝ հանրապետությունում երաժշտական կադրերի պատրաստման կարևոր դարբնոց:

1926-ի փետրվարի 14-ին տեղի է ունենում Լենինականի երաժշտական ստուդիայի աշակերտների համերգը՝ լուսբաժնի դահլիճում: Ծրագրում ընդգրկվում են Կոմիտասի, Մ.Միրզոյանի և Դ.Ղազարյանի ստեղծագործությունները: Համերգի ընթացքում Դ.Ղազարյանի ղեկավարությամբ ելույթ է ունենում Ստուդիայի երգեցիկ խումբը: Համերգին մասնակցում են երգիչներ Մ.Լուսինյանը, Մ.Սեդմարը, Շ.Տալյանը:

Ստուդիային կից կազմակերպվում է քառաձայն երգեցիկ խումբ (ղեկ.՝ Կ.Պապայան), որը համերգներ է տալիս ինչպես Լենինականում, այնպես էլ Ղարաքիլիսայի և Արթիկի գյուղական սաների համար⁵, մանկական երգեցիկ խումբ (ղեկ.՝ Մ. Թամիրյան), ժողովրդական գործիքների անսամբլ (ղեկ.՝ Վ. Ղազարյան): Ստուդիայի կոլեկտիվները հայ ժողովրդական երգերից և կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված համերգային ծրագրերով հանդես են գալիս բանվորական ակումբներում, կարմիրբանակայինների և երկաթուղայինների, գյուղական բնակչության համար: Բոլոր կոլեկտիվները մասնակցում են Շիր-Կանալի բացման արարողությանը: «Համերգն ընդունվեց օվացիաներով, -հետագայում հիշում է մանկական երգեցիկ խմբի ղեկավար Մ. Թամիրյանը,- և մեծ տպավորություն թողեց: Առաջին անգամ քառաձայն երգչախումբը երգեց Դանիել Ղազարյանի «Շիր-Կանալ» երգը Գուրգեն Մահարու խոսքերով, որը ջերմ ընդունելություն գտավ և հանդիսականների պա-

⁴ **Մազմանյան Ռուզաննա**, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն, 1920-1945, էջ 35:

⁵ Տե՛ս **Շեկունց Արկաղի**, Դանիել Ղազարյան, Հայ խմբավար կոմպոզիտորները, Երևան, 1986, էջ 63:

հանջով կրկնվեց երեք անգամ»⁶: 1925-ին Լենինականում լույս է տեսնում Դ. Ղազարյանի «Շիրջրանցք» խմբերգը՝ գրված քառաձայն խառը խմբի համար:

Մանկական խմբի ջանքերով բեմադրվում են մանկական օպերաներ՝ Դ. Ղազարյանի «Հաղթված բազեն», «Գայլը», «Գիքորը», Ս.Մուրադյանի «Շունն ու կատուն»:

Լենինական քաղաքի և գյուղերի դպրոցներում երաժշտության դասավանդման վիճակը բարելավելու նպատակով Դ. Ղազարյանը կազմակերպում է երաժշտության դասատուների վերապատրաստման դասընթացներ:

Շարունակելով Երևանի կոնսերվատորիայի ավանդույթները՝ Դ. Ղազարյանը կազմակերպում է հայ կոմպոզիտորներին նվիրված համերգ-գրույցներ՝ դրանցում ներգրավելով պրոֆեսիոնալ կատարողների՝ Նիկողայոս Տիգրանյանին, Տիգրան Նալբանդյանին, Շարա Տալանին, Մարիաննա Սեդմարին և շատ ու շատ ուրիշների... Այդ շարքում 1927-ին Կարա-Մուրզայի մահվան 25-րդ տարելիցի առթիվ կազմակերպվում է երեկո, որտեղ Դ. Ղազարյանի ղեկավարությամբ երգեցիկ խումբը հանդես է գալիս Կարա-Մուրզայի խմբերգերի կատարմամբ⁷:

Բեթհովենի մահվան 100-րդ տարելիցի կապակցությամբ Դ. Ղազարյանը Լենինականի «Բանվոր» թերթի՝ 1927 թվականի ապրիլի 7-ի N 26 համարում տպագրում է «Բեթհովենի մահվան հարյուրամյակի մասին» հոդվածը⁸, իսկ «երաժշտական ստուդիան նույնպես ամսիս 8-ին կազմակերպում է երաժշտական երեկո, նվիրված մեծ ուսուցչի մահվան հարյուրամյակին»⁹:

«Խորհրդային Հայաստան» թերթի՝ 1927թ. օգոստոսի 23-ի համարում տպագրվում է Ռուբեն Թերլեմեզյանի «Լենինականի երաժշտական ստուդիայի մասին» ծավալուն վերլուծական հոդվածը, որտեղ հեղինակն անդրադառնում է Ստուդիայի ստեղծմանը. «Ժողովրդական և պրոլետարական երաժշտություն տարածելու նպատակով, Լուսժողկոմատի հանձնարարությամբ 1924 թվի հունիսի 15-ին Լենինականում բացվում է երաժշտական ստուդիա, որի համար վարիչ է հրավիրվում Դանիել Ղազարյանը, որն անմիջապես

⁶ **Տոնիկյան Արտակ**, նշվ. աշխ., էջ 39:

⁷ Նույն տեղում, էջ 40:

⁸ **Ղազարյան Դանիել**, Բեթհովենի մահվան հարյուրամյակի առթիվ, «Բանվոր», 7 ապրիլի, 1927:

⁹ Նույն տեղում:

անցնում է կազմակերպչական աշխատանքների»¹⁰: Հեղինակը նշում է, որ «Լենինականի երաժշտական ստուդիան այսօր էլ գտնվում է Լուսբաժնի հսկողության ներքո: Լուսբաժինը հաստատում է ստուդիայի աշխատակիցների հրավերն ու հեռացումը, ինչպես նաև հետևում է ստուդիայի տնտեսական և ուսումնական կյանքին: Ստուդիան առաջին իսկ օրից աշխատել է օրգանական կապ հաստատել ինչպես Երևանի կոնսերվատորիայի, այնպես և Թիֆլիսի և Բաքվի երաժշտական ստուդիաների հետ: Պետք է շեշտել, որ Բաքվի երաժշտական ստուդիան ցույց է տվել լայն աջակցություն, մասնավորապես Բաքվում կազմակերպված համերգների ընթացքում:

Ստուդիայի պարապմունքները կազմակերպվում են մի այնպիսի դպրոցական շենքում, որտեղ օրը երեք հերթի պարապմունքներ են լինում: Ապագայում ստուդիայի գործն ավելի լավ և ամուր հիմքերի վրա դնելու համար, անհրաժեշտ է այժմյանից մտածել ստուդիային առանձին շենք տրամադրելու հարցը:

Ստուդիան Լուսբաժնից նվեր է ստացել մի դաշնամուր, իսկ մի դաշնամուր էլ գնել է իր սեփական միջոցներից, ինչպես նաև մի երգեհոն և գրակառնություն: Անհրաժեշտ է շեշտել, որ ստուդիան գործիքների կողմից աղքատ է, որի պատճառով առաջ են գալիս որոշ դժվարություններ: Ուսանողության ճնշող տոկոսը նույնպես չունի իր սեփական գործիքը, այնպես որ վարժություններն ու պարապմունքները կատարվում են ստուդիայում:

Թվում է, թե ստուդիայի ամենամեծ բացը այս է, որը պետք է աշխատել ամեն կերպ վերացնել: Ստուդիայի նվազախումբը բաղկացած է 16 հոգուց, կա նույնպես արևելյան թառիստների խումբ: Քաղաքի և շրջանի դպրոցների համար ստուդիան տվել է 5 պատրաստված երգեցողության և նոտագրության ուսուցիչներ: Երաժշտական ստուդիան 1928 թվին տալու է իր առաջին շրջանավարտները: Բացի ուսանողական փակ երեկոներից, ստուդիան իր երգեցիկ խմբով և նվազախմբերով մասնակցել է քաղաքական մի շարք տոների: Համերգներ են տվել ոչ միայն քաղաքում, այլև գավառներում: Երեք տարվա ընթացքում հասարակության համար տրվել է 41 համերգ:

Մինչ Երևանի պետական կոնսերվատորիան Կարա-Մուրզայի մահվան 25-րդ տարեդարձին անհասկանալի լռություն է պահում, Լենինականում կազմակերպվել է առանձին երեկույթ:

¹⁰ **Թերլենզյան Ռ.**, Լենինականի երաժշտական ստուդիայի մասին, «Խորհրդային Հայաստան», 23 օգոստոսի, 1927:

Ստուդիայի վարիչը շաբաթական մի ժամ խոսում է հայ կոմպոզիտորների կյանքի և ստեղծագործությունների մասին՝ Թաշճյանից սկսած մինչև մեր օրերը: Սա նույնպես կարևոր հանգամանք է, որը մենք պարտավոր ենք ընդգծել¹¹:

Ավարտելով իր ծավալուն հոդվածը՝ Ռ.Թերլեմեզյանն ընդգծում է Ստուդիայի կարևորությունն ու նրա գոյության անհրաժեշտությունը Լենինականում: «Որպեսզի հնարավոր լինի ստուդիայի աշխատանքները ամուր և հաստատուն հիմքերի վրա դնել, անհրաժեշտ է որ ստուդիան մտնի պետական բյուջեով պահվող հիմնարկների շարքը: Այլապես տնտեսական կրիզիսի մեջ ապրող Լենինականի ստուդիան միշտ էլ կանգնած կլինի փակվելու վտանգի առաջ»¹²:

1931թ. հունվարի 6-ին Լուսբաժնի դահլիճում կայանում է Լենինականի երաժշտական ստուդիայի այդ տարվա առաջին ուսանողական երեկոն:

«Այդ երեկոն նշանակալից էր նրանով, որ ստուդիան ցուցադրեց իր աշխատանքները և դրսևորեց իր ուսանողների ընդունակությունները: Այդ երեկոն մեր երաժշտական ստուդիայի հաշվետվությունն էր աշխատավորության առաջ:

Այդ երեկոյից պարզվեց, որ մեր երաժշտական ստուդիան ընկ. Դ.Ղազարյանի ղեկավարությամբ ձեռք է բերել զգալի նվաճումներ: Երգի, ջութակի, դաշնամուրի, ինչպես նաև փողավոր գործիքների դասատուները բավական աշխատանք են կատարել աշակերտության երաժշտական ուսուցման գործում: Այդ էին ապացուցում ստուդիայի ուսանողների ելույթները:

Ցանկալի է, որ երաժշտական ստուդիան հաճախ կազմակերպի նման երեկոներ:

Վերջում պետք է ասել, որ դահլիճում աղմուկ էր: Անհրաժեշտ է նման երեկոներ կազմակերպելիս ուժեղ կարգապահություն սահմանել»¹³:

Լենինականի երաժշտական ստուդիայի կայացման վերաբերյալ մեր համառոտ անդրադարձն ուզում ենք եզրափակել Դ.Ղազարյանի «Լենինականի (Ալեքսանդրապոլի) երաժշտական ստուդիան» հոդվածով, որտեղ նա մասնավորապես գրում է. «Լենինականի Ստուդիան հիմնեց 1924 թ. Յունիսի

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

¹³ Ա., Յերաժշտական ստուդիայի ուսանողական յերեկոն, «Բանվոր», 9 հունվարի, ուրբաթ, 1931:

1-ին երգի, ջութակի, դաշնամուրի, թեօրիայի, սոլֆեջիոյի և արևելեան գործիքների դասարաններով:

Սովորել ցանկացողների թին ուսումնական շրջանի սկզբում հասնում էր մօտ 500 հոգու, որոնցից ընդունւեցին միայն 400 հոգի, համապատասխան շտատ չունենալու պատճառով: Ուսումը շարունակւեց մինչև սեպտեմբերի 1-ը, որից յետոյ ստուդիան փակւեց, նորից վերակազմելու նպատակով: Այս ժամանակաշրջանում կազմակերպւեց վեց երաժշտական երեկոյ, որտեղ հանդես եկան ստուդիայի ուսանողները և դասատուները: Կարճ միջոցում ստուդիայի ուսանողութեան միջից վերացւեց անգրագիտութիւնը:

1924թ. հոկտեմբերի 15-ին վերաբացւեց Ստուդիան երգի (դասատու Տ.Նալբանդեան), ջութակի (Տեր-Ղուկասեան), դաշնամուրի (Գեանջումեան), թեօրիայի, հարմօնիայի, սօլֆեջիոյի (Դ.Ղազարեան), խմբերգի (Պապեան), սիմֆօնիկ օրկեստրի (Կռիլէնկօ) դասարաններով:

Ուսումնական տարւայ ընթացքում ուսանողների մէջ կատարւեց զտում, որով ստուդիայում ընդունւեցին 182 ուսանող-ուսանողուհիներ, որոնք համարեա թէ բոլորը պրօֆմիութեան անդամներ են կամ նրանց գաւակները: Ստուդիայի շուրջն է հաւաքւել նաև քաղաքի և Ամիրկօմի (Ամերիկեան Կօմիտէ) դպրոցների երգ-երաժշտութեան դասատուները:

Ուսումնական շրջանում կազմակերպւեց 8 ուսանողական փակ և բաց երեկոներ և Բանակումբում 4 համերգ երեկոյ՝ բանւորների համար: Տարւայ վերջին՝ տրւեց ցուցադրական երեկոյ, որտեղ ցուցադրւեց ուսանողութեան յառաջադիմութիւնը: Նոյն ժամանակաշրջանում տեղի ունեցաւ գեղխորհրդի նիստը Երևանի Պետ. Կօնսերվատօրիայի վերատեսուչ Արշ. Ադամեանի և երաժշտագետներ Ալ.Սպենդիարեանի ու Նիկ. Տիգրանեանի մասնակցութեամբ, որտեղ ընդունւեց կօնսերատօրիայի և ստուդիայի ծրագրի միատեսակութիւնը, որով ստուդիան աւարտողները հնարաւորութիւն կ'ունենան առանց դժարութիւնների շարունակել կօնսերվատօրիայում:

Ինչպէս ստուդիան, նոյնպէս և ուսանողներից շատերը զուրկ են եղել անհրաժեշտ գործիքներից, որի հետևանքով սկզբնական շրջանում աշխատանքներն ընթացել են շատ մեծ դժարութիւններով. Ներկայումս այդ բացը մասամբ վերացաւ է: Առաջիկայ ուսումնական տարւայ համար Լուսբաժինը կազմել է նոր նախահաշիւ, որն ընդգրկում է 9500 ռ. գումար. դրանով ստուդիան դուրս գալով տնտեսական ծանր դրութիւնից՝ հնարավորութիւն կ'ունենայ

իր աշխատանքները կենտրոնացնելու ստուդիայի կրթականի շուրջը, որով կը գոհացնի ուսանողութեան երաժշտութեան պահանջը»¹⁴:

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ ЛЕНИНАКАНСКОЙ МУЗЫКАЛЬНОЙ СТУДИИ

ՆԱԻՐԱ ՄԱԴՕՅԱՆ

Статья посвящена одному из важнейших событий в музыкальной жизни Армении 1920-х годов, а именно – созданию Ленинанканской музыкальной студии (1924), вскоре ставшей основным центром музыкального воспитания в Ленинанкане и прилегающих районах, кузницей подготовки музыкальных кадров в республике в целом.

Автор дает оценку вкладу композитора Даниела Газаряна в создание и становление Студии.

Ключевые слова – Ленинанканская музыкальная студия, 1924 год, Даниел Газарян.

PAGES FROM THE HISTORY OF MUSIC STUDIO IN LENINAKAN

NAIRA MADOYAN

The article examines one of the most important events in the musical life of Armenia of the 1920s, namely – the foundation of the Music Studio in Leninakan (1924), which shortly became a major center for musical education in the city and the vicinal regions, a smithy for training music professionals in the Republic as a whole.

The author evaluates the composer Daniel Ghazaryan's contribution to the foundation and establishment of the Studio.

Key words – Music Studio in Leninakan, 1924, Daniel Ghazaryan.

¹⁴ **Ղազարյան Դանիել**, Լենինականի (Ալեքսանդրապոլի) երաժշտական ստուդիան: Հոդվածում գետեղված է երաժշտական ստուդիայի Գեղարվեստական խորհրդի նկարը, որտեղ պատկերված են Տիգրան Նալբանդյանը, Կար. Ղուկասյանը, Աննա Տեր-Գրիգորյանը, Դանիել Ղազարյանը, Նինա Գանջումյանը, Լևոն Ղոլթուղյանը, Յուլյա Քոստաբաբյանը, Կր. Պապյանը, Միխ. Արլովը:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԵՐԿԻՈՍՈՒԹՅՈՒՆ... ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՊԱՐԱՆՅԱՆ

1954-55 թթ. Ճարտարապետ Ա.Սաֆարյանի նախագծով Երևանում կառուցվեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքը: Շինարարության ավարտից հետո ակադեմիայի ղեկավարությունը հանձնարարեց քանդակագործ Արա Սարգսյանին քանդակագործել ակադեմիայի նորակառուց շենքի նիստերի դահլիճը: Արա Սարգսյանը սիրով ստանձնեց այդ աշխատանքը և պատկերեց ոչ միայն հայ ժողովրդին, նրա մշակույթին ու գիտությանը ծառայած ականավոր մարդկանց, այլև համաշխարհային հռչակ ունեցող մի շարք գիտականների՝ թվով 18 բարձրաքանդակները՝ Դավիթ Անհաղթ, Աճառյան, Անանիա Շիրակացի, Գալիլեյ, Դարվին, Հերացի, Արիստոտել, Կոնֆուցիոս և այլն: Այս պորտրետային ֆրիզը Արա Սարգսյանի կողմից կերտված դեկորատիվ քանդակի լավագույն օրինակներից է և այսօր էլ շարունակում է գեղագիտական բարձր դրսևորում համարվել:

Քանակի բառեր – ճարտարապետություն, քանդակագործություն, հարթաքանդակ, ավանդույթ, բարձրաքանդակ, դեկորատիվ քանդակ, կերպար, ֆոն, պորտրե:

Հազարամյակների ընթացքում ճարտարապետությունը հանդիսացել է հայ ժողովրդի մշակույթի կարևորագույն բաղկացուցիչ մասը: Նրա բազմաթիվ հուշարձաններում ցայտուն արտահայտվել են հայ արվեստի ազգային ինքնատիպությունը, բարձր մակարդակը և գեղարվեստական հարուստ ավանդույթները: Հայաստանի պատմական բարդ անցյալի՝ պատերազմների, նվաճողների լծի տակ գտնվելու, բնական աղետների հետևանքով մեր ճարտարապետական հարուստ ժառանգությունը մեծապես տուժել է: Այս համընդհանուր պատկերից կարելի է առանձնացնել հիմնականում եկեղեցական շինություններն ու վանական համալիրները, տարբեր հուշարձաններ (կղթողներ, խաչքարեր և այլն), որոնց բազում օրինակներ բարեբախտաբար կանգուն են մինչև այսօր: Հայկական ճարտարապետության խորհրդային շրջանը Հայաստանի ճարտարապետության մեջ բոլորովին նոր փուլ էր: Խորհրդային Հայաստանի կայացման հենց առաջին տարիներից Հայաստանում արդեն առկա էին այդ ժամանակի համար առաջադեմ ճարտարապետական և քաղաքաշինական ուղղություններ: Հայաստանում ձևավորվել էին թե՛ իրենց համոզմունքներով, թե՛ իրենց գեղարվեստական ու գեղագիտական արտահայտչամիջոցներով,

մինչև անգամ գաղափարական հենքով ուրույն և չկրկնվող ճարտարապետական տարբեր դպրոցներ ու արվեստանոցներ:

Ճարտարապետությունը, հանդիսանալով տվյալ ժամանակի սոցիալական, գաղափարախոսական, գեղարվեստական ըմբռնումների և պատկերացումների անբաժանելի մասը, նույնպես ուղղված էր դեպի սոցիալիզմ: Շենքերի մտահղացումները, տիպաբանական տեսակները, արտահայտչամիջոցներն ամբողջությամբ կրում էին սոցիալական համահավասարեցման սկզբունքներ, որոնց հիման վրա ծաղկում ապրեցին կոնստրուկտիվիզմը և ուսցիոնալիզմը՝ որպես ճարտարապետական ձևամտածողություն, ծավալատարածական արտահայտչաձևեր: Վերոհիշյալ սկզբունքներն իրենց արվեստում և ճարտարապետական կերտվածքներում մեծապես գործածեցին Մ.Մագմանյանը, Կ.Հալաբյանը, Գ.Քոչարը, Ն.Բունիաթյանը և ուրիշներ: Նրանց կողմից նախագծված շինությունները միանգամայն նոր և մեծամասշտաբ էին գյուղաքաղաք հիշեցնող այն ժամանակվա Երևանի համար (օր.՝ Մ.Մագմանյանի, Կ.Հալաբյանի բնակելի տունը ներկայիս Սախարովի հրապարակում):

Սակայն պետք է նշել նաև, որ Խորհրդային Հայաստանի վաղ շրջանի ճարտարապետության տրամագծորեն հակադիր կողմում էր գտնվում Ալեքսանդր Թամանյանը: Ստանալով ճարտարապետական դասական կրթություն (Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիա)՝ նա հիանալիորեն տիրապետում էր դասականության արվեստի և մասնավորապես ճարտարապետության բոլոր սկզբունքներին և իր նախագծած շինություններում գրեթե միշտ լավագույնս գործածել էր դրանք (Պետերբուրգի հայկական եկեղեցու վերականգնում): Նա փաստորեն ավանդական ճարտարապետության և դասական ֆունդամենտալության կրողն էր հայ ճարտարապետության պատմության մեջ: Եվ այս ձևավորված միջավայրում իրենց ճարտարապետական մտահղացումներն էին թղթին հանձնում նաև այն ժամանակ երիտասարդ, բայց փորձառու և խոստումնալից ճարտարապետներ Ս.Սաֆարյանը, Մ.Գրիգորյանը, Ա.Ահարոնյանը և ուրիշներ: Ս.Սաֆարյանը, Ա.Ահարոնյանը կամաց-կամաց փորձեր էին անում վերանայելու իրենց ստեղծագործական հավատամքը, այն է՝ գեղարվեստական լուծումները նորովի կերպավորելու լույսի ներքո, ճարտարապետության մեջ կիրառելու նաև կոնստրուկտիվ նորանոր նվաճումներ, գաղափարախոսություններ, ի տարբերություն ասենք Մ. Գրիգորյանի, ով միանգամայն հավատարիմ էր Ա. Թամանյանից ժառանգած դասականության սկզբունքներին և

ձևերին¹:

Եվ ահա այս նոր գեղարվեստական ձևամտածողության, գեղագիտական բոլորովին նոր չափորոշիչների ֆոնին Մարշալ Բաղրամյանի պողոտայի երկու կողմերում վեր խոյացան այժմյան Ազգային ժողովի շենքը (նախկինում՝ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի շենքը, ճարտարապետ՝ Մ. Գրիգորյան), Հանրապետության նախագահի նստավայրը (նախկինում՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի շենքը, ճարտարապետ՝ Մ. Գրիգորյան), Գիտությունների ազգային ակադեմիայի շենքը (ճարտարապետ՝ Ս. Սաֆարյան) և Հայաստանի ամերիկյան համալսարանի շենքը (նախկինում՝ Քաղկրթության համագումարների պալատ, ճարտարապետ՝ Մ. Գրիգորյան): Այս ամենն ամբողջական դարձավ ու լրացվեց արդի հայ ճարտարապետության լավագույն օրինակներից մեկի՝ Երևանի մետրոպոլիտենի «Մարշալ Բաղրամյան» կայարանով, 1981թ.: Ինչպես արդեն վերևում նշեցինք, Սամվել Սաֆարյանի նախագծով է կառուցվել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքը 1954-55 թթ.²: Ինչպես Սաֆարյանի գրեթե բոլոր մտահղացումներին, այստեղ ևս բնորոշ էին ճարտարապետական հատակագծման ռացիոնալությունն ու հստակությունը, կառուցվածքային և ծավալատարածական, գեղագիտական խնդիրների սերտ համադրումը, քարի կիրառման ազգային ձևերի ներդաշնակությունը, ճարտարապետական օրգանիզմի ներքին և արտաքին դրսևորումների միասնությունը: Չափազանց կարևոր և նպատակային են նաև ճարտարապետական կառույցի ներքին հարդարման խնդիրները, արտաքին և ներքին ձևերի, մտածողության ներդաշնակ զուգակցումը: Չնայած այն հանգամանքին, որ ճարտարապետության գեղարվեստական-արտահայտչական կարևորագույն միջոցը կոմպոզիցիան է, արխիտեկտոնիկան, համամասնությունը, ծավալայնությունը, այնուամենայնիվ շատ կարևոր են նաև նրա ներքին հարդարման պատկերային, բնութագրական բովանդակությունն ու էությունը: Եվ ահա շենքի շինարարության ավարտին զուգընթաց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդիումը (այժմ՝ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահություն) 1957 թվականին քանդակագործ Արա Սարգսյանին հանձնարարում է քանդակագործել ակադեմիայի նորակառույց շենքի նիստերի

¹ **Հարությունյան Վարազդատ**, խմբ.՝ Մ. Հարսթյանի, «Ճարտարապետ Սամվել Սաֆարյան», Երևան, 2002, էջ 22, 23:

² **Հասրաթյան Մուրադ**, Հայկական ճարտարապետություն, Երևան, 2011, էջ 18:

դահլիճը: Դա մի մեծ ու բարդ մտահղացում էր, ըստ որի՝ նախատեսված էր դահլիճի ճակատային պատին տեղադրել Լենինի մեծադիր բարձրաքանդակը, նույն պատի վերին հատվածը պասկել 1,5 մետր լայնք ունեցող 15-մետրանոց քանդակագործական ֆրիզով, որ պետք է պատկերեր հայ ժողովրդի, նրա գիտության ու մշակույթի պատմության դրվագները, իսկ մնացած պատերին՝ գիտության հանճարների գրեթե 26 պորտրետային բարձրաքանդակ, յուրաքանչյուրը՝ 125x85 սմ չափերով: Սակայն այս մտահղացումն իրագործվում է մասամբ. էսքիզ էր՝ էսքիզ էլ մնում է ֆրիզը, որտեղ իրար հաջորդում էին հիանալի խմբավորված թեմատիկ կոմպոզիցիաները՝ իրարից բաժանված նույնպես թեմատիկ իմաստ կրող զարդաքանդակ միջնորմներով: Դիմաքանդակների թիվը կրճատվում ու հասցվում է 18-ի³, որի հետևանքով դահլիճում, օրինակ, տեղ չեն գտնում այնպիսի հաջողված գործեր, ինչպես՝ Խորենացու, Բուզանդի, Ամիրդովլաթի, Մ. Աբեղյանի և ուրիշների դիմաքանդակները: Պետք է նշել՝ բավականին լավ են տեղադրված և ճիշտ մասշտաբայնություն ունեն գիտնականների 18 գիպսե բարձրաքանդակները, որոնք իրենց դեկորատիվ քանդակաձևերով թարմ և ուշագրավ նորույթ են Արա Սարգսյանի արվեստում⁴:

Գրեթե բոլոր պորտրետները քանդակված են արտահայտիչ հնարներով: Կիրառված է կատարողական նոր եղանակ, որը պլաստիկական արդվածքում գծին էլ է տեղ տալիս, բայց այնպես, որ այն ընթերցվում է իբրև օրգանական քանդակատար և ստեղծում է պարզեցված ու դիթմով աշխույժ պատկեր ունեցող ծավալներ, կենդանի ուրվանկարներ: Մազերի սովարախիտ մշակման կողքին հարթայնությանը մոտեցող նուրբ լուծումներով դեմքեր կան այստեղ, կա օգտագործված միջոցների, ընտրված դիմագծերի այնպիսի լակոնիկություն, որն իր զուգահեռները չունի քանդակագործի անցած ճանապարհին⁵: Առհասարակ XX դարում քանդակագործները, պահպանելով ռեալիստական գծերը, նվաճումները, ձգտում էին կերպարներին տալ առավել ընդհանրական, խորհրդանիշների հասնող մեկնաբանություն: Եվ քանի որ մարդու մարմնի պատկերմամբ գրեթե հնարավոր չէր գերազանցել հին հույներին, պետք էր որոնել հոգեբանական այլ մոտեցումներ ու դրսևորումներ: Չնայած դեկորա-

³ Կոնֆուցիոս, Արիստոտել, Ավիցենա, Անանիա Շիրակացի, Գրիգոր Մագիստրոս, Մխիթար Հերացի, Դավիթ Անհաղթ, Գալիլեյ, Լեյբնից, Նյուտոն, Կոպերնիկոս, Լոմոնոսով, Մենդելեև, Դարվին, Պաստյոր, Աճառյան, Ցիոլկովսկի, Պավլով:

⁴ Հարությունյան Վահան, Արա Սարգսյան, Երևան, 1975, էջ 106, 107:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 108:

տիվ արձանագործությունն առհասարակ հոգեբանական խոր դրսևորումներ չի սիրում, դա խորթ է նրա բնությանը: Այն ավելի շատ գործ ունի զուսպ միջոցներով արված, ընդհանրացումների ձգտող ու լայն մեկնաբանություն գտած կերպարների հետ: Ահա թե ինչու ակադեմիայի նիստերի դահլիճը զարդարող բարձրաքանդակներում չպետք է որոնել հոգեբանական խոր ու բազմակողմանի մոտեցումներ, բայց նրանցում կան սուր դիտված և ընդհանուր գծերով արտահայտված բնութագրումներ, որոնք ինքնին խոսում են նաև պատկերված անձանց հոգեբանությունից ու հոգեվիճակից: Ասվածի լավագույն վկայությունն են, օրինակ՝ Շիրակացու, Մագիստրոսի, Կոպերնիկոսի, Կոնֆուցիոսի, Յոլկովսկու դիմաքանդակները, որոնցում վերը նշված նոր քանդակաձևերը գտել են իրենց առավել ակնհայտ արտահայտությունները: Քանդակագործական այս նոր ձևերն Ա. Սարգսյանի մոտ ի հայտ են եկել ոչ թե հանուն ձևի, այլ պայմանավորված ճարտարապետության հետ օրգանապես սինթեզվելու անհրաժեշտությամբ: Եվ ահա դրա շնորհիվ է նաև, որ բարձրաքանդակները պատից դուրս չեն ցցվում, չեն խախտում պատի համաչափությունն ու հարթությունը: Կապը պատի հետ ինքնին որոշում է այս քանդակների դեկորատիվ բնույթը: Անշուշտ, քանդակագործական պատկերավորությանն ու արտահայտչականությանն օգնում են նաև լույսն ու ստվերը: Քանդակված ֆիգուրի, պորտրեի հարթություններն ու մակերեսները, արտացոլելով լույսն ու ստվերը, ստեղծում են ձևերի տարածական խաղ, որը գեղագիտականից զատ նաև ներգործող խոր ազդեցություն է թողնում դիտողի վրա: Ակադեմիայի նիստերի դահլիճը զարդարող պատկերաշարում Արա Սարգսյանը դրսևորել է իր՝ պորտրետիստի կարևոր ու նպատակային դրսևորումները, այն է՝ զոհաբերելով երկրորդական, օժանդակ մանրամասնությունները տալ կերպարի առավել հատկանշական և բնորոշ կողմերն ու առանձնահատկությունները: Քանդակագործի այս շարքի լուրջ արժանիքներից է նաև այն, որ անցյալի հայ գիտնականները ո՛չ հավաստի պորտրետներ ունեն, ո՛չ էլ հորինված կերպարանքների պատկերագրային ավանդույթ, և Արա Սարգսյանը նրանց դիմապատկերներն ինքն է հորինել, հորինել է հիմնականում հաջող, և հնարավոր է, որ դրանցից մի քանիսը հիմք դառնան գիտնականների հետագայում ստեղծվելիք կանոնացված պատկերագրության համար: Արա Սարգսյանի մտահղացումն այսօր մեզ ներկայանում է խմբագրված տեսքով, մասնավորապես գաղափարական բացահայտ փոփոխությունների համատեքստում, նիստերի դահլիճի կենտրոնական պատը զբաղեցնող Վ.Ի. Լենինի բարձրաքանդակը հանվել է, և պետք է նշել, որ ի սկզբանե այս հատվածը

դիտողի վրա պահանջվող ուժով չի ներգործել՝ կապված ճարտարապետության որոշ թերությունների հետ (ըստ Հարությունյանի՝ մասնավորապես դահլիճի լայնքն ու բարձրությունը լավ չեն հարաբերակցված, բարձրությունը լայնքի համեմատ քիչ է)⁶:

Դեկորատիվ քանդակը, ի տարբերություն հաստոցայինի և մոնումենտալի, ավելի կապված է բնության հետ, ճարտարապետության հետ, նրանց հետ միաձուլվելով է ներկայանում որպես ավարտուն քանդակագործական դրսևորում:

Եվ արդ, քանդակագործ Արա Սարգսյանի և ճարտարապետ Սամվել Սաֆարյանի այս գեղարվեստականորեն ներդաշնակ երկխոսությունը ճարտարապետության ու քանդակագործության ևս մի օրգանական, բովանդակալից ու նորրակ սինթեզ է, ինչը դրսևորված է մասնավորապես ճարտարապետական մտահղացման, պատի հարթության և քանդակաձևերի փոխհարաբերության մեջ:

ГАРМОНИЧНЫЙ ДИАЛОГ АРХИТЕКТУРЫ И СКУЛЬПТУРЫ: СКУЛЬПТОР АРА САРГСЯН

АСМИК ПАРАНЯН

В 1954-1955 годы в городе Ереван по проекту архитектора С. Сафаряна было построено здание президиума Национальной академии наук Армении. После окончания строительства академии руководство поручило скульптору Ара Саргсяну украсить скульптурами зал заседаний недавно построенного здания академии. Ара Саргсян с любовью принялся за это дело и изобразил не только армянский народ, выдающихся людей, прослуживших науке и культуре, но и горельефы целого ряда имеющих всемирную известность ученых численностью 18 человек: Давида Непобедимого (Анахта), Ачаряна, Ширакаци, Галилея, Дарвина, Гераци, Аристотеля, Конфуция и других. Этот портретный фриз является примером наилучшей декоративной скульптуры, созданной Ара Саргсяном и в настоящее время продолжает считаться образцом высокого эстетического проявления.

Ключевые слова – архитектура, скульптура, рельеф, традиция, горельеф, декоративная скульптура, изображение, фон, портрет.

⁶ Հարությունյան Վահան, Արա Սարգսյան, Երևան, 1975, էջ 109:

HARMONIOUS DIALOGUE OF ARCHITECTURE AND SCULPTURE SCULPTOR ARA SARGSYAN

HASMIK PARANYAN

The building of the Presidency of the National Academy of Sciences of Armenia was constructed in Yerevan, 1954-55, designed by the architect S. Safaryan. When completed, the heads of Academy commissioned sculptor Ara Sargsyan to decorate the new building of the Academy's conference hall with sculptures. Ara Sargsyan kindly took on the job and portrayed not only the Armenian people, their culture and science served prominent people, but also a number of renowned connoisseurs' eighteen high-reliefs: David the Invincible, Acharyan, Anania Shirakatsi, Galilei, Darwin, Heratsi, Aristotle, Confucius etc.

This portrait frizz is one of the best examples of decorative sculptures created by Ara Sargsyan and even today, continues to be considered high aesthetic expression.

Key words – architecture, sculpture, bas-relief, tradition, high-relief, decorative sculpture, image, background, feature.

ՊԱՍԱԿԱՆ ԿԻԹԱՌԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

Հոդվածում ներկայացված են կիթառի ծագումը և զարգացման ուղին, ինչը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու դասական կիթառի պատմությունն ըստ փուլերի:

Բանալի բառեր – քորդոֆոններ, վիուելա, դասական կիթառ, ծագում, զարգացում, կիթառային արվեստ:

Ներկայիս ամենահին և ամենատարածված երաժշտական գործիքներից մեկը կիթառն է: Կա վարկած, որ այն իր անվանումը ստացել է հին հունական «կիթառա»¹ բառից, ինչը նշանակում է երգին նվագակցող երաժշտական գործիք: Ըստ մեկ այլ վարկածի՝ «կիթառ» բառն առաջացել է ծագումով տարբեր երկու բառերի միաձուլումից՝ սանսկրիտական² «սանգիտա» (երաժշտություն) և հին պարսկական «թառ» (լար): Երրորդ վարկածի համաձայն՝ գործիքն իր անունը ստացել է սանսկրիտական «կուտուր» բառից, որը նշանակում էր չորսլարանի: Տարածմանը զուգընթաց գործիքի անվանումը ենթարկվել է բազմաթիվ ձևափոխությունների՝ «կիթառա»՝ Հին Հունաստանում, «cithara»՝ Հին Հռոմում, «guitarra»՝ Իսպանիայում, «chitarra»՝ Իտալիայում, «guitare»՝ Ֆրանսիայում, «guitar»՝ Անգլիայում և այլն: Առաջին անգամ կիթառ անվանումը հայտնվել է XIII դարի եվրոպական միջնադարյան գրականության մեջ:

Արտաքին տեսքով կիթառը նման է քնարի: Կիթառի ծագման վերաբերյալ տեսությունները բազմաթիվ են, սակայն գիտնականները չեն կարողացել միասնական կարծիքի հանգել դրա առաջացման ստույգ ժամանակաշրջանի վերաբերյալ: Այնուամենայնիվ, անժխտելի է կիթառի արևելյան ծագումը (Հին Ասորեստան, Բաբելոն, Բյուզանդիա, Եգիպտոս և Հայկական լեռնաշխարհ)³:

¹ Κιθάρα – հունարեն կարդացվում է կիթառա, շատերին ծանոթ է կիֆառա արտասանությամբ:

² Սանսկրիտ (դևանագարի: संस्कृता वाक्, saṃskṛtā vāk, «գրական լեզու»), նշանակում է «մշակված, կատարյալ»։ Հնդկաստանի հին գրական լեզու՝ իր բարդ սինթետիկ քերականությամբ:

³ Տե՛ս **Բորիսյան Ա.**, Բրոնզեդարյան Հայաստանի երաժշտական գործիքները. **Պետ-**

Բոլոր կիթառները երաժշտական գործիքների մի մեծ խմբի՝ քորդոֆոնների ներկայացուցիչներն են: Համարվում է, որ քորդոֆոններն ի սկզբանե աղեղնային կառուցվածք են ունեցել: Այս գործիքների ընդհանրությունը տարբեր չափսերի արձագանքային մասն է և տարբեր քանակի ու ձգվածության լարերը: Օրինակ՝ տարբեր երկարության լարերով երաժշտական գործիքներն անվանում էին աղեղ-տավիղ, իսկ հավասարաչափ լարերով գործիքները՝ քնար: Հույներն ունեին քնարատիպ գործիքների երկու տեսակ՝ քնար և կիթառ: Երկար վզով և փոքր մարմնով գործիքներ կային դեռևս Ք.ճ.ա. 2000 թ. Միջագետքում և Ք.ճ.ա. 1500 թ. Եգիպտոսում: Եգիպտական գործիքներն անվանում էին նեֆեր: Եվրոպայում քորդոֆոնները տարածվել են հռոմեացիների շնորհիվ, հայտնի են դարձել տարբեր ձևերի և չափսերի երկար վիզ ունեցող գործիքները: Ռեզորնատորային տուփերը նույնպես կարող էին ունենալ տարբեր ձևեր, կառուցվածք և չափսեր: Դրանց ստեղծման համար կիրառվում էին տարբեր տեսակի փայտեր, եղեգի տարատեսակներ, պտղապատեր, կենդանիների ոսկորներ, անգամ կրիաների զրահներ: Լարային կառուցվածքն աղիքային էր:

Եվրոպական երկրներում կիթառը հայտնվել է միջնադարում: Արևմտյան Եվրոպայում հայտնաբերվել է կիթառի հին պատկերը. 1180 թ. աղթագրքում պատկերված է ավանակի վրա նստած Սուրբ Պեդրոսը, իսկ ավանակին ուղեկցող ծառայի ձեռքին՝ եռալար կիթառ⁴: Մեծաքանակ լարերով «կիթառան» հիշատակվում է նաև Դանթեի⁵ «Աստվածային կատակերգություն»-ում՝ որպես այդ ժամանակաշրջանում մեծ ճանաչում վայելող գործիք:

Կիթառային արվեստի զարգացումն անհամաչափ է ընթացել. այն ունեցել է վերելքի, անկման և վերածննդի ժամանակահատվածներ: Լարային գործիքները մեծ զարգացում են գտել տարբեր երկրներում. յուրաքանչյուր ազգից վերցնելով որևէ առանձնահատկություն՝ դրանք ենթարկվել են զգալի փոփոխությունների և ձևավորել փայտալարային գործիքների՝ վիուելաների մեծ խումբը:

Կիթառը վիուելայի տարատեսակներից է: Դրանք ազնվական ու շատ նուրբ գործիքներ էին, որոնց նրբագեղ հնչյունները կարելի էր լսել թագավո-

րոսյան Ա., Շնորհի ի վերուստ, առասպել, ծես և պատմություն. Հողվածների ժողովածու՝ նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2008:

⁴ Տե՛ս **Janitchek H.** Geschichte der deutschen Malerei. Berlin, 1890, s. 118.

⁵ **Dante Alighieri** (Durante di Alighiero degli Alighieri, 1265-1321 թթ.), բանաստեղծ, քաղաքական գործիչ, փիլիսոփա և գրող:

րական պալատներում և մեծահարուստների դղյակներում: Սկսած XVII դարից՝ ճարտարապետական կոթողներում, քանդակներում, ինչպես նաև պեղված գտնվածքներում էր կիրառվում նախահայր վիուելան: Այդ դարաշրջանում հայտնի էին երեք տեսակի վիուելա՝ վիուելա դե Արկո (աղեղնային), վիուելա դե Պենդոլա (պլեկտրային), վիուելա դե Մանո (մատնային), որին էլ հենց պատկանում է կիրառը:

Կիրառի ամենամոտ նախնիներից մեկը համարվում է յուտնան, և չնայած եվրոպական երկրներում ամենատարածված գործիքը յուտնան էր, այնուհանդերձ Իսպանիայում այն բավականին սահմանափակ կիրառություն ուներ: Այստեղ առավել տարածված էր վիուելան: XVI դարում Իսպանիայում վիուելան իր տեղը զիջեց կիրառին, բայց ոչ թե 3 կամ 4 լար ունեցող, այլ 5-լարանի⁶ (չորս զույգ և մեկ կենտ՝ «երգեցիկ») կիրառի տեսակին:

Կիրառի առավել կատարելագործված լարվածք գտնելու դժվարությունն այն էր, որ եռալար կիրառն ուներ լարվածքի երկու տեսակ, չորսլարանի կիրառը՝ վեց, իսկ հինգլարանին՝ ութ: Ժամանակի ընթացքում կիրառն ազատվեց զույգ լարերից, և մինչև XVIII դարի վերջն այն հնգալար էր: Կիրառի այս տեսակը ստացավ «Իսպանական կիրառ» անվանումը:

Դրանից հետո միայն հայտնվեցին վեց և յոթլարանի կիրառները: 1596 թ. Բարսելոնում հրատարակվեցին իսպանական կիրառին նվիրված առաջին աշխատությունները, որոնց հեղինակը բժշկագիտության դոկտոր, մաթեմատիկոս **Խուան Կառլոս Ամատն** (Juan Carlos Amat, 1572-1642 թթ.) էր:

Ռուսաստանում տարածված էր յոթլարանի կիրառը, որը պահպանվել է մինչև օրս և կոչվում է «ռուսական կիրառ»: Որոշ գիտնականների կարծիքով ռուսական կիրառը ստեղծել է **Ա. Սիխրան** (Андрей Осипович Сихра, 1773—1850 թթ.): Դասական կիրառից այն տարբերվում է իր լարվածքով, որի հիմնական, դասական կառուցվածքն է՝ d h g d h g d: Գոյություն ունի նաև խառը լարվածք, որը կոչվում է տերց-կվարտային և հիմնված է մաժոր եռահնչյունի վրա:

Դարեր շարունակ կիրառը ենթարկվում էր բազմապիսի փոփոխությունների և չունեի մեկ ընդհանուր վերջնական տեսք: Կիրառի չափսերը շատ տարբեր էին. ամենամեծերը նման էին տավիղի և կոնտրաբասի: Դեկաների

⁶ Կա վարկած, ըստ որի՝ կիրառի հինգերորդ լարն ավելացրել է բանաստեղծ Վիսենտե Էսպինելը (Vicente Gómez Martínez-Espinel 1550-1624 թթ.):

ձևերը նույնպես միանման չէին՝ տանձաձև, ձվաձև, կլոր, ուռուցիկ, տափակ, միակողմանի ուռուցիկ: Տարբեր էր գրիֆի լայնությունը, գլխամասը կարող էր լինել շատ և քիչ թեքված կամ ուղիղ, աղիքային լարերը փաթաթվում էին վզիկին, իսկ հետո ամրացվում փայտե ամրակների միջոցով, որոնք հետագայում կոչվեցին ականջիկներ: Գրիֆի վրա չկային այժմյան հենակները, և լարերն այդ մասում ուղղակի կապվում էին: Իհարկե, այսպիսի գործիքով չափազանց դժվար էր նվագել և երկար ժամանակ պահպանել լարվածքը: Գոյություն չունեին երկու գործիք՝ նույնանման լարվածքով: Կիթառի հնչողության կատարելագործումը և անցումը կայուն կվարտային լարվածքին հանգեցրեց վիուե-լայի նկատմամբ կիթառի լիակատար հաղթանակին:



Հնգալար կիթառի թերություններն այնքան ակնհայտ էին, որ երաժիշտները պահանջում էին նոր արտահայտչամիջոցներ և գործիքի զգալի կատարելագործում: Այդ փոփոխությունները վերաբերում էին լարերի քանակին, լարվածքի կայունությա-

նը և հարմարավետությանը: Փոքր-ինչ մեծացան կիթառի չափսերը, ավելացավ 6-րդ լարը, զույգ լարերը փոխարինվեցին մեկական լարերով, վերացան հնալար կիթառի թերությունները, նրանից փոխառնվեց տարածված շարքը՝ «e, h, g, d, a», և ընդլայնվեց հնչյունաշարը. ավելացավ «e» բասային լարը: Այդ ամենը հնարավորություն տվեց ընդլայնելու և բազմազան դարձնելու կիթառի կատարողական երկացանկը: Այս լարումով վեցլարանի կիթառն ստացավ «դասական կիթառ» անվանումը և իրեն դրսևորեց ու աշխարհում հայտնի դարձավ կիթառային երաժշտության բարձրարժեք ստեղծագործություններով:

Է. Պոլստի վկայությամբ վեցլարանի կիթառն առաջին անգամ հիշատակվում է **Ֆ. Մորետտի** (Federico Moretti, ≈1780-1838 թթ.)՝ 1799 թ. Մադրիդում տպագրված գիտական աշխատության մեջ: Նա գրում է. «Ֆրանսիացիները և իտալացիներն իրենց կիթառների համար օգտագործում էին մեկական լարեր, քանի որ դրանք թույլ են տալիս շատ արագ վերցնել ակորդ-

ները և երկար հնչեցնել մաքուր, իսկ զույգ լարերի դեպքում դժվար է պահպանել մաքուր ունիսոնը»⁷:

Վեցլարանի կիթառը, ըստ զանազան վկայությունների, միաժամանակ հայտնվել է եվրոպական տարբեր երկրներում, սակայն իրական հայտնագործողին հստակ նշել հնարավոր չէ: Դեռևս XVIII դարի կեսերին մեկական լարերով վեցլարանի կիթառը սկսել է տարածվել թե՛ Իսպանիայում և թե՛ այլ երկրներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, իսկ XVIII դարի վերջերին այն հայտնվել է Ռուսաստանում, որտեղ ստեղծվել և տպագրվել են վեցլարանի կիթառի համար ստեղծագործություններ և ձեռնարկներ: Տվյալ ժամանակաշրջանում վեցլարանի կիթառը ճանաչում ստացավ նաև Անգլիայում: Դրա լայն տարածումը կապված էր Ֆ.Սոոի՝ 1809 թ. Անգլիա տեղափոխվելու հետ:



XIX և XX դարերի ընթացքում փորձեր էին արվում կատարելագործելու կիթառը: Կիթառի կատարելագործման ընթացքը բավական երկար տևեց, այն կապված է հնչյունաշարի ավելացման, ձայնի ուժգնացման և կատարողական



տեխնիկայի պահանջների հետ: Հնչյունաշարի ավելացումն աշխատում էին իրականացնել բասային լարի ավելացմամբ, որը երբեմն տեղավորվում էր գործիքի գրիֆից դուրս:

XIX դ. կեսերին և ավելի ուշ ստեղծվեցին գործիքներ, որոնք կոչվում էին կիթառ-լյուտնա, արֆո-կիթառ, արֆո-լյուտնա և այլն: Ինչպես երևում է դրանց անուններից, վարպետներն աշխատում էին ստեղծել առանձին կամիթային գործիքներ: Դրանցից և ոչ մեկը երկար կյանք և տարածում չունեցավ՝ մեծ մասամբ ահռելի մեծության պատճառով:

⁷ Pujol E. La guitar, Lavignac A.. Encylopedie de la musique, v. VIII, Paris, 1927, p. 2011.

Օրինակ, 1862 թ. վիեննացի վարպետ Գ. Շերցերի ստեղծած 18-լարանի տավիղ-կիթառը հիշեցնում էր անճոռնի կոնտրաբաս և ոչ թե կիթառ: Մի փոքր ավելի հաջողություն ուներ այն գործիքը, որի սեփական լարերին ավելացրին բասեր: Լրացուցիչ բասային լարերով դրանք ստանում էին դողողացող ձայն, և այն չէր նպաստում գործիքի հնչողության լավացմանը և բավական դժվարացնում էր տեխնիկական կատարումը: Որոշ կատարողներ նախապատվությունը տալիս էին 10-լարանի կիթառին, որի հիմքն էր կազմում սովորական վեց և յոթլարանի կիթառը՝ տեղցիային լարվածքով:

Ի վերջո, տարբեր երկրներում վեցլարանի դասական կվարտային լարումով կիթառի կատարման պրակտիկական ցույց տվեց կիթառի նշանակությունը և հաստատեց այն որպես մենակատար երաժշտական գործիք: Մեծ արժեք ունեցան կիթառ պատրաստող վարպետների համար խորհուրդ և հանձնարարական սովող կիթառահարները, որոնց թվում են դասվում Ֆ. Սոռը, Ֆ. Կառուլին, Ֆ. Տառեգան և այլք: Մեր օրերում մեծ հեղինակություն են վայելում Ա. Սեգովիայի ցուցումները:

Կիթառի կառուցվածքի կատարելագործումն անդրադառնում է կիթառի բոլոր հիմնական մասերին: Այժմ, համեմատելով XIX դարում պատրաստված մյուս կիթառների հետ, մեծացել են գործիքի չափերը, իսկ ներկայումս կիրառվող ավելի թեթև ծառատեսակների և դեկաների ու իրանի բարակության շնորհիվ նվազել է կիթառի քաշը: Եթե այսօր դեռ պահպանվում են դեկայի փողոկրե և սադափե զարդանախշերը, ապա բավականին համեստորեն: Կիթառի չափերի մեծացումը փոխում է գրիֆի լայնությունը, ավելանում է լարերի միջև եղած տարածությունը, ինչը հեշտացնում է կատարումը: Բացի դրանից գրիֆի գլխամասի ականջիկները համալրվում են մեխանիկական սարքերով, որոնք առանց դժվարության շատ արագ և ճշգրիտ լարում են գործիքը: Աղիքային լարերը փոխարինվում են նեյլոնե լարերով: Այս բոլոր նորությունները տարբեր երկրների վարպետների բազմաթիվ փորձերի արդյունքն են:

Այսպիսով, ենթարկվելով բազում ձևափոխությունների, XVIII դարի վերջում կիթառը ձեռք է բերել իր վերջնական, բոլորին ծանոթ տեսքը և հնչողությունը: Ներկայումս գոյություն ունի կիթառային հարուստ և բազմաժանր երաժշտական գրականություն: Տարբեր երկրներում կատարվում են բազմաթիվ գիտական հետազոտություններ, որոնք բացահայտում են կիթառի ծագման և զարգացման գաղտնիքները: Դարերի ընթացքում կիթառը ոչ միայն չի կորցրել իր հմայքը, այլև գրավել է երկրպագուների մի ահռելի բանակ, ովքեր մինչ օրս բարձր են պահում երաժշտական այս գործիքի վարկը:

ИССЛЕДОВАНИЕ ЭТАПОВ ИСТОРИЧЕСКОГО РАЗВИТИЯ КЛАССИЧЕСКОЙ ГИТАРЫ

НУНЕ ПОГОСЯН

В данной статье собраны материалы по истории возникновения и становления гитарного искусства, что предоставляет возможность поэтапно изучить историю классической гитары.

Ключевые слова – хордофоны, виуэла, классическая гитара, возникновение, развитие, гитарное искусство.

THE HISTORICAL DEVELOPMENT STAGES OF CLASSICAL GUITAR

NUNE POGHOSYAN

This article considers the origin and evolution of the guitar and provides an opportunity to explore the history of classical guitar through all of its stages of development.

Key words – Chordophones, vihuela, classical guitar, the origin, evolution, guitar art.

ՕԺԻՏ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Նորահարսին օժիտ տալու սովորույթը կիրառում է ունեցել մեզանից դեռևս հազարավոր տարիներ առաջ, և այդ մասին բազմաթիվ վավերագրեր են պահպանվել: Դրանցից ամենահինը Բաբելոնի արքա Համմուրաբիի օրենսգիրքն է, որը վկայում է այն մասին, թե Ք.Ճ.ա. II հազարամյակում Տիգրիս-Եփրատյան հովտում որքան բարդ և նուրբ իրավական հարցեր և դրույթներ են քննարկվել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օժիտը բոլոր ժամանակներում եղել է անձեռնմխելի և չի ձուլվել համընտանեկան ունեցվածքին:

Հարուստ դասակարգը՝ բղեշխները, իշխանները, նախարարներն իրենց դուստրերին որպես օժիտ տվել են մեծ և փոքր հողային տիրույթներ, դաստակերտներ, գյուղեր, այգիներ ևն: Հայոց մեջ վավերացված է «Մայրենիք» կոչված սեփականության իրավունքը. հայ կինը իրեն օժիտ տրված ունեցվածքը սեփականատիրոջ իրավունքով կարող էր փոխանցել իր զավակներին: Մոր կողմից փոխանցված այդ ունեցվածքն էլ կոչվում էր «մայրենիք»:

Բանալի բաներ – ընտանիքը հնում, կնոջ իրավունքը, օժիտի անձեռնմխելիություն, կնոջ ունեցվածք, Հայոց կանոնագիրք, ընտանեկան իրավունք, «մայրենիք» սեփականություն:

Հայկական ավանդական հարսանեկան ծեսի կարևոր արարողակարգերից էր նորահարսին օժիտ տալը: Այս սովորույթը հայերի, ինչպես նաև այլ ժողովուրդների կենցաղում տարածված երևույթ էր, իսկ օժիտի կազմն ու արժեքը սերտորեն աղերսվում էին դարաշրջանի կյանքի, կենցաղի, միջավայրի և նյութական պայմանների հետ: Ինքնին պարզ է, որ իշխող դասակարգի տնտեսական և իրավական դրույթունը խիստ տարբերվում էր գեղջուկ-շինականի դրույթունից: Եթե վերջինների օժիտը սովորաբար բաղկացած էր տնտեսական իրերից և կենցաղային պարագաներից՝ նախատեսված օգնելու և հեշտացնելու նորաստեղծ ընտանիքի համատեղ կյանքը, ապա իշխող դասակարգը՝ նախարարները, իշխանները, բղեշխները, իրենց դուստրերին ամուսնացնելիս որպես օժիտ տալիս էին հողային մեծ և փոքր տիրույթներ՝ գյուղեր, դաստակերտներ, այգիներ և այլ շարժական և անշարժ ինչք, կամ այդպիսին նրանց փոխանցվում էր ժառանգման, նվիրատվության և այլ իրավական հիմքերով: **Հոր** կողմից տրվող այդ սեփականությունը կոչվում էր «հայրենիք», որից զատ՝ հայոց մեջ գոյություն ուներ նաև **մոր** կողմից տրվող ունեցվածք: Խոսքը **«մայրենիք»**

կոչված սեփականության իրավունքի մասին է, երբ հայ կինը, որպես սեփականատեր, իրավունք ուներ իր զավակներին, այդ թվում նաև ամուսնացած կամ չամուսնացած դուստրերին փոխանցել անշարժ սեփականություն: Մորից փոխանցված այդպիսի ժառանգությունը կոչվում էր «մայրենիք»¹: Այսպիսով, «մայրենիք»-ը սեփականության իրավունքի առաջացման ինքնուրույն աղբյուր էր, իսկ կինը Հայաստանում՝ սեփականության իրավունքի ինքնուրույն **սուբյեկտ**²: Այս առումով «օժիտ տալու» արարողակարգը, հարսանեկան ծեսի շրջանակներից դուրս գալով, տեղափոխվում է իրավական դաշտ, և չափազանց ուշագրավ են դառնում Հայոց Կանտնագրքում³ ամփոփված այն կանոններն ու օրենքները, որոնք գործում էին հայ կնոջ իրավունքը պաշտպանելու համար:

«Մայրենիք»-ի գոյության մասին բազմաթիվ փաստեր են մեզ հասել Փավստոս Բուզանդի (Վդ.), Մովսես Խորենացու (Վդ.), Ղազար Փարպեցու (Վդ.), Արիստակես Լաստիվերտցու (Ճղ.), Ստեփանոս Օրբելյանի (Ճղղ.) երկերից, հատկապես վիպական արձանագրություններից և իրավաբանական վավերագրերից: Հայ ընտանեկան իրավունքի համար մեծ արժեք են ներկայացնում Բարսեղ Կեսարացու (Վդ.)⁴ և Աթանաս Ալեքսանդրացու (Վդ.)⁵

¹ Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV-IX դդ.), Երևան, «Գիտություն» հրատ., 1976, էջ 9:

² «Մայրենիք»-ին համարժեք սեփականություն գոյություն է ունեցել վրացիների միջավայրում «դեդուլի» անունով (տե՛ս **Надарейшвили Г.** Очерки по истории грузинского семейного права. Тбилиси, 1967, стр. 30), ինչպես նաև ֆրանկների միջավայրում «allod maternus» անվամբ (տե՛ս **Колганов М.** Собственность. Докапиталистические формации. Москва, 1962, стр. 332):

³ «Կանտնագիրք Հայոց»-ը հայ միջնադարյան իրավաբանական փաստաթղթերի պաշտոնական ժողովածու է՝ բաղկացած հոգևոր-եկեղեցական, բարոյախրատական, տնտեսական, քաղաքական, իրավական, քաղաքացիական խնդիրներ ընդգրկող զանազան կանոն-հոդվածներից: Դրանք տարբեր ժամանակներում կազմվել են քրիստոնեական տիեզերական եկեղեցական ժողովներում (Նիկիա՝ 325, Կ.Պոլիս՝ 381, Եփեսոս՝ 431 կն): Այդ կանոնախմբերի մի մասը հավաքել, միավորել և առաջին անգամ կազմել է հայոց կաթողիկոս Հովհաննես Օձնեցին՝ 1710-ական թթ. (բաղկացած էր 24 կանոնախմբից): Հետագայում «Կանտնագիրք Հայոց»-ը բազմիցս վերահրատարակվել է՝ ավելի ճոխացվելով, նորից խմբագրվելով, և լայնորեն գործածվել է մինչև XX դ. 20-ական թթ.: Այժմ «Կանտնագիրքը» մատենագրական հուշարձան է (տե՛ս **Հակոբյան Վ.**, Կանտնագիրք Հայոց, հ. 1-2, Երևան, «Գիտություն» հրատ., 1964-1971):

⁴ Բարսեղ Կեսարացու անվամբ կանոնները թվով 51-են, որոնցից 25-ը վերաբերում են ընտանեկան իրավունքին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջինս հայտնի չէր ասորական և հունական կանոնական իրավունքներին և ունի հայկական ծագում

վավերական կանոնախմբերը⁶: Դեռևս Շահապիվանի⁷ ժողովին ընդունված կանոններում **կին** օրենքի առաջ հավասար էր տղամարդուն. «Եթէ այր եւ եթէ կին՝ կանոն այդ կացց է»⁸:

Այսպիսով, IV-V դարերում ընդունված հայ կանոնական իրավունքի նորմերը, «Ասորական» կոչված դատաստանագիրքը⁹, XII-XIII դդ. հայկական դատաստանագրքերը¹⁰ և ազգագրական նյութերը, ինչպես և հայ ու օտարազգի պատմիչների առանձին վկայությունները հաստատում են, որ վաղ ավատական շրջանում ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորվել են իրավական դաշտով: Հայկական դատաստանագիրքն ընդգրկել է 535-536 թթ. ընդունված Հուստիանոս կայսեր¹¹ «Հայոց ժառանգական իրավունքի մասին» էդիկտը¹² և XXI նովելը¹³, համաձայն որի՝ հայ կանանց հավասար

(տե՛ս **Հակոբյան Վ.**, «Կանոնագիրք Հայոց» և նրա խմբագրությունները, Երևան, 1967, էջ 135-143), Կանոնագիրք Հայոց, Բ գիրք, էջ LXV-LXX:

⁵ Աթանաս Աղեքսանդրացուն վերագրվող 88 կանոնից (Կանոնագիրք Հայոց, Ա գիրք) ընտանեկան իրավունքին վերաբերում են 31-ը:

⁶ Ավանդության համաձայն՝ մի քանի ազգային կանոնախմբեր ստեղծվել են դեռևս մ.թ. I դարում և վերագրվում են Թադևոս և Փրիլպոս առաքյալներին: Ազաթանգեղոսը նշում է, որ Նիկիայի ժողովին մասնակցած Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը, 325 թ. իր հետ Հայաստան է բերել նիկիական կանոններ, և Լուսավորիչը դրանք հավելել է (Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 445):

⁷ Շահապիվանի եկեղեցական ժողովը գումարվել է 444 թ. հունիսի 24-ին Մեծ Հայքի Արարատ նահանգի Ծաղկոտն գավառի Շահապիվան ավանում:

⁸ **Ղազարյան Ա.**, Շահապիվանի եկեղեցական ժողով, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 816:

⁹ «Ասորական» կամ «Ասորա-հռոմեական» է կոչվում մի դատաստանագիրք, որը մեզ է հասել հիմնականում ասորերեն, արաբերեն և հայերեն խմբագրություններով: Այդ դատաստանագրքի հնագույն տարբերակը՝ Լոնդոնյան ձեռագիրը, թվարկվում է V-VI դդ., որը բաղկացած է 127 հոդվածից և պահպանվել է ավելի քան 50 հայերեն ձեռագրերով (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագրեր՝ N 485, N 488, N 556, N 2593): Տե՛ս Հովհաննիսյան Ս., «Ասորական» կամ «Ասորա-հռոմեական» կոչված դատաստանագրքի աղերսը հայ իրավունքի հետ, ՊԲՀ, 1970, N 2:

¹⁰ XII-XIII դդ. շրջանառության մեջ դրվեցին երեք խոշորագույն իրավաբանական կոթողներ՝ Դավիթ Ալավկաորդու օրենքների ժողովածուն (մոտ 1130 թ.), Մխիթար Գոշի (1184 թ.) և Սմբատ Սպարապետի [Գունդստաբլ] (1265 թ.) դատաստանագրքերը:

¹¹ Հուստիանոս I-ը (Բյուզանդիայի կայսր 527-ից) սահմանել էր օրենսգիրք՝ «Corpus juris civilis», որն ընդգրկում էր 4652 հատված:

¹² Էդիկտ (լատ. edictum < edico՝ հայտարարում եմ) Հին Հռոմում մագիստրոսի (պրետոր) գործունեության ծրագիր, որը ներկայացվում և հայտարարվում էր պաշտոնական պարտականություններ ստեղծելիս:

ժառանգական իրավունք է վերապահվել: Այստեղ նշվում էր. «Մենք (Հուստիանոս) ցանկանում ենք, որ կանայք նույնպես մաս ստանան տոհմական կալվածքներից՝ սկսած նշված ժամանակից (535 թ.) ...»¹⁴: Ինքնին պարզ է, որ հայ կնոջ ժառանգական իրավունքի վերաբերյալ Հուստիանոս կայսեր «հոգաժույթունը» բխել է բյուզանդական քաղաքական շահերից, քանզի հայկական հողերին տիրանալու հնարավոր միջոցներից մեկը՝ կնոջ «նայրենիք» սեփականության ձևն էր: Անհրաժեշտ ենք համարում հիշատակել նաև կնոջ ժառանգական իրավունքը սահմանող այն հոդվածները, որոնք որոշ չափով հակակշիռ էին Հուստիանոսի նշված նովելին և գետեղված էին Մխիթար Գոշի (XII դ.)¹⁵ և Սմբատ Գունդստաբլի (XIII դ.)¹⁶ դատաստանագրքերում: Օժիտի վերաբերյալ Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքի՝ «Ամուսինների ամուսնական իրավունքների մասին» 78-րդ հոդվածում նշված է. «Եթե պատահի, որ կնոջ անհնազանդության պատճառով նրանց միջև անհաշտություն ծագի և օրենքը թույլատրի լուծել այդ ամուսնությունը, ապա ամուսինը պետք է տա կնոջ ողջ բերածը, որպեսզի նա նորից ամուսնանա ուրիշի հետ: Ինչ վերա-

¹³ Նովելներ (լատ. novellae leges՝ նոր օրենքներ) անվանվում էին գործող օրենսդրության նոր օրենքները՝ հավելված, որը լրացնում կամ փոփոխում էր այն: Նովելներ են կոչվել Հուստիանոսի օրենսգրքում ներառված 168 նոր օրենքները՝ կազմելով նրա վերջին մասը:

¹⁴ Լատիներենից ռուսերեն թարգմանությունը տե՛ս **Адонц Н.** Армения в эпоху Юстиниана. Санкт-Петербург, 1908, стр. 180:

¹⁵ Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց (Իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանոթութեամբք՝ Վահան Ժ վարդապետի Բաստամեանց), 1880, մաս 2, Կանոն ԿԲ, էջ 372: Ուշագրավ է, որ Վաղարշապատում լույս տեսած այս դատաստանագիրքը հիմք է ծառայել լեհահայերի օրենսդրության համար: Կամենեց-Պոդոլսկի և Լվովի հայերը իրավունք են ստացել ունենալու իրենց սեփական դատարանը, որը մինչև XVI դ. սկիզբը ղեկավարվում էր սովորույթային իրավունքի չափանիշներով: XVII դ. սկզբին լեհական կառավարությունը պահանջեց, որպեսզի հայերն իրենց օրենսդրությունը ներկայացնեն գրավոր: Հետագայում, ինչպես նշում է Վահան Վ. Բաստամեանցը, առանձին հոդվածներ փոփոխվել են հենց իրենց՝ հայերի կողմից, նոր ժամանակների պահանջներին համապատասխան: Ուշագրավ է, որ Գոշի Դատաստանագրքի վերը հիշատակված՝ «քրոջ բաժինը կազմում է եղբոր բաժնի կեսը...» հոդվածը լեհահայերի օրենսդրության մեջ փոփոխված էր, և քրոջ ու եղբոր բաժինները հավասար էին: Տե՛ս **Գրիգորյան Վ.**, Կամենեց-Պոդոլսկի հայկական դատական փաստաթղթեր, Երևան, 1963, էջ 73:

¹⁶ 118-րդ հոդվածը սահմանում է, որ «երկու քույրը ստանան մեկ եղբոր բաժին, քանզի երկու աղջիկ գնահատվում են ինչպես մեկ տղա, իսկ կինը, ըստ օրենքի, գնահատվում է ինչպես ամուսնու կեսը»: Տե՛ս Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Երևան, 1958, հոդված 118 և 119:

բերում է այն հագուստին, որ նրանք միասին են ձեռք բերել և անկողնու սպիտակեղենին (տեքստում՝ պառկելիք), որից նրանք օգտվել են համատեղ, ապա դրա համար հատուցում չկա: Կնոջ բերած բոլոր տեսակի անասունները ետ են վերադարձվում, ծնածը կիսվում է, իսկ անասնակերը և պահելը, ինչպես և այլ բաներ, չեն հատուցվում»¹⁷: Մխիթար Գոշի Դատաստանագրքի 108-րդ հոդվածը ևս վկայում է, որ **պոռոգը**՝ «հարսների օժիտը», համընտանեկան ունեցվածքին չի ձուլվում¹⁸: Առհասարակ, պետք է նշել, որ հայոց մեջ կիրառվող Դատաստանագրքերի միջև իրավագիտական առումով մեծ տարբերություն չէր նկատվում, և ընդհանուր առմամբ այդ դատաստանագրքերը մեկը մյուսին լրացնող տարբերակներ էին¹⁹:

Այսպիսով, օժիտը՝ որպես մասնավոր սեփականություն, **անձեռնմխելի** էր, և նույնիսկ բաժանության դեպքում այն ամբողջությամբ վերադարձվում էր կնոջը: Այդ են վկայում օժիտի «ինստիտուտի» վերաբերյալ բոլոր ուսումնասիրությունները, ինչպես նաև հնագույն վավերագիր արձանագրությունները: Այդպես, օրինակ, Համնուրաբի²⁰ օրենսդրության մեջ, որն իր տեսակի մեջ մարդկությանը հայտնի առաջին գրավոր հիշատակարաններից մեկն է, դեռևս Ք.ձ.ա. II հազարամյակում բազմակողմանի լուսաբանված էր կնոջ դրությունը, համաձայն որի՝ ամուսնացած կնոջ դիրքը ամուսնու տանը բավականին բարձր էր և պատվավոր: Բաբելոնի օրենքը նկատի ուներ միակնություն (բացառու-

¹⁷ **Սմբատ Սպարապետ**, Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 84-87: Տե՛ս նաև 119-րդ հոդվածը, էջ 110:

¹⁸ **Մխիթար Գոշ**, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խ. Թորոսյանի, մաս 1, Երևան, 1975, էջ 127, 128: Տե՛ս նաև 121-րդ հոդվածը, էջ 289, 290:

¹⁹ Այդպես, օրինակ, Սմբատ Սպարապետի (Գունդստաբ) Դատաստանագիրքը աղբյուրագիտական տեսակետից նույն Մխիթար Գոշի Դատաստանագիրքն է՝ փոքր-ինչ կրճատված, կիլիկյան պայմաններին համապատասխան փոփոխված և գրաբարից կիլիկյան աշխարհաբարի թարգմանված: Հայկական թագավորության մեջ այդ ժամանակ գործող Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու «Անտիոքի ասիզները» չէին բավարարում պետության իրավական գործունեության պահանջները, քանզի Գոշի Դատաստանագրքի կազմումից հետո անցած ժամանակահատվածում (մոտ 80 տարի) փոխվել էին ավատատիրական հարաբերությունները: Կիլիկյան Հայաստանում Սմբատ Գունդստաբի Դատաստանագիրքը գործածվել է մինչև պետության անկումը՝ 1375 թ.:

²⁰ Համնուրաբի (Համուրապի)՝ Բաբելոնի թագավոր (Ք.ձ.ա. 1792-1750 թթ.), որի օրենքները պարունակում էին 280-ից ավելի հոդվածներ, ինչպես նաև նախաբան և վերջաբան: Լինելով հմուտ քաղաքագետ և զորավար՝ նա կարողացել է Ասորեստանի տարածքը ենթարկել Բաբելոնին, նրա օրոք զարգացել են թագավորական իշխանությունը և ապրանքադրամային հարաբերությունները:

թյուն էին ամլությամբ տառապող, անտնտեսվար և անառակ կանայք), և ամուսնու մահից հետո նա դառնում էր տան գլխավորը, երեխաները պարտավոր էին հնազանդվել նրան²¹: Համնուրաբիի օրենսդրության 167-րդ հոդվածի (narpapaf) համաձայն՝ մոր օժիտը, որը կոչվում է «serigtu», երեխաները իրավունք ունեին ժառանգելու անգամ մոր մահից հետո, իսկ երեխաներ չունենալու դեպքում վերադարձվում էր նրա հայրական տուն²²: Այս համառոտ տեսությունը ցույց է տալիս, որ դեռևս Ք.ծ. 2000 տարի առաջ Եփրատ-Տիգրիսյան հովտում որքան բարդ ու նուրբ իրավական հարցեր և դրույթներ են քննարկվել:

Ազգագրագետ Ռուսուդան Խարածեն, հետազոտելով բաբելոնյան «serigtu»-ն և զուգահեռներ անցկացնելով վրացական «satavno»-ի (օժիտ) հետ, նմանություն է տեսնում ինչպես դրանց բաղադրության և կազմավորման, այնպես էլ ունեցվածքային իրավական փոխհարաբերությունների կարգով, որը հեղինակի կարծիքով վկայում է օժիտի այս ձևի հնավանդ ծագման մասին²³:

Ընտանեկան իրավունքի պատմության համար կարևորագույն աղբյուր է հայ եկեղեցու ծիսարան «Մաշտոցը»²⁴, որը հայկական ձեռագիր հավաքածուների ամենատարածված գրավոր հուշարձանն է²⁵: Ձեռագիր N

²¹ **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 74, 75:

²² **Дьяконов И.** Законы Вавилонии, Ассирии и Хеттского царства. «Вестник древней истории». 1952, N 3, стр. 246-248.

²³ Տե՛ս **Харадзе Р.** Грузинская семейная община. Кн. 2. Тбилиси, 1961, стр. 57, 58.

²⁴ Ավանդության համաձայն՝ այն կրում է հայ գրերի ստեղծող մեծն Մեսրոպ Մաշտոցի անունը: Սակայն Ալիշանը նշում է, որ «Մաշտոցը» առնված չէ ս. Մեսրոպի անունից և ոչ էլ IX դարում այդ գիրքը կարգավորող համարված նույնանուն Մաշտոց կաթողիկոսից, որը հավանաբար ինքն է անունը գրքից առել: Եթե «Մաշտոցը» կոչվելու էր մեր մեծ վարդապետի անունով, ապա կվայելեր այն կոչել «Մեսրոպը» կամ «Մեսրոպ»: Մաշտոցը «մաշտ» արմատից է՝ «ծիսական» նշանակությամբ, անշուշտ նախաքրիստոնեական բառ է, որի համար կարող է դիտվել լծորդություն **պաշտ** և **հաշտ** բառերի կրոնական իմաստները, որն էլ, համաձայն բառգրքի, նշանակում է «ցանիչ»՝ կրոնական ջրի ցողմունք: Տե՛ս **Ալիշան Ղևոնդ**, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը (գրական արևելահայերենի վերածոց Վ. Բարսեղյանը), Երևան, 2002, էջ 223, 224:

²⁵ Միայն Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարանում պահպանվում է «մաշտոց»-ների ավելի քան 700 օրինակ: Ինչպես և «Կանոնագիրք Հայոց»-ը, «Մաշտոցը» նույնպես ունեցել է բազմաթիվ խմբագրություններ և դարերի ընթացքում փոփոխություններ է կրել: Տե՛ս նաև **Արևշատյան Ա.**, «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Երևան, «Ակադեմիա» հրատ., 1991, էջ 85-90 (այստեղ հեղինակն անդրադարձել է նաև Պսակի կանոնին):

953-ը²⁶ ենթադրվում է, որ ունի V դ. հնություն, որի հիմնավորումներից մեկը «նշան օրհնելոյ» կանոնի ձևակերպումն է: Համաձայն այդ կանոնի, որը զուտ իրավական է, սահմանված է պսակի հասակը՝ 11-14 տարեկան և տրամաբանական էր, որ նրա իսկական տեղը լիներ «Կանոնագիրք Հայոց»-ը և ոչ ծիսարանը²⁷: V-VI դդ. ընտանեկան իրավունքի պատմության համար ուշագրավ վավերագիր է նաև «Գիրք Թղթոց»-ը՝ Հայ եկեղեցու պաշտոնական գրությունների ժողովածուն²⁸:

Օժիտի ինստիտուտի ծագման և կենցաղավարման հարցերի շուրջ արժեքավոր ուսումնասիրություն է կատարել ազգագրագետ Էմմա Կարապետյանը²⁹ դուրս բերելով օժիտի երևույթի առաջացման վերաբերյալ մասնագետների երկու հիմնական դրույթները.

1. օժիտը հանդիսացել է իբրև պատասխան փեսացուի կողմից տրված ամուսնական վճարի՝ **վարձանքի** (խալան)³⁰ դիմաց, որը ենթադրել է տալիս, որ փեսայի կողմից տրված **գլխագինն** ավելի հին սովորույթ է, և օժիտ տալն էլ առաջացել է հենց հարսի «գնման» սովորույթից³¹:

2. Օժիտն ավելի հին երևույթ է, քան նորափեսայի ամուսնական վճարը՝ վարձանքը աղջկա ծնողներին և կնոջ համար հանդիսացել է անձնական

²⁶ Մաշտոցի անվան Մատենադարանի Ձեռագիր N 953, էջ 189ա: Ընդօրինակված է 1656 թ., բայց տվյալներ կան, որ այն ոչ միայն արտագրվել է IX դ. ձեռագրերից, այլև հարազատ է եղել V դ. մաշտոցյան խմբագրությանը: Ձեռագիր N 953-ում զետեղված «նշան օրհնելոյ» կանոնն էապես տարբերվում է X-XIV դդ. ընդօրինակված մաշտոցների տասնյակ ձեռագրերից, ինչպես նաև 1831 թ. Վենետիկում տպագրված «Մաշտոց»-ի «բաղդատութեամբ բազմաթիւ եւ հնագիր օրհնակաց իբր յիսոյ նաեւ հնագոյն երկաթագիր ձեռագիր» նշան օրհնելու կանոնից: Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV-IX դդ.), էջ 34-36:

²⁷ Հավանաբար այդ հանգամանքը նկատի ունենալով՝ X և հաջորդ դարերի ընդօրինակողները բաց են թողել այն ամենը, ինչն անմիջականորեն կապված էր նշանն օրհնելու արարողության հետ:

²⁸ Այստեղ պահպանված են նեստորականների հետ խնամիացած անձանց նկատմամբ կիրառված միջոցների մասին հազվագյուտ վավերագրեր (տե՛ս Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 43, 44, 73-76):

²⁹ **Կարապետյան Է.**, Օժիտը Հայոց մեջ, Երևան, «Ակադեմիա» հրատ., 1978:

³⁰ Խալան, դալան, կալան (калым)

³¹ Տե՛ս **Ковалевский М.** Первобытное право. Т. 2. Семья. Москва, 1889; **Кулишер М.** Развод и положение женщины. Санкт-Петербург, 1886; **Малинин Л.** О свадебных платежах и о приданом у кавказских горцев. «Этнографическое обозрение». 1890, N 3, кн. 4; **Косвен М.** Брак-покупка. «Красная новь». 1925, N 2; **Кислянов М.** Калым и приданое у таджиков. «Труды института этнографии им. Миклухо-Маклая». Т. 14. Москва, 1951.

սեփականություն³²:

Առաջին դրույթի՝ օժիտի ուշ ծագման տեսակետի հետ հայ գիտնականներից մասամբ համամիտ է Խաչիկ Սամվելյանը՝ գտնելով, որ օժիտի ինստիտուտի գոյացումը հնարավոր էր միայն նահապետական տոհմային կարգերի քայքայման և դասակարգային հասարակարգի գոյացման պայմաններում, երբ գերիշխող էր դառնում մասնավոր սեփականության սկզբունքը³³:

Ինչպես կարելի է նկատել, հայոց մեջ նորահարսին հատկացվող ինչքը տարբեր անվանումներ է ունեցել՝ **պոռոյգ** (պոռոյգ), **օժիտ**, **բաժինք**, **տվար** (տալար, տուար): Կարծում ենք՝ անվանումների այդ զանազանումը կապված է եղել պատմական այս կամ այն ժամանակաշրջանի հետ: Այդպես, օրինակ, «**պոռոյգ**» ձևը հանդիպում է դեռևս ասորական Դատաստանագրքում (V-VI դդ.). հունարենից փոխառնված այս բառը (προίξ՝ օժիտ)³⁴ դարեր շարունակ կենցաղավարվել է մեզանում, ընդգրկվել Դատաստանագրքի մեջ և ընդհուպ մինչև XX դ. հիշատակվել գրավոր աղբյուրներում: Մեզ ավելի ծանոթ «**օժիտ**» (հարսի բաժին) ձևն Աճառյանը կապում է օժտել (նվիրել, պարգևել, օգնել, օժանդակել) իմաստների հետ, որն էլ ստուգաբանում է որպես «ընծա, պարգև»³⁵: Հայագետ Կարապետ Կոստանյանը հայրական ունեցվածքից որպես օժիտ բաժին տալու կարգի մասին իր աշխատությունը վերնագրել է «Պոռոյգ և տուար»³⁶: Կարծում ենք՝ քր «տուար» բառը բխում է «տու այր» ձևից (այր-ի՝ տղամարդու տվածը, ամուսնու վճարը, վարձանքը, գլխագինը). «Տուեալն յառնէ վարձանք կնոջ. փոխարէն իմն օժտից բերելոց՝ ի հարսնէ... Զոր ինչ բերէ կին պոռոյգս՝ գրեցեն զայն. նոյնպէս գրեն և զվարձանսն, այսինքն՝ ըզտուարն՝ որ է **մահիր**»³⁷, գրում են մխիթարյանները՝ առանձին դի-

³² Տե՛ս **Ефименко П.** Приданое по обычному праву крестьян Архангельской губернии. «Записи Имперского отделения Русского географического общества по отделению этнографии». Т. 3. Москва, 1873; **Смирнов А.** Очерки семейных отношений по обычному праву русского народа. «Юридический вестник». 1877, сентябрь, октябрь; **Максимов А.** Из истории семьи русских инородцев. «Этнографическое обозрение». 1902, N 1.

³³ **Սամվելյան Խ.**, Հին Հայաստանի կոլտուրան, հ. 1, Յերևան, «Հայպետհրատ», 1931, էջ 265-269: **Սամվելյան Խ.**, Հին Հայաստանի կոլտուրան, հ. 3, Երևան, «Արմֆանի» հրատ., 1941, էջ 118-132:

³⁴ **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 107:

³⁵ Նույն տեղում, էջ 611:

³⁶ **Կոստանյան Կ.**, Պոռոյգ և տուար, «Ազգագրական Հանդես», գ. 13, Թիֆլիս, 1906, էջ 86:

³⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Երևան, 1982, էջ 890:

տարկելով «տուար» (տավար) բառը³⁸: Հր. Աճառյանը, ստուգաբանելով «տուար»-ը և շեշտելով՝ հովիվ, խաշնարած, տավար, տար, տուար, արջառ նույնիմաստ բառերը, նշում է շումերական «dapara» (եզ) ձևի հետ կապը՝ համարելով այն «բնիկ հայ բառ»³⁹: Բառի նախնական «տավար» (ծի, կով, եզ, նախիր) իմաստը հետագայում ձեռք է բերել «ինչք» (ապրանք, կարասիք, ունեցվածք, հարստություն) նշանակությունը և հենց իր երկրորդ իմաստով տարածվել աշխարհով մեկ՝ Կովկասից և Միջին Ասիայից մինչև Արևելյան և Հյուսիսային Եվրոպա⁴⁰:

Ոչ պակաս հետաքրքրական է **օժիտի** հոմանիշ **բաժինք** ձևը, որն այսօր էլ կիրառվում է մի շարք շրջաններում: «Բաժինք»-ի արմատը **բաժ**-ն է (արքունի տուրք, հարկ, մաքս, բաժին)⁴¹, որը ծագում է պահլավերեն «bag» (մաս, բաժին) ձևից, այստեղից էլ՝ «բաժին տալ» (ժառանգություն տալ) և «բազ արկանել» (բաժին հանել, մաս տրամադրել) ձևերը: Ուշագրավ է, որ հնուց ի վեր «bag» արմատը երկու տառադարձությամբ է կիրառվել՝ «bag - բաժ» և «bag - բազ»: «բազ՝ Աստուած, բաշխող, բաժանող, յարգելի, պաշտելի, նվիրող»⁴², որից էլ, անկասկած, սերվում են «բազին» (ատրուշան, մեխյան, զոհարան, կոստուն) և «Բագարան» (Աստվածավայր, Տաճար, Աստվածների բնակավայր), «բագավան» (Աստվածների ավան), «Բագարատ» (Աստուծո տվածը) ևն ձևերը⁴³:

Պետք է նշել, որ օժիտի ինստիտուտի ծագման հարցը տարբեր, երբեմն էլ իրարամերժ գիտական կարծիքների հիմնավորումով դեռևս մնում է թերի ուսումնասիրված: Օժիտի արարողակարգի ուսումնասիրության խնդիրներն այսօր էլ արդիական են, քանզի մեզանում կենցաղավարվելով հասարակության որոշ խավերում այն շարունակում է ունենալ գործնական նշանակություն՝

³⁸ Նույն տեղում:

³⁹ **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հ. 4, էջ 424,425:

⁴⁰ Հայերենից փոխառնված «**տավար**» բառը հանդիպում է ինչպես կովկասյան և ալթայական, այնպես էլ պավոնական և ուգրո-ֆիննական լեզուներում, օրինակ՝ ռուս. тварь (անասուն) և товар (ապրանք) բառերը, որից էլ սերվում է товарищ ձևը. նախնական իմաստը՝ առևտրի ընկեր (տե՛ս **Աճառյան Հ.**, նշված աղբյուր):

⁴¹ **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հ. 1, էջ 380:

⁴² Նույն տեղում, էջ 373, 374:

⁴³ Այդպես, պահլավերենի «bag» (Աստված) և սանսկրիտի «bhaga» (բաշխող, բաժանող... արեգակ, Լուսին և Սիվա աստվածը) թափանցել են հնդեվրոպական ցեղակից այլ լեզուներ, օրինակ՝ ռուս. Богъ (Աստված), փոյուգ. βαγατος (Բաքոս) կամ՝ богатый (հարուստ) և հակառակը՝ yбогий (աղքատ) ևն (տե՛ս **Աճառյան Հ.**, նշված աղբյուր):

զգալի դեր խաղալով նորաստեղծ ընտանիքի նյութական պայմանները բարելավելու գործընթացում (կահույք, կենցաղային տեխնիկա, ավտոմեքենա, ընկալարան ևն):

ПРИДАНОЕ (Исторический очерк)

МАРИАННА ТИГРАНЯН

Традиция выделять невесте приданое восходит к глубокой древности и это засвидетельствовано в документальных хрониках. Самый древний письменный источник – это кодекс правил вавилонского царя Хаммураппи – свидетельство того, что уже во II тысячелетии до н. э. в Тигрис-Евфратской долине юриспруденция изучала и рассматривала сложные, деликатные вопросы, касающиеся семьи и прав замужней женщины.

Исследования показывают, что приданое невесты было неприкосновенно и в общем семейное состояние не включалось.

Богатые землевладельцы, помещики, князья в качестве приданого давали малые и большие земельные угодья, селения, сады и пр. движимое и недвижимое имущество. В Древней Армении женщина являлась отдельным правовым субъектом и имела право владеть собственным имуществом, которое ей досталось в приданое. Своей недвижимостью женщина распоряжалась по своему усмотрению и могла лично от себя, в качестве подарка или приданого передать своим детям. Такая форма владения собственным имуществом называлась «*maugenik*» (մայրենիք).

Ключевые слова – семья в древности, права женщины, неприкосновенность приданого, имущество женщины, Армянский кодекс правил, семейное право.

DOWRY (A Historical Overview)

TIGRANYAN MARIANNA

This paper is a historical overview of dowry, an ancient custom. Numerous preserved records prove that it has been practiced for thousands of years. However, the oldest available record is the Code of king Hammrabi in ancient

Babylon, which bears witness to the consideration of very complex and sensitive legal issues in the 2nd millennium BC in the Tigris-Euphrates river valley. Studies show that the dowry has at all times remained immune and never been considered as the property of the whole family.

The rich class, the proconsuls, princes, nakharars (ministers) gave their daughters as dowry big or small areas of land, granges, villages, parks, etc. Within the Armenians a right for property called "Mayrenik" (a mother's property) had been certified. The Armenian ladies had control of their dowries and could transfer them to their children. Thus, "Mayrenik" is the word for a mother's dowry transferred to a her children.

Key words – families in the past, woman rights, dowry immunity, a woman's property, the Armenian Code, family rights, "Mayrenik" property.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Սեդա – Թարգմանությունը որպես բնագրի ընկալման, իմաստի հաղորդման և միջմշակության հաղորդակցման միջոց	3
ԳԻԼԱՎՅԱՆ Մեյլինե – Տարածության ու ժամանակի կատեգորիաներն ու նրանց միասնականությունը մանկապատանեկան գրականության մեջ	10
ԿԱՐԱԽԱՆՅԱՆ Նարինե – Նահապետ Քուչակի կենսապատումը	17
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Արտուշ – Ավ. Իսահակյանի «Ռաբբի Հիլլելը» ստեղծագործությունը	26
ՍԵՂՐԱՎՅԱՆ Անուշ – Մեղքի գաղափարի արծարծումը մոդեռնիստական վեպում	35
ՖԻՐՈՒՋԻՄՈՂԱԴԱՄ Մահմուդ – Իրանի մանկական գրականությունը մինչ-սահմանադրական հեղափոխությունը (VII – XX դդ.)	41
ՖԻՐՈՒՋԻՄՈՂԱԴԱՄ Մահմուդ – Սահմանադրությանը հաջորդող երրորդ սերնդի մանկական գրականությունը (1980-2010 թթ.)	52

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹՈՎՄԱՍՅԱՆ Հրանուշ – Տեքստի ներկայակցումը կանխենթադրության հենքի միջոցով՝ հիմնված բառային միավորների կրկնության վրա	63
ԹՈՎՄԱՍՅԱՆ Հրանուշ – Տեքստի բառային ներկայակցումը և ամբողջականությունը կանխենթադրության հենքի միջոցով	72
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Թամարա – Ստուգաբանության արդիական մոտեցմամբ	82
ՄԱՐԳԱՐՅԱՆ Ռեբեկա – Ժամանակակից հայերենի ժամանականիշ բառերի ծագումնաբանությունը	92
ՄՈՒՐԱԴՅԱՆ Գայանե – Ֆիզիկան որպես գիտաֆանտաստիկ դիսկուրսի մեզատեքստ	99

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԶԱՏԻՎՅԱՆ Հովհաննես – XIX դարի երկրորդ կեսին Կարինի նահանգում ժողովրդագրական փոփոխությունների պատճառները	105
ՄԱՏԻՆՅԱՆ Լիլիթ – Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը եվրոպական երկրներում և Հայ դատի հանձնախմբերի դերը	114

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Արամայիս – Իսլանդական դիվանագիտությունը ճողաձկնային պատերազմների ընթացքում 1972-75թթ.	125
---	-----

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՏՐՅԱՆ Գրիգոր – Հումանիզմը և արդիականությունը	136
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Մերի – Հակաուտոպիան որպես ապագայի կանխորոշման միջոց	144

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Նոննա – Մասնագիտական կրթության սոցիալական ուղղվածության հիմնախնդիրները	154
ԷՄԱՄԻ Ռեզա – Ընդհանուր դիտարկումներ սոցիալական օտարում հասկացության մասին	168

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Թամարա – Հարկ վճարող կազմակերպությունների կարգավիճակը	177
ԹՈՐՈՍՅԱՆ Տիգրան – Իրավունքի աղբյուրների ռոմանագերմանական կոնցեպցիան	186
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Եգոր – Հանրային-իրավական ռեժիմները և նրանց առանձնահատկությունները	197
ՄԱԼԽԱՍՅԱՆ Լիանա – Հատուկ իրավական սկզբունքների դերը իրավական համակարգում	204

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՍԼԻԲԵԿՅԱՆ Անուշ – Քննադատական հակասություններ՝ Սարոյանի ստեղծագործությունների բեմադրությունների շուրջ /1962-1991 թթ. բեմադրությունները/	213
ԹԱՄԻՐՕՂԵՅԱՆ Աննա – Էդվարդ Միրզոյանի «Պոեմ» դաշնամուրային ստեղծագործության դիտարկումը XX դարի երկրորդ կեսի երաժշտամտածողության չափանիշներով	224
ՂԱՓԼԱՆՅԱՆ Սաթենիկ – Միհրան Թումանյանը՝ Բարսեղ Կանաչյանի «Նանորի» մասին	233
ՄԱՂՈՅԱՆ Նաիրա – Էջեր Լենինականի երաժշտական ստուդիայի ստեղծման պատմությունից	244
ՊԱՐԱՆՅԱՆ Հասմիկ – Ճարտարապետության և քանդակագործության ներդաշնակ երկխոսություն... քանդակագործ Արա Սարգսյան	251
ՊՈՂՈՍՅԱՆ Նունե – Դասական կիրառի պատմական զարգացման փուլերի հետազոտություն	258
ՏԻԳՐԱՆՅԱՆ Մարիաննա – Օժիտ (պատմական ակնարկ)	265

СОДЕРЖАНИЕ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ГАБРИЕЛЯН Седа – Перевод как средство восприятия, передачи смысла оригинала и межкультурной коммуникации	3
ГИЛАВЯН Мелине – Единство категории времени и пространства в детско-юношеской литературе	10
КАРАХАНИЯН Нарине – Жизнеописание Наапета Кучака	17
МКРТУМЯН Артуш – Произведение Ав. Исаакяна “Раввин Гиллель”	26
СЕДРАКЯН Ануш – Трактовка идеи вины и греха в модернистском романе	35
ФИРУЗИМОГАДАМ Махмуд – Детская литература Ирана до конституционной революции (VII – XX вв.)	41
ДИРУЗИМОГАДАМ Махмуд – Детская литература постконституционного периода Ирана (1980-2010 гг.)	52

ЯЗЫКОЗНАНИЕ

ТОВМАСЯН Грануш – Связность текста посредством пресуппозиционной базы, на основе повтора лексических единиц	63
ТОВМАСЯН Грануш – Лексическая связность и когерентность текста посредством пресуппозиционной базы	72
АРУТЮНЯН Тамара – Современный подход к этимологии армянского языка	82
МАРГАРЯН Ребека – Генеалогия времяуказательных слов современного армянского языка	92
МУРАДЯН Гаяне – Физика как мегатекст дискурса научной фантастики	99

ИСТОРИОГРАФИЯ

ЗАТИКЯН Ованес – Причины демографических изменений в Каринской губернии во второй половине XIX века	105
МАТИНЯН Лилит – Процесс признания геноцида армян в европейских странах и роль комитетов "Ай Дата"	114

ПОЛИТОЛОГИЯ

ГРИГОРЯН Арамаис – Исландская дипломатия во времена тресковых войн в 1972-1975 годах	125
---	-----

ФИЛОСОФИЯ	
АСАТРЯН Григор – Гуманизм и современность	136
МИКАЕЛЯН Мери – Антиутопия как способ предопределения будущего	144
СОЦИОЛОГИЯ	
ХАЧАТРЯН Нонна – Проблемы социальной ориентации профессионального образования	154
ЭМАМИ Реза – Общие наблюдения о понятии «социальное отчуждение»	168
ЮРИСПРУДЕНЦИЯ	
ГРИГОРЯН Тамара – Статус платящих налог компаний	177
ТОРОСЯН Тигран – Романо-германская концепция источников права	186
КАРАПЕТЯН Егор – Публично-правовые режимы и их особенности	197
МАЛХАСЯН Лиана – Классификация специально-юридических принципов права	204
ИСКУССТВОЗНАНИЕ И АРХИТЕКТУРА	
АСЛИБЕКЯН Ануш – Противоречия в критических оценках постановок по произведениям Сарояна за период с 1962 по 1991 год	213
ТАМИРОГЛЯН Анна – «Поэма» для фортепиано Эдварда Мирзояна сквозь призму музыкального мышления второй половины XX века	224
КАПЛЯНЯН Сатеник – Мигран Тумачан о “Нанор” Барсега Каначяна	233
МАДОЯН Наира – Страницы из истории Ленинанканской музыкальной студии.	244
ПАРАНИЯН Асмик – Гармоничный диалог архитектуры и скульптуры: скульптор Ара Саргсян	251
ПОГОСЯН Нуне – Исследование этапов исторического развития классической гитары	258
ТИГРАНЯН Марианна – Приданое (исторический очерк)	265

ԿԱՆԹԵՂ
Գիտական հոդվածներ
КАНТЕХ
Научные труды
KANTEGH
Articles

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Ռուսերեն տեքստերի խմբագիր՝ Մարգարիտա Քամայան
Անգլերեն տեքստերի խմբագիր՝ Սիրարփի Կոյումջյան
Շապիկի ձևավորումը՝ Վարդան Գաբրիելյանի
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4,
հեռ. 58-18-51, հեռապատճեն՝ 58-11-09

Адрес редакции: Ереван 0019, пр. Маршала Баграмяна 24/4,
тел. 58-18-51, факс 58-11-09

Address: 24/4 Marshal Baghramian av., Yerevan 0019, Armenia,
tel. 58-18-51, fax 58-11-09

Էլ. փոստ՝ instart@sci.am
Эл. почта: instart@sci.am
E-mail: instart@sci.am

Պաշտոնական կայքէջը՝ <http://Kantegh.am>
Официальный сайт: <http://Kantegh.am>
<http://Kantegh.am>



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում
Ֆորմատ՝ 60x84 ¹/₁₆, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 130:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մայան 45 (տպարան)
Հեռ. (374 1) 54.49.82, (374 10) 54 62 60, 54 49 82, 62.38.63 (տպարան)
Էլ. Փոստ՝ info@asoghik.am